




861

U. III. 5







ՆՈՐ ՇՐՋԱՆ

Կ ՅԱՐԻ

ՄՈՒՐՁ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1905



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարանի „ՀԵՐՄԷՍ“ Մազաք. փող. № 15.

1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№ 1

Երև.

1. ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ, պօէմա. Յով. Թումանյանի	5
2. ԴԵՊԻ ԱՆԻ, Ա. Ահարոնյանի	10
3. ԶԿՆՈՐՄՆ ՈՒ ՖԷՅԱՆ (ճապոնական լեզվեզա), Թարգմ. Սալիբեանի	28
4. ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ, Ա. Ահարոնյանի	31
5. ՇՈՒՇԱՆԻԿ, Ս'. Պետրոսյանի	48
6. ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԻՇԵՐՆԵՐԸ, Ավօրի	56
7. ՓԻԼՍՈՓԱՅ ՍՈՑԻՕԼՈԳ, Մ'իք. Յովհաննիսեանի	69
8. ԲԻՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԱՆՅԵԱԼԻՅ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՅ, Համբարձում բար. Ս. Վարդանյանի	75
9. ԱՄՊԸ ոտան. Սիպիլի	79
10. ԽՈՒՆԿԸ ոտան., Սիպիլի	80
11. ԽԱՐՐԻԿՆԵՐ ՈՒՐՄԻԱՅԻՅ, Դալուսարի	81
12. ՄԵՐ «ԽՈՋԷՒՆՆԵՐԸ» ԵՒ «ԱՆԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ», Ա. Գուլոսեանի	85
13. ՇՈՂԵՐ ԽԱՒԱՐԻ ՄԷՋ, Տ.ի.	91
14. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԲ ՄԱՄՈՒԼԸ.—Օսմանցի սուլթաններու Գահակալութիւնը:—Համիդամուլեան զաղտիարը մահմեդական աշխարհում:—Թուրք կիները բա՞ց թէ՛ զոց երեսով ման զալու են:—Թուրք կնոջ ձայնը:—«Շարքի-Ռուսի» գատողութիւնները այդ առիթով: Տիգրանի	95
15. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Տ. Սիպիլ (Նրա «Յոլերի» առթիւ).—Ա. Ա.: 2) Արաբի՝ «Գերբնական հիւանդութիւն».—Ա. Ա.: 3) Արաբի՝ «Արբազան ժամեր».—Ա. Ա.	110
16. ՆՈՐ ՄՏԱՑՈՒԱԾ ԳՐԲԵՐ	125
17. ԳԵՂԱՐՈՒԵՍՍԻ ԱՇԽԱՐՀԻՅ.—1) Մի փոքրիկ ակնարկ մեր երաժշտութեան մասին.—Դրեսչենդօ: II) Գեղարուեստը խրախուսող ընկ'րութեան XIV-րդ ցուցահանդէսը.—Դեղասէր: III) Թիֆլիսի Հայոց Գրամ. Ընկ. ներկայացումները.—Ա.	126
18. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄԲ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ, Եր. Սարգսեանի	140

Նոր շրջան V տարի

Հրատ. XVII տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԵԿԱՆ, ՀՆՍԵՐԵԿԱԿԱՆ ԵՒ ՔՐԴԵՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 1

ՅՈՒՆՈՒԱՐ

1905



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԷՍ“ ԸՆԿ. Մաղաթ. փող. 15.

1905

Дозволено цензурою Тифлисъ 1904 г. 12 января.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Երէս

1. ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ, պօէմա. Յով. Թումանյանի	5
2. ԴէՊի ԱՆԻ, Ա. Անարոնեանի	10
3. ՉԿՆՈՐՄՆ ՈՒ ՖԷՅԱՆ (ճապոնական լեզուից), Թարգմ. Սալիմեանի	28
4. ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ, Ա. Անարոնեանի	31
5. ՇՈՒՇԱՆԻԿ, Մ. Պետրոսեանի	48
6. ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԻՇԵՐՆԵՐԸ, Ավօրի	56
7. ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՅԻՕԼՈԳ, Միք. Յովհաննիսեանի	69
8. ԲԻՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԱՆՅԵԱԼԻՑ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՑ, Համբարձում քար. Ս. Վարդանեանի	75
9. ԱՄՊԸ ոտան. Սիպիլի	79
10. ԽՈՒՆԿԸ ոտան., Սիպիլի	80
11. ԽԱԲՐԻԿՆԵՐ ՈՒՐՄԻԱՅԻՑ, Գալուստի	81
12. ՄԵՐ «ԽՈՉԻՆՆԵՐԸ» ԵՒ «ԱՆԸՆԹԵՐՅԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ», Ա. Դուլոեանի	85
13. ՇՈՂԵՐ ԽԱՒԱՐԻ ՄԷՉ, Տ.ի.	91
14. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ.—Պամանյի սուլթաններու Գահակարեւոյնը:—Համարամուծեան գաղափարը մահմադական աշխարհում:—Թուրք կիները բա՞ց թէ գոց երեսով ման գալու են:—Թուրք կնոջ ձայնը:—«Շարքի-Ռուսի» դատողութիւնները այդ առիթով: Տիգրանի	95
15. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.—1) Տ. Սիպիլի (Նրա «Յօրքերի» առթիւ).—Ա. Ա.: 2) Արաբի՝ «Գերշնական հիւանդութիւն».—Ա. Ա.: 3) Արաբի՝ «Սրբազան ժամեր».—Ա. Ա.	110
16. ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱԾ ԳՐԳԵՐ	125
17. ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԻՑ.—I) Մի փոքրիկ ակնարկ մեր երաժշտութեան մասին.—Մրեւելնդօ: II) Գեղարուեստը իրախուսող ընկերութեան XIV-րդ ցուցահանդէսը.—Գեղասէր: III) Թիֆլիսի Հայոց Գրամ. Ընկ. ներկայացումները.—Ա.	126
18. ՄԻ ՔԱՆԻ ԽՕՄԲ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ, Եր. Սարգսեանի	140

19. **ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**.—Բարձրագոյն Ուկազ:—Բարձրագոյն Բնակրիպտ:—Սյդ առիթներով:—Անկարգութիւններ Մոսկուայում, Բագում եւ Պետերբուրգում:—Զերնի-գովիան նահ. զեմս. նախագահի դիմումին պատասխանը:—Խափանուած ընկերութիւնների մասին կարգադրութիւն:—Գէպքեր եւ կարգադրութիւններ Կովկասում:—Պարսից Բարեկրթական ընկերութիւնը:—Ռուսաց գրական ֆոնդը:—«Нов.Время»-ի մի մերկացումը: Լ.Ս. 145

20. **ԽՈՒՍՍՓՈՂ ՓԱՍՏԵՐ** * 161

21. **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**.—Պրտ-Արտուրի անկումը:—Ծովայտ Բոժեստովենսկին Մաղակասկարի մօտ:—Քաղաքակալ ընգհանուի գրութիւնը:—Լուիզա Միշէլի մահը: Լ. Ս. 171

22. **ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ** 175

23. **ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ** 177

24. **ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ** 178

25. **ՅԱԻԵԼՈՒԱԾ. Իշխ. Սումբատով «ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆ»** 71—94

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ գրել պարզ, մանաւանդ թուերը, յատուկ անուններն ու օտար բառերը, և թերթի միայն մի երեսի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտադրութեան, ուղղագրութեան և նոր պարբերութիւնները որոշակի լինելու վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը նաև ընագիրը:
2. Ձընդունուած մեծ յօդուածները պահուում են խմբագրութեանը 6 ամիս, իսկ յետոյ ոչնչացւում են: Ձեռագիրը յետ ստանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերագրւում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրութիւնը: Խմբագրութեան առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:
4. Խմբագրութիւնս իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուրնի» համարը չստացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը զանազան հարցումներով դիմող անձինք պէտք է պատասխանի համար ուղարկեն նամակադրոշմ կամ պոստային ըլանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոպ.: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսի 10-ից ոչ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցեով:

ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ

(ԱՇՈՒՂԻ ՉՐՈՅՅԸ)

Նախերգանք

Հէյ, պարոններ, ահանջ արէք
Թափառական աշուղին,
Սիրուն տիկնայք, շահիլ տրղերք,
Լաւ ուշ դըրէք իմ խաղին:

Մենք ամենքըս հիւր ենք կեանքում
Մեր ծննդեան փուշ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
էս անցաւոր աշխարհից:

Անց են կենում սէր ու խընդում,
Գեղեցկութիւն, զանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,—
Մարդու գործն է միշտ անմահ:

Գործն է անմահ, լաւ իմացէք,
Որ խօսւում է գարէգար,
Երնէկ նըրան, որ իր գործքով
Կապրի անվերջ, անդադար:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,
Անէճք նըրա չար գործքին.
Որդիդ լինի, թէ հէրն ու մէր,
Թէ մուրազով սիրած կին:

Ես լաւութեան խօսքն եմ ասում,
 Որ ժըպտում է մեր սըրտին.
 Ո՞վ չի սիրում, թէկուզ դուշման,
 Լաւ արարքը, լաւ մարդին:

Է՛յ, լաւ կենսք, ականջ արէք,
 Մի բան պատմեմ հիմի ձեզ,
 Խօսքըս, տեսէք, ո՞ւր է գընում,
 Քաջ որսկանի գիւլի պէս:

I

Նազիր Շահը զօրք հաւաքեց,
 Զօրք հաւաքեց անհամար,
 Եկաւ թըմկայ բերդը պատեց,
 Ինչպէս գիշերն էն խաւար:

—Է՛յ քաջ թաթուլ, կանչեց Շահը,
 Անմահ էիր քեզ կարծում.
 Ե՛կ, բերել եմ ես քու մահը,
 Ի՛նչ ես թառել ամրոցում:

—Մի պարծենար, գոռոզ Նազիր,
 Պատասխանեց էն հըսկան.
 Գըլխովը շատ ամպեր կ'անցնեն,
 Սարը միշտ կայ անասան:

Ասաւ, կանչեց իր քաջերին,
 Թուրը կապեց հաւունի,
 Թըռաւ, հեծաւ նըժոյգ իր ձին,
 Դաշար իջաւ արիւնի:

Ու քառսուն օր, քառսուն գիշեր,
 Կըռիւ տըւին անդազար,
 Ընկան քաջեր, անթիւ քաջեր,
 Բերդի գըլխին հաւասար:

Իրան, Թուրան ողջ եկել են,
Թաթուրն անյաղթ, աննրկուն,
Զօրք ու բաբան խորտակուել են,
Նըրա բերդը միշտ կանգուն:

Ու միշտ ուրախ, յաղթանակով
Իր ամրոցն է դառնում նա.
Սպասում է այնտեղ կինը,
Զահիլ կինը սեաչեայ:

II

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թէ աշուղն էլ ունենար,
Առանց գէնքի,
Առանց գօրքի,
Շահերի դէմ կը գընար:

Սիրոյ հընոց,
Կրակ ու բոց
Էնպէս աչքեր թէ ժրպտան,
Մարդու համար
Օրուայ պէս վառ
Գիշերները լոյս կը տան:

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն,
Էլ քեզ ոչ Շահ,
Ոչ ահ ու մահ,
Ոչ գէնք ու գօրք կը յաղթեն:

III

Ու կրողի դաշտում Շահի առաջին
Արին մի անգամ գովքը սիրունի.
Նըրան՝ իր տեսքով, գեղով, ասացին,
Զի հասնի չըքնաղ հուրին Իրանի:
Ծով են աչքերը Զաւախքի գըստեր,

Ու կորչում է մարդ նրա հայեացքում,
 Ճակատը ճերմակ էն ձիւնից էլ դեռ,
 Որ բարձր Աբուլի գազաթն է ծածկում:
 Նա է շունչ, հողին իշխան թաթուլի,
 Նրա սիրովն է հարբած էն հրսկան,
 Նրա ժպիտն է քաջին ուժ տալի,
 Որ դաշտն է իջնում առիւծի նրման:
 Թէ տիրես, մեծ Շահ, դու նրա սրբաին,
 Թաթուլն էլ անգոր կը ընկնի ոտիդ տակ,
 Հանգիստ կը տիրես և թըմուկ բերդին,
 Որ չես կարենում էսքան ժամանակ:

IV

Այսպէս է ասել հրնուց էդ մասին
 Ճարսի բիւբիւլը, անմահ Ֆիրդուսին.
 Ի՛նչը կը յաղթի կեանքում հերոսին,
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

Արեւի նրման ճակատը պայծառ,
 Նայում է խրրոխտ, կանգնած, ինչպէս սար.
 Ո՛վ կանի նրբան գետնին հաւասար,
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

Պարում է ասես կըռիւ գընալիս,
 Գետընքից վերև թըռչում՝ մանդալիս,
 Ո՛վ ցած կը բերի նրբան թըռչելիս,
 Թէ չը լինին
 Կինն ու գինին:

Թէկուզ և արար աշխարհ գայ վըրսն,
 Կերթայ գէմ ու գէմ, տուր չի տալ իրան,
 Ռուստէմ Զալը չի յաղթիլ նրբան,
 Թէ կը լինին
 Կինն ու գինին:

V

Ու զըրկեց Շահը իր թովիչ երգչին,
 Գընա տես, ասաւ, Թըմկայ տիրուհուն,
 Երգիր իմ սէրը նըրա առաջին,
 Պատմիր իմ փառքը ու գանձը անհուն:
 Խոստացիր նըրան իմ ոսկի գահը,
 Խոստացիր նրան ամէն, ամէն բան,
 Ինչ որ կարող է խոստանալ Շահը,
 Երկրակալ Շահը՝ իր սիրած կրնկան:

Ուր անեղ կըուով չի մանի արքան,
 Դոնախ է աշուղն իրեն սագի հետ,
 Եւ անա մի օր ծեր, թափառական
 Մի աղքատ աշուղ մըտաւ Թըմկաբերդ:

VI

Գոռում են, դողում Թըմկայ ձորերը,
 Կանգնած է Թաթուլ Շահի յանդիման.
 Զարկում են, զարկում դուշման զօրքերը,
 Արիւնը հոսում էն Քըռի նման:

Զարկում են, զարկում դուշման զօրքերը,
 Արիւնը հոսում էն Քըռի նման.
 Երգում է աշուղն արքայի սէրը,
 Անհուն գանձերը ու փառքն անսահման...

Լըսում է մատաղ Թըմկայ տիրուհին.
 Եւ վըրդովում են իր միտքը թաքուն
 Դաւաճան գործի ամօթը խորին,
 Եւ արքայական փառքն ու մեծութիւն...

Լըսում ես դու, սիրուն տիկին,
 Այ նազանի աննըման.
 Նայիր Շահին, իրեն զօրքին,
 Աշխարհի տէրն անսահման...

Մեզ պէս տրկար մարդ է նա էլ,
 Սիրուններին միշտ գերի.—
 Քու ճակատին թագ է վայել,
 Լինիս շքեղ թագունի...

Լըսում է չքնաղ թըմկայ տիրունին,
 Գիշեր ու ցերեկ, նորին ու նորից.
 Եւ դարձաւ նա լմուռ, դալմուկ, մըտախոհ,
 Եւ քունը փախաւ նըրա աչքերից...

Յովհ. Թումանեան

(Կը շարունակուի)

Դ Է Պ Ի Ա Ն Ի

Ալէքսանդրապոլը Անիի նախագաւիթն է. ճանապարհորդները առանց առաջինն այցելելու, դէպի երկրորդը չեն գնում: Սա մի երջանիկ ղուգաղիպութիւն է գոնէ ինձ համար: Երգիչների, երկաթագործների և բարտաշների այս քաղաքը ինձ միշտ պրակել է հեռուից: Ես հասկանում եմ Վիկտոր-Հիւգօին՝ երբ նա ասում է՝ «Արեւելքը չեմ տեսել, բայց զգում եմ», այնքան բան կայ աշխարհում, որ մենք զգում ենք հեռուից. դա մարդկային հոգու սքանչելի կարողութիւնն է:

Ես միշտ զգացել եմ Ալէքսանդրապոլը և ուրախ եմ, որ այժմ տեսնում եմ, թէկուզ շատ կարճ ժամանակով և այն էլ արտաքուստ միայն:

Վաղ առաւօտ է, բայց քաղաքն արդէն ոտքի վրայ. շուկան կենդանի է, խանութները բաց են, արհեստանոցները եռում են: Կառապանը կարծես գիտէ իմ թուլութիւնը դէպի մուրճն ու հնոցը, և նա տանում է ինձ յատկապէս այն փողոցներով, ուր ալէքսանդրապոլցին երկաթն է ծեծում: Այստեղ գոնեքի առաջ, պատերի վրայ կախկալուած են բազմաթիւ գործիքներ, բան ու կացին, խոփեր, ու գերանդիներ և մանաւանդ

շղթաներ, կուռ ու երկար շղթաներ, որոնցով արօրն ու գութանը կախուում են երկրի կրճքից: Շիրակի լայնահաս ու բարեբեր դաշտերում մաշուող բոլոր գործիքները այս հնոցներում, այս մուրճերի տակ են կուում ու կոփուում:

Եւ ի՛նչ երկար է արհեստանոցների շարքը: Անծանօթ մարդուն թուում է, թէ ողջ Ալեքսանդրապոլը գիտէ միայն այն արհեստները, որոնք կապուած են մուրճի հետ: Կառն անցնում է արագութեամբ այս փոշոտ, քարոտ փողոցներով և ես այնուամենայնիւ տեսնում եմ գործանոցների շարքը, ուր թիթեղը, երկաթն ու պողպատը հեծեծում են մուրճերի տակ: Եւ սալի վրայ կոացած ամեն մի լայն թիկունք, մուրճի հետ բարձրացող ամեն մի ուժեղ բազուկ, իմ մէջ զարթեցնում է մի խենթ ցանկութիւն ճշալ հեռուից. «Ձարկ գնրկ, իմ ընկեր, դա այնքան գեղեցիկ է, այնպէս աղնիւ, գնրկ, թո՛ղ սալը տընքայ»:

Նրանք սակայն իմ կոչին պէտք չունին, զարկում են հն զարկում, և սալը տնքում է: Ես սիրում եմ այս ցածլիկ, մրոտ շէնքերը, ուր մետաղները կրծում են իրար, ուր զարբնում են այնքան լաւ բաներ: Ագնիւ, ստեղծագործող մի շեշտ կայ մուրճերի յաղթ շոինդի մէջ: Սալերի շուրջը ամեն ինչ խօսում է մի շարքաշ ու հպարտ կեանքից, որ տքնում է և գիտէ թէ ինչո՞ւ: Եւ այն պղտոր բրախքը, որ ընկնում է ու թշշում շիկացած երկաթի վրայ, և՛ մոմուացող հնոցը, որ լափում է ու դտում, և՛ ծանր մուրճերն ու խուկ կերպով տնքացող փուրքը և՛ այն այրուած բազուկներն ու գէմքերը, այն կնճոտ ճակատները և այս բոլորը՝ սև՛, սև՛, և բոլորը՝ այնուամենայնիւ ըմբոստ են: Մուրի և քրտնքի մէջ շաղախուած այդ մէջքերը առոււտից երեկոյ կոանում են սալի վրայ, դրսում, այն սև խառնութից դուրս երբէք չկուանալու համար: Այնտեղ ամեն ինչ տնքում է, բայց հարուածողը չի սիրում տնքալ, մուրճի ձայնն ու թափը ազնուացնում են հոգիները: Այդպէս են արհեստաւորները:

Հասկանալի է, թէ ինչո՞ւ ալեքսանդրապոլցին այնպէս սիրում է երգը: Գողթան գինիները չկան այստեղ, բայց կան արհեստներ. ես չեմ պատահել, որ վաճառականը իր կասկածելի արշինը չափէր երգելով, բայց լաւ գիտեմ, որ պատը երգելով են շարում, մուրճը երգելով են զարկում, սնգամ կտաւը երգով են գործում: Ալեքսանդրապոլցին իր երգի համար ներշնչումը վերցնում է հայրենի աւերակներից, իսկ եղանակն իր քամիներից ու մուրճերի ձայներից:

Եւ այս բոլորի վրայ «խանըմ-արլաների» օրհնութիւնը

կայ: Ալէքսանդրապոլի արլաները... լաւ ու աւանդապահ կանայք, որոնց անցեալ գեղեցկութեան փայլը այնպէս հմայիչ է դարձնում իրանց ձերութիւնը և մայրութիւնը, որոնք սիրում են ցերեկները թխտերի պէս թոռների հետ նստել բաց դռների առաջ, իսկ առաւօտ ու երեկոյ եկեղեցի գնալ աղօթելու նախ օտարների, ապա իրանց զաւակների համար: Ես տեսնում եմ նրանց, այն սիրուն արլաներին, իրանց գորշ զգեստով, մի փոքր առաջ կոացած պարանոցով և երկայն շալը գլուխներին: Նրանց դանդաղ ընթացքը արիութեան ու առաքինութեան հանդիսաւորութիւն ունի: Արլայ և Ալէքսանդրապոլ երկու անբաժան հասկացողութիւններ են, և մէկն ապրում է միւրով: Այս ժողովրդի համար արլան մի հինաւուրց կոթող է, ուր փորագրուած են բարոյական կեանքի պատգամները:

Հէնց ինքը՝ Ալէքսանդրապոլը, կարծես մի մեծ արլայ է, մի պառաւ մայր, որ բազմել է հարթութեան մէջ հանդարտ ու անխռով, մինչդեռ անսասնձ քամիները ձմեռն իրանց ձիւնով և ամառը փոշու ամպերով ձեծում են նրա ձեր գլուխը:

Խեղճ քաղաք... Նրա արտաքինը համարեա ոչ մի գրաւչութիւն չունի: Հարթութեան վրայ ապրող այս մարդիկ գէպի երկինքը քիչ ձգտում ունին արդեօք, թէ՛ ուրիշ պատճառներ կան, չգիտեմ, բայց երկյարկանի շէնքերն այստեղ այնքան քիչ են, որ Ալէքսանդրապոլն իրօք կարող է անուանուել միյարկանի քաղաք: Եւ յետոյ նրա գորշ ու սև քարերը հեռուից նայողի վրայ այն տպաւորութիւնն են գործում, որ կարծես քաղաքը նոր ենթարկուել է հրդեհի: Հարթութիւնը միակերպ, քաղաքը տափակ ու չորս կողմից միանգամայն բաց հողմերի առաջ, որոնք ամառ թէ ձմեռ տէր են այստեղ: Ծառեր չկան ոչ շրջակայքում և ոչ քաղաքում, որպէսզի մի փոքր թուլացնեն տեսարանի տաղտկութիւնը: Այս բոլորի փոխարէն բարձրանում են բազմաթիւ եկեղեցիներ, հոյակապ, երկնասալաց գմբէթներով. հըպարտ շէնքեր, որոնք կարծես Անիի աւերածից են խոյս տուել և այստեղ ապաստան գտել աւանդապահ ժողովրդի ծոցում: Ալէքսանդրապոլը սիրում է և հպարտ է իր եկեղեցիներով: «Հազար ու մի եկեղեցիների» մոխիրների կողքին ապրող ժողովուրդը իրն է յարած է անցեալին և հետամուտ հինը վերըստեղծելու:

Եւ ես սիրում եմ այս հողմածեծ, փոշոտ, խղճուկ քաղաքը. սիրում եմ այն անքննադատ ու կոյր սիրով, որ մարդուս կապում է ծխի մի պտոյտի, մի կորած խրճթի, խոտերի դէզի, աւերակների, սև քարերի, այլանդակ ժայռերի, մթին սար ու ձորի, անգամ խանձուած անապատների հետ: Սիրում եմ Ա-

լէքսանդրապոլի բարբառը, զգեստը, նրա երգը, պարապմունքները, սիրում եմ մանաւանդ նրա խորունկ սէրը դէպի մեր հինաւուրց անցեալի յիշողութիւններն ու յիշատակարանները: Անիդէալ ու անյոյզ քաղաքը նոյնքան զգուելի է, որքան լուկ անասնական պէտքերին հետամուտ մարդը: Ալէքսանդրապոլի ամբողջ, չխեղաթիւրուած հոգին այնքան հարազատ գծեր ունի ինձ համար:

Քաղաքից դուրս ենք, մեր առջևն է Շիրակի ալեծածան հարթութիւնը, և լայնանիստ Արագածը, որ մի մօր պէս բազմեւ է շրջակայքի բլուրների մէջ: Նա ոչ Մասիսի երկնասլաց ու խրոխտ վեհութիւնն ունի, և ոչ էլ նրա խիստ տեսքը: Արարատեան աշխարհի երկու հսկաները ոչնչով նման չեն իրար. մինչդեռ մէկը վիրաւորուած, դաժան ծեր իշխանի է նման, որ սակայն չի ուզում գլուխ ծռել բախտի առաջ և իր զայրոյթի մէջ ատում է աշխարհը, ապրում է հոյակապ մենաւորութեան մէջ ու ժլատ է բարիքով, միւսը՝ Արագածը մի անյիշաչար մայր է, բարի ու գթոտ, որի ձեռները բաց են բարիքի համար, որի ճակատի խորշոմները միշտ ժպիտ ունին իր հովանու տակ ծուարած բլուրների, իր կուրծքին թառած գիւղերի համար:

Անոյշ Արագած...

Ամեն ինչ մեզմ է նրա արտաքինի մէջ. և՛ կատարները, որոնք շուրջանակի բլուրել են և թագ կազմել նրա գլխին, և՛ ձորերը, ուր իշուածքները կախում են զգուշութեամբ, որ վերելքն անկարելի չլաւնայ, և՛ ժայռերը, որոնք պինդ նստել են նրա կրծքին, որպէս զի վար չընկնեն. չէ՞ որ նրանց ստորոտներում չարքաշ մարմն է տքնում: Եւ յետոյ նա հովիտներ ունի ջրաշատ ու հարուստ, սիրուն դարուանդներ, կանաչ պուրակներ, փապարներ, խոխոշուն ջրեր, որոնք քարերի տակից ծորում են կաթնի պէս և ցօղում նրա գեղուն կուրծքը: Ոչ ոք դժգոհ չէ նրանից, և՛ թափառական թաթարները իրանց հօտերով, և՛ աւազակ քիւրդները, և՛ մանաւանդ շինարար, վաստակաւոր հայ գիւղացիին, որ կպել է նրա կրծքին վարում է և ցանում, նրա լայն հողուն խառնել է իր հոգին և պաշտում է իր լեռը, այդ հինաւուրց մօրը:

Սիրուն Արագած...

Վաղորդեան թափանցիկ մշուշը իջնում է նրա կատարից մինչև ստորոտները ինչպէս մի հսկայական քօղ և՛ նրա տակից լեռը կարծես յօրանջում է մեզմիւ ու զարթնում: Եւ այն քօղը բազմերանգ է, նուրբ, հազիւ նկատելի գոյների մի սքանչելի խաղ կայ վերից վար, ձիւնափայլ սպիտակ՝ կատարին, նա իջնում է վար մուգ-կապոյտ, բաց-կապոյտ, թոյլ մանուշակա-

գոյն, ոսկեգոյն, և ստորոտներում հողագոյն երանգներով: Ամենից բարձր՝ հէնց կատարի թագի վրայ ճերմակ ամպերի մի շարան կայ, եթերային, սպիտակազգեստ աղջիկների մի խումբ, որոնք իրար յետևից կուացած՝ ասես արտ են քաղհանում: Արագածից աջ ու ձախ զնացող բոլոր լեռները, Ալաշայի արիւնտ բարձունքները նոյնպէս ճերմակ ամպեր ունեն կատարներին: Ամենքը կարծես նախընթաց գիշերը սպիտակ շրջարշով գլուխները փաթթած են քնել թեթև անձրևի տակ հարբուխ չստանալու համար և այժմ՝ հազիւ զարթնած, դեռ չեն բացել ճակատները ծագող արևի շողերի առաջ:

Ներքեում՝ լեռնալանջերի վրայ ծուխ է բարձրանում ուրբ-մուրբ: Գիւղերն են զարթնել և թոնիրների առաջին հերթն է այն: Հով չկայ և ծխի պտոյտը ուրուն սիւնով երկար ժամանակ իշխում է դաշտի վրայ, նա ճգնում էլի բարձրանալ, բայց ծայրը երեւում է, լայնանում ու փունջ կազմում և ի վերջոյ մեղմիւ լուծւում է մշուշի հետ առանց կարողանալու հասնել լեռնակատարներին: Եւ ճերմակ ամպերը, և՛ նրանց տակի կատարները նայում են վար, արևի շողերի առաջ ժպտում են մեղմիւ ծխի անզօրութիւնը տեսնելով. նրանք հպարտ են, որ սև կեանքից, խեղճ ու կրակ աշխարհից խօսող այդ ծուխը չի հասնում եթերային բարձունքին, և նրա մուրը վերստին մաղւում է նոյն տնքացող երկրի վրայ:

Երկիրը երկինք երբէք չի դառնայ:

Աշնանային բնութեան այդ առաւծու... Նա սիրուն է անգամ իր հոգևարքի անհուն ու մեղմ ժպտով: Ամեն ինչ յիշեցնում է հոգու այն կացութիւնը, երբ գերագոյն վայրկեանում կիրք ու յոյզ մեղմացած՝ մարում են կամացուկ և նրանց տեղը մնում են միայն ազօտ, հրաշալի երազներ, և մարդկային միտքը հանդարտ լողում է անհունի թևերից թափթփող փոշու մըշուշի մէջ գէպի անյայտութիւնը: Եթէ վառ ու փարթամ գարնանն պօէզիան շնչում է խանդ ու եռանդով, որ կեանք ու թափ է տալիս հոգուն, աշնանային պօէզիան տխրութեան ու թախիծի խորութիւնն ունի, որ խօսում է մի այլ և գերազանց կեանքից:

Մեռնող տերևը փթթած վարդի չափ խորհուրդ ունի. մարդ գեղեցիկ կեանքերը միշտ մի ծնունդ արժեն:

Նայում եմ առաջս ձգուած Շիրակի արևածան հարթութեանը: Ուր դարձեալ իշխում է աշունը իր միապազազ դեղնութեամբ: Սողաններ, խողաններ... բարեբեր հողը պսակել է վաստակաւոր մարդու ճիզը, ցորենն աճել է, մեծացել ու հրնձուել և այժմ նա յոգնած կուրծքը դէմ տուած արևի շողե-

որին՝ հաճողարտ հետև է ու հանգստանում: Գեղեցիկ չէ այդ Շիրակի դաշտը մանաւանդ աշնանը, երբ նա այնպէս ամայի է թւում, երբ կանաչ ու ծաղիկ չկայ, ուր հայեացքը հանգստանայ, և ամբողջ պատկերը խօսում է մի անցեալ գեղեցիկ կեանքից: Նայում ես որքան աչքդ կտրում է և ամեն տեղ առաջդ տարածւում է այդ դեղնութիւնը. որպէս կեանքի միակ նշան Ախուրեանն է թաւալւում հարթութեան միջից, դանդաղ, քմահաճ ու գալարուն և նրա ավերին՝ որպէս կանաչ երիզներ՝ անընդհատ ձգւում են ցածրիկ խոտերի երկու անվերջ շերտեր:

Տեղ-տեղ միայն երևում են սև ցեղեր, որոնք թէև պրաւիչ լինելուց շատ հեռու են, բայց և այնպէս այս միապաղաղ գեղ-նութեան մէջ հաճելի հակապատկեր են կազմում: Աւելի հեռուն գործում է գութանը, միքանի շարք լծուած ամոլներ ճրկ-նում են պարանոցները ձգած ցաւագինօրէն և նրանց լծերի վրայ նստած գիւղացիք լուս շարժում են խարազանները: Անասունները քաշում են հեալով, բայց տէրերը չեն երգում նրանց աշխատանքի ծանրութիւնը մեղմելու համար: Ես առաջին անգամն եմ տեսնում հօտաղներ, որոնք «հօրօվէլ» չեն ասում լծան վրայ. միթէ Շիրակի գութանաւորը համր է... Եւ վաստակաւոր անասունների սնքոցի և չարքաշ գիւղացիների այդ լուսութեան մէջ մի ծանր, ճնշող բան կայ, որ յիշեցնում է գերեզմանափորի աշխատանքը: Թւում է, թէ մարդիկ և անասուններ դատապարտուած են կատարել մի անհաճոյ ու վհատեցուցիչ գործ, որի դէմ իրանց էութիւնը բողբոբում է: Եւ սակայն դա «Հայի գութանն է», այն լեզենդական գործիքը, որին զոհել է նա դարերի ընթացքում այնքան լաւ բաներ, անգամ իր խենթ արիւթիւնն ու հպարտութիւնը, բայց և այնպէս նրա վրայ ծով քրտինք է թափել, և երգել, երգել է նրա լայն սկօսը, նրա փայլուն խօիը, նրա յաղթ շղթաները, նրա հատու ձևիչը: Այժմը՝ նայում եմ այդ փնչացնող անասուններին, նրանց հաստ, հնադանդ պարանոցներին նստած մռայլ ու լուս գիւղացիներին և այդ լուսութիւնը՝ ճնշում է նաև ինձ: Համր գութանը ինչպէս և ամեն մի համր աշխատանք լուս գալարումների, անձայն ցաւի շևտ ունի: Ինչո՞ւ են լուս սրանք, բարբերը Շիրակի այս գիւղացիները, ո՞վ է խել նրանցից աշխատանքի, տքնութեան այս գերազոյն հաճոյքը՝ երգը:

Է՛հ, երբ չեն երգում, ապա ուրեմն չի երգւում: Ինքս եմ ակամայ մոմուում.

«Հայի գութան, հայի գութան

«Որի՞ համար կը ջանաս...»

Ամեն ինչ ձանձրալի է աշխարհում, անգամ հաց տուող դարաւոր գութանը, որի վրայ ծով քրտինք է թափուած, որին գոհ են գնացել այնքան լաւ բաներ:

Գութանից իմ ուշադրութիւնը դառնում է դէպի նախիրը, որ մի սև ու կենդանի զանգուածի պէս յեղյեղում է նոյն դեղնաւուն հարթութեան վրայ: Ահա նա հասաւ մեզ և կտրում, անցնում է ճանապարհը: Վտիտ փոքրիկ կենդանիներ են, խեղճ, երերուն քայլուածքով. այս չորացած դաշտերում թնչ պիտի ձարակեն խեղճերը: Երևի այդ է պատճառը, որ նրանք քաշ են տալիս ոտները գետնի երեսից ծոյլ-ծոյլ և անագին փոշի բարձրացնում, որ խկոյն նստում է նրանց մէջքին: Ծանր տպաւորութիւն է գործում մարդու վրայ այդ ամբողջ նախրի տեսքը: Անասունների ընտրութիւնը և ինամբը մեր երկրում տակաւին շատ նախնական պայմաններում է գտնուում: Հայ գիւղացին այդ կողմից չափազանց յետ է մնացել: Կեանքը այնպէս դանդաղ է յեղաշրջւում, որ այս թափանցող, առաջադիմութեան հետամուտ մարդիկ անկարող են լինում փոփոխութիւններ մտցնել իրանց նիստ ու կացի, իրանց սովորութիւնների, պարապմունքների մէջ: Այս դաշտերը, այս գութանը իր հօտաղներով, այո նախիրը իր ձանձրալի նախրապանով հազարաւոր տարիների պատմութիւնն են ներկայացնում, բայց մի քարացած պատմութիւն, ուր ոչինչ չի փոխուել, ոչ մի ցընցում չի աղմկել թէկուզ մի հատիկ. վայրկեանը: Անթիւ սերունդներ այս ձևով վարել են այսպէս, վազել՝ անասունների յետևից և անցել:

Այս խեղճ նախիրը երբ պէտք է փոխուի... և բոլոր նախիրները...

Դարերի պատկերը կատարեալ դարձնելու համար ճանապարհի վրայ յայտնուում են նաև մի խումբ բոշաներ էջերի վրայ. թանփառական անապաստան ժողովուրդ, որ առեղծուածական գոյութիւն ունի և որ իր հայրենիքը միքանի գործիքների և մագէ վրանի հետ բարձած իր էջին, քայլում է բոլոր ճանապարհներով, սիրում է բոլոր հորիզոնները, ամեն տեղ անհող կերպով յօրանջում է երկնքի երեսին ու զարմանում, որ իր գլխին միշտ նոյն աստղերն են, նոյն մութ կամարը: Զարմանալի մարդիկ... չգիտես ցաւօս, թէ երանի տաս սրանց, որ հաւատ չունեն դէպի աշխարհի և առհասարակ կեանքի իրերի կայունութիւնը և գերադասում են անհաստատ կեանքը յարատև թափառականութիւնը: Շինութիւններ և հաստատուն ընակութիւն արհամարհող այս մարդկանց հետ իմ հանդիպումը մի տրագիկ խորհուրդ է ստանում, երբ մտաբերում եմ, որ գնում եմ աւե-

րակներ այցելելու, գոռոզ, հոյակապ շէնքեր, որոնցից միայն մոխիր է մնացել: Վերստին նայում եմ այս խեղճ մարդկանց, նրանց վտիտ, տանջուած էշերին, շիվերից գործած միքանի կարասիներին, նրանց թուխ մարմինները պատող ողորմելի զգեստներին. նայում եմ և մտածում, որ միայն այդ գնով նրանք ազատ են աշխարհում, ազատ են նաև այն պատրանքներից, որոնցով ապրում են մարդիկ՝ մեծը, գեղեցիկը ստեղծելու իրանց անդուլ ձիգերով, անյագուրդ իղձով: Եւ, այնուամենայնիւ, մի խորին արգահատանք եմ զգում դէպի այս թափառական մարդիկը, դէպի այս չնչին գոյութիւնները, որոնք ոչ դէպի վերնագոյն բարձրունքները նետուելու խենթ հաճոյքն են զգում և ոչ անկման ու աւերակի դառնութիւնը: Քաղաքակրթութիւն, գեղարուեստ, գիտութիւն, առաջադիմութիւն, փառք՝ ողջ պատրանքներ են զուցէ, բայց կեանքը առանց այդ պատրանքների էլ աւելի գարշելի, էլ աւելի անտանելի կը դառնայ: Պատրանքներով ենք միայն ապրում: Տառապալից գոյութիւնը գերադասելի է տափակ անհամ կեանքից:

Խեղճ բոշաներ, կողոպտուած, անգոյն հոգիներ:

Ճանապարհը բանուկ է. անդադար անցում են մեր առաջից հայ գիւղացիներ սայլով, էշով կամ ձիով: Վտիտ անասուններ՝ բայց ամենից աւելի արտասուելին էշերն են: Ոմանց պոչերը կը տրուած, ուրիշները տանջուած ու նիհար, համարեա բոլորը քերձուած կողերով—այդ անասունները խղճալի տպաւորութիւն են գործում: Դժբախտ կենդանի, դարերի անհասկանալի նահատակն է նա. լինել այդքան հանգիստ, համբերատար, խաղաղ և օգտակար և այնպէս արհամարուած, միշտ ծեծուած, քաղցած. սա իրօք գերագոյն անարդարութեան հազուագիւտ մի փաստ է: Զարմանալի չէ, որ էշը դարձել է սիմվոլ ապուշ ստրկութեան: Մի նշանակալից հանգամանք սակայն: Անասունների կրած տանջանքը լաւագոյն չափն է տէրերի մտաւոր աստիճանի, նրանց խղճի զարգացման, աւելին կ'ասեմ, նրանց սեփական վիճակի: Բոլոր տանջուած էշերն, օրինակ, նոյնքան յիմար, և նոյնքան տանջուած, հարստահարուած, բթամիտ տէրեր են ունենում, որոնք աշխարհում գթութիւն չգտնելով ոչ մի տեղ, իրանք էլ իշխելու, ընկճելու իրանց մութ ու տգեղ ցանկութիւնը գործադրում են անբան անասունների վրայ: Շվեյցարիայում, ուր անհատի իրաւունքները այնքան յարգուած են, ուր հասարակական ու անհատական խիղճը այնպէս զարգացած է, անասունները դարձել են ընդհանուր խնամքի և գթութեան առարկայ. վիրաւոր ու վտիտ կենդանիներ այնտեղ խիստ հազուագիւտ են: Որքան ստրուկ և դժբախտ է մի ժողովուրդ, նոյնքան

նա անգութ է թէ դէպի իր նմանները, թէ դէպի կենդանիները: Շիրակի դաշտերում թափառող անասունները ոչինչ լաւան չեն ասում իրանց տէրերի նիւթական և բարոյական մակերևոյթի մասին:

Ահա այդ գիւղացիները, այդ անասունների տէրերը: Դէպի գետին կուացած՝ հողագոյն դէմքեր, որոնց վրայ յոյզերը վաղուց մարել են. յոգնած աչքեր, որոնք նայում են անծանօթին անվստահութեամբ, համարեա մի բնազդական վախով: Նրանք անցնում են մեր առաջից և մի այնպիսի հայեացք են ձգում անցորդի վրայ, որ կարծես ոչ մի լաւ բան չեն սպասում կառքով գնացող և լաւ հագնուած մարդուց: Հողին կպած մարդիկ են, քայլում են կուացած, միշտ մի բան խորհողի, փնդրողի տեսք ունեն, տքնել են, վաստակել հողի վրայ, բայց երկինքը յաճախ ի դերև է հանել նրանց աշխատանքը, փոթորիկն է փչացրել արտը, կարկուտը ոչնչացրել, հեղեղը տարել, ցաւը փրասել, միջատները կերել են. ահա թէ ինչո՞ւ գիւղացին վախենում է ամպից, քամուց, կայծակից, նա չի հաւատում երկնքի, կարեկցութեանը և աղօթքով է աշխատում մեղմել նրա խստասրտութիւնը: Այդ հասկանալի է, բայց մարդը... Ի՞նչ է արել նրանց մարդը, որ այսքան անվստահ են դէպի անծանօթ անցորդները: Ո՞վ է սպանել սրանց մէջ հաւատը դէպի իրանց նմանները. ո՞վ է վիրաւորել նրանց հոգին և կասկածի, անվստահութեան, յարատև երկիւղի թոյնը կաթեցրել այնտեղ:

Բոշաների պէս սրանք էլ խեղճ, կողոպտուած հոգիներ են:

Գնում ենք անընդհատ, բայց տեսարանը չի փոխուում, միշտ դեղին խոզաններ և նրանց մէջ էլ գալարուն Ախուրեանը, հեռուն՝ Ալաշայի լեռները, դէպի աջ՝ Արագածը, որ անգալար ձևափոխուում է, քանի փոփոխուում է մեր տեղը: Ախուրեանի փերին տեղ-տեղ երևում են բոստաններ, կանաչ օազիսների պէս, որոնք ոռոգւում են ջրհան անիւներով: Կառապանը հաւատացնում է, որ Ախուրեանից մի փոքր ջուր խլելու միակ միջոցն է այդ և որ ջրի սակաւութիւնն է պատճառ, որ Շիրակի հարթութեան վրայ ծառեր չկան: Ես չեմ հաւատում, ինչքան և խորից հոսելու լինի Ախուրեանը, այնուամենայնիւ բարձրերը, դէպի ակունքը փորած առուներով կարող է ծեծել աւելի և աւելի ցածացող հարթութիւնները: Համարեա հաստատ կարելի է ասել, որ շիրակեցիների նախահայրերը Ախուրեանից աւելի լայն չափով են օգտուել քան այժմեան սերունդը: Վաղուց է ինչ մեր երկրում հինը կորել է և նոր ոչինչ չի ձևնարկուել: Կեանքը քարացել է և ամուլ կտրել: Մի փոքր կուլտուրական ժողո-

վուրդը գէթ այս գետի ափերին ծառեր կը տնկէր, որ գոնէ ստուեր լինէր ճաշերին այնտեղ մակաղող հօտերի և նախրի համար: Գնահ, որքան ուզում ես, բայց ծառ չկայ, Ախուրեանը հոսում է մերկ ափերի մէջ, նրա վրայ կամ տեղ-տեղ քաշ ընկած ժայռերն են հովանի անում, կամ երկնքից սահող ամպերը: Բայց ահա մի ծառ, մի աւերակ ծառ ամայի դաշտի մէջ, ոչ հեռու Ախուրեանից, մի փոքրիկ, կանաչաւուն հարթութեան մէջ ցցուած: Քիչ անգամ կարելի է աւելի տխրութիւն տեսնել, մի անշունչ առարկայի արտաքինի մէջ: Այս խեղճ ծառը ցըցուած է մեն-մենակ շրջապատի մերկութեան մէջ, վերից ճիւղերը փշրած, վարից բունը վիշաւոր ու ծուռած, կարծես երկնքի բոլոր կայծակները նրա գլխին են ճայթել, բոլոր շանթերը նրան հարուածել: Սակայն դեռ փոքրիկ սաղարթ ունի իր վիշաւոր ոստերի վրայ և այնտեղ ծուարում են բազէներից խուսափած խղճուկ ճնճղուկները: Եւ ինչ շատ են նրանք այդ մի հատիկ ծառի աղքատիկ սաղարթի տակ. և դեռ չեն դադարեցրել իրանց խոռված ճթճթոցը, իսկ վերևում մի ուրուր շարունակում է իր պտոյտները, սրատես աչքերը գետնին յառած: Խեղճ, վիշաւոր ծառ, և նա այնքան կեանքերի է ապաստան տուել այս ամայի հարթութեան մէջ: Սքանչելի խորհրդանշան կուտուրայի:

Ախուրեանի ամայի ափին մի հատ ծառ կայ լքուած ու վիշաւոր, և նրանից քիչ հեռու մի աղջիկ է թափառում մոլար, սև մագերը խիւ, տեսքն՝ այլանդակ: Քերծուած և ճաքճրքոտած ստներով նա անյոյս կերպով խառնում է գետափի խիճերը մի թանկազին բան փնդրողի մտահոգութեամբ, կամ քայլում է գլուխը կախ, աչքեր միշտ ստներին յառած, քայլում է մի ուղղութեամբ, ապա յանկարծ դառնում դէպի միւս կողմը և այսպէս անվերջ: «Խենթ աղջիկ է» ասում է կառապանը այնպիսի եղանակով ինչպէս կ'ասէր «ձի է, էշ է, եզ է»:

Խենթ աղջիկ...

Դարձեալ մի խեղճ, կողոպտուած հոգի. իր պէս մենաւոր, իր պէս անտէր ու լքուած ծառի հետ այս աղջիկը այս երկրի վիճակի պատկերն է ներկայացնում: Կողոպտուած է յարատե տքնող, յարատե աղքատ և միշտ դողացող մարդը: Կողոպտուած է հողը, որ յոգնել է դարերի մշակութիւնից առանց պարարտանալու, լեռները ցցուած են լերկ ու ամայի, ինչպէս և դաշտերը, կողոպտուած է ամբողջ երկիրը իր հինաւուրց սքանչելի քաղաքակրթութեան զարդերից, և նրանց տեղ մնացել է միայն աւեր ու անապատ:

—Ի՞նչ է այն, կառապան, որ երևում է բլրի կատարին այ, դէպի աջ:

«Մատուռ է» լինում է պատասխանը:

—Ապա այս միւսը...

«Աւերակ վանք»:

—Իսկ այն՝ որ հարթութեան վրայ է մեն-մենակ.

«Եկեղեցի է, աւերակ եկեղեցի է, հնուց մնացած հայու ժամեր են, պարոն, շատ կան էս կողմերում», աւելացնում է նա մի ընդհանուր ֆորմուլայով պատասխանելով իմ անվերջ հարցերին:

«Հնուց մնացած հայու ժամեր են և շատ կան էս կողմերում»...

Եւ ճիշտ որ շատ են նրանք՝ այդ «հայու աւերակ ժամերը». մեր երկիրը հէնց դրանով է հարուստ, խեղճ, միամիտ կառապանը որ մէկի անունն ասի ինձ: Բլուրների կատարներին և լեռան լանջերին ցցուած են նրանք այդ «աւերակ ժամերը» որպէս ծեր հովիւներ, որոնք ամայութեան վրայ ձեռները ճակատներին դրած՝ դեռ նայում են հեռուն վնդրելով իրանց հօտը, որ չկայ ու չկայ... Դարեր են անցնում դարերի յետեից և նրանք նայում են, մինչև որ մի սև գիշեր անդառնալի կերպով կ'ընկնեն գոռ փոթորիկի սակ:

Եւ որտեղից որտեղ, նայում եմ այդ աւերակ ժամերին և միտս են գալիս վրացի հայրենասէրները, Ծերեթեթիւներ ու Ճառճառաձէներ: Մեղադրել հային՝ թէ նա աշխատում է սեփականել Վրաստանի հին վանքերը, երբ մեր երկրի իւրաքանչիւր բլրի վրայ միքանի հատ վանք է ցցուած. սա ո՛չ միայն արտուրդ է, այլ և անպատկառ, անազնիւ, զրպարտութիւն, որ իր արտաքինի տակ ծածկել է ինչ որ ուրիշ թոյն, այլ չարամիտ խորհուրդ, որից մարդ վարչում է:

Հազարաւոր տարիներից ի վեր հայ ժողովուրդի թիկունքը մաշկուած է իշխանական պալատների և վանքերի համար քարեր կրելով դէպի լեռնակատարները. անթիւ տարիներ նա շարունակ կողոպտուած է նիւթապէս, բարոյապէս, մտաւորապէս. յոյն ու արաբը, թաթարն ու պարսիկը հաւասար եռանդով են գործել աւերելու և կողոպտելու մեր սքանչելի քաղաքակրթութիւնը: Եւ այսօր հովիւ չկայ, որ իր հօտը մակաղելու համար հայ վանքի ստուերը չընտրի, բարբարոս քիւրդ ու թուրք չկայ, որ իր վրանի ցիցերը խփելու, կամ գոմի մտուրը շինելու համար հայի հին յիշատակարանների քարերը չզողանայ: Եւ վրացի գլուխներ են ճարւում մեղադրելու հային, թէ նա գողանում է վիրական վանքերը: Ողորմելիներ, մեր

անթիւ վանքերն ու պալատներն այսօր անասունների կայաններ են, ի՞նչ անենք ձերը: Բայց զրպարտող տրամաբանութիւն չունի: Ի՞նչպէս չիղել հայկական առածը. «հայը գէլ եղաւ աշխարհի գառը կերաւ». ձեր ի՞նչը տարաւ խեղճ ճաւճաւածէներ, Ծերէթէլիներ:

Ճանապարհից աջուձախ անընդհատ երևում են մեծ ու փոքր գիւղեր Ախուրեանի ափերին շարուած: Կառապանը ասում է իւրաքանչիւրի անունը աւելացնելով՝ որ հայ գիւղեր են: Առանց ասելու էլ ես գիտեմ, որ հայ գիւղեր են դրանք. եկեղեցին այդ վկայում է, սև՝ եկեղեցին: Բոլոր այդ գիւղերը նման են իրար: Խիտ առ խիտ իրար վրայ կուտուած՝ տները հազիւ են երևում գետնի երեսին: Բոլորը տափակացած՝ կպած են հողին, բոլորը իրար են խառնուել և մի անորոշ ժխոր կազմել: Բարձր է միայն սև քարէ եկեղեցին, որ իշխում է բոլոր տների վրայ: Ոչ մի ծառ, ոչ մի պարտէզ շրջակայքում կամ գիւղերի մէջ: Բուսականութեան սովոր աչքին շրջակայքի պէս ամայի պիտի թուային այդ գիւղերը, եթէ չլինէր շների հաջոցը կամ հատ-հատ մոլորուած անասունները, որոնք կանգնած են միևնոյն տեղում երազող տեսքով, կամ, քայլում են անորոշ կերպով: Աշնանը կենդանիները միշտ ախուր, վհատուած տեսք ունեն՝ մանաւանդ՝ երբ մենակ են ձգուած դաշտի մէջ. բայց այս տափակացած, ձխուած գիւղերի կողքին նրանց տեսքըն էլ աւելի յուսահատ է:

Ճանապարհը՝ Ալեքսանդրապոլից դէպի Անի, որ անցնում է այնքան գիւղերով և միակ հաղորդակցութեան միջոցն է, ազգաբնակչութեան տնտեսական կեանքի միակ զարկող երակը, որով հազարաւոր մարդիկ են անցնում սայլերով, ձիերով կամ ոտքով, այդ միակ ճանապարհը ողբալի պատկեր է ներկայացնելու: Չեմ ասում, որ նա քարքարոտ է և խորտ ու բորտ, որ նա բարձրանում է և իջնում անտեղի կերպով, որ կառքի ցընցումները մարդու աղիքներն են գալարում, ամեն անգամ, երբ անիւները վար են ընկնում մի քարի վրայից միւսի վրայ բարձրանալու համար: Այս բոլորը թերութիւններ են, որոնց հետ մեր երկրի ճանապարհորդը ստիպուած է հաշտուել. տրտունջն անօգուտ է, դա մեր երկրի օրգանական մասն է: Բայց ցան այն է, որ այս ճանապարհը յիշած բոլոր թերութիւնների հետ ունի մի առանձին վհատեցուցիչ կողմ, նա կարծես յատկապէս այնպէս է շինուած, որ կաւքեր ու սայլեր անպատճառ որոշ տեղերում շուռ գան: Կառապանն այդ գիտէ, նա հեռուից տեսնում է նշանակալից տեղերը և կէս ժպտով, կէս դառնացած, խնդրում է վար իջ-

նել կառքից և ոտքով անցնել վտանգաւոր տեղը: Եւ այսպէս քանի՜ անգամ:

Ահալ իսկ հայ գիւղին մօտ Ախուրեանը մի պտոյտ է կազմում մի բլրի ստորոտում և լճանում մի անդնդախոր վիհի մէջ: Հէնց այդ վտանգաւոր վիհի վրայից է անցնում ճանապարհը: Անձրևի ջրերը սրբել, տարել են ճանապարհի երեսը և առաջ է եկել մի սուր զարիվայր, որ շեշտակի վազում է դէպի ջրով լի վիհը: Եւ ճանապարհորդները և՛ կառապանը ոչ միայն ստիպուած են վար իջնել, այլև շրջապատել կառքը, կախուել ձիերի սանձերից, որ նրանք չայլթաքեն և վայր չըզլորուեն: Մի անգոյշ քայլ և բոլորը Ախուրեանի մէջ կը թափուեն, որովհետև վտանգաւոր եղբին ոչ մի պատուար չկայ, ոչ ցիցեր, ոչ քարեր: Բարձրանում ենք տանջանքով բլրի կատարը և շունչ առնում գոհութեամբ, կարծում ենք, թէ ազատուած ենք. բայց միւս կողմն իջնող ճանապարհը նոյնքան վատ է. այստեղ անձրևների ջուրը հոսել է ճանապարհի երկարութեամբ և բաց է արել մի քանի առուներ, որոնց մէջ պէտք է զգուշութեամբ յարմարեցրել կառքի անիւները, շուռ չգալու համար: Շարունակել անկարելի է. կրկին վար ենք իջնում: Երևակայում եմ, թէ ինչպէս պէտք է անցնել այս ճանապարհով անձրևոտ եղանակներին, ձմրանը, մանաւանդ գիշեր ժամանակ: Դա մի կատարեալ մարտիրոսութիւն է:

Եւ գիւղը, բազմամարդ գիւղը մեր առաջն է, հարիւր քայլի վրայ, նա ամեն ժամ տեսնում է այս բոլորը. անթիւ անգամ այստեղ սայլեր են շուռ անցել, մէջքեր կտարել, անասուններ սպանել, բարիքը փչացրել:

Եւ գիտէք ինչ է հարկաւոր այդ բոլոր վտանգներից ազատ մնալու համար—տասն մարդի մի օրուայ աշխատանք, որ ճանապարհը հարթուի և երկու կողմում խրամատներ փորուի անձրևի ջրերի համար, որոնք հեշտութեամբ կը հոսեն դէպի Ախուրեանը: Էլ չեմ ասում որ քարի ու խճի առատութիւնն այս կողմերում այնքան հեշտացնում է մի լաւ խճուղու շինութիւնը, գոնէ վտանգաւոր տեղերում:

Չգիտես վրդովուե՞ս, անի՞ծե՞ս, թէ արտասուես այս ժողովրդի անծայր տգիտութեան, բթամիտ անհոգութեան՝ այս զարմանալի փաստի առաջ, որպիսին այս ճանապարհն է: Որպէսզի մի այսպիսի սպանիչ երևոյթ հնարաւոր լինի որևէ երկրում, մեր ժամանակներում, երբ բոլորովին մօտիկ լեռան միւս կողմից սուլելով անցնում է երկաթուղին, պէտք է ժողովուրդը բրոնզէ գլուխ ունենայ, ուր ոչինչ չի թափանցում: Ամբողջ տարիներ, նոյնիսկ զարեր այս մարդիկը կարող են անցուղարձ անել

այսպիսի ճանապարհով, կ'անիծ' իրանց ճակատագիրը, երբ սայլը ջարդուի, կը փշրեն անաւանների կողերը մահակով ու կը հայհոյեն, չգիտես ո՞ւմ, թէ մարդ մեռնի սուգ ու շիււանով հողին կը յանձնեն և կ'ուտեն հողու հացը և այնուհետև դարձեալ կը շարունակեն անցուղարձը, նոյն ճանապարհով, նոյն տնաքանդ արկածներով և միշտ անվրդով ու խաղաղ, ասես ոչինչ պատահած չը լինէր: Ինքնասպան ապուշներ... մարդ ամաչում է այս աստիճան բթամտութեան առաջ, հայեր են...

Ահա և գիւղը, ահա այն ժողովուրդը, որ գիտէ մեռնել և արտասուել միայն՝ առանց մտածելու, որ կարելի է խուսափել գերեզմանից և՛ արցունքից: Շարուած են կամերի վրայ և անասունները՝ նրանց պէս խեղճ, նրանց պէս հնազանդ՝ քաշում են նրանց չոր հէղանի վրայից անվերջ պտոյտներով: Ողջ գիւղն է այստեղ: Կոացած գլուխներ, լայն, տափակ քրտնաթոր թիկունքներ, որոնք դարերի ընթացքում այնքան ձեծուել են, անարգուել, վիրաւորուել: Նայում եմ այդ պատկերին, և ինձ համար հասկանալի է դառնում այս մարդասպան ճանապարհը: Դարերի մտախուղը պնդացրել է սրանց հողու աչքերը, և յարատև բեռը ոչնչացրել կամքը, ձեռներէցութեան ոգին սպանել: Էլ մարդիկ չեն, այլ երեխաներ, որոնց ձեռքից պէտք է բռնել, քաշ տալ յետևից, կամ առաջ քշել, տանել դէպի բարին և գեղեցիկը: Կամազուրկ, ստրուկ հօտ, որ առաջնորդ է ուզում, որ զոյւում է իր սեփական կամքից և հրաժարում է այն բոլորից, ինչ իրա անհասկացողութեանը ինքնուրոյն պատկերը կը տայ: «Սեղճ ժողովուրդ...» մտմտում եմ ես և մենք անցնում ենք: Այժմ մեր առաջն է Ախուրեանը, պէտք է անցնել: Այստեղ նա փոուել է քմահաճ կերպով, լայնացել է և իր ափերը ձգել իրարից հեռու, հեռու, հեռու: Կամուրջ չկայ, կառուպանը ասում է, որ ինքը կառքը կ'անցկացնի մի կերպով, իսկ մեզ խնդրում է իջնել, մի քիչ քայլել և ներքևում նաւակով անցնել: Այս էլ մի բան է, որ գոնէ նաւակ կայ: Կառուպանը քշում է կառքը ջրերի մէջ, իսկ մենք քայլում ենք նրա ցոյց տուած ուղղութեամբ և սուսում ենք նաւակին: Միևս ափից պոկւում է մի մութ ու անձև բան, որի մէջ կանգնած է մի մարդ և շարժւում է դէպի մեզ: Դա նաւակն է իր թիափաւրով: Նա համուում է մեզ և յայտնում է, որ նաւակը մի քառակուսի արկղ է, ո՞վ գիտէ սկզբում ի՞նչի համար շինուած. թիւ՛ գոմի մի թիակ է, իսկ թիաւարը մօտակայ բոստանչին է, որ իր պարապ ժամերին սիրում է այդ արկղով մարդիկ կրել մի ափից միևս ափը: Ոչ ղէկ, ոչ նստարան, յատակն էլ ջրով լի: Մենք կուշտ ծիծաղում ենք այս անօրինակ նաւակի

և նոյնքան սնօրինակ թիի վրայ. թիավարը միանում է մեզ հետ, բայց հաւատացնում է, որ իր նաւակը թէև սուր ծայր չունի և ոչ էլ դէկ, բայց ծովի վրայ էլ կը լողայ և հրաւիրում է նստել: Ոտներնիս թրջելով, մենք մի կերպ տեղաւորում ենք այս քառակուսի արկղի մէջ, և թիավարն սկսում է իր թիակով յետ մղել ջուրը, որ այս այլանդակութիւնը շարժուի: Եւ նա՛ այնուամենայնիւ շարժւում է, այդ քառանկիւնի նաւակը և մեղ միւս ասին է ձգում:

Աչքս չեմ կարողանում հեռացնել այս նաւակից, ակամայ հետևում եմ, թէ ինչպէս տէրը ցած իջաւ, ինչպէս նա պարանը կապեց ցցին լուծեամբ և թիակը ուսին դնելով պատրաստուեց հեռանալ: «Բարեկամ ասում եմ, զոնէ այս նաւակի քիթը սուր շինելիր, որ հեշտ պատուէր ջուրը»: Նա դարձեալ ժպտում է միամիտ կերպով և հասկացնում, որ այդպէս էլ լաւ է, և որ դեռ ոչ մի դժբախտութիւն չի պատահել: Ի հարկէ գետի վարար ժամանակ երթեկութիւնը դադարում է:

Ճոնապարհներ չկան, կամուրջ չկայ, նաւակն անդեկ ու քառակուսի, ամեն ինչ քառակուսի, և՛ կամք, և՛ միտք, և՛ հոգի: Ա՛խ, այնպէս կուզէի տեսնել այդ բոլոր գիւղացիներին միասին, խօսել, խօսել նրանց հետ և իմանալ, թէ նրանք ինչո՞ւ են այդպէս: Ես համարեա հաւատացած եմ, որ նրանք ինձ յուսահատական բաներ կ'ասեն, որ իմ նկատած ցաւալի երեւոյթը կապուած է մի շարք այլ պայմանների հետ, որոնց առաջ մարդ կանգ կաննի, ինչպէս սնանցանելի ժայռի առաջ մութ գիշերին: Այդ ժողովուրդը մի համր հսկայ է, որ միայն տանապանք է տեսել և նրա հոգին ծովի պէս մութ, ծովի պէս լայն, հազար ու մի համր գալտնիքներ ունի երևի: Եւ այդ հոգու ներսը թափանցելու համար ճանապարհը նոյնքան դժուարին է, որքան մեր անցածը: Ես չեմ խօսում նրանց հետ, ոչ որ չի խօսում. մենք նայում ենք ու անցնում, էլ ի՞նչ եմ վրդովւում ու անիծում: Ինձ պէս հազար մարդ օրական կարող է անցնել այս ճանապարհով, անիծել ու վրդովուել, և դրանով երկրի կարգի, կեանքի այս ցաւալի պատկերը չի փոխուի: Ուրիշ բան է հարկաւոր, ուրիշ խօսք՝ ջերմացնող ու թափ տուող, հիմնաւորապէս յեղաշրջելու այս անճարակ կեանքը, մի փոքր փայլ տալու այս հանդած աչքերին:

Այս ժողովուրդն այնպէս հեշտ է վերածնւում...

Իմ խոհերն ընդհատում է կառապանը որ խնդրում է առաջի վերելքը բարձրանալ և իրան հասնել, որովհետև այստեղ գետափին կառքը նստել հնարաւոր չէ: Կառապանի ցանկութիւնը կատարւում է ճշտութեամբ. բողբո՞ն ու արտունջն

անօգուտ է: Ճանապարհն անցնում է բարձրից, դէպի ձախ՝ խոր ձորակի միջից գալարում է Ախուրեանը, աներևոյթ ու անձայն: Հակառակ ափում երևում է մի հայ գիւղ. դա Չրփլուն է. պատկերը նոյնն է, մի սև քարաշէն եկեղեցի և նրա շուրջը ողորմելի խրճիթներ: Կալ ու կուտի օրերն են. գիւղի կողքին բազմաթիւ կամեր դառնում են հէշանի վրայ. և մարդ ու կին, մեծ ու փոքր աշխատում են նրա շուրջը: Հէնց այստեղ, կալերի դէմ ու դէմ է Ախուրեանի մի հին կիսակեր կամուրջը, որ այժմ կոչւում է Չրփլունի կամուրջ: Իջնում ենք կառքից, քայլում խոզանով և դիմում այստեղ:

Քսան մետր խորութեան մէջ հոսում է Ախուրեանը յոգնած ու ծոյլ. նա այստեղ դանդաղում և հանգստանում է հսկայ ժայռի հովանու տակ, որ բարձրանում է հէնց ջրերի միջից, միակուռը և ուղղահայեաց և յօնքերը կիտած, խոփոռ ու անհամբոյր՝ վերից նայում է վար: Հակառակ ափը, որի վրայ մենք ենք կանգնած՝ այնպէս անարկու պատկեր չունի. նա աւելիցած է հանդիպակաց ժայռից, բայց դարձեալ քարոտ ու կուռ պատուանդան է: Ահա այստեղ է բարձրանում այն կիկլոպեան շէնքը, որ մեր հայրերը անուանել են կամուրջ: Մի հսկայ ու խիզախ գործ, հզօր մտքի մի ըմբոստ յղացում, որ այժմ էլ իր խեղճութեան և աւերածի մէջ հիացմունքի, ապշութեան խառն զարգանդ է պատճառում նայողին: Մի հատիկ քարի կամար է ամբողջ կամուրջը, որ մի օր, մի հպարտ վարպետի կամբով բացել է թևերը և հանդիպակաց ժայռն ու գետը դըրկել անագին բարձրութիւնից, իր սալած մէջքը փոխելով կարաւանների, հօտերի, նախիրների, սայլերի, իշխանական կառքերի, աշխարհակալ գնդերի և նրանց երիվարների ոտքերի տակ: Եւ այսպէս դարեր ու դարեր՝ մինչև որ մի օր, մի անէծքի օր ասիական բարբարոսների մի արշաւանքի ժամանակ, նրանց պետը գտել է, թէ Ախուրեանն այստեղ կամուրջի պէտք չունի և հրամայել է խորտակել հայի հանճարի սքանչելի արտադրութիւնը: Եւ նրա աւերածը դուցէ աւելի դժուար է եղել քան կառուցումը: Հազիւ-հազ կարողացել են խորտակել կամուրջի մի բազուկը, այն՝ որ հանդիպակաց ժայռի ուսին էր յենուած: Ե՞րբ է կատարուել այդ բարբարոս գործը, ո՞վ կարող է ասել. միայն այդ ժամանակից Ախուրեանի վրայ կայ մի պատկեր, որ կարող է թռիչք տալ շատ բանաստեղծների երազուն մտքին, և թախծոտ, մելանխոլիկ հոգիներում ամենացաւոտ յուշեր զարթեցնել: Այս կամուրջի մնացորդը մի կատարի վիշապ է կարծես, որ վիզը գալարուն ու բաց երախով թափ առած նետւում է դէպի հակառակ ափը, ուր դարաւոր

ժայռն է ցցուած, իր հին պատուանդանը, մոայլ, անհամբոյր և անդրդուելի: Երկու ափերից յաղթական կերպով դէմ առ դէմ ցցուած այդ քարէ զանգուածներէց, չգիտես ո՞րն է ընտելեան և ո՞րը մարդկային ձեռագործ. թուում է, թէ երկուան էլ մի օրում, տարերային թափով դուրս են վիժուած երկրի արզանդից, և իւրաքանչիւրն աշխատում է առաջինը նետուել հակառակ ափը: Յուսահատ զայրոյթի պէս մի բան կայ մանաւանդ վրուած կամուրջի կեցուածքի, նրա ցցուած քարերի նոյնիսկ մահացու ճեղքուածքի մէջ, որ նրա թիկունքի երկարութեամբ անցնում է, որպէս մշտական սպառնալիք վերջնական աւերածի: Կանգնած են դէմ առ դէմ այդ ժայռն ու աւերակ կամարը և նայում են վար, ուր սև անդունդի մէջ գալարուում է Ախուրեանը, որը կարծես դիտմամբ դանդաղում է այստեղ իր ընթացքը մի փոքր դիտելու համար իր գլխի վրայ կախուած հա՞ր հսկաների պատկերը, մի փոքր զովանալու նրանց ստուերի տակ: Ժայռն ու կամարը էլ իրար չեն համնում, բայց ամենայն օր, առաւօտեան մէկը և երեկոյեան միւսը՝ իրանց ստուերներով փոխադարձ համբոյրի պատրանքով աշխատում են ապրել այն երազ օրերը, երբ նրանք գրկուած էին զոյգ սիրահարների պէս և միասին զուարճանում էին դիտելով իրանց պատկերը Ախուրեանի յեղյեղուկ ալիքների մէջ:

Բարձրանում ենք վեր, քայլում ենք կամուրջի վրայ, առաջանալով դէպի գետը. սալայատակը գետ պահել է հին ոտների տակ տրորուած քարերը, որոնց արանքից բարձրացած խոտը իր արմատներով կամաց-կամաց ճանապարհ է բաց անում անձրևների համար դէպի կամարի ներսը: Ա՛յնքան դարեր փոքրիկ ծակոտիներից անձրևի և ձիւնի շուրջ ծծուում է, սուզուում և հազիւ մինչև այժմ բացել է մի ճեղք կամուրջի երկարութեամբ, որ անշուշտ մի օր կը խորտակի այդ հսկայ կազմուածքը, որքան և նա կուռ լինի: Այս բարձրութիւնից դժուար է վար նայել ախուրեանին առանց սոսկումի և գլխի պոռոյտի, իսկ մօտենալ անդունդի վրայ կախուած կամարին՝ անկարելի է, անկման սարսափը նեղում է մարդուն:

Վար ենք իջնում և ներսի դռնից ներս ենք մտնում կամուրջի փորը. մեր առջև բացւում է մի նոր հետաքրքիր տեսարան: Երկու զուգահեռական կամարակապ սրահներ ձգւում են կամուրջի մի ծայրից միւսը, հեռաւոր տեղերից եկած կարաւանների և ճանապարհորդների ապաստանն է այս: Կամուրջն այսպիսով կրկնակի նպատակի է ծառայել: Դուրս ենք գալիս և կրկին նայում ենք վեր, դէպի կամուրջի կատարը, բարձր, սրբան բարձր է այն: Ձախ ափին՝ ժայռից հեռու խաղում են

գիւղի մանուկները, նրանք ձեռները ճակատներին հովանի արած՝ նայում են ճամբորդներին, ապա ահեղատեսիլ կամուրջին և զարմացած են ու հետաքրքրուած: Նրանք չեն համարձակուում մօտենալ գետին, ժայռի կատարից վար նայել: հետուից միայն դիտում են աւերակ կամարի ցից կատարը: Նըրանց ականջին մայրերը շատ են փսփսացել հին աւանդութիւնները այն երջանիկ օրերի, երբ վիշապ ու դև ձեռնասուն անասունների պէս քարեր էին կրում և սուրբերի աղօթքով հրաշքներ էին կատարուում, ինչպէս այս կամուրջը: Աւանդութիւններ... մեր հին, մեծագործ սերունդը իր փառքով ու թշուառութիւններով, իր զօրեղ կրքերով և ինքնատիպ քաղաքակրթութեամբ, նոր մանրացած խղճուկ սերնդի համար դարձել է լոկ աւանդութիւն, անհասանելի հրաշք, ինչպէս այս կամուրջը, որ մի դառն հեգնութեամբ կոչուում է Չրփլուի կամուրջ, այս խեղճ ու կրակ Չրփլուի, որ անշուշտ դողում է նրա աւերակներից և ուշ գիշերին լեգենդաներ փսփսում նրա անցեալի և նրա աւերածի մասին:

Աւանդութիւնների և աւերակների աշխարհ է մեր հայրենիքը...

Հեռանում ենք մտախոհ ու տխուր, թողնելով՝ որ ժայռն ու կիսաւեր կամարը՝ էլի դարեր, առաւօտ ու երեկոյ, ստուերի մահաշունչ համրոյր ուղարկեն իրար, այլևս երբեք չզրկուելու համար:

Ա. Ահարոնեան

(Կը շարունակուի)

ՁԿՆՈՐՄՆ ՈՒ ՖԷՅԱՆ

(Ծապոնական լեզունդա)

Հեռում, կապոյտ հորիզոնը՝ եզրափակող լեռնաշղթայի վրայ, լուսանում է երկինքը և՛ սիրահարուած աղջկայ երեսի նման՝ ալ գոյն է ստանում: Ծիծեռնակները վեր-վար են թռչում, բարձրասրուն արագիւնները իրանց երկար ու լայն թևերով դէս ու դէն են կտրում վազորդեան օդը:

Ծովի ափին մտախոհ կանգնած է Ֆուդձի սարը, որի ստորոտը փաթաթուած է թաւշեայ կանաչ գորգով, իսկ ձիւնապատ գագաթը շողշողում, պեծին է տալիս երկնի կապոյտում: Առաւօտուայ գունատ արեգակը աւելի ու աւելի բարձրանում է հորիզոնի վրայ, հեռուն աւելի ու աւելի լուսաւորում է: Ծառերի ճիւղերի մէջ աղմկում և՛ առանց խօսքերի՝ երգ է երգում քամին, որին դաշնակցում են շարժուող տերևները:

Տարածութեան մէջ, մի տեղից, լսում են սրնգի և քնարի երկչոտ, դողդոջուն, դիւթական ձայները...

Ձիւնի սպիտակ ֆօնի վրայ, լեռան գագաթի մօտ, դոյանում է մի ամպ, որը երերում է տարածութեան մէջ: Ամպը ճեղքում է— և մետաքսափայլ թևերը շարժելով՝ գետնի վրայ է իջնում մի շողաթաթախ, սքանչելի ֆէյա... Լսում է թևերի խշխշոցը, թևթև քամու ձայնը, և լեռների դիցուհին հանդարտ իջնում է գետնի վրայ:

Այդ ոգին, որը միայն շողազարդ երկինքն էր տեսել, հիմա յափշտակուած է երկրի սքանչելի տեսքով... Ֆէյան վազվզում է սիգաւէտ մարմանդով, քամին շոյում և համբուրում է նրա ուսերը, նրա շուշան մատները շքեղ ծաղիկներ են քաղում...

Յանկարծ նա բացազանչեց— նրա առաջ տարածուած էր ծովը!...

Այս ի՛նչ է: Երկնքի մի մասն է որ իր հետ ընկել է գետնի վրայ... կամ, կարելի է, սա որևէ մի աստծու ծածկոց է, որին ինքը չի ճանաչում...

Նա աւելի է մօտենում, թեքում է...

Ա՛խ, ինչպէս կը ցանկայի գէթ մի անգամ սուզուել այս ալիքներէ, այս վճիտ հեղուկի մէջ!

Փէյան արագութեամբ վար է առնում իր վրայից փետուրէ ծածկոցը, կախում է նրան սոճու ճիւղերից և՛ ճերմակ, ինչպէս խնձորենու ծաղիկ՝ սկսում է լողալ ալիքների մէջ:

Նրա կուսական սպիտակափայլ մարմինը ձուլում է ձիւնափայլ փրփուրի հետ:

Բամբուկեայ խրճիթից դուրս է գալիս Կիուն, մի երիտասարդ ձկնորս, և շտապում է դէպի ծով: Նա իր գլխին ձրկնորսական ցանց է տանում, որի հիւսուածքից նրա դեղնագոյն երեսին կլորածև ստուերներ են նկարում:

Ձկնորսը սիրոյ երգ է երգում. նա սիրեցեալ չունի—նա աստուածներին է ուղղում իր երգը նրա մասին:

Այս ի՛նչ է կախուած սոճու ճիւղերից: Սպիտակ ամպ է որ հողմը նեանել է այստեղ:

Կամ մեծ ձերմակ կարապի թևեր են:

Ո՛չ, դա բմբուլէ ծածկոց է... Դա թև է, դա ամպի տակ սաւառնոց թռչունի զարդ է...

Ձկնորսը աւելի է մօտենում, ձեռքերով շօշափում է Փէյայի հմայիչ պաճուճանքը: Հրաշալի բուրմունք է տարածւում ծածկոցից: Զարմացած ձկնորսը աշխատում է գտնել դիւթական ծածկոցի տիրոջը:

—Այս ինչ երկնային արարած է իր հրեշտակային ծածկոցը թողել այստեղ:

Ալիքների ազմուկը ձկնորսին ստիպում է նայել դէպի ծովը:

Կապոյտ ալիքների վրայ շողշողում է Փէյայի շքեղ ու սպիտակ մարմինը:

Ձկնորսը վազում է, իսկ գլխին ծածանւում է ցանցը և չի թոյլ տալիս տեսնելու:

Սակայն ձկնորսը ուշադրութիւն չի դարձնում, վազում է Փէյայի ետևից... Լեռների դիցուհին հրում է խիզախ ձկնորսին իր սպիտակ ուսով... Վերջապէս, յոգնած ձկնորսը ընկնում է ծառի տակ: Փէյայի սպիտակ ծածկոցը ընկած է նրա վրայ, ինչպէս քնած կարապ:

Այդ ժամանակ դիցուհին դուրս է գալիս ծովից և ծածկելով մարմինը, որը շողշողում էր ջրի ցնցուղի ազամանդներով ու զմրուխէ ծովասէզով, մօտենում է ձկնորսին և, պարզելով ձեռքերը դէպի նա, ասում է.

—Ո՛վ մահկանացու, տո՛ւր իմ թևերը. առանց դրանց՝ ես չեմ կարող վերադառնալ տուն:

Ձկնորսը չի լսում նրան—և հարցնում է.

—Անունդ թ'նչ է, դու ո՞ւմ աղջիկն ես:

—Ես ո՛չ հայր ունիմ, ո՛չ մայր, իսկ իմ անունը գիտեն միայն հողմերն ու լուսինը: «Ծովի ծաղիկ» կոչվր ինձ: Ձկնորս, տո՛ւր ինձ իմ թևերը, մի տրորի՛ր նրանց քո ձեռքերով:

—Օ՛, Ֆէյս, որին ես պիտի «ծովի ծաղիկ» անուանեմ, քո ծածկոցը կը տամ քեզ, միայն ասա՛—թ'նչ պարզև կը ստանամ դրա փոխարէն:

—Ի՛նչ որ ցանկաս!...

—Ցոյց տո՛ւր ինձ երկնքի բնակչուհի, Ուզումայի կախարդական պարը, այն պարը, որի օգնութեամբ աստուածները ամպերի մէջ կաւալարում են աստղերի շարժումները երկնակամարի վրայ...

Հրաշալի ձայներ տարածուեցին ծովի ավիին. նրանց իբրև պատասխան, արձագանք էր տալիս ակիքների շոյիչ աղմուկը, որոնց վրայ շարժում էին աներևոյթ ողիները, թմբուկների ձայները, սրինգների հրաշալի մելոդիան և ծնծղանների ակկորդները ներդաշնակում էին պարը:

Երկինքը բոսորագոյն է դառնում... Սքանչելի Փուղձին սփռուած է կուրացուցիչ շողակներով:

Պարի՛ր, դիցուհի, երկրի վրայ քեզ նմանը չկայ!...

Պարելով ու ձկնորսին շրջապատելով կախարդական օղակով՝ Ֆէյսն մի ճարպիկ շարժումով յանկարծ յափշտակում է իր ծածկոցը:

Օղակը լայնանում է... Ֆէյսն թևերը բանում, թափահարում է և սկսում է բարձրանալ դէպի երկինք: Նա արդէն Փուղձի զագաթի մօտ է, թառանցաւ Ուկուշումայի սիդաւէտ մարմանդները, անցնում է Աշիդակիի ձիւնի վրայով, անհետանում է...

Ձկնորսը ծունկ է չոքում, ձեռքերը տարածում է դէպի երկինք, դէպի անհետացող տեսիլը... Նրա յուսահատութեան մէջ այնքան զգացմունք կայ, այնքան անսահման սէր, որ Ֆէյսն յանկարծ կանգ է առնում:

Ժպտում է կախարդուհին և՛ թեքուելով՝ ընկնում է ձրկնորսի ոտների մօտ, ինչպէս վիրաւորուած թռչուն...

Սէրը յաղթանակեց...

Աղքատիկ խրճիթում նորապսակներից մէկը մոռացաւ երկիրը, իսկ միւսը՝ երկինքը:

Թարգմ. Սալլիմեան

ՄԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Ճամբորդներ էինք, ձիւն ու ձմրան ընկանք. ի՛նչ ձմեռ էր, բուք-բորան: Քամին տրորում, ծեծում, կըրծոտում էր մեզ և՛ լեռնակատարների վրայ, և՛ ձորերի մէջ և՛ կիրճերում. նա ամեն տեղ էր. ձիւնապատ, սառուց կտրած լեռները խօսք մէկ արած՝ հազար կողմից, հազար երախից փչում էին հա՛ փըչում իրանց մահաբեր շնչով:

Դողում էինք ու քայլում գիշերով. միշտ գիշերով պէտք էր գնալ: Եւ դուման էր մեր գլուխների վրայ ձիւնի ու մրրիկի դուման:

Ճամբորդներ էինք, խենթ ճամբորդներ և մրրիկների բերանն ընկանք, ինչպէս ուշացած թռչուններ, որոնք յետ են մնացել մայր կարաւաններից և տարւում են փոթորիկների սոյլերի մէջ վերջին թափով:

Անծանօթ ճանապարհների վրայ, խաւարի մէջ, քաղցից ու ցրտից դողալով՝ սարսափը հեզնելով՝ մենք գնում էինք անընդհատ, ապաստան ու հանգիստ էինք փնդրում. քանի՛ օր էր...

Չկար ո՛չ մէկը և ո՛չ միւսը:

Քամին մեր մշտական ուղեկիցն էր. նա էլ կարծես ապաստան էր փնդրում նզովելով լեռները ու ձորերը. իսկ քաղցը, ցուրտն ու խաւարը՝ հսկայական չղջիկների պէս իրանց սև թևերը տարածել էին մեր տառապած, անհանգիստ գլուխների և՛ լացող երկրի վրայ:

Ո՛ւհ մեր ճանապարհը... նա ամայի էր ու մեռած.

և այդ մահուան խորունկ վիշտը մեր հոգիների մէջ լուռ մխում էր:

Եւ այրերը իրանց մուկ ծոցերից խմբերով դուրս էին վիժում քաղցած գայլերին, որոնք սողում էին մեր յետևից հոտոտելով մեր անցած շաւիղները, ատամները չխչխկացնելով իրար էին կրծոտում անզօր կատաղութիւնից, դուռնները վեր ցցած յուսահատ ոռնում էին սև խաւարի մէջ, ու կըրկին կրծոտում, կրկին բզկտում իրար: Անասող երկնքի տակ՝ հեռաւոր խաւարի միջից նրանց աչքերը փայլվելով էին մահասարսուռ բոցով, երբ յոգնած արիւնոտ ու անօգուտ պայքարից՝ նրանք իրար կողքի շարւում էին ձիւնոտ լեռնալանջի վրայ և հեւլով ու դողդղալով նայում էին դէպի անորոշ հեռուն գազանի ահաւոր յուսահատութեամբ:

Եւ մենք քայլում էինք. խենթ ճամբորդներ էինք, ճար չկար: Պէտք էր կտրել սար ու ձոր, որևէ ապաստանի հասնելու համար: Երբ տանջանքն ու ցուրտն են ուղեկից մարդուն, իսկ երկինքը իր սև գանգուածով կապարի պէս ճնշում է վերից, ճանապարհը վերջ չունի: Սարերը ձմեռ ժամանակ փոթորկի տակ:

Ձիւնապատ, ժայռոտ, հրէշաւոր գալարումներով, միշտ սպառնալի ու քիչնոտ, նրանք ողջ նման էին իրար և մեր առջևն էին ցցւում միմեանց յետևից: Ձիւնը չանգուելով, մերթ ծնկների վրայ, մերթ սողալով պէտք էր բարձրանալ իջնել, վեր՝ վար, վեր՝ վար. վերջ չկար:

Եւ քամիները լալիս էին խաւարի մէջ. և՛ գայլերը շարունակում էին ոռնալ մեր յետևից. նրանց խռպոտ ձայնը քամու հետ բարձրանում էր ձորերից, ինչպէս անդունդների միջից, ու մահուան կոչի պէս մեն-մենակ ոլորւում էր մեր գլուխներից էլ, լեռներից էլ բարձր, բարձր:

— Սադօ, այ Սադօ,՝ ուր ենք գնում:

— Ձհանդամը, եղաւ առաջնորդի պատասխանը:

— Ճանապարհը չէ՞ք կորցրել:

— Չէ, չէ:

— Բայց սա ճանապարհ չի կարող լինել, տնաշէն, մինչև ծնկներս ձիւնի մէջ:

— Գայլերի ձայնը լսում էք. մենք էլ նրանց պէս, սողամարդութիւնը սր օրուայ համար է, ուղիղ ճանապարհով տատա էլ կ'երթայ:

— «Սուրբ Ախպէրիկը» հեռու է դեռ:

— Մինչև լոյս կը հասնենք, թէ չհասնենք՝ այրեր շատ:

— Քաղցած ենք, տնաճանդ, այրերում ի՞նչ անենք:

— Այրերում մանանայ կայ:

— Սաղօն հեգնում էր, այդ զարմանալի Սաղօն, որ յոգնել չգիտէր: Եօթ օրից ի վեր քայլում էինք, թրջուած, մերթ կուշտ, մերթ քաղցած, իսկ Սաղօն շարունակ հեգնում էր, կամ հայհոյում: Նա հայհոյում էր ամենքին, ամեն ինչ, և՛ մեզ, և՛ քամին, և՛ ձիւնը, և՛ ցուրտը, և՛ ճանապարհը:

— Սաղօ, «Սուրբ Ախպէրիկի» մօտ գիւղ կայ:

— Բա՛, իսօ չոլի մէջ չի սուրբը, գէլերը կուտեն չէ՞:

— Հայ կը ճարուի՞:

— Հայ... ի՞նչ հայ, գառով փլաւ, գաթայ...

Նա դարձեալ հեգնում էր. լռեցինք:

Մեր ճանապարհին գիւղեր շատ տեսանք, ուր ցերեկը՝ շարժում և գիշերը ճրագ չկար: Եւ ամեն տեղ սողն էր իշխում, համատարած, աշխարհաւեր սովը, որ առասպելական հրէշի պէս թուխս էր նստել կեանքերի վրայ, քամում, գալարում էր աղիքները: Հազար-հազար աչքեր մոմուռ էին քամում, սարից, քարից արցունք էր գալիս:

Հէշտ է ասել՝ սով...

Քանի՛-քանի դուռ թակեցինք, և ամեն տեղ սողն էր մեր առաջը ցցուում, և հողիները զարհուրելի աւերածը: Մենք՝ որ մեր դժոխային ճանապարհներում սովորել էինք հեգնել, և՛ մահ, և՛ գազաններ, և՛ մրրիկ, և՛ ցուրտ, նողկանքով խոյս էինք տալիս հողիները աւերածից ու սովից ու գնում էինք լեռները, գազանների

հետ այրերը կիսելու և ժայռերի ձիւնապատ կուրծքը չանգուելու մեր անվերջ վերելքների համար: Կտրուկ ճանապարհը լեռներով էր: Մենք խենթ ճամբորդներ էինք:

Լուսաբաց էր. քամին ու ձիւնը դադարել էին. մեր առջև, ձորի մէջ, ինչ որ մութ կէտեր, սևին էին տալիս:

— Այ «Մուրբ Ախպէրիկը» նրա կողքին էլ գիւղն է, ասաց Սաղօն կանգ առնելով և մատով ցոյց տալով:

Վաղորդեան կիսախաւարը և մառախուղը արգելում էին որոշ կերպով տեսնել գիւղը, բայց կասկած չկար, որ մեր առաջը աներ էին: Մենք էլ չէինք քայլում, այլ զլորում էինք լեռնիվար: Ի՞նչ էր սպասում մեզ այնտեղ: Եթէ վերստին ստիպուած լինէինք լեռները կորչել... վախենում էինք այդ մասին մտածել անգամ: Երկու օր էր համարեա ոչինչ չէինք կերել, յետոյ մենք կապտել, ընդարմացել էինք ցրտից. մեր ոտներն անզգայացել էին, և մատերնիս ցուրտը տարել:

Առաջանում էինք առանց աչքերնիս գիւղից հեռացնելու. կարծես վախենում էինք, թէ նա յանկարծ մեր աչքից կը ծածկուի, կը հեռանայ, եթէ մի վայրկեան չնայենք: Գիւղում սակայն շարժում չկար, վաղորդեան կեանքը խեղդուած էր կարծես զիշերային խաւարի ծանրութեան ստիկ: Խրճիթները չէին ծխում, փողոցներում կենդանի շունչ չկար: Միթէ գիւղը դեռ քնած էր: Բայց ոչ, ահա երկու հոգի յայտնուեցին և գալիս էին ուղիղ մեզ վրայ: Այդ լաւ նշան էր: Ահա նրանք հասան մեզ և կանգ առան: Նրանք բռնած ունէին մի երկար գաւաղանի երկու ծայրերը. կոյրեր էին: Աչքերի սև խոռոչները դէպի երկինք ուղղած՝ ու բերանաբաց, նրանք ականջ էին դնում մեր ոտնաձայնին և ըստ երևոյթին զարմացած էին.

— Եթէ Աստուծոյ մարդ էք, ձայն տուէք, ո՞վ էք և ո՞ւր էք գնում, ասաց ծերունի կոյրը:

— Ճամբորդներ ենք, կոյրեր չենք, պատասխանեց Սաղօն, հանգստանալ ենք ուղում:

—Հեռու, հեռու՛ն քնացէք, երբ կոյրերը փախչում են, սաղերը տեղ չեն գտնի, նայեցէք, այս խրճիթների տակ բոլորը լալիս են քաղցից ու ցրտից:

—Տաճար է, խօսմ բերան չի, մոմոաց Սաղօն, պապանձուրի էէ... լսիր, դարձաւ նա զէպի կոյր ծերունին. խէրով մարդ ես երևում, լուսաբացին առաջներս դուրս եկար, գործներս յաջող կ'երթայ, ասան, երէկ հաց կերել ես...

—Մի դարէ հաց:

—Ո՞ր տեղից էր:

—Գեղից:

—Երբ կոյրը մի դարէ հաց ճարի, աչքանին երկուսը կը գտնի:

—Աստուած տայ:

—Ո՞ւր էք գնում երկուսով էլ կոյր:

—Էն կողմը. ծերունին ձեռքը մեկնեց զէպի առաջ:

—Գէլերը կուտեն ձեզ:

—Գէլերը վաղուց են կերել մեզ, էս զիւղում տուն չկայ, որ գէլ մտած չլինի, սո՛վ է, սո՛վ...

Կոյրերը իրար քաջքշելով դիմեցին զէպի գիւղից դուրս. նրանք երևի գնում էին ուրիշ գիւղ գլուխ դնելու տեղ փնդրելու, իսկ մենք, հետևեցինք Սաղօին: Շուտով նա կանգ առաւ մի դրան առաջ, որի շէմքի երկարութեամբ պառկած էր մի պառաւ բրդաթող շուն:

—Ճանապարհ տուր, անաէր, կանչեց Սաղօն ոտքով հրելով կենդանուն:

Շունը վերկացաւ, իր վիրաւոր, օսկրոտ մարմինը քաշ տալով զզգգուած, զողզոջուն օտների վրայ: Նա շարժուեց առաջ անյոյս ձանձրոյթով՝ ասես գրնում էր տեղ փնդրելու վաղուց հետէ անտանելի դարձած կեանքի բեռը վար դնելու համար: Մարմնի յետին մասը քաշ էր ընկնում ու երերւում իրանից անկախ. նա անկարող էր քայլել. կանգ առաւ, մագրու: ու պառաւ դունչը բարձրացրեց վեր և քանի ոյժ ունէր

ոռնաց ողբաձայն, դժոխային ելևէջներով: Սաղօն կանգ առած նայում էր:

—Հ'ը, սասկիս հն, մրմուսց նա ատամների արանքից. բէխէր տէրդ մեռնի, ժամանակ գտար կաղկանձելու. քէֆը տեղն է, երևի կուշտ է, իսկի մեր հալը չի հարցընում:

—Տօ, էտ թոզ, տնաքանդ, դռնեցինք այսուայն կողմից, ժամանակ գտար սրախօսութեան, կոտորուեցինք էէ:

Սաղօն լուռթեամբ հրեց դուռը, որ ճոնչաց, սուր, անախորժ ճիչով, կարծես վազուց հետէ նա չէր բացուել և դժգոհ էր, որ անհանգիստ են անում: Ներս մըտանք ու կանգ առանք:

—Ճամբորդներ ենք մի օրուայ ապաստան, մի փոքրը հաց ենք խնդրում: Խրճիթի կեղընում, թոնրի եղրին կծկուած էին մի ծերունի ու մի պառաւ: Չագերը կորցրած ծեր թռչունների էին նման, որոնք էլ ոչ աւերակ բոյն նորոգելու քաջութիւն ունին, ոչ էլ հեռանալու սիրտ: Մեր աղմուկի վրայ նրանք գլուխները մեզ դարձրին, մի վայրկեան նայեցին այնպէս՝ ինչպէս կը նայէին, եթէ ներս մտնէր տանու կատուն, ապա դարձեալ մնացին իրանց տեղերում, պաղած աչքերը փոխադարձապէս իրար երեսի յառած: Անյոյզ, անվիշտ այդ դէմքերը իրանց քարացած հայեացքով յիշեցնում էին այն արձանախմբերը, որոնք զարդարում են հինաւուրց շիրիմները և իրանց քար լուռթեամբ խօսում են անդառնալի մահից: Թւում էր, թէ նրանք հսկում էին կատարում, այդ երկու ծերերը, գերագոյն հսկումը անցքերի, որոնք իրանց ահաւոր այլանդակութեամբ ոչնչացրել էին նրանց էութիւնը: Նրանցից յւրաքանչիւրը դիմացիների պաղած բիբերի վրայ կարծես լուռթեամբ կարգում էր իր դատավճիռը, և հնագանդ ականջ դնում այն անվերջ փսփսոցին, որ լսում է աւերակ տներից և հանդարտ սպասում էր, որ սև ու ցածրիկ սոռաստաղը կամաց կամաց իջնի իրանց յոգնած գլուխների վրայ:

Սև առաստաղը սակայն չէր իջնում. մենք էլ նրատակն էինք կանգնած ու նայում էինք այնպէս՝ ինչպէս յուզարկաւորները կը նայէին դազադների մէջ պառկած մեռելներին: Մենք սպասում էինք մոռացած և՛ քաղցը, և՛ յոգնածութիւնը. նայում էինք և սպասում, թէ ի՞նչ է լինելու: Նրանց գերեզմանային լուծիւնը մեզ խեղդում էր և նրանց մի խօսքը, մի շարժումը մեզ համար դարձել էր գերագոյն պահանջ:

— Ճամբորդներ ենք, կրկնեց Սաղօն, մեղմ, ընկճուած ձայնով և գլուխը քաշ ձգեց յանցաւորի պէս: Այն ժամանակ ծերունին կրկին նայեց մեզ, ոտքի կանգնեց երերալով, չորացած գողգոջուն ձեռքով բռնեց երկար, սպիտակ միրուքը, աչքերը երկինք բարձրացրեց մի վայրկեան, շրթունքները մի բան մըմնջացին, մարած աչքերը թացացան. յետոյ դարձեալ մեզ նայեց, ձեռները տարածեց մերկ, դատարկ խրճիթի մէջ ու խեղդուած ձայնով կրկնեց.

— Զրմմէ՛ն, զրմմէ՛ն, զրմմէ՛ն...

Զարհուրելի էր այդ «զրմմէ՛նը». կարծես ծերունին չէր ասողը, այլ մի ուրիշ արարած, զուցէ մի կենդանի թաղուած մեռել, որ շիրմի տակ կրծոտում է իր դազադի խուփը, չանգուում է սեփական կուրծքը և հեծեծում է արիւն թքելով մահուան ճակատին: Կիսախաւար, կիսաւեր ու ցուրտ խրճիթի մէջ այդ ձայնը տարածուեց ցաւոտ շեշտերով, մտաւ բոլոր անկիւնները և արձագանգ տուեց մեր կրծքերի տակ, մեր հոգիների մէջ: Սարսուռ անցաւ մեր մարմնով, մենք իրար եկանք ակամայ, աւելի կծկուեցինք, աւելի խեղճացանք, աւելի դող զգացինք: Մենք պատրաստ էինք դուրս փախչելու, բայց նոյն վայրկենին ոտքի կանգնեց պառուը, առաջացաւ դէպի մեզ, բերելով ձեռքին մի փոքրիկ կաւէ ամանի մէջ մի բուռը եփած գարի, որ նա դէմ արեց Սաղօին բացազանչելով.

— Քաղցած ենք... քաղցած ենք... անտէր ենք...

Սաղօն յետ-յետ քաշուեց սոսկումով. նրա հետ

մենք էլ երեսներս դարձրինք և դողալով, հեալով իրար հրհրեցինք ու դուրս փախանք: Դուռը էլի մի անգամ ճռնչաց և նրա ձայնը այս անգամ հեզնույ, դիւային քրքիջ էր, որից մենք շտապով խոյս էինք տալիս չլսելու համար:

Լնւռ անցնում էինք խուլ, ամայի փողոցներով. լուռ էր և Սաղօն. նա էլ սիրա չունէր հեզներու, նոյն իսկ մի անգամ դաստակով սրբեց աչքերը, մի բան՝ որ նրան հեշտ չէր պատահում: Քայլում էինք գլխիկոր, փախչում էինք ոչ միայն դժբախտ ծերերից, այլ և գիւղից, փախչում էինք առանց յետ նայելու: Եւ մեր յետևից սողում էր մի բան, սարսեցուցիչ, ցուրտ բան, որ փափսում էր մեզմիւ ծերունու արտասանած ահաւոր ու խորհրդաւոր բառը՝ «զրմմէ՛ն, զրմմէ՛ն...»

Ի՞նչ էր ուզում ասել դժբախտ ծերը իր այդ մի հատիկ բառով, ի՞նչ մտքեր էին դառնում նրա խղճուկ գանգի մէջ, ի՞նչ վերյուշեր էին տրորում նրա ողորմելի ուղեղը: Ո՞վ կարող էր իմանալ: Մի բան պարզ էր մեզ համար, այդ ձայնը կ'ուզէինք չլսել:

Ծանր ցնցումից կամազուրկ ու անզօր՝ նայում էինք Սաղօին, նրան էինք յանձնել մեր բախտը: Սաղօն՝ որ լաւ զգում էր մեր դրութեան բոլոր ծանրութիւնը, էլի միքանի դուռ հրեց, ներս նայեց, գլուխն օրօրեց, մի բան մրմուռաց ու դարձեալ առաջ անցաւ:

Գիւղից դուրս եկանք, ու մնացինք շուարած. առաջ գնալ անկարելի էր, էլ ոյժ չկար: Ուրախ եղանք, երբ Սաղօն փոխանակ ուղիղ ճանապարհով գնալու, յանկարծ թեքուեց դէպի աջ և քայլում էր շտապ-շտապ: Մենք հետևեցինք նրան, մեր առջևն էր մի փոքրիկ խրճիթ, որի կտրի վրայ ծխի մի բարակ պտոյտ կար: Այդ ծնւթը... Թափանցիկ ժապուէնի պէս մեզմիկ գալարւում էր քամու առաջ և գրաւում էր մեզ. նա մեր յոյսն էր, մեր ազօտ, խղճուկ յոյսը, որից կախուել էինք, դէպի որը դիմում էինք հաւաքելով մեր վերջին ոյժերը:

Գիչ յետոյ մենք մենաւոր խրճիթի դրանն էինք: Սաղօն դուռը բացեց և մենք ներս թափուեցինք: Թո-

նիրը իրօք՝ վառուում էր և նրա շուրջը և . տոռուած էին երեք հոգի՝ միջին տարիքի մի կին, իր երկու աղջիկները հետ, որոնցից մեծը հագիւ վեց տարեկան կը լինէր, իսկ միւսը՝ երկու:

— Ճամբորդներ ենք, քուրիկ, սկսեց Սադօն, ճամբորդի բաժինը երկնքից է կտրած, ո՛չ որդը կը կրծի, ո՛չ թռչունը կը սանի, ո՛չ կարկուտը, ո՛չ ցաւն ու չուը. մի պատառ հաց ենք ուզում, մի փոքր հանդիստ:

Կինը մեզ նայեց ուշադրութեամբ:

— Դարբի պ էք, հարցրեց նա:

— Դարբի պ ենք, քուրիկ, ձուն ու ձմրան ընկանք. սև օրի տէր ենք, հեռու պիտի երթանք, բուք-բորանը խեղդեց մեղ. սուրբ Ախպէրիկի յուսով եկանք, սուրբն էլ չօգնեց, բանից պրծանք:

— Մեռնեմ իր զօրութեան, նստէք, տաքացէք, Աստուած ողորմած է: Եւ շարուեցինք թոնրի շուրջը. տաքանում էինք ու մեր թաց շորերը չորացնում: Խըրճիթը փոքր էր ու գեանափոր, սև առաստաղը իջնում էր ցածրիկ պատերի վրայ հագիւ տեղ թողնելով ոտքի կանգնելու համար: Տան միակ փուռածքը մի հատիկ հնամաշ խսիր էր, որի վրայ երեխաներն էին նստած ու մի նոյնքան մաշուած փալաս, որ երևի զիշերային ծածկոյթի տեղ էր ծառայում և դրա համար խնամքով ծալուած, դրուած էր անկիւնում: Մի պատի տակ, ջրի սափորի կողքին հանդարտ պառկած էր մի փոքրիկ հորթ, որ յիմար աչքերով նայում էր մեզ, կամ խեղճ, խեղճ որոճում:

— Իմ հորթն է, ասաց մեծ աղջիկը՝ թաթը մեկնելով դէպի կենդանին և վերկացաւ, գնաց շոյելու նրա գլուխը: Աղջիկը քնքշութեամբ կուացաւ կենդանու վրայ և իր սև, երկար մազերով խալառ ծածկեց նրա գունչը: Լսուում էր միայն նրա մեղմ համբոյրների ձայնը և անուշ մրմունջները:

Փոքրիկ աղջիկը անշարժ էր. հիւանդոտ երեխայ էր նա, ուռած փորով, գունատ, տենդոտ ու նիհար

դէմքով, որին մի առանձին արտայայտութիւն էին տալիս արտասովոր, խոշոր աչքերը: Այդ աչքերը... մտած բոպէից մեզ վրայ էին յառած մի յամառութեամբ, որ մեզ ճնշում էր: Նա կարծես դժգոհ էր մեզանից, վշտանում էր մեր ներկայութիւնից և անհանգիստ էր: Մեծ աղջիկը վերադարձաւ, նստեց փոքրիկի կողքին, վերցրեց նրա վտիտ թաթը, որ մեղրամոմի գոյն ունէր և խաղում էր ինչ որ մրմուռով: Փոքրիկը դարձեալ լուռ էր, նրա աչքերի խոհուն լրջութիւնը չփոխուեց և ճնշող հայեացքը մեզանից չհեռացաւ:

Լուռ էինք և մենք. լուռ էր և տանտիկինը, որ ըստ երեւոյթին խոր մտածմունքի մէջ էր ընկղմուած: Լսում էր միայն թոնրի ձայնը, որ մեղմ ճարճատիւնով վառուում էր և զալարում իր կարմրաւուն բոցերը, և մերթ ընդ մերթ գանգրահեր սեւաչեայ աղջիկն էր զանազան ուրախ բացագանչութիւններ արձակում: Համատարած խեղճութեան, այս սովի ու ցրտի մէջ երջանիկ էր այդ փոքրիկը, որ ճռուողում էր ինչպէս թռչուն: Նրա ուրախութեան աղբիւրը իր հորթն էր, իր սիրելի հորթը:

—Կը մեծանայ, շատ կը մեծանայ, կով կը դառնայ, կաթ ու սէր կը տայ, մեզ ասում էր նա խաղացընելով փոքրիկ քրոջ ձեռքերը:

Ի՞նչ էր մտածում տանտիկինը, այդ մենք չգիտէինք. բայց ծնկները զրկած՝ մտախօհ, հայեացքը չէր հեռացնում բոցերից: Մի երկու անգամ մեզ նայեց կարեկցաբար և ինչ որ վերյուշեր նրա աչքերը թացացրին: Մեզանից ոչ մէկը չէր համարձակում խօսք բանալ մեզ տանջող քաղցի մասին, բարեսիրտ կնոջ լուութիւնը կաշկանդել էր բոլորիս: Յանկարծ նա գլուխն օրօրելով սկսեց խօսել կարծես ինքն իրան:

—Էրիկա գնաց... գնաց ու էլ չեկաւ. դարիպութեան տէրը մեռնի... Է՛հ մեր օրերը անէրիկ, անգըլխաւոր կնիկը ջրատար է. էս կողմերն էլ կը տեսնէք, գուլում էլաւ, սով է: Դուք էլ քաղցած էք, թող աչքերս դուռ գայ ախպէրներ, ճամբորդը քաղցած... չմեռանք

էս էլ տեսանք. հոգեպահուստ երկու գարեհաց ունիմ, քիչ է, դարիպ ախպէրներ, ճար է պէտք. թէ ճամբորդը մեր դռներից քաղցած անցնի «Սուրբ Ախպէրիկը» վկայ, էս գուլումը մեր գլուխներից էլ բնաւ չի անցնի:

Նա վերջացրեց. նայեց իր շուրջը, նայեց կիսամերկ երեխաներին, թոնրին, իր միակ փալասին, և յետոյ հորթին, շատ երկար: Կարծես ուտելու բան էր փնդրում իր մերկ տան չորս անկիւնում և երբ ոչինչ չգտաւ, գլուխը յուսահատօրէն քաշ ձգեց կրծքին ու մըտախոհ խաղում էր խարի ծայրի դուրս ցցուած ճիւղերի հետ:

Մենք տաքացել էինք. այդ ճնշող պահանջից ազատուած՝ ամենքս էլ մտածում էինք միայն մեր քաղցի մասին, աղիքներս գալարող քաղցի: Մի գազան էր զարթել իւրաքանչիւրիս ստամոքսի մէջ, կատաղի, անողորմ գազան, որ չանգոտում, կրծոտում էր մեր ներսը, և մենք ատամներս իրար սղմած՝ ճիգ էինք գործ դնում ցաւից չճշալու համար: Տանտիկինը վերկացաւ, բերեց երկու գարեհացերը, որ մենք պատառ պատառ մի վայրկեանում ոչնչացրինք: Դրանով մեր կացութիւնն աւելի ծանր դարձաւ, զրգուած ախորժակը զարհուրելի չափեր ընդունեց և ներսից լափում էր մեզ հրդեհի պէս: Մենք պատրաստ էինք հողը կըրծել, սեփական միսը բզկտել, եթէ էլի այդպէս շարունակուէր: Ոմանք չփացնում էին բերանները, ուրիշները երկու ձեռքով փորերը սղմած՝ ծոմոտում էին դէմքը ու կծիկ կծիկ դառնում ցաւից: Նա այդ տեսնում էր, այդ խեղճ բարեսիրտ կինը, տառապում էր մեզ հետ, տըրորում էր ծնկները, բայց ճար չունէր:

— Դարիպ էք, ախպէրներ, օճֆ... թող հոգիս դուրս գայ... էրիկս գնաց, գնաց, մենակ ենք, ջրատար ենք, ինչ սև կապեմ, Աստծու ճամբորդը սոված մնայ, վէրան աշխարհ, Զանէ, Զանէ, մարէն մատաղ քեզ, հորթիգ շատ ես սիրում:

Չանէն մեծ աղջիկն էր, հորթի սիրահարը, մայրը թափով դէպ ինքը քաշեց զարմացած աղջկան, գրկեց և պինդ-պինդ համբուրեց արտասուալի աչքերով: Աղջիկը գլուխը թագեց նրա կրծքում.

—Մարէ ջան, ապա, շատ սիրուն է հորթիկս, տես, ինչպէս նայում է, կը քնենք կ'ըլնենք, կը քնենք կ'ըլնենք, կը մեծանայ սեր ու մածուն կը տայ, չէ, մարէ, սեր ու մածուն:..

—Հա, հա, մարէն մատոց քեզ, բալա:

Մենք մնացել էինք զարմացած, հասկանալ չէինք կրտորդանում, թէ ինչո՞ւ համար են մայրական սիրոյ աղ յանկարծական արտայայտութիւնները, ի՞նչ կապ ունեն նրանք մեր անտանելի կացութեան հետ: Մենք նոյնիակ դժգոհ էինք, որ այդ կինը փոխանակ մեր վիճակով զբաղուելու, խօսում է երեխայի հետ իրանց հորթի մասին: Տանտիկնոջ փոյթը չէր սակայն և նա վերստին շարունակեց զրկից բաց չթողնելով աղջրկան:

—Չէրդ գնաց, էլ յետ չեկաւ, բալա, ան, եթէ իմ բալա, մնացինք շրատար... ճամբորդ էր, Չանէ ջան, սև ճամբով գնաց, տես, սրանք էլ ճամբորդ են, քաղցած են, վեր, հէյրան, վեր էրթանք հաց ճարենք, որ Աստուած քո հորթը շուտ մեծացնի:

Մայր ու աղջիկ ոտքի կանգնեցին, Չանէն վագեց, կրկին փաթաթուեց իր հորթին, իր խուճուճ մագերի մէջ թաղեց նրա դունչը ապա վազէ-վազ հետևեց մօրը:

Մենք մնացինք մենակ մեզ հիւժող, սոսկալի քաղցի և այն փոքրիկ աղջկայ հետ, որ շարունակում էր անշարժ ու համր նստած մնալ իր տեղում՝ հայեացքը դարձրած դէպի դուռը, ուր ծածկուեցին մայրն ու քոյրը: Դէպի դուռն էր նայում նաև հորթը, նա էլ չէր որոճում: Կարծես խօսք մէկ արած՝ ամենքն միասին նայեցինք դէպի հորթը, ամենքիս այժմ նա էր զբաղեցնում, այդ փոքրիկ կենդանին, որ կամաց-կամաց գլուխը քաշ ձգեց, աչքերը փակեց և նիրհեց հանգարտ:

Անասելի քաղցը մեզ սպանում էր դանդաղ, տանջալից մահով և միայն այդ հորթը կարող էր մեզ փրկել: Այս միտքը վաղուց էր զբաղեցնում ամենքիս, բայց ոչ ոք սիրտ չէր անում միւսին յայտնել, ամենքս աշխատում էինք խեղդել այդ միտքը, որ ոճրի եղբայրն էր: Այս ողորմելի տունը իր դժբախտ տեսքով, բարեսիրտ ու խորհրդաւոր կինը իր զգգուած երեխաների հետ, Զանէի սէրը դէպի հորթը, այս բոլորը բաւական էին զրուպելու մեր ներսը կրծող հրէշը: Բայց երբ հեռացան մայր ու աղջիկ, երբ մեն-մենակ այս հորթի հետ, կիսախաւար խրճիթի մէջ՝ ստեղծուեց մէկն այն դժոխսային վայրկեաններէից, երբ ոճիրը թարթում է իր դիւային հմայքով, երբ սիրտը դող է ընկնում յանցանքի մեծութիւնից, բայց ձեռքը բարձրանում է ո՛վ գիտէ ի՞նչ մութ, անհասկանալի ուժից մղուած: Առանց մի խօսք ասելու իրար, մենք մէկիկ-մէկիկ ոտքի ելանք, և իրար հետեւելով շարուեցինք հորթի շուրջը, որ վարթնեց, ապուշ-ապուշ մեզ նայեց ու կրկին սկսեց որոճալ: Գունատ էինք, շունչներս անհանգիստ, շարժումներս տենդոտ ու վճռական: Իրար նայեցինք լութեամբ և համբ համաձայնութիւն կայացրինք, վայրկեանապէս փողոտել այդ կենդանին և թոնրի մէջ խորովել: Յուզմունքն այնքան մեծացաւ, որ մենք պատրաստ էինք ատամներով պատռտել այդ դժբախտ արարածին և հում հում լափել: Մենք մոռացել էինք ամեն ինչ. չգիտէինք ո՞ւր ենք, ի՞նչ ենք անում, խիղճերնիս քար կարել էր, մնացել էր միայն մեր քաղցը և այս պատրաստի կերակուրը, այս հորթը:

Տարերային մի ոյժ մեր հոգու խորքում զարթնել, էր փոթորկի պէս, մենք պատրաստ էինք քանդել, աւերել, ինչ և լինի, ամենագեղեցիկ գոյութիւնները, ամենաանմեղ էակները փշրել՝ կշտանալու համար:

Մենք կատաղի զագաններ էինք դարձել:

Մի վայրկեանում միքանի ձեռքեր միանգամից մեկ-

նուկեցին դէպի հորթի պարանոցը: Կենդանին բառաչեց ցաւագինօրէն, բայց նրա ձայնը՝ սղմող մասների տակ դարձաւ անյոյս, օրհասական խռիւոց, որ խնդոյն լուեց. մի դանակ բարձրացաւ ու փայլփլեց օդի մէջ, բայց նոյն վայրկենին տան միւս կողմից բոլորովին նման հորթի ձայնին, մի ուրիշ բառաչ լսուեց.

— Բնն...

Յետ նայեցինք սարսափած, փոքրիկ աղջիկն էր, որի գոյութիւնը մենք խաբառ մոռացել էինք և որը տեսնելով՝ թէ ինչպէս անծանօթ ու սարսափելի մարդիկ խեղդում են իրանց հորթին, կարծես որպէս գերագոյն միջոց բառաչեց նրան փրկելու համար: Չեռքերը յետ քաշուեցին, դանակը ցած ընկաւ. հորթը թողինք, այժմ նայում էինք այդ փոքրիկ, հիւանդ արարածին, նայում էինք զայրոյթով ու նողկանքով: Նրա դէմքը կարմրել էր սաստիկ ճիզից ու յուզմունքից, խոշոր աչքերը փայլատակում էին անախորժ կրակով, նա մեզ ատում էր, այդ փոքրիկը, իր անմեղ հոգու բոլոր գորութեամբ: Չարհուրելի էր այդ երեխան, զարհուրելի էր նրա բոց հայեացքը, որի առաջ մենք ընկճուեցինք: Թւում էր, թէ մայրը հեռանալով՝ սրան պահապան էր թողել մեզ վրայ, յատկապէս սրան՝ որ վաղուց հետէ կարգում էր մեր հոգու ներսը: Սովը մեզ համար կամաց կամաց մարմնացաւ այդ երեխայի մէջ, նրա ուռած փորի, նրա վտիտ դէմքի, մանաւանդ այն սարսափելի, թունոտ աչքերի մէջ:

Եւ մենք ատում էինք նրան, բայց նրան դէմ զընալ չէինք իշխում. իր փխրուն մատներով, իր փայլուն աչքերով նա զսպել էր մեր դագանը, մենք ընկճուած, ոչնչացած էին: Նա մեր խիզճն էր, մեր կենդանի խիզճը, որից դողում էինք:

Դրան առաջ ոտնաձայներ լսուեցին, մենք շտապով փախանք մեր նախկին տեղերը բռնեցինք թոնրի շուրջը: Դուռը բացուեց և մենակ ներս մտաւ տանտիկինը. նրա ձեռքը դատարկ էր, հաց չէր ձարել, երկի:

Մենք արդէն ուզում էինք նրան խնդրել, որ ինչ գնով և լինի, մեզ յանձնի այդ հորթը, այլապէս մենք կը մեռնենք սովից, բայց նրա դէմքի արտայայտութիւնը մեզ կաշկանդեց: Նա հանդիսաւոր քայլուածքով առաջացաւ, կանգնեց խրճիթի կենտրոնում և մեզ նայեց անօրինակ հայեացքով: Մաստիկ յուզմունքից կուրծքը բարձր ու ցածր էր լինում, աչքերը լայն բացուած էին և դէմքը գունատ էր, ինչպէս մահապարտի: Նա միառժամանակ մեզ նայեց լուռութեամբ, շրթունքները դողդողացին, պարզ էր, որ մի բան էր ուզում յայտնել, մի վճռական ու սարսափելի բան, որ կոկորդից չէր դուրս գալիս: Եւ ընդհանուր լուռութեան մէջ լսուեց նրա ձայնը ինչպէս ցաւազին հեծհեծանք, որ դուրս էր գալիս վիրաւոր, մղկտացող կրծքից:

— Ախպէրներ, ախպէրներ... գիւզում հաց չկայ... այդ ես գիտէի... ես այնպէս գնացի Չանէին դուրս տանելու համար. ելէ՛ք այժմ, մորթեցէք այդ հորթը, թող նա մատաղ լինի ձեր եկած ճամբաներին. մորթեցէք, իմ սևաւոր էրկի սիրուն, որ մի օր ձեզ պէս չուերն ընկաւ և որ այժմ ո՞վ գիտէ ո՞ւր է ընկած անտապան ու անտէր. մորթեցէք բոլոր այն գերեզմանների սիրուն, որոնք անտէր են, որոնք կորած են սարերում ձորերում. նրանց սիրուն, որոնք մի բուռ հող չեն տեսել, որոնց ոսկորները լիզում են քամիները և կրծոտում են գազանները: Թող հանգիստ առնեն նրանց թափառական, էրէրմանի մնացած ստուերները: Օ՛ճֆ, Չանէն լաց կը լինի, գիտեմ, դրա համար էլ նրան հեռացրի տնից, թող լայ, լայ, ի՛նչ անեմ, ո՞վ չի լալիս վէրան աշխարհում... Թող գոնէ ճամբորդները սովից չմեռնեն, ապրեն, բեալքի նրանց ոտքի խէրով Աստուած ձար անի, էս սովը վերանայ, աշխարհը դինջանայ... Նա խօսում էր մի մարգարէուհու պէս, որ պատգամներ է տալիս, բառերը դուրս էին թափւում, հեղեղի պէս, ինչպէս մի տենդոտ գառանցանք, իսկ մենք լսում էինք սասանուած: Կռեց մի վայրկեան, ծա-

նրր, խորը շունչ առաւ, դարձաւ դէպի դուռը, առանց յետ նայելու բացազանչեց կերկերուող ձայնով.

— Մորթեցէք, մորթեցէք ի սէր բոլոր զարիւպ ճամբորդների...

Եւ զուրս գնաց... մենք մնացինք քարացած. և երբ ապշութեան վայրկեանն անցաւ, երբ վերստին մնացինք մենակ մեր ներսը կրծոտող քաղցի հետ, դարձեալ հայեացքներս դարձաւ դէպի հորթը, որ անշարժ նայում էր մեզ, և կարծես կարգում էր մեր մտքերը: Եւ մեր մտքերը սև էին, մենք նզովում էինք և՛ քաղցը, և՛ մեր ստամոքսը, և՛ մեզ:

Նզովում էինք, բայց պէտք էր կշտանալ:

Մար դանակը վերստին բարձրացաւ, սչազ փայլ արձակեց, հորթը բառաչեց, յետոյ խոխոաց. որպէս տըխուր արձագանգ նրա օրհասական ձայնին՝ տան միւս անկիւնից նորիցը նշուեց երեխայի ճիչը.

— Բան, բան...

Երկու ձայներն էլ վայրկենապէս լռեցին. նրանք մեզ համար էլ գոյութիւն չունէին. տանտիկնոջ վերջին խօսքը՝ «մորթեցէք» դեռ հնչում էր մեր ականջներում. իսկ անուելի քաղցը մեր ձեռքին մզումն էր տալիս... Ճենճերահոար տունը լցրեց. մենք կշտանում էինք...

Մայր ու աղջիկ շատ ուշ տուն եկան: Չանէն դուռը բանալով՝ ձեռքի մի հատիկ զարեհացը մեզ ձգեց և ինքը վազէվազ դիմեց հորթի տեղը, բայց դատարկ գտնելով, կանգ առաւ քարացած, չորս կողմը նայեց, շրթունքներն ուռցրեց ու դարձաւ մօրը:

— Մորէ, հորթս:

— Հորթդ... քոռանամ ես, չկայ... փնաս չունի, այ էս ախպէրները ուրիշ հորթ կը բերեն քեզ:

— Հորթս, հորթս, հեծեծաց անմխիթար երեխան այս ու այն կողմ դառնալով:

Փոքրիկ աղջիկը, որ բոլոր ժամանակ լուռ էր,

բարձրացրեց իր շիւղի պէս բարակ մատը և քրոջը ցոյց տուեց տան մի անկիւնում ընկած սև բանը:

Հորթի մորթին էր... մենք մոռացել էինք թագցընել: Ձանէն վագեց ընկաւ նրա վրայ, գրկեց երկու ձեռքով, բարձրացրեց արիւնոտ գլուխը, սղմեց կրծքին և համբուրում էր ու լալիս, արիւնոտելով իր դէմքն ու մազերը:

Փոքրիկ աղջիկը թոնրի եզրին վերջին անգամ բառաչեց.

— Բա՛մ, բա՛մ, և նոյնպէս հեկեկալ սկսեց. մայրը քարացաւ իր տեղում: Չարհուրելի՛ էր...

Մենք սարսափելի յանցագործների պէս ինչ անելներս չզիտէինք. վերկացանք ու փախանք նաև այս տեղից: Ձանէի հեկեկանքները, փոքրիկ աղջկայ բառաչը աւելի սոսկալի էին, քան ծերունու «զըմմէ՛նը», լաւ էր քաղցից մեռնել, քան այդ գնով կշտանալ:

Սարերը, դէպի սարերը, բուք-բորան են, փոթորկի տակ. դուման էր:

Ո՛ւհ մեր ճանապարհը... արիւն ու արցունք:

Ա. Ահարոնեան

Շ Ո Ւ Շ Ա Ն Ի Կ

Աշխանային ցուրտ ու խոնաւ առաւօտ է. երկինքը պտտած է մշուշով. մանր անձրեւ է մաղւում: Քաղաքը նոր է զարթնել: Կտուրներից թափուող ջուրը թիթեղեայ խողովակների մէջ թեթեւ աղմուկ հանելով փողոցները լցնում է մի ընդհանուր մոմոտցով: Ծառերը նայում են վհատ ու տխուր. նրանց թորշոմած ու գեղնած տերևները, անձրևի կաթիլների հետ մէկիկ-մէկիկ ընկնում են ցած, ցելի ու տիղմի մէջ:

Տխուր է քաղաքը, մույլ են և մարդիկ. նրանք դժգոհ դէմքերով անցնում են սառը և թաց մայթերով: Թարմ և ուրախ են միայն դէպի դպրոցը շտապող մանուկները. բնութեան թախծոտ աեսքը, ամպը, թուխպը, անձրևը, ցուրտն ու խոնաւը, տերևաթափ ծառը նրանց չի վշտացնում, նրանց մատաղ սիրտը չի արեկոծում, բոլորը նրանց համար սիրելի են, բոլորին նրանք սիրում են և ուրախ, զուարթ, թևերի տակ մի-մի կապոց, գրքերի պայուսակ, շտապում են:

«Ահա դարձեալ մի կէս ժամ ու բոլորը կանցնին», մտածում է կօշկակարի տասերկու տարեկան աղջիկ, Շուշանիկը՝ որը իր սովորութեան համաձայն կանգնել էր բակում, դէպի փողոցը նայող դռների մէջ: Նա անընդհատ նայում է անցուդարձ անող իր անձանօթ բարեկամներին ու հայեացքով հետևում է նրանց մինչև փողոցի միւս ծայրը. նա բոլորին գիտէ, բոլորին էլ ճանաչում է: «Այժմ, ձեռք-ձեռքի տուած, երկու քայլը կանցնին. ահա կաղլիկ աղջիկը, ահա փոքրիկ տղան, իր մեծ պայուսակով. այժմ սիրուն աղջիկն է գնում. ահա երեք փոքրիկները իրանց աղախնի հետ. հիմա կանցնի սեփական կառքը»... Նա բոլորին էլ նախանձում է, մանաւանդ վերջինին: «Որքան բաղաւոր են», բացազանչում է Շուշանիկը ամեն անգամ, երբ անցնում է այդ կառքը և այդ ժամին թւում է, որ ձիանները կայծակից էլ արագ են թռչում, կառապանը հպարտ նրստած, հազիւ է նրանց պահում:

— Շուշան, հեշտաեռին նայիր, լսում է նա մօր ձայնը.

խկոյն վազում մի քանի ածուխ է աւելացնում ու նորից դառնում է իր տեղը:

—Շուշան, լուում է նորից մօր ձայնը.—բակը աւելիր:

Նա, աւելը ձեռքին, բակը սրբում է. բայց աչքը փողոցից չի հեռացնում. նոյն տանը կեցող, վերի յարկի երկու քոյրերը դեռ չեն անցել. ահա նրանք սանդուխներից իջնում են, իր մօտով պիտի անցնեն, իր հետ պիտի խօսեն. նա այդ գիտէ:

—Բարի լոյս քեզ, Շուշանիկ, բա՛կն ես աւելում—ուրախ բարևում է նրան տան տիրոջ աղջիկ Հեղինէն, որը վերաքըննութիւնից յետոյ փոխուել է վեցերորդը:

—Այո՛, ցածր ու քնքոյշ ձայնով պատասխանում է Շուշանիկը ու քայլում է նրանց յետևից մինչև փողոցը:

«Ախ Աստուած, կը լինի՞ մի օր էլ ես սրանց պէս ուսումնարան գնամ. առաւօտները վեր կենամ շատ վաղ, կօշիկներս սրբեմ, մաղերս սանրեմ, ես էլ նրանց պէս մաքուր, գեղեցիկ շորեր հագնեմ, սև գոգնոցով, սիրուն ունոցով. կապեմ գրքերըս, առնեմ թևիս տակ, ուրախ ու զուարթ վազեմ ուսումնարան: Այնտեղ դեռ ոչ ոք չի լինիլ. բակը աւելեմ, դռները, պատուհանները սրբեմ, ուսուցչիս հեշտսեռն էլ փայլեցնեմ: Նա ինձ շատ սիրէ. ասէ Շուշանիկ, ա՛ռ այս գիրքը կարդա, այս նկարներով գիրքը քոնը լինի... Երբ կը դառնամ տուն, տան գործն էլ կ'անեմ, մայրիկիս կ'օգնեմ, լուացք կ'անեմ. օ՛ շատ կ'աշխատեմ ամսոս չի՞ մայրիկս. նա շատ է չարչարում»: Նա սիրում էր երկամր մտածել, տարուել վառ ցնորքներով, քաղցր ու անուշ պատրանքով:

Անցնում էին օրեր: Մի առաւօտ վերի յարկի քոյրերը զարմացան: Շուշանիկը դուրսը չէր, նրանց չբարևեց. երկրորդ օրն էլ չկար նա: Տրամեցին, մի մեծ բանից զրկուած էին համարում իրանց: «Այսօր էլ մենք վատ թուանշան կը ստանանք» նախագուշակում էին նրանք: Եւ երբ դասից վերադարձան տուն, անմիջապէս իջան ներքնայարկը և առաջին անգամ մը տան Շուշանիկի ծնողների բնակարանը:

Շուշանիկը հիւանդ է. նա պառկած է թախտի մի ծայրին. այտերը կարմրել են, աչքերը աւելի են վառում, շրթունքները չորացել են, սիրտը արանգ-արանգ բարխում է, խսկ շնչանութիւնը տաք է, ինչպէս կրակ:

—Բարի լոյս քեզ, Շուշանիկ, տկա՛ր ես:

—Այո՛, զարմացած պատասխանեց նա:

—Ի՞նչու տկարացար:

—Չգիտեմ:

—Մըսել է, երէկ առաւօտ, այն ցրտերին, հօ տեսաք.

դուրսը կանգնած էր: Մըսել է, շատ է մըսել, միջամտեց մայրը, խնդրելով օրիորդներին նստել: Նրանք տեղաւորուեցին հիւանդի մօտ. մի վայրկեան տիրեց լուսթիւն, ապա կարեկցարար նայելով հիւանդին, սկսեց մեծ քոյրը:

— Իհարկէ կը մըսի, տաք հագուստ չունի, վերարկու չունի, նոյնիսկ մի շալ չունի ուսերին:

— Ի՞նչպէս չէ, բամբազից ֆուֆայկայ ունի, չի հագնում, ի՞նչ անեմ. ամեն առաւօտ դուրսն է, ձեզ է նայում, ձեզ շատ է սիրում, այ թէ ինչո՞ւ է մըսում: Ամեն օր լաց է լինում «ինձ ուսումնարան տարէք, ես էլ եմ ուզում սովորել» բայց մեզ պէս խեղճին ուսումնարանն ո՞վ կը տայ. մենք ո՞վ, ուսումնարանն ո՞վ:

— Շուշանիկը լաւ աղջիկ է, ափսոս է, որ առանց ուսումի մնայ. իհարկէ պէտք է ուսումնարան տաք, ուղիղ է ասում:

— Մայրիկա ի՞նչ անի, մենք խեղճ ենք, եթէ հարուստ լինէինք, ես էլ ձեզ հետ ուսումնարան կը գնայի, այնտեղ լաւ է, չէ՞, շատ գրքեր կան:

— Այո՛, մի ամբողջ սենեակ լիքը:

— Եւ այդ բոլորը դուք կարդում էք, կարող էք տուն էլ բերել, այնպէս չէ՞. ուսումնարանն ի՞նչ լաւ է: Ես որ վեր կե՛նամ... ես... ես էլ կը գամ, կը տանէ՞ք, հա՛, ինձ էլ կը տանէ՞ք:

— Անպատճառ, անպատճառ, կը տանենք. դու այնքան լաւ աղջիկ ես, Շուշանիկ, դու այնքան բարի ես:

— Հայրիկա չի թողնիլ. ես ամեն երեկոյ խանութի կօշիկները սրբում եմ. մայրս էլ մեղք է. օ՛ նա այնչափ գործ ունի. նա լուացք է անում. ես էլ տան գործն եմ շինում, երեխաներին եմ պահում. այդ դուք չգիտէք. հայրս բարկացոտ է... բայց ուսումնարանը ի՞նչ լաւ է. ասում էք ամբողջ սենեակը գիրք է, այսպէս, մինչև առաստաղը լիքը, օ՛ ի՞նչ շատ է, կարդում էք. խաղալիք էլ կայ, տիկի՞ն էլ կայ... Բայց ես ոչինչ ունեմ, ոչ չի՞նչ: Որ ես ուսումնարան գնամ, մայրիկ, կը թողնե՞ս:

— Կը թողնեմ, միայն լաւացիր, շուտով լաւացիր:

— Ես լաւացել եմ, այ, տես, լաւ եմ, ձեռքերիս մէջ չի այրւում. այստեղ մի փոքր ծակում է, ձեռքդ բեր, այ, այս տեղ, կուսնս տակ, կարծես դանակով են ծակում. քիչ է ցաւում, շատ չի ցաւում: Առաւօտը վեր կը կենամ, դուրսը կը սպասեմ ձեզ, դուք ինձ կասէք. «բարի լոյս քեզ Շուշանիկ, տկա՛ր ես» ես էլ կասեմ,— ո՛չ, այժմ՝ առողջ եմ:

— Ո՛չ, այդպէս չի լինիլ. մենք առաւօտը կը գանք քեզ մօտ ու կը տանենք քեզ ուսումնարան:

— Դձե՛ք, ինձ ուսումնարանն. ո՛չ, խաբում էք, ես գիտեմ...

բայց չէք խաբիլ, այնպէս չէ՞. գիտեմ այց ես ձեզանից մի բան պիտի խնդրեմ... այնպէս սրտով ուզում եմ. գրքերը բռնել թեիս տակ ու ման գալ: Առաւօտները երբ դուք ուսումնարան էք գնում, ես էլ այնպէս գնամ, մի փոքր հեռու ու նորից գամ մեր տունը. բայց գրքեր չունիմ... Այստեղ, ուսումնարանի այն մեծ սենեակից, ինձ համար մի մեծ գիրք բերեցէք. ես էլի ձեզ յետ կը տամ. միայն մի օր, դարձեանլ տարէք. հնձ, կըտամք, կը բերէք:

—Հէնց այս բոպէին քեզ համար գրքեր կը բերենք, որքան ուզում ես. մենք շատ ունենք, պատասխանեց Հեղինէն, իսկ փոքր քոյրը վազեց իրանց տունը, ու միքանի վայրկեանից յետոյ բերեց Շուշանիկի ուղած գրքերը. և դառնալով հիւանդին ասաց.

—Ահա այս բոլորը քոնն է. քեզ ենք ընծայում:

Հիւանդը աչքերին չի հաւատում. նա մերթ մօրն է նստում, մերթ քոյրերին, թւում է նրան, որ անա նրանցից մէկն ումէկը գրքերը պիտի նորից առնի: Երկու ձեռքով ամուր բռնած, նա դիտում է, նոյնիսկ չէ վստահանում թերթեր:

—Շուշանիկ, ապա բաց, այդ կարմիր կողով գրքի մէջ պատկերներ կան, ասաց Հեղինէն, սիրալիք նայելով նրան:

—Ուզիլ էք ասում, այս գրքերը ի՞նձ կը տամք. չէք տանի:

—Այդ բոլորը քոնն է. մենք քեզ դեռ ուրիշ գրքեր էլ պիտի տանք:

—Շնորհակալ եմ. սա ինձ բաւական է. ես որ լաւանամ, էլի ձեզ յետ կը տամ, հայրիկը ինձ համար կ'առնի. նստեցէք. ինչու վեր կացաք:

—Թող հայրիկդ էլ առնի, բայց մենք քեզ էլի շատ գրքեր կը տանք. նրա համար, որ դու շատ ես սիրում:

Շուշանիկը ոչինչ չէ պատասխանում. նայում է գրքերին. թերթում է. նայում է պատկերներին, գրքերը նորից դարսում է, դնում է թեի տակ. նորից վերցնում:

«Ա՛խ ինչ լաւ է այսպէս... բայց ես վատանում եմ». նրա աչքերը մթնում են, մայրը ջուր է տալիս, օրիորդները քացախ են բսում ճակատին. նա փոքր ինչ ուշքի է գալիս, գրքերը հաւաքում է, դնում թեի տակ և իր սիրալիք հայեացքը նորից ուղղում օրիորդներին. նրա վառ, հրեշտակափայլ աչքերը, անխարթ նայում են, իր երախտագիտութիւնն է ուզում արտայայտել իր ամբողջ էութեամբ. և այդ վայրկեանին նա յրբան գեղեցիկ, յրբան չքնաղ է. նա ցանկանում է իր ամբողջ սիրտը

բաց անել նրանց առաջ. ուզում է խօսիլ, բայց չի կարողանում... Յանկարծ նա լաց է լինում.

—Չգիտեմ, այնպէս լացս գալիս է, հեկեկանքը զսպելով, պատասխանում է նա օրիորդներին և նորից բաց անելով կարմիր կողով գիրքը, կանգ է առնում մի պատկերի վրայ:—Այս փոքրիկ աղջիկը պահում է իր կոյր պապին. այնպէս չէ:

—Այո, դա մուրացկանութիւն է անում և կերակրում է իր ծերունի և կոյր պապին:

—Խեղճ աղջիկ, նա ուսումնարան գնացել է:

—Այո, ուսումնարան եղել է. երբ ծնողներից զրկուել է, դուրս է եկել և երկար տարիներ իր պապին պահել է:

—Այդ բոլորը այստեղ գրուած է, այնպէս չէ:

—Այո, դա փոքրիկ Հեղինի պատմութիւնն է:

—Ինչ լաւ աղջիկ է. իսկ ես ուզում եմ խեղճ մայրիկիս թողնել և ուսումնարան գնալ: Նա երկար նայում է պատկերներին, թւում է նրան, որ ինքը իրաւունք չունի ուսումնարան գնալու, քանի որ իր ծնողները խեղճ են:

—Մայրիկ, դառնում է նա մօրը, օրիորդները դուրս գալուց յետոյ, Հեղինէի հայրը շատ փող ունի:

—Այո, նրա հայրը վաճառական է:

—Ինչո՞ւ հայրիկս էլ վաճառական չէ... այն ժամանակ ես էլ ուսումնարան կը գնայի և եթէ մեր բակումը մի կօշկակարի աղջիկ ապրէր, ես նրան շատ կը սիրէի, հետը խաղ կ'անէի, մեր տունը կը տանէի, ուսումնարանն էլ ցոյց կը տայի, խաղալիքներ կը տայի... Չեռքերս էլի այրում են, ինչ վատ եմ... հայրիկս ինչո՞ւ չեկաւ:

—Դեռ թնդանօթը չեն արձակել, երկի շուտով կը գայ, ի՞նչ պիտի անես:

—Այնպէս ուզում եմ, որ շուտով գայ: Կ'ասեմ գիրք ունեմ... ես ուսումնարան... բայց չի թողնել... մայրիկ, կօշկակարի աղջկանը ուսումնարան կը թողնե՞ն:

—Իհարկէ կը թողնեն:

—Ո՛չ, կ'ասեն քու հայրիկդ կօշկակար է, դու էլ գնա, լուացք արա, տուն սրբի, բակ աւլի՛ր, գիտե՞ս այդպէս է. ուզում ես Հեղինէին հարցրու. նա այդ բոլորը գիտէ, բայց չի ասում, այ, վաղը տօն է, նա ինքն ասաց, մեկ Տօտ պիտի գայ. ուզում ես հարցրու: Կարծես ուզում եմ քնել, թէ ինչ ինքս էլ չգիտեմ:

—Եթէ քունդ տանում է, քնիր, ես էլ լուացքը պարզաջրեմ, այ, այս բոպէիս կը գամ:

—Գնա, մայրիկ, ես լաւ եմ, ասաց Շուշանիկը, բայց նա

լաւ չէ. տաքութիւնը սաստկանում է, գլուխը ցաւում, ականջները խշշում են. հայեացքը պղտորում է, վերմակը ծանրացել ճնշում է նրան. թւում է որ սենեակը մեծանում է, պատերն էլ են շարժւում ու ինքը տարւում է, աւելի շուտ ընկնում է, այնտեղ, հեռու, կանանչ ըլրակի վրայ. ահա պիտի հասնի ու տանջանքից ազատուի. բայց նա գլորւում է անդունդ, ահուկի խորխորատներ, և օգնութիւն է կանչում... Զառանցում է, անհասկանալի բառերի մէջ մերթ ընդ մերթ լսում է, գիրք... ուսումնարան... կօշկակարի աղջիկ... Նա չիմացաւ ի՞նչ պատահեց իր հետ գիշերը: Լուսարացին կարծես փոքր ինչ լաւ էր զգում իրան: Երբ աչքերը բաց արաւ, կարմիր կազմով գիրքը ընկած էր իր կողքին, խկոյն առաւ զրեց թևի աակ: Մայրը աթոռի վրայ հագուստով քնած էր, հայրը աշխատանքի չէր գնացել, լամպարը դեռ վառւում էր: Նա ուշադրութիւնը լարեց, հարևանի տանը պատի ժամացոյցը խփում էր. համարեց, ժամի եօթն էր. դա նրան զարմանք պատճառեց, ինչու այդ ժամանակին մայրը դեռ քնած է, հայրը գործի չի գնացել... մոռթը, երազի պէս մի բան էր դասնում նրա գլխում. կարծես մտաբերում էր գիշերուայ անցքը. «Ինչ՞ հայրիկ» դուրս թռաւ յանկարծ նրա բերանից, աչքերը փակեց և ուզեց մտաբերել բոլորը, բոլորը ինչ կատարուեց այդ գիշեր:

Մայրը զարթնեց, երեսին խաչ հանեց. կուցաւ, գիտեց Շուշանիկին շնչառութիւնը և կարծելով թէ նա քնած է, զգուշութեամբ սկսեց սենեակի իրերը կարգի գցել:

Դուռը կամացուկ բացուեց, ոտքերի ծայրով ներս մտաւ Հեղինէն:

— Մայրիկ, Շուշանիկը քնած է:

— Ոչ, ես այնպէս միտք եմ անում, ուրախացած պատխանեց մայրը. նրա տանջուած դէմքի վրայ երևում էր յուսահատութիւն և երկիւղ. նա այդ մի գիշերուայ մէջ կրել էր անասելի վիշտ ու տանջանք:

— Հայրիկիդ խօսեցի՞ր, ի՞նչ է ասում:

— Հայրիկս ասում է, թո՛ղ Շուշանիկը ուսումնարան գնայ:

— Ուղի՞ւ, ուրախացած բացազանչեց Հեղինէն մօրը:

— Շուշանիկս ճիշտ է ասում, հայրը համաձայն է:

— Ուրեմն վաղը Շուշանիկը ուսումնարան է գնում: Այստեղ մեզ մօտիկ ուսումնարան կայ, կը խնդրեմ որ ընդունեն:

— Հայրիկս ասաց, ասաց, թո՛ղ Շուշանիկն էլ ուսումնարան գնայ, մի՞նակ ես, ասաց, տեղը չգիտեմ, ասաց, ես Հեղինէի համար մի դոյզ կօշիկ կը կարեմ, թո՛ղ տանի. ես այնպէս հի-

ւանդ էի, երբ հայրիկս ասաց, լաւացայ. բայց գիտեմ, ինձ չեն ընդունի:

— Ի՞նչու.

— Նրա համար որ... ես ուսումնարանի հագուստ չունիմ. ես գիտեմ, բոլորին էլ ճանաչում եմ. այսպիսի հագուստով ոչ որ ուսումնարան չի գնում. խեղճ մայրիկս ճրտեղից կառնի:

— Այս կապոցը տեսնում ես, ի՞նչ կը լինի այստեղ:

— Չգիտեմ:

— Ապա առ, բնց:

Շուշանիկը արագ բացեց կապոցը և յանկարծ կանգ առաւ.

— Ի՞նչ ես զարմանում, փոքր քրոջս հագուստն է, քեզ համար եմ բերել. այն, տեսա՞ր, հագուստ էլ ունիս:

— Մայրիկ, տես, ասում է ինձ համար է բերել այս հագուստը. ես պիտի հագնեմ. իսկ ձեր հայրիկը չի՞ բարկանալ, այնպէս չի՞... Ի՞նչ լաւն է ձեր հայրիկը. բայց իմ հայրիկն էլ լաւն է. նա փող չունի, կօշկակար է, ասաց, ինձ թողնում է, որ ուսումնարան գնամ: Ես լսում էի երբ մօրս հետ խօսում էր. նա լաց եղաւ. նա ինձ համբուրեց. այնպէս սիրում է ինձ, ձեռքըս բռնեց, ասաց, ի՞նչ տաք է. ձեռքերս էլ համբուրեց. ասաց, գնամ, բժիշկ կանչեմ. մայրիկս չէր թողնում. բայց նա գնաց. խեղճ հայրիկ, գնաց բժիշկ բերեց. մի մեծ մարդ... Ես նրանից վախում էի. նա չգիտեմ ինչու հօրս վրայ բարկացաւ, բզաւեց: Երբ բժիշկը գնաց, մայրիկս շատ լաց եղաւ, հայրիկս էլ լաց եղաւ. իմ լացն էլ եկաւ, յետոյ... քնեցի...— Մայրիկ, ախր հայրիկս չգիտի, որ ես ուսումնարանի հագուստ ունիմ. որքան կուրախանայ: Ձեր հայրիկը գիտէ՞, որ ինձ էք տալիս, եօ չի՞ բարկանալ:

— Մենք պատմեցինք նրան. նա քեզ շատ սիրեց. ասաց ուսումնարանի վարձն էլ կը տամ. գրքերի փողն էլ, ուսումնարանի հագուստն էլ, այնպէս որ դու ոչ մի բանի հոգ չես տանի:

— Ուսումնարանին փող են տալիս, ախ ես այդ չգիտէի, գլուխս այնպէս ցաւում է... եթէ մեռնեմ, այն ժամանակ ոչ ի՞նչ ոչ ի՞նչ էլ հարկաւոր չի... Ա՛խ ինչ վատ եմ...

Հեղինէին կանչեց տարաւ իրանց սպասուհին մօր հրամանով. վախենում էին վարակուելուց, թէն բժիշկը ասել էր, «թոքերի բորբոքում է»:

Շուշանիկը մնաց մենակ: Խոհանոցում մայրը աշխատու է, կրակ է անում, ածուխը լցրել է քուրան, փչում է, ուզում է, կրակը աւելի բորբոքի. նրա մտայլ աչքերից մէկ-մէկ կաթում

են արցունքի կաթիլներ, ընկնում են թէ՛ վրակի վրայ թշշում ու կորչում: Ինքը կօշկակարը կուչ է եկել, աւելի է կուացել. մկանունքները դուրս են ցցուել, աչքերը խորացել, փոս ընկել, յօնքերը եկել ծածկել են նրանց. նա ջղաձգական ցնցումներով այս անկիւնից այն անկիւնը ընկնում, կարծես մի բան է որոնում. մեծ աշխատանքի մէջ է: Տաւարի փափուկ լլար միս է գնել. այդպէս է բժիշկը հրամայել «երկու ֆունտ միս, ութ բաժակ ջուր, այնքան եփել, որ երկու բաժակ մնայ»: Ահա կրակի վրայ միսը եփում է, նա մի անգամ չափել է, դեռ 4 բաժակ ջուր կայ, դեռ շատ պիտի եռայ: «Ահ, ի՞նչ ուշ է այդ ջուրը քաշուում, երբ պիտի երկու բաժակ մնայ» մտածում է կօշկակարը շուտ-շուտ նայելով կաթսային: «Մտաշուր, մտաշուր, միայն մտաշուր պիտի տալ, ո՞վ գիտէ ի՞նչ էք տուել. ձեր աղջիկը չի ապրել, նրա դրութիւնը անյուսալի է, երբ դանակը ոսկորին է հասնում նոր էք գալի ինձ մօտ» բլաւել է նրանց վրայ բժիշկը ու կրակ է գցել ծնողների սիրտը: Այժմ նրանք, բուլիօնի շուրջը պտտում են, կարծես դա պէտք է իրանց աղջկանը ազատէ, կարծես այդ փրկարար հեղուկից է կախուած նրա կեանքը: Նրանք երբեմն իրար ետեից դողդողալով, մտնում են աղջկայ մօտ. ապա նորից խոհանոց, նորից ածուխ են աւելացնում ու բորբոքում կրակը:

Այդ միջոցին Շուշանիկը նորից բացեց կապոցը, նայեց հագուստին, կոճակներին, գրպանին. ապա գոգնոցն ու ուննոցը դնեց, ցանկացաւ մի վայրկեան իրան երևակայել այդ հագուստի մէջ. գիրքը թեի տակ, ուսումնարան գնալիս. բայց դա նրան չյաջողուեց, միտքը պղտորւում էր. գլուխը լի էր այլանդակ պատկերներով, ահուելի, տխուր: Մեծ դժուարութեամբ նստեց, ապա սկսեց հագնուել նոր զգեստը: Երբ ուննոցը գցեց ուսերին, կարծես նա իրան լաւ զգաց, գոգնոցն էլ կապեց և զգուշութեամբ իջաւ ցած. մի ձեռքով յենուեց պատին, միւս ձեռքով գրքերը առաւ թեի տակ, ապա պատէ պատ բռնելով հասաւ դռներին, դուռը բաց արաւ ու անցաւ դուրս: Նրա ոտքերը ծալւում էին, գլուխը պտտւում էր, բայց ուրախ էր, անչափ ուրախ. նա նայում էր իրան, գրքերին, և թւում էր, որ ահա ուսումնարան է գնում... Մի քանի քայլ էլ առաւ. ահա և խոհանոցը, նա իր ամբողջ ոյժերը հաւաքեց, ուզում էր դուռը բաց անել. գոչեց. «Հայրիկ ջան, տես ես ուսումնարան եմ գնում»: Բայց դեռ շէմքին չհասած, աչքերը մթնեցին, երերաց, տատանուեց ու վայր ընկաւ...

Ծնողները լեզապատառ դուրս վազեցին, բայց իրանց աչքերին չէին ուզում հաւատալ. գրքերը ամուր բռնած՝ անշնչա-

ցած ընկած էր իրանց աղջիկը: Նրանք ճշային, պոռացին. նրանց ձայնը երկինք հասաւ. տները դողացին, հարևանները ցնցուցին, ամբողջ բակը հաւաքուեց, բայց վշտից խելագար ծնողներին չկարողացան մխիթարել: Շուշանիկի անմեղ, հրեշտակալին հոգին երկնքումն էր, իսկ նրա փոքրիկ ու վտիտ մարմինը թաղեցին ուսումնարանի հագուստով գրքերը թևի տակ...

Շուշանիկին ուսումնարանն տարան, այն մեծ ուսումնարանը, որի դռները բաց են ամենքի համար, հարուստ թէ աղքատ, կոշկակար թէ վաճառական:

Մ. Պետրոսեան

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԳԻՇԵՐՆԵՐԸ

Գիշեր է: Եգիպտական գիշերները հրաշալի են: Յերեկուան խաշոդ ասթըր, թմրեցնող խորշակը, ամենաթարմ գիշերային սիւզով կը մոռցուի: Եգիպտական բուն կեանքը գիշերայինն է. ցերեկուան յոգնեցուցիչ կեանքի եռ ու զեռը՝ ելեքտրական լոյսերու ըմբռնանումներով ցերեկ դարձած՝ գիշերը կը վերակենդանացնէ: Այնտեղ, բացօթեայ սրճարանները, զբօսավայրերը, ծովեզերքը, Նեղոսի հրաշալի ափերն ի վար երկնցող պարտէզները, լիքն են բազմութեամբ: Այնտեղ են համարեա աշխարհի բոլոր անկիւններէն համախմբուած բոլոր ազգերու ներկայացուցիչները. ամենքը կապրին ազատ կենցաղով, եգիպտական կլիմային տակ ազրոզները չեն զգար թէ որու ձեռքին տակ կ'ապրին. ազատ քաղաքացիներ են ամենքը. պարտաճանաչ և ոչ յանցագործ մարդուն ոչ ոք կը հարցնէ թէ՛ դու ո՞վ ես, ինչո՞ւ այստեղ եկար. ո՛չ մի պատասխանատուութիւն: Բազմութիւնը կը զբօսնու այնտեղ համայնական, հասարակական ամեն բազդաւորութեամբ. բացօդեայ նստած լորզին, փաշային, բէկլին քովը կարող է նստել մի աննշան աղքատը և վայելել նոյնչափ, որչափ այդ մեծատունը. դասակարգային ազ-

նուսականութիւնը, մանաւանդ զբօսավայրերու մէջ, կը մեռնի:

Եւ ահա հետզհետէ ժամադրուածի նման իրարու-
ետեւէ ետեւ կուգան զբօսավայրերու համեմները, ձեռնա-
ծուներ, արաբ մը, որ զոյգ մը կապիկ կը խաղացնէ իր
դէֆով. խեղճ կենդանին օրիորդական հագուստներով,
շրջազգեստով ու փեղոյրով այնչափ քաղաքակրթուե-
րէ, որ զինքը պար ածողէն ալ դուցէ մի բանով ա-
ւելի շնորհալի կը գտնէ զիտողը. ահա հնդիկ խորհրդա-
ւոր զրբացը, ափի մէջ բազդ նայողը, որ հեռաւոր Հնդկաս-
տանէն մինչև այստեղ եկեր է իր հնարքները ցոյց տա-
լու համար, և ինչէր ըսես չի ըներ. բերնէն 40 մետր թել
դուրս կը քաշէ անհաւատալի ճարպիկութեամբ կծկելով.
կոկորդէն դուրս կը բերէ երկաթի խոշոր կտորներ, ձու-
եր, փայտէ մեծամեծ գունտեր, իր արագաշարժ հազար
ու մէկ խաղերով կ'ապշեցնէ լորդն ու աղքատը և ա-
ռատ վարձատրութեամբ կ'անցնի մօտակայ միւս զբօսա-
վայրը: Ահա զոյգ-զոյգ երգիչներ՝ եւրոպացի թէ արաբ՝
կուգան հնչեցնելու իրենց խնամուած և անխնամ երգե-
րը. արաբուհին նոյնիսկ իր գեղեցիկ ու կլկլուն խաղե-
րով կը թափառի զբօսավայրէ զբօսավայր երգելով՝

«Ալիշանէք, զա՛լիսէ, ես ո՛ւլլի, ո՛ւլի.

Ես՛ք, ես սէ՛յտի, ես՛ք, ես սէ՛յտի»...

Քեզ համար եմ եկեր, ո՛վ բռնաւոր, լսէ,

Լսէ, ո՛վ սիրելիս, լսէ. քեզ համար եմ եկեր:..

Արաբուհին իր այդ սիրոյ շոայլ խօսքերը կ'ուղղէ
ամենուն. ամենուն կ'ուղղէ բնականի հասցուցած կեղծ
սիրոյ շանթահարիչ աչքեր. արաբուհիին գիշերի պէս սև
աչքերը գեղեցիկ են. ձայնը հարուստ ու հնչուն. խօս-
քերը՝ արևելական ճկուն բանաստեղծութեամբ հարուստ
և համեմուած և շատ դուրեկան. երբ նա կ'երգէ,
աւելի զուարթ ու չարածճի երիտասարդներ ալ չեն
թերանար իրենց կողմէ համապատասխանող խօսքեր ուղ-
ղելու անոր, և յաճախ անոր գեղեցիկ երգի ընդմիջում-
ներուն հետ կը խառնեն. «Ալլա՛հ, մաֆի՛շ քէտա էպէ-

աէն».—Աստուած իմ, իմ նմանը յաւիտեանս ալ չի լինիր: Նա կը վարձատրուի առատ. ամենքը կուտան և անոր հալն ու քէֆը կը հարցնեն. նա ամենքին շնորհակալ լինելու համար մասնաւոր բառեր ունի, ու այսպէս կանցնի շրջանէ շրջան: Անոր կը յաջորդեն հրէայ շրջուն փերեզակը, գորգավաճառ պարսիկը, հնդիկը՝ իր հնդկական նուրբ գործուածքներու հակով, յոյնը՝ լօ/ժօնի/ի տուպրակով. սուլանցի սեր կօշիկ ներկելու առաջարկները կրնէ փողոկրի նման իր սպիտակ սկուանները ցոյց տալով. ֆէլլահ շէյխ մը նայիս՝ անդիէն, քեզ կը մօտեցնէ իր հնագիտական շարժուն թանգարանը. ինչեր ըսես չկան. արաբական տնային տատուածներ—ապիսը, իպիսը, փոքրիկ եզը, կատուն, ոսիւրիսը, ամբողջ տատուածներու հաւաքածուն. եթէ ատոնցմէ չես ախորժիր, նա շատ բաներ ունի քեզ ցուցադրելու. անս փարաւոնական դրամներու շարք մը, անա սուրերու, գէնքերու և զրահներու մի ժողովածու, զանազան քարեր, կապոյտ ու կանանչ ակներ՝ արաբական խորհրդաւոր նշաններով, որոնց բոլորը նա գտած է, ինչպէս ինքը կրսէ, բուրգերու ոտքին տակը փոռած աւաղներու մէջէն, սպինքսի ստորոտէն և Թէրէի անսպառելի պեղումներէն: Այսպէս, դեռ գիշերաշրջիկ վաճառականներու ամբողջ կարաւան մըն է, որ կը վիտայ գբօսնոդներու շուրջը:

Ամեն տեղերէ երգի ու երաժշտութեան, պարի և կեր ու խումի հրաւիրող հրապոյրներ: Ահա և անգլիացի զինուորներու իշամբարձ խումբը. զարեջուրով զուարթացած՝ ամբողջ տասնեակներով իշաւորներու կարաւան մընէ, ծխամորճը ձախ շրթունքէն կախած, քթէն անդին չտեսնելու չափ զինով, բայց միշտ անմխաս. քրքրիջներու, «ուռուաններու» ձայնով անոնք կը ճեղքեն քաղաքը և կ'արշաւեն իրենց բնակավայրը՝ միջնաբերդ. իշապանները, ճերմակ ու կապոյտ ծէլէպիէններով, որը ամբողջ իրենց հագուստը կը կազմէ, իրենց էշերուն և էշաւորներու ետեւէն կը վազեն կատարեալ մրցակցութեամբ և կը խօսին անգլիերէնը այնչափով, որչափով

որ իրենց էշերը կը հասկնան արաբերէն պարտաւորիչ բառերը: Ոչ միայն զինուորները, այլև յաճախ մարդ գարմանքով կը պատահի Սնգլիայէն եկած անագին խումբերով տուրիստ ջէնայմէններու, լէյտիններու և օրիորդներու՝ որոնք միս (miss) կը կոչուին, առանց սակայն իրենց վրայ ունենալու գոնէ կտոր մը միս. այլ ամբողջ ոսկոր են անգլիացի այդ միլիօնատէր տուրիստ ծիծեռնակները նոյնիսկ, որոնք Եգիպտոսի գաղջ ձմեռներուն անսխալական այցելու ծիծեռնակ հիւրերն են. առանձին հաճոյքով էշ՝ կը նստին այնչափ հանդիսաւոր թափօրով, որ այդ ամենէն լքուած ու արհամարհուած կենդանին հետզհետէ բարձրացեր է մարդերու աչքին և արժանացեր է աշխարհիս ամենէն հարուստներուն մասնաւոր յարգանքին. անոնց համար զրկանք կը լինի, եթէ չբարձրանան այդ համետաւորներուն շալակը: Անգլիացիներուն համար Եգիպտոս գալ և էշ չի նստիլ՝ կը նշանակէ արաբներու համար Մէքքէ գնալ և չազօթել, կամ չի խմել սալու գէմգէմը՝ անմահութեան ջուրը:

Այսպէս եգիպտական զիշերները գուաբթ և կախարդիչ են. կառքերը կը սուրան, ելեքարական տրամվէյները կը վիտան քաղաքին ամեն ծակն ու ծուկը և զիշերային աշխարհիկները անվերջ կը կրեն ու կը կրեն դէպի օպերաները, թատրոնները, բարերը, կոնսէրտները, կաֆէ շանտանները, Նեղոսի վրայ նաւակով գրօսնելու, և զեռ հագար ու մէկ տեղեր...

Եւ միթէ՞ արաբ հաշշաշը ինքզինք կը զրկէ իր մանկութենէն ի վեր անձնատուր եղած մէկ գուարճութենէն:

Արաբի ընտանեկան ներքին կեանքէն չի բղբիլ որ ոչ մի վայելք. անոր կինը, գաւակները լոկ պատահականութեան արդիւնք են և չունին անոնց հետ պարտաւորիչ կապակցութիւններ: Նա եթէ մի քանի սև փող կ'աշխատի, ուրիշ բանի համար չէ, բայց եթէ գերագոյն տենջանքով ըղձալու թէ՛ երբ կը հասնի զիշերային այն սովորական ժամը, որ զինքը մշտապէս հրաւիրեր է նե-

տուելի հաշիշի յաւիտենական երանութեան զըկերուն մէջ. անոր համար հաշիշի գորշլիներով զուարթանալու նոյնիսկ մէկ վայրկեանը՝ առանց հաշիշի յաւիտենականութիւն մը վայելելէ աւելին կարժէ:

Այնտեղ է ահա. նեղ ու յետ ընկած մի անկիւնի վրայ մեծափառ հաշիշանոցը, ուր կը դիմէ ամեն մի արաբ աւելի երկիւղածութեամբ, աւելի պարտաճանաչութեամբ, քան Ալլահի մարմնական ո՛չ մի վայելք չմատակարարող ցուրտ տաճարը. արաբը լաւ համոզուած է ստորը և այդ պատճառով իսկ հաշիշանոցներու մէջ աւելի երկիւղած հեռերգներու կը պատահի մարդ, քան մզկիթներու մէջ՝ աղօթաւորներու:

Կարգ-կարգ շարուած բազմաթիւ փայտեայ երկար նստարաններ՝ պարսկական տախտերու նման ետեւէ ետեւ կ'երկարին. դա ժողովրդատեղին է: Աւելի խորը մի բաւական բարձրութեան վրայ կայ բեմը, յատկացուած այդ երեկոյթները զուարթացնող բուն արարողապետներուն. դա կը ծառայէ նուագողներուն, երգչուհիներուն և կարտուչուհիներուն: Բեմի աւելի խորհրդաւոր մի անկիւնը յատկացուած է, սովորաբար աչքերով կոյր, մի շէյխի կամ երբեմն բանաստեղծ և յանպատրաստից երգող մի մէտասի:

Հաշիշանոցը արաբին համար այն է, ինչ որ սովորաբար *café chantant*-ը եւրոպացիին համար:

Եւ ահա հետզհետէ բարեպաշտ ուխտադնայներու նման ետեւէ ետեւ կը մտնեն հաշիշի երկրպագուները և կը գրաւեն իրենց տեղերը: Բեմին վրայ արդէն պատրաստ են սրինգներով, քանոններով, ութերով, թմբուկներով, դէֆերով և տամպուռքաններով նուագողները և մի քանի արաբ երգչուհիներ: Երաժշտութիւնը նախ կը սկսի մեղմ և դանդաղ, այնպէս որ արևելական թէքսէնսրուն մէջ շրջանաձև դարձող աղօթաւոր շէյխերու եզանակը կը յիշեցնէ: Ապա հետզհետէ այդ մեղեդիաւորութիւնը աստիճանական դաշնակաւորութեամբ կը բարձրանայ արևելական ոլորումներով, որուն կը յաջորդէ երգչու-

հիներու «նա լէ՛յլի, նա լէ՛յլի»-ն՝ գիշեր, ն՝ գիշեր խորհրդաւոր երգը. ապա՝ «նա է՛յնի, նա է՛յնի, քաման շուֆ»-ն՝ աչքեր, ն՝ աչքեր, նորէն տեսէք: Եւ այսպէս հետզհետէ խմբերգը մխմխուն և մելամաղձիկ եղանակներու և երգերու հմայքով ոչխարի հօտի մը նըման լուռ լսող ժողովրդին սիրտը կը գերէ. երբեմն յանկարծ, տեսնես, եղանակը կընդդիմընդի, որուն կը ձայնակցին ամբողջ ունկնդիրները միանուազ աղաղակելով, «ա՛, քաման, նա սէյտի».— ա՛, նորէն, ն՝ սիրելիներ, նորէն... Այդ ընդհատումները և բացազանչութիւնները նուագողներու և երգչուհիներու համար ոգևորիչ աղ ու համեմներ են անհրաժեշտ դարձած և ունին եւրոպացիներու լիաբուն ծափահարութիւններու գնահատիչ արժանիքը:

Երաժշտութիւնը ժամանակաւոր կերպով կը լռէ. կարգը բանաստեղծ «մէտտահ»-ինն է: Սա նոյնպէս կը լինի առհասարակ կոյր մի շէյխ, բայց օժտուած բանաստեղծական և մանաւանդ խեղկատակ սրախօսութիւններու մեծ կարողութեամբ. սա երկու լարէ բաղկացած վինի նմանող կնտնտոցը ձեռքը՝ նախ երգելով կըսկի մի ինչ որ բանաստեղծախառն հէքիաթ «Աըու Ձէթ»-ին կամ «Աըու Նազար»-ին մի պատմութիւնը՝ իր պատմուածքին տալով՝ երբեմն, իբր միջնարար, այնպիսի խորամանկ, հետաքրքրաշարժ և ծիծաղով լի հանգոյցներ, որուն համար աշխուժի եկած ունկնդիրները գոհունակութեան ձայնարկութիւններով կաղաղակեն. «ա՛, ա՛, ա՛, քաման նա սէյիղնի, քաման նուա».— ա՛, կեցցես, նորէն, ն՝ մեր սիրելին, նորէն, մի քանի անգամներ ևս: Այդ միջամտութիւններով աւելի աշխուժի եկած մէտտահը չափազանց ոգևորութեամբ, դէմքի միմոսական ծամածուութիւններով այս անգամ ժողովուրդին մէջ ներկաներուն, կամ այդ օրը բացակայութեամբ հեռու մնացած մի ծանօթի ուղղած սրախօսութիւններով կը վերջացնէ իր շատ հետաքրքրութիւն շարժող մէկ հեքեաթը: Ու այսպէս ժամերը կը յառաջանան:

Ամենքի աչքը սակայն ծառայողին՝ զարսօնին վրայ է ուղղուած. երբ արդեօք նա գուրս կը դայ այն խորհրդաւոր ծակէն, իր հետ բերելով ամբողջ երեկոյթի հոգին խայտացնող և կեանք տուող հաշիշը: Նա է այդ արարողութեան յատկացուած քրմապետը. արաբը անոր կը սպասէ այնպէս, ինչպէս տաճարի բարեպաշտ աղօթաւորը երեսը խաչակնքելու համար կը սպասէ բուրվառ ծխող աբեղային: Եւ անա նա մի քանի անգամներ կ'երևի, բայց ձեռնուռայն. դա նշան է հաշիշի բոլորանուէրներուն ախորժակը գրգռելու. ի տես այդ պաշտօնեային, կարծես անոնց ներքին պահանջը աւելի կը գորանայ. յաճախ նոյնիսկ տրտունջի ձևով այդ պահանջին կը տրուի աւելի գործնական ընթացք, որպէսզի փութացնեն ցանկալի հաշիշին երկայնափող «կողը»:

Եւ անա վերսկսող թրթռուն եղանակի մը հետ բեմին վրայ կը ցատկէ, յանկարծ, մի մատաղահաս և հրապոյրներով լի արաբուհի: Դա կաթաւող աղջիկն է, երեկոյթին թագուհին՝ կիսամերկ և իր պարելու զանազան խորհրդաւոր պահանջներուն յարմարցուած պճղնաւոր, թափանցիկ և փայլուն զգեստներով. երկու ձեռքերու միջնամատին և բթամատին վրայ անցուցած է կարթիկներով և ճարմանդներով բռնուած փոքրիկ ծնծղայաձև զիլեր, որոնք համաբախ չափերով իրար կը զարնէ, երգուած եղանակին հետ ներդաշնակելով իր կիսամերկ թևերու և ոտքերու կատաղի խոյանքները. նրբածայր անդուսեայ կօշիկներէ անմիջապէս վեր՝ մերկ ոտքի կոճերուն վրայ զեղեցիկ կերպով նստած են բաւական հաստութեամբ արծաթեայ օղակներ, որոնց շարունակութեան վրայ անցուած են հնչուն բոժոժիկներ, որոնք իր ցայտուն պարլին խորհրդաւորութիւնները աւելի կը շեշտեն. նա ամենաճկուն մարմնով ոտքէն մինչև գլուխը կը խաղացնէ մարմինն ամեն մատերը, մի անբացատրելի քմահաճութեամբ մարմնի այդ բոլոր մասերուն տալով այնպիսի ձևեր, որոնք լպլրջ անբարոյականութիւնը ոչ միայն չեն քօղարկեր, այլև բացայայտ կը

ցայտեցնեն՝ զինքը զիտոզ և կրքերու անձնատուր, վա-
 ւաշոտ արաբին տալով՝ անասնական վայելքներու տեսա-
 կան ամեն բաւարարութիւն: Ահա այդպէս երկար ժա-
 մանակ կը կատարէ նա որովայնապարը, սրորսնապարը,
 որուն շարունակութեանը մէջ վերջապէս կու գայ Մէհ-
 մէզի խոստացած ջէննէթէն աւելի ցանկալի երեկոյթի
 սրբութիւն սրբութեանցը, արաբներու հազարգութիւնը՝
 սրբազան հաշիշը:

Հաշիշը՝ էսրարի, աֆիօնի՝ բնաւորութիւն ունեցող,
 բայց անկէ անհամեմատ աւելի թունդ մի բաղադրու-
 թիւն է կանեփանման մի բոյսի սերմերէն արտա-
 դրուած՝ զինովցնելու, թմրեցնելու և մարմինը զգայա-
 զիրկ ընելու յատկութիւնը ունեցող, որը կը մատակա-
 րարեն դէյլանի նման և երկար փողաւոր չիբուխի ձե-
 ւով՝ «կող» կոչուած գործիքի միջոցով. «կողը» հնդկըն-
 կոյզի արտաքին փայտեայ ամուր կեղևն է, մէջը դա-
 տարկ և ջուր ածուած. հաշիշը կ'այրուի գործիքին զը-
 լուխը վառուող մի տեսակ սուղանական թումբաքիի մէջ,
 երբ ամեն անգամ կողի երկար ծխամորճէն ֆոֆուացը-
 նելով կը քաշէ հաշիշը:

Եւ ահա կուգայ վեհափառօրէն «կողը» մատուցա-
 նող պաշտօնեան. հաւաքական բացագանչական ուրա-
 խութիւնը կատարեալ է. կողի արարողապետը նախ ին-
 քը մի քանի անգամներ ուժգին կը քաշէ, քթէն ու պըն-
 չածակերէն դուրս սահեցնելով ծուխի բարդ քուլաներ.
 ապա բերնէ բերան, և այդ միքանի անգամներ, կը
 շրջանարկէ ծխելու գործիքը ամեն մէկին տալով անբա-
 ցատրելի հաճոյք. հաշիշը նուիրական խունկի նման քու-
 լայ քուլայ կողի փողէն ներս կ'ընդունի իւրաքանչիւր
 հաշիշ, պաշտումի հասած առանձին վայելքով, կուշտ
 կուշտ կը ծխէ մինչև թոքերը ստանելով և իր մէջ պա-
 հելով այդ հիւթի բուն հարբեցուցիչ ոգին և դուրս կը
 բղխացնէ աւելորդ ծուխը, ջանալով որ անոր էութե-
 նէն մասնիկ չկորսնցնէ: Գլուխները հետզհետէ կը գուար-
 թանան ու կ'օրօրուին. զինովութիւնը կը սկսի, սրճարա-

նապետի զրգիռ պատճառող հնարագիտութիւններուն կը միանայ երաժշտութիւնը, արաբ երգչուհիներու սիրահրաւէր երգը, կաքաւչուհիի որովայնապարը. այս ամենը արդէն կը բաւեն հաշտաշարաբին գլուխը խառնելու և զինովութեամբ թմրող անոր մարմինը հրաւիրելու դէպի մշուշապատ մի աշխարհ, ինքնամոռացութեան և յափշտակութեան մի նոր հայրենիք, ուր իրերն ու առարկաները, շրջապատն ու հոգու թելադրութիւնները զիւթական չափեր կ'առնեն. սա չի նրմանիր նոյնիսկ ամենախիստ զինարբուցեան: Ու դեռ այդ ամենը չէ: Դեռ հաշտաշին կը պակասի մի բան — շաքարախառն սուրճը. արաբը «ամենայն ինչ կատարեալ» ընելու համար, մի փոքրիկ բաժակով սուրճ կ'առնէ. անա նա արդէն տիրացած է իր ցանկացած վայելքին:

Այսպէս կէս դիշերէ վերջ, ժամը երկուքը կանցնի. յաճախ հաւախօսը կը յիշեցնէ, թէ առաւօտը մօտ է, պէտք է թողուլ սրճարանը, պէտք է տուն գնալ:

Եւ անա հաշտներու տխուր ու զառանցող կարաւանը դուրս կելլէ իր սրբատեղէն՝ հաշիշտանէն:

Հաշտաշը անգնաս է. հետեւինք անոր:

Անցիր մօտէն. հետեւ է քայլառքայլ, և ապահով եղիր, որ հաւկուրի նման նա քեզ չի տեսներ. անոր մէջ այդ պահուն զարթուն են մի քանի օրգաններ միայն, և այն ալ իր պէտքերուն համար. իսկ միւսները քնած են. նա կը քալէ, կը շարժուի, բայց մարմինը մեռած է. միայն անոր ուղեղը հնոցի նման կը բոցալառուի. անա անոր օրգաններու գործող մասերը:

Հաշտաշը իր այդ դրութեան մէջ երկնքի և երկրի մէջտեղ անպարան կախուած մի էակ է, նուրբ, անօսը: Նա այլեւ չի պատկանիր իրեն և երկրին, բայց տեղի մօտ է երկնքին: Նա ինքըզինքը կը զրայ անիւթեղէն, հոգեկան էակ, մարմին չունեցող ոգի, ոտքերը իրեն համար վաղուց կտրուած են գետնէն. նա օդագնաց թռիչքներու հեծած՝ կը ճախրէ դէպի անորոշութեան բնագա-

ւառները: Նա կեանքի կատարեալ երանութեան մէջն է: Հաշշաշը միանեծան տէրն է երկնքի և երկրի: Նա այդ պահուն միայն Ալլահը կը ճանաչէ իրմէն վեր բազմող ուրիշ ոչ մէկ բան. անոր մօտն է հասած արդէն և ծունկ ծունկի նստած կը խոհակցի անոր հետ և նոյնիսկ անոր խորհուրդներ կուտայ. նա երկրաւոր ամեն գերագոյն ոյժերու վրայ խորհրդաւոր կապերով կ'իշխէ. անոր ուղեգային գերազրգիւ վիճակը արդէն զինքը կը տանի խորհրդաւոր թևերու վրայ բարձուած վերին աշխարհներ, ուր երազանքը կը սկսի... արագ փոփոխուող կարճ, բայց խորհրդաւոր խոհերով լի սլասկերներ, հագիւ մշուշ մտքերով իրարու հետ կապուած, անոր կուտան բանդագուշանքի մէջ երբեմն արտազրոյց բանաստեղծական խոշոր թռիչքներ. արարական հարուստ լեզուն, քաղցր հրնշականութիւնը և յանկերգով լեցուն դարձուածքները անոր շրթունքներուն վրայ կը սահեցնեն երբեմն անստղիւտ բանաստեղծական տեսիլքներու հրաշալիքներ. այն պահուն, երբ անոր զգայազիրկ մարմինը համարեա թէ մեռելութեան է փոխանցուած, անոր մէջ կարծես կը գարթնու «սարդուն քանաստեղծը». նա այդ ժամանակ կարող է երկի ձևով արտազրել այն, ինչ որ հոգեկան և մարմնական առողջ ժամանակի մէջ գանուող բանաստեղծները չեն կարող երգել՝ մըշտապէս իրենց մտքէն փախուստ տուող, կամ աւելի ճիշտ, մտքին մէջ մշտնջենապէս Արիստո բառերու անվերյուշութեամբ. իսկ ինքը բորբոքուած, զրգուած ու թափանցկութեամբ նրբացած ուղեղի գերազրգուութեան շնորհիւ անմիջական կերպով ունի ամեն մտքի համար գործածելի բառերու տիրապետութիւնը: Անոր ուղեղին մէջ անթափանցելի խաւարներէն անդին՝ կարծես կը տեսնուի ծնունդ առնելը աներևակայելի գեղեցկութեամբ լուսաբացներու. թանձր աղջամուղջներէն անդին կը տեսնէ կաթել, ծորելը անկարելի յուսոյ շողերուն: Հաշշաշի ախեգերքը լայն է, անծայրածիր. միսքը՝ կաշկանդող բիրտ իրականութեան պարփակումներէն

բողորովին ազատ, երկնային ճառագայթացումներու, յղացումներու հպումով միշտ գեղուն, թաթաղուն բեղմնաւորութեամբ աուլի: Անոր այդ վիճակը խորհրդաւոր մի ճամբորդութիւն է իսկապէս, որուն վայրը և ուղղութիւնը յայտնի չէ: Նա մարդկային գծուծ «ևս»-էն ազատագրուած է և բնութեան ու յաւիտենականութեան մի կարևոր մասնիկը դարձած. անոր իղձերը համատարած են, քամիներու և անուշ սիւզերու վրայ թևեր տարածած՝ անոր միտքը անծանօթին մէջ կը նաւարկէ և կայան չունի. անոր համար կան, մեզ անծանօթ, անգոյ անշրպետներու մէջ տարածուող կոյս մնացած գետիկներ, որոնք միայն մեզը և կաթ կը բրդխեն և որոնցմէ ինք միայն կը վայելէ այդ պահուն. մեզ անծանօթ աշխարհնեո, ուր շարութիւնը չեն ճանչնար, ուր կը բնակուին սարդիկ, որոնք զրկանքի, բռնութեան և հոգերու մասին գաղափար չունին: Նա թւերը վեր կը բարձրացնէ օրհնելու համար մեզ անծանօթ այդ աշխարհի գոյութիւնը: Հաշշաշը իր այդ վիճակին մէջ ոչ սեփական մարմին ունի, ոչ սեփական վիշտ. անոր մէջ յարութիւն առնող մարդասիրական լայն զգացումները այնքան առատ են, այնքան յորդահոս և նրբացած, որ շարութեան գաղափարները կը չեզոքանան. նա այլևս աշխարհային ամեն ցանկութիւններէ, վայելքներէ ձեռք քաշած է. երկրային կեանքի ցաւերն ու պահանջները մոռացած, մէկ խօսքով անոր մէջ մեռած է «մարդ գազանը»: Հաշշաշի մէջ, չգիտես ի՞նչ ծանօթ աղբիւրներէ բղխած՝ յանկարծ ծնունդ կառնեն իգէալական աննիւթեղէն զեղեցկութիւններու և նրբացած զեղարուեստներու անթերի երևակայութեան ուրուականներ, թէև կցկտուր, բայց ճշմարտապատում, բարձր մտքերու ամբողջ սաղմեր, արտայայտուած կորովալից ոճերու անսպառելի աղբիւրներով: Անոր շրթունքներէն դիւրութեամբ դուրս հոսող մտքերը սովորական բաներ չեն:

Հաշշաշին պէտք է հետևել, բայց միայն լուռ. անոր ուղղուած որևէ հարցում կը ձգէ զինքը իր մտած-

ման բարձունքէն: Այդ գերագոյն վիճակին փոխանցուած էակին ուղղուած ամեն մի հպում՝ կը քայքայէ հետզհետէ այն երկնային պալատները, որուն մէջ ինքը կը բնակի: Բռնէ հաշշաշի ձեռքը՝ իր այդ երագատեսի վիճակին մէջ. նա սարսուղգեցիկ երկխւղով բռնուած վախի մէջ պիտի դողայ ամբողջ մարմնով՝ ելեքտրական հոսանքէ բռնուածի պէս և քեզ պիտի աղաչէ, որ ինքը անփնաս մի էակ է: Նա որ մի քիչ առաջ ճակատի և զէմքի երակները ուռած, դաժան և աններող հայեացքներով չարութիւնը կը հալածէր, բուռնցքը կը պարզէր երկնքին, որ նա պարտաւոր է իր արդարութեան արեւ ամենուն վրայ հաւասարապէս վառելու. նա՛ որ աջ ձեռքի ցուցամատը սպառնալից և հրամայողական կը թըրթռացնէր զէպի բարութիւնը կողոպտող բռնաւոր ոյժերու գլխին, հիմա ամենաթեթև ձայնէ մը սահմուկած, ամենէն աննշան հպումի մը առաջ երեխայի նման կը դողայ. անոր մէջ մի քիչ առաջ յարութիւն առնող զգացմունքները, որ տիեզերական ցաւերուն զէմ լարուած և զանոնք աւերելու սպառնացող մէկ մէկ գործիքներ էին կարծես, հիմա յանկարծ կը փշրուին իրեն ուղղուած թեթև շոկէ մը: Հիմա անոր աչքին գաճաճը հսկայ կ'երևնայ, տերևը՝ ծառ և մի կաթիլ ջուրը՝ անագին ծով, որուն մէջ կը վախնայ թէ զինքը պիտի խեղդեն:

Ո՞վ արդեօք վառեց արաբ հաշշաշին, այդ սահմանափակ գլխու անընդունակութեան մէջ, այսպիսի հարուստ գաղափարներու և լայն թռիչքներու այդչափ լուսավառ խարոյկը: — Հաշիշը:

Արաբ հաշշաշը, անապատներու աւազակներուն այդ որդին՝ գեղեցիկ է իր հաշիշային ժամերուն մէջ. փաթաթուած իր խորհրդաւոր պուրնուզի ծալքերուն մէջ, բարձրահասակ, գունատ ու թուխ, շարժումներու վեհագոյն պերճութեան տիրապետած, թեթև աղուամագով շրջանակուած տժգոյն գեղեցկութիւն մը զէմքի, որուն վրայ զիշերներէ աւելի սև և թափանցող

զոյգ մը գրաւիչ աչքեր աւելի խորհրդաւոր կընեն զինքը՝ իր հաշիշի անձնատուութեան երազկոտ ժամերուն մէջ։ Նա անկեղծ և անվրաս է այդ ժամերուն՝ կորսնցնելով իր արեւելեան ժողովուրդներու յատուկ բնաւորական խորամանկութիւնները։

Երկար կը սեւէ հաշշաշի այս վիճակը, սա պարզ զինովութիւն մը չէ, որ կարելի լինի արհեստական միջոցով ուշաբերել. օրգանական ժամանակաւոր մահացում մըն է հաշշաշի կեանքը, որ ժամանակի կը կարօտի արթնութեան հասնելու։ Հաշշաշի ամենավերջին վիճակը քունն է, անորոշութեան եզրներու հետ կասլուած, ուղեղային օրգանականութեան վրայ ալ մահու չափ թրմբիւր տարածող ծանր, երկար քունը։ Անոր ուղեղը հետըզհետէ կը մեռնի քնի մէջ, խորհրդաւոր և անորոշ մշուշներու ետև հանգչեցնելով անոր յափշտակութիւնն ու երազուն ցնորքները։ Երկար քունը և համարեա թէ անշարժութեան մատնուած երկար հանգիստն է, որ անոր մարմնին վրայ կատարուած այդ մահուան չափ հզօր տիրապետութիւնը կըսկսի հակաշրջել և հետզհետէ յաջորդ օրուայ զարթնումին պատրաստել։

Երբ նա կը զարթնի, երէկուանէն ոչինչ չի յիշեր։ Կաշխատի։ Իսկ յաջորդ զիշերը կը պատրաստուի դարձեալ նոյն կեանքին համար։

Հաշիշը... Ահա հաշշաշի կեանքին ամբողջ նպատակը։

ՓԻԼԻՍՈՓԱՅ ՍՈՅԻՈԼՈԳ

«Փիլիսոփայական մտքի ընդհանուր էվոլյուցիայի ուրուագիծը» մեր յօդուածում ¹⁾ մենք ծանօթացրինք իդեալիստական և մատերեալիստական ուղղութիւնների հետ և կանգ առանք վերջին շօլայի ամենախոշոր ներկայացուցիչ Սպենսերի վրայ:

Սպենսեր ոտքերի վրայ դրեց իրականութիւնը, որ իդեալիզմը դրել էր գլխիվայր: Տամսիններորդ դարի մեծ փիլիսոփան եղաւ իր գարի հաւատարիմ թարգմանը: Փիլիսոփայութիւնը ստացաւ նրա օրով իր իսկական նշանակութիւնը և որոշումը: Կապել, ընդհանրացնել իրողութիւնները, ձուլել, ամբողջացնել բոլոր գիտութիւնների տուած արդիւնքները, ընտրեան այլազան երևոյթներից ստեղծագործել մի ներդաշնակ սիստեմ, համայնապարփակ մի ամբողջութիւն—անա ճըշմարիտ փիլիսոփայի դերը:

Եւ այդ նպատակին հետամտեց Սպենսեր վաթսուն տարուայ իր փիլիսոփայական գործունէութեան ընթացքում, (նա քսանուհինգ տարեկան հասակից էր սկսել իր վերացական ուսումնասիրութիւնները), և չնայած իր հսկայ ուժերին ու անօրինակ աշխատասիրութեան՝ հազիւ կարողացաւ մահուան նախընթաց օրը ²⁾ աւարտել իր մեծ, հոյակապ գործը—համադրական փիլիսոփայութեան սիստեմը:

Այդտեղ, ընթերցող, դուք ականատես եք, թէ ի՞նչպէս է գոյացել տիեզերական վիթխարի շէնքը, ի՞նչ ուժերի և ի՞նչ օրէնքների գործակցութեամբ նախնական պարզ, ամպաձև զանգուածից աստիճանաբար առաջացել է արեգնային համակարգութիւնը, երկրագունդը, շնչաւոր աշխարհը:

Սպենսերի միտքը էապէս ոէալիստ է, իրապաշտական: Նա ոչ Կանտի պէս ուզեց կառուցանել ամբողջ տիեզերքը իր բանականութեան տարերքներով, ոչ էլ Հեկելի պէս միշտ ու-

¹⁾ ՏԵՍ «Մուրճ» 1904 թ. № 9:

²⁾ Նա մեռաւ անցեալ դեկտեմբերին:

գեց սաւառնել զուտ արտորակցիայի եթերային բարձունքների վրայ... Նա երբէք չարհամարեց կենդանի փաստերը, ինչ աշխարհում էլ որ լինեն նրանք,—կենսարանութեան, հասարակագիտութեան, բարոյագիտութեան, հոգեբանութեան մէջ:

Սպենսերը եղաւ Էվոլյուցիայի անզուգական թէօրիտիկոսը, նրա փիլիսոփան: Աստիճանական զարգացման օրէնքը, որ Լամարկի ու այլոց ջանքերով շեշտուած էր արդէն կենսաբանութեան մէջ, նա ընդհանրացրեց, կիրարկեց ամբողջ տիեզերքի վրայ: Այդպիսի մի փորձ արել էր Հեգելը, բայց, ինչպէս տեսանք նախորդ տեսութեան մէջ, Հեգելը այդ արել էր լոկ արտորակտ մտքի սահմաններում, հաշուի չառնելով կենդանի իրականութիւնը, նիւթի, շարժողութեան իրական գործօնները:

Էվոլյուցիայի սկզբունքի վրայ Սպենսեր հիմնեց մի նոր կոսմոլոգիա, տիեզերագիտութիւն: Նոր ու բնական մի «աշարձագործութիւն» ուր յաւիտենապէս գործակցում են նիւթը և շարժումը, ուր տեղ չունեն՝ ոչ իդէալիստական սպեկուլեացիաները, ոչ թէօլոգիական, աստուածաբանական բանդազուշանքները:

Նիւթ և շարժում... Նրանք բղխում են մի ուրիշ էլեմենտից, մի աւելի բարձր իրականութիւնից, որը հանդիսանում է բոլոր սկզբունքների Սկզբունքը:

Ուժն է այդ գերագոյն իրականութիւնը: Նա մնայուն է, անկորնչելի. նրա քանակութիւնը անփոփոխելի է, յաւիտենական: Նա չէ նմանում այն կոնկրետ ուժին—մշտափոփոխ և անցողական—որ մենք զգում ենք մեր մկանների մէջ. նա բոլոր ոյժերի և գոյութիւնների, բոլոր նիւթերի և շարժումների վերջին արտորակցիան է, վերջին ընդհանրացնող եզրակացութիւնը: Ուրիշ խօսքով՝ նա նոյն ամբողջը, բացարձակ ուժն է, որի մասին մենք աղօտ գաղափար ունենք և որը միանգամայն անհրաժեշտ լրացուցիչ է (Corrélat) բոլոր երևելի, շօշափելի ոյժերի:

Ոյժը մնայուն է տիեզերքի մէջ.—Սպենսեր դնում է այդ՝ իբրև բանականութեան անպայման պահանջ, իբրև պոստուլատ: Այդ պոստուլատը հիմքն է բոլոր փորձերի, ուսումնասիրութիւնների և իբրև այդպիսին՝ նա դուրս է փորձի, քննութեան սահմաններից, նա փիլիսոփայական մտածողութեան չուկէտն է դառնում: Նա ինքը Բացարձակն է, Աբսոլյուն:

Սա «մետաֆիզիկա» է, անշուշտ: Բայց մետաֆիզիկա է և մատերիալիզմը, որը ընունում է «տիեզերական սուրբատանցի» օրէնքը, ամեն բան ընդգրկող այդ առեղծուածը:

«Բացարձակը գոյութիւն չունի, ամեն բան յարաբերա-

կան է, այսպէս էր յայտարարում Սպենսերից առաջ՝ անգլիացի փիլիսոփա Համիլտոնն: Բացարձակի գաղափարը բացասական մի տարր է—աւելացնում էր նա—մենք չենք կարող կազմել նրա մասին որոշ մտապատկեր, առանց մեզ հակասելու»:

«Բացարձակ (արստիւ) ոչինչ չկայ, ամեն բան յարաբերական է մեր աշխարհի մէջ»,—այսպէս է վկայում և սովորական մարդկային դատողութիւնը:

Բայց դա սխալ է: Յարաբերականութեան գաղափարը ինքնին արդէն մտածել է տալիս իր հակոտնեայի՝ բացարձակի գաղափարի մասին: Նրանք երկուսն էլ գոյութիւն ունին, որպէս փոխադարձ լրացուցիչներ: Մէկը առանց միւսի անըմբունելի է: Կարճը էք երևակայել լոյսը առանց խաւարի, ձգողութիւնը առանց վանողութեան, բարութիւնը առանց չարութեան:

Իրանք յաւիտենական «հակոտնեաներն» են, անտիպոզները: Եւ երբ մենք առօրեայ կեանքում այնքան յաճախ խօսում ենք բացարձակ հաւատի, բացարձակ արդարութեան, մաքրութեան մասին, մենք շատ լաւ զգում ենք, թէ ի՞նչ ենք ուզում ասել դրանով: Ամեն բան, անշուշտ, յարաբերական է, բայց «արստիւ»-ի, բացարձակի գաղափարը ևս անջնջելի կերպով մնում է մեր գիտակցութեան խորքերում, որպէս մի իղէ՛ւալ, որին միշտ ձգտում է «յարաբերականը», առանց երբէք հասնելու: Նա բացասական ու հակասական չէ, ինչպէս պընդում էր Համիլտոն, այլ նա մի դրական գաղափար է, թէև նրա մասին չունենք որոշ ու յստակ մտապատկեր:

Այդպէս է մտածում Սպենսեր: Բացարձակը, ուրեմն, ներկայ դէպքում, հանդիսանում է Ոյժի մնայունութեան կամ յարատևութեան օրէնքը (La persistance de la Force):

Սպենսերի համար նա վերջին, ընդգրկող ճշմարտութիւնն է, որից դէդուկաիվ կերպով բղխում են բոլոր միւս ճշմարտութիւնները:

Նրանցից հետևում է նախ, որ 1) Այլևայլ ուժերի փոխադարձ յարաբերութիւնը մշտնջենական է, որ ուրիշ խօսքով, բնութեան երևոյթների մէջ կայ անհրաժեշտ, օրինական շրջափակցութիւն, որ նման պատճառները ամենուրեք ծնում են նման հետևանքներ:

2) Մի ոյժ կարող է փոխարկուել մի այլ ոյժի, առանց իր քանակութիւնից կորցնելու: Տաքութիւնը, որոշ քանակութիւն ծախսելով, արտադրում է մի ոյժ, որ շարժման մէջ է դնում լոկոմոտիվը, և այդ դէպքում ծախսուած ոյժը հաւասարում է արտադրուած ոյժին:

Միևնոյն ոյժը երևան է գալիս այդպիսով տարբեր ձևերի տակ.—մի տեղ նա դառնում է լոյս, մի այլ տեղ՝ տաքութիւն, մի ուրիշ տեղ՝ ելեկտրականութիւն կայլն: Եւ այդ յաւիտենական մնտամորֆոզի ընթացքում ոյժի քանակութիւնը ոչ պակասում է, ոչ աւելանում: Այդ նշանաւոր իրողութիւնը, որ Սպենսեր առաջ է բերում a priori,—ապացուցուած է հոշակաւոր Ֆիզիկոսների, Ռոբերտ Մայէրի, Ժուլի, Հելմհոլցի և ուրիշների կողմից:

3) Շարժումը առաջ է գնում այն ուղղութեամբ, ուր դիմադրութիւնը ամենաթոյլն է: Այդպէս օրինակ, գետը հոսում է, ուր ամենից քիչ խոչընդոտներ կան, երկրաշարժը աւերածներ է անում սովորաբար միևնոյն տեղերում, հրաբխային գործունէութիւնը արտայայտուած է որոշ գծերով և ժայթքումները կատարուած են միևնոյն ձեղքուածքներով կայլն կայլն: Հասարակական շարժումները ևս հնազանդուած են միևնոյն օրէնքին:

4) Շարժումը ըրիթմային է (rythmique, չափաբերական): Ըրիթմը առաջ է գալիս ամեն տեղ, ուր շարժումը հանդիպում է դիմադրութեան, ուր կայ ընդհարում երկու անհաւասար ոյժերի միջև:

Ամեն ինչ բնութեան ու հասարակութեան մէջ ընթանում է ըրիթմով, ծփանքներով.—ալիքները, որ մերթ իջնում են, մերթ բարձրանում՝ աստղերը, որ մերթ մարում են, մերթ փալփում երկնակամարի վրայ, մոլորակները, որ կազմալուծում են և կազմակերպում մշտնջենապէս, շնչաւոր աշխարհը, որ նորոգում է պարբերաբար, կենդանիների այլևայլ տեսակները, որ անյիշատակ ժամանակներից իվեր ծնունդ են առել երկրագնդի վրայ, աճել, զարգացել են և ապա անհետացել, վերջապէս, մարդկային աշխատանքը, հասարակութիւնների ու անհատների հոգեկան կեանքը իր պարբերական ելեէջներով՝ ուրախութիւններով ու կսկիծներով, ոգևորութիւններով, ու վհատութիւններով—ամեն տեղ երևան է գալիս անխուսափելի նախատագրական ըրիթմը, որ յատկանիշն է ամեն շարժողութեան և անհրաժեշտ լրացուցիչը Ոյժի մնայունութեան մեծ օրէնքի:

Կայ մի հիմնական, տիեզերական ըրիթմ, որին վերածում են վերջնական քննութեան մէջ բոլոր միւսները. նա արտայայտուած է երկու բառերով՝ զարգացում և քայքայում*) էվոլյուցիա և դիսսոլյուցիա:

*) Evolution և dissolution—զարգացում և քայքայում կամ կազմակերպում և կազմալուծում: Հայ լեզուի մէջ չենք գտնում բառեր, որոնք այդ երկու զաղափարների ճշգրիտ թարգմանը լինէին:

Բացարձակ անշարժութիւն կրթէք չկայ—նիւթը և շարժումը մշտնջենապէս բաժանուում, բաշխուում են տիեզերքի մէջ: Ամեն ինչ անկայուն է, «բոլոր առարկաները աճում են կամ փչանում, նիւթ են ամբարում կամ նիւթ են սպասում»:

Էվոլյուցիայի պրոցէսի ընթացքում նիւթը խտանում է և ամբողջանում (intégration) կամ ուրիշ խօսքով՝ նրա մասնիկների փոխադարձ կապը ամրապնդուում է, մինչդեռ շարժումը ցրուում է, վատնուում:

Գիստլիւցիայի պրոցէսի ընթացքում ընդհակառակը՝ նիւթը նօսրանում է, նրա մասնիկների կապը թուլանում (désintégration), մինչդեռ շարժումը ամփոփուում է և կենտրոնանում:

Էվոլյուցիայի պրոցէս է կատարուում, երբ երկշագունդը իր սկզբնական հրահեղուկ վիճակից աստիճանաբար զարգանում է դէպի ներկայ դրութիւնը.—նրա կեղևը միշտ աւելի և աւելի ամրապնդուում է (նիւթի խտացում, (intégration), հետզհետէ պաղելով, այսինքն, կորցնելով ներքին պոտենցիալ շարժողութիւնը:

Էւօլյուցիայի պրոցէսի ընթացքում բացի վերը յիշած երևոյթներից՝ նկատելի են և հետեւեալները.

Նիւթը միապաղաղ, հոմոթէն վիճակից (homogénéité) սովորաբար անցնում է դէպի այլատարր հետերոթէն դրութիւն (hétérogénéité): Այն ժամանակ, երբ զանգուածները ամփոփուում են, ձուլուում ի մի ամբողջութիւն, նրանց մէջ կատարուում է զանազանատրումը՝ դիֆֆէրենցիացիա (différentiation): Ներդաշնակ ամբողջութեան մէջ մասնիկները միշտ աւելի և աւելի զանազանաւորուում են, իւրաքանչիւր մասնիկ ստանում է իր որոշ ձևը, իր որոշ տեղը: Այդ պատճառով ասուում է նոյնպէս, որ էվոլյուցիայի ընթացքում առարկաները քաօսային, անորոշ դրութիւնից անցնում են դէպի յստակ ու որոշ դրութիւն:

Ամփոփելով՝ մենք ստանում ենք հետեւեալ ֆորմուլը.

Էվոլյուցիան՝ նիւթի խտացման (եւ շարժման վատնումի) զործողութիւնն է, որի ընթացքում նիւթը անկապ, անորոշ, պարզ, հոմոթէն դրութիւնից անցնում է աստիճանաբար դէպի յարակից, որոշ, հետերոթէն եւ բարդ դրութիւնը:

Այդ ֆորմուլով է առաջ ընթանում տիեզերական համայն զարգացումն ու առաջադիմութիւնը: Այդ օրէնքին են հնազանդուում անօրգանական և օրգանաւոր աշխարհները, հասարակութիւններն ու անհատները իրանց անդադրում ձևափոխութեան մէջ: Վերցրէք նախնական պրոտոպլազմը, վերցրէք անասնական կամ մարդկային սաղմը: Ո՛րքան պարզ է նա իր սկզբնա-

ւորութեան մէջ.—գրեթէ բոլորովին միատարր, հոմոթէն: Բայց ահա աստիճանական, իրարու յաջորդող ձևափոխումներով՝ նա կամաց-կամաց դառնում է օրգանների ու հիւսուածքների մի բարդ զանգուած, մի հետերոթէն ամբողջութիւն, ուր սահմանուած է այնքան խելացի աշխատանքի բաժանում, ուր ամեն մի բջիջ ունի իր որոշ տեղն ու պաշտօնը—մի ամբողջութիւն, որ մենք անուանում ենք անասուն կամ ասուն:

Այդպէս է ամեն մի օրգանի դմի պատմութիւնը տիեզերքում: Ինքը տիեզերքը, Կանտ-Լապլասեան հոշակաւոր թէօրիայի համեմատ՝ ներկայացնում էր սկզբում պարզ, ամպաձև, հոմոթէն մի զանգուած, ուր տակաւին չկար այլազանութեան հետք, ուր միայն գործում էին երկու ճակատագրական, հակամարտ ուժերը՝ ձգողութիւնն ու վանողութիւնը՝ (Attraction, Rēpulsion). հարիւրաւոր և հազարաւոր դարերի ընթացքում այդ զանգուածը աստիճանաբար զանազանաւորուեց, ենթարկուեց դիֆֆէրենցիալայի և ծնունդ տուեց իր արզանդից անհամար համաստեղութիւններին՝ երկրագնդին ու արեգակներին, աստղերին ու մոլորակներին, որոնցից իւրաքանչիւրը մայր զանգուածից բաժանուելու միջոցին նոյնպէս գրեթէ հոմոթէն, անորոշ մի զանգուած էր և միայն ժամանակի բովում, անընդհատ շարժողութեան, պտոյտների շնորհիւ, ընդունեց այն որոշ, խտացած կերպարանքը, որ դիտելի է ներկայում:

Բուսական և կենդանի աշխարհները՝ դարվինական թէօրիայի համեմատ՝ նոյնպէս զանազանաւորուել են աստիճանաբար, արտագրել են հետզհետէ բոյսերի ու կենդանիների անթիւ ու այլազան տեսակներ: Իարձեալ է վոլիւցիա՝ հոմոթէնից դէպի հետերոթէնը:

Քաղաքակրթութիւնը իր առաջագիմութեան պրոցէսում, սկսած բարբարոսութեան ամենահին ժամանակներից՝ զարձեւ է միշտ աւելի և աւելի այլատարր, հետերոթէն, շնորհիւ այն հանգամանքի՝ որ աշխատանքը հետզհետէ բաժանուել է ցեղերի, ազգերի, դասակարգերի, անհատների մէջ:

Եւ այսպէս բոլոր աշխարհներում—գիտութեան, փիլիսոփայութեան, կրօնի, լիզուի, գրականութեան, արուեստի, բանաստեղծութեան մէջ կային—ամեն տեղ է վոլիւցիան միևնոյն եղանակով է կատարում իր ըիթմը, ամեն բան՝ շնչաւոր ու անշունչ, տիեզերքի մէջ գարգանում, ձևափոխում, առաջադիմում է, անցնելով միշտ պարզ դրութիւնից դէպի բարդը, հոմոթէնից դէպի հետերոթէնը, անորոշից դէպի որոշը:

Չարգացման անիւր առաջ է մղում միշտ դէպի աւելի և աւելի բարձր ձևեր, դէպի այլազանութիւն ու կատարելութիւն... Եւ

ասկայն—աւանդ—ուժերի յարատե հաւասարակշուութիւն երբէք չենք գտնում. արտաքին ազդակները անդուլ շարունակում են իրանց համայնաւեր ազդեցութիւնները և վերջիվերջոյ կազմալուծում են ամենակատարեալ, ամենահոյակապ օրգանիզմն անգամ—լինի դա մի աստղ կամ մի արեգակ, մի կենդանի մարմին, մի քաղաքական, հասարակական կազմակերպութիւն...

Այդ էլ միւս օրէնքն է, հակամարտ օրէնքը՝ նոյնպէս երկաթէ, տիեզերական—ըրիստոլիցիայի, քայքայման օրէնքը...

Միջ. Յովհաննէսեան

(Կը շարունակուի)

ԲԻՐՄՇՆԻՆԵՐԻ ՀՆՏԵՐԻ ԱՆՑԵԱԼԻՑ ԵՒ ՆԵՐԿՎՆՏԻՑ ¹⁾

Բրմահայերի անցեալից միայն հետեւեալ տեղեկութիւններն եմ կարողացել ձեռք բերել. սրանց մի մասը (J. Grawfurd) ²⁾ Կրաֆըրդ ²⁾ անունով մի անգլիացի պատգամաւորի օրագրութիւնից եմ քաղել, իսկ միւս մասը ներկայումս ծերերից եմ լսել:

Յիշեալ պատգամաւորի օրագրութեան մէջ, ի միջի այլոց յիշուած են հետեւեալները: Պ. Մարգիս Մանուկ անունով մի հայ հաւատարիմ և մեծ ծառայութիւն էր արել իրանց՝ պատգամաւորութեան առթիւ: Գրում է, որ սա չորս հարիւր հազար ռուբլիից աւելի պահանջ ունէր Բրմայ կառավարութիւնից. մերձ 22, 000 ռուբլիի արժողութեամբ ընծաներ և նուէրներ է բաժանել թագաւորին և նրա պաշտօնեաներին. բայց էլի չի վստահանում եղել իր պահանջի համար հարցնել: Յիշում է նաև թէ մի հայի տուն էին մտել կարմիր յակինթ (եաղութ) տեսնելու. պատմում է թէ մանր տեսակներից քանի հատ գնեցին. իսկ երբ մեծ տեսակների համար էին հարցրել, նոյն հայը հնդիկ

¹⁾ 1904 թ. «Մուրճ»-ում № 9 տպուած էր «Հայերի Բրմաստան գաղթելը»:

²⁾ J. Crawfurd անունով յիշեալ պատգամաւորը 1826 թուին Անլգ. կառավարութիւնից ուղարկուել է Բրմայ թագաւորի հետ դաշինք կապելու Ավա մայրաքաղաքում (Բրմաստանի): Յիշեալ պատգամաւորը իր պաշտօնը կատարում է և օրագրութեան ձևով պատմում է Բրմաստանում տեսածները:

լեզուով ասել էր թէ ունէր մի քանի հատ շատ թանկագիններէց միայն թէ չէր կարող այնտեղ իրենց ցոյց տալ. (քանզի եթէ որևէ յակինթ հինգ վիս ¹⁾ արծաթից աւելի գին բերէր, այն քարը նկատուում էր Բրմայ թագաւորի ստացուածքը. հետեաբար թագաւորն եթէ իմանար, բռնութեամբ կը տիրէր և ունեցողին էլ ծանր տուգանքի կ'ենթարկէր) ուստի խոստացել էր բերել Ռանգուն և այստեղ վաճառել: Նաև յիշում է թէ, մի օր Բրմայ իշխանները երբ վիճում են եղել մի խելօք հայի հետ, հարցրել են թէ, «կարո՞ղ է անգլիացին երկաթը արծաթի փոխել». նոյն հայը որ երկար տարիներ նրանց հետ ապրել էր և կատարեալապէս ծանօթ էր նրանց լեզուին, պատասխանել էր թէ անգլիացին գիտէ այն արհեստը կատարեալ կերպով, բայց ոչ այն մտքով, որով իրանց հարցի միտքն էր. գրպանիցը մի զմելի (անգլիացու շինած) հանում է և մօտները սեղանի վրայ է ձգգում և ասում է թէ այն աւելի արժէր, քան նոյն զմելու կշռով արծաթը: Նոյն պատգամաւորն յիշում է, որ Բրմայ թագաւորին տեսնելու ժամանակ մի քաջ անգլիագէտ և բրմայագէտ հայ կար:

Նաև յիշում է թէ Վերին Բրմաստանում (Մանգլէից նաւակով երեք ժամուայ ճանապարհ հեռու) տասը մղոնից աւելի ընդարձակութեամբ տեղ, մի Բրմայ թագաւոր յանձնած է եղել հայերին լեղակ ցանելու. ուր մի խելօք հայ վաճառական մեծ գործարաններ է ունեցել, որոնց աւերակները մինչև օրս դեռ կենում են: Էլ յայտնի չէ թէ ի՞նչ է եղել վախճանը, քանզի չկայ ուրիշ ծանօթութիւն:

Այսքանս վերոյիշեալ օրագրութիւնից:

Պատմում են Ռանգունայ Բրմայ կառավարութեան ժամանակ, Ռանգունում Յակոբ անունով մի հարուստ հայ է եղել, որ իր հարստութիւնը՝ ոսկի և արծաթ՝ իր տան հողի տակ թագցրած է եղել. յանկարծ մի թշնամի այս գաղտնիքը լսելով կառավարութեանը լուր է տալիս: Բրմայ թագաւորն իսկոյն բռնում է Յակոբին, կապել տալիս և գանակոծում մինչև թագցրած հարստութիւնը ցոյց է տալիս, որին տիրում է թագաւորը, խեղճութեան մէջ թողնելով զրկուածին: Նաև պատմում է թէ Յովհաննէս անունով թէ ազգանունով, մի հարուստ հայ՝ Ռանգունում Բրմայ ապօրինի կնոջից զաւակ է ունենում, նոյն ժամանակուայ մեր քահանային առաջարկում է մկրտել երեխին, բայց մերժողական պատասխան է գտնում. զիմում է

¹⁾ Վիսը մերձ մի քառորդ լիար է Պարսկաստանի կշռով:

կաթոլիկներին. սրանք մկրտում են երեխին, որից յետոյ նա կաթոլիկների եկեղեցին է երթում և իր հարստութիւնից քանի հազար ուսկի նուիրում է նրանց եկեղեցու շինութեանը, որոյ նուիրատուութեան համար, ինչպէս պատմում են, պղնձի թէ քարի վրայ արձանազրութիւն դեռ մինչև օրս կայ տեղոյս կաթոլիկաց եկեղեցում: Լսածներիցս էլ այսքան:

Վերոյիշեալ թէ գրաւոր և թէ բերանացի տեղեկութիւններից երևում է, որ հայերը Բրմաստանում անցեալ երկու դարում էլ թէ հարուստ և թէ պատւաւոր դիրք են ունեցել. միայն թէ Բրմայ կառավարութեան բարբարոս բռնութիւնների ենթակայ են եղել, որոյ պատճառաւ էլ շատ հաւանական է, որ ազգային կամ կրօնական հաստատութիւններ չեն վստահանում եղել շինելու, որպէսզի կառավարութեան ուշադրութիւնը իրենց հարուստ լինելու վրայ չհրաւիրուէր ¹⁾. որովհետև բացի վեր. վէզիր Գրիգորի շինած եկեղեցուց՝ ուրիշ մեր կրօնական կամ ազգային հաստատութեան համար չենք կարողանում ստուգել, թէ արդեօք եղջլ են կամ ոչ:

Այսօր մերձ (350) երեք հարիւր յիսուն շունչ հայ կը գտնուի Բրմաստանայ հետեւեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում. Ռանգուն, Մանգլէ, Տանգու, Մէյիօմ, Պիգու, Եամեղին, Պինմինա, Մէկթիլա, Շուէբօ, Թազի, Պիանգտընգ և ուրիշ գիւղաքաղաքներում:

Ռանգուն ներկայ մայրաքաղաքն է Բրմաստանայ, (ուր կենում է անգլիական ընդհանուր Բրմաստանայ կուսակալն, որ միշտ ուղարկւում է Հնդկաստանի փոխարքայից) վերջի քանի տասնեակ տարիներից սկսեալ, մի վաճառաշահ քաղաք է եղել. որոյ իսկ պատճառաւ, հայերի մեծամասնութիւնը այստեղ են հաստատուած թուով մերձ երկու հարիւր և յիսուն շունչ: Ունեն մի եկեղեցի սուրբ Յովհաննու Մկրտիչ անունով, ²⁾ ուր քահանայապետը թում է մի վիճակաւոր քահանայ Նոր-

¹⁾ Մանգլէի ներկայ եկեղեցին թէև Բրմայ կառավարութեան ժամանակում է կառուցուել, սակայն որպէս պատմում են, վերջին թագաւորների ժամանակում է շինուել, այն էլ հանգանակութեամբ. միևնոյն ժամանակ էլ այս թագաւորները փոքր իշատէ քաղաքակրթուած էին Անգլիայի հետ շփուելով: Մ. Ն. ք. 5.

²⁾ Սոյն եկեղեցին կառուցուել է 1859-ից 1863-ի յունուար ամսի սկիզբը: 1851-ից Ռանգունայ Հայերը զրկուած են եղել թէ եկեղեցիից և թէ հոգևոր մխիթարութիւնից. մինչև 1857-ի սկիզբները, երբ գեր. Պօղոս Ժ. վարդապետ Արշակունեաց Բալայ անունով, գալիս է նուիրում թէ քաւրոզիչ Ռանգունայ հայերը խնդրում են յիշեալ ծայր. վարդապետից, զատկական աւագ տօներին ժամասացութիւն են ունենում, մի հայի տան մի սենեակում, առանց պատարագի: Եւ իսկոյն մի եղէգնաշէն մատուռ են

Ջուղայից ուղարկուած Պարսկա—Հնգկաստանի թեմի գեր-Առաջնորդից, երեք տարի ժամանակաւ: Եկեղեցւոյ հարաւային կողմում շինուած է 1877 թուում քահանայի բնակարանը, որը շինել է հանգուցեալ պ. Կարապետ Բաղդասարեան իր հօր յիշատակին և սոյն շէնքի մէջ երկու սենեակներ յատկացրել է պանդուխտների առժամանակեայ բնակութեան համար:

Մանդլէ Բրմայ վերջին թագաւորի մայրաքաղաքն էր. այստեղ հաստատուած են թուով յիսուն շունչ հայ: Ունեն մի եկեղեցի սուրբ Գրիգոր Լուսաւորչի անունով, ուր քահանայագործում է նոյնպէս Ն. Ջուղայից ուղարկուած մի վիճակաւոր քահանայ ¹⁾: Սոյն եկեղեցին, ինչպէս պատմում են, կառուցուել է 1863 թուին:

Տանգուում մերձ 17 շունչ հայ կայ, և ֆնացեալ մերձ 33 շունչը ցրուած են վերոյիշեալ քաղաքներում և գիւղաքաղաքներում:

Բրմահայր ներկայում գործում է վաճառականութեամբ, շինութեանց ճարտարապետութեամբ, քաղաքական կառավարութեան պաշտօններով, փաստաբանութեամբ և զբաղիւրների զանազան պաշտօններով: Վաճառականներն են Ռանգունում. «Բաղդասար և որդի» «Յարութիւն և ընկ.» և «Դասպար և ընկ.»: Մանդլէում. «Վարդանէս և ընկ.» և «Աբգար եղբարք»: Ռանգունայ նշանաւոր պանդոկն է Strand Hotel, որ պատկանում է «Սարգիս Եղբարց»:

Բրմահայր գրեթէ ամբողջովին պատուաւոր դիրք ունի: Ունի զովեւի մի յատկութիւն, այն է, երբ մի օտարական դրսից զալիս է և գործի համար միջնորդութիւն կամ

կառուցանում Սրբոյ Աստուածածնայ անունով, քանզի վէզիր Գրիգորի շինած եկեղեցին սոյն անունով էր կոչուած: Այդ եկեղեցում յիշեալ ծ. վարդապետը ժողովրդի խնդրանօք պաշտօնավարում է, մինչև որ ժողովուրդը զրում է նոր-Ջուղայից իրեն համար վիճակաւոր քահանայ է բերում: Յետոյ ներկայ եկեղեցին կառուցանում են, որոյ շինութիւնը երկարածուում է զանազան անհամաձայնութեանց պատճառաւ, իսկ անունը կոչուում է սուրբ Յովհաննէս Մկրտիչ, որովհետև ինչպէս պատմում են, կառուցման ժամանակ Պ. Յովհաննէս Ս. Յորդանանեան անունով մի հայ երեսփոխան է եղել, որ այն ժամանակուայ մի ազգեցիկ անձն էր, սորա խաթիր համար սուրբ Յովհաննէս Մկրտիչ են կոչում, թէև յետոյ սուրբ Յովհաննէս Մկրտիչ սուրբ նըշխարից բերում է և մինչև օրս պահւում է սոյն եկեղեցում:

Մ. Ն. քհ.

¹⁾ Մանդլէի հայ ժողովուրդը նիւթականից անկարող լինելով մի քահանայի մխիթարել, անցեալներում քանի տարիներ քահանայից զուրկ էր. չորս տարի է, որ Կալկաթայի հայ եկեղեցին սկսեց օգնել, քահանայի ամաթոշակի յիսուն ուսփին ինքը տալով:

Մ. Ն. քհ.

խորհուրդ է հարցնում, պատրաստ է բրմահայր իր բարի խորհուրդներով և միջնորդութիւնով, և շատ անգամ էլ նիւթականով, կատարել իր ազգային բարոյական պարտքը: Սակայն մի այլ կարևոր բան որ պահուում է՝ մեր ազգային լեզուի համար անփոյթ մնալն է. չունենալով ազգային մի ուսումնարան և ընթերցարան, Բրմաստանայ ապագայ սերունդը զրկուել է ազգային լեզուից և լաւ ապագայ չէ խոստանում...

Համըարձում քահ. Ս. Վարդանենանց

Ա Մ Պ Ը

Ամպ լուսեղէն, ուր երազներս սպրեցան,
— Երկինքին մէջ, լուսնին աշխարհն արծաթի—
Ու քեզի հետ փըշրած կ'իյնան ցիրուցան.
Այդ փըշրանքէն տաք-տաք արցունք կը կաթի:

Բաժնուելով քու շողերէդ մըտերիմ,
Հովերուն բիրտ հարուածին տակ կը փըրթիս.
Կեանքդ երկինքն էր. հողը կըլլայ քեզ շիրիմ,
Ուր թաղուեցան հուր տենչանքներն իմ սըրտիս:

Եւ կը ժպտին վերէն արևն ու եթեր
Մեր վիշաբրուն անկարեկիր ու անփոյթ,
Փայփայելով թևերնուն մէջ նոր ամպեր,
Նոր սարսուռներ և երազներ ջինջ կապոյտ.

Մինչ մենք զոհեր սիրոյ անհուն պապակին՝
Անձրև կ'ուլաս դուն, ես՝ արցունք ցաւազին:

Սիպիւ

Խ Ո Ւ Ն Կ Ը

Խունկը կը ծըխի խորանին առջին
 Բուրվառին մեղմիկ ճօճումովն արծաթ
 Մուխի վարանք մը պըլլըւած խաչին՝
 Մըշուշով կ'օծէ սուրբերուն ճակատ:

Պաղատանքներու սարսուռներ երկայն
 Կամարներուն տակ կը մարին տակաւ,
 Մոմերու տըժգոյն բոցերը լալկան
 Քըթթող աչքերով կը հեան կարգաւ:

Սուրբ սիւններուն մօտ շղարշ մը ճերմակ
 Գաղտուկ հեծքերու զոզով կ'երերայ,
 Սիրտ մը փաթթըւած ստուերով համակ
 Խունկին պէս լոին հըրայրքով կ'եռայ:

Խունկը կը ցընդի բուրվառին ծոցէն
 Ու եթերն ի վեր կ'ելլէ խոյանքով,
 Նիւթ էր, բոյր կ'ըլլայ լափուելով բոցէն
 Իր կեանքը ցօղուած լոյսի երանգով:

Հէք կնոջ սիրտն ալ, որ հոն կը մըխայ,
 Պիտի չազատի իր պատեանէն կուռ,
 Մինչև որ հալի, լուծուի, տարրանայ
 Լափուելով բոցէն տենչերուն մաքուր:

Սիպիւ

ԽԱՌՐԻԿՆԵՐ ՈՒՐՄԻԱՅԻՑ

Ուրմիոյ լճի արեւմտեան գաւառները—Բարանդուզից մինչև Սոյ, —հիանալի են իրանց արգաւանդ գաշտավայրերով: Այս բոլոր գաշտավայրերն էլ ջրառատ են և ծառաշատ:

Սահմանագլխային բարձր լեռներից մի քանի գոլգահեռահան լեռնարագուկներ են ձգւում դէպի Ուրմիոյ լիճը: Նրանք քանի մօտենում են լճին, այնքան, կարծէք, մաշւում են ու ապա հէնց լճի ափին կանգ են առնում: Այս լեռների արանքում ծաղկում են Բարանդուզի, Ուրմիի, Նազու-Չայի, Սալմաստի և Սոյի չքնաղ հարթավայրերը, որոնցից իւրաքանչիւրն ունի իր կենսատու գետը: Բարանդուզ-Չայ, Շահար-Չայ, Նազու-Չայ, Չուլա և Կըզըլ-Սու գետերը մի մի փոքրիկ նեղոսներ են իրանց հովտի համար: Այս գետերից միայն առաջինի և վերջինի ջրերն են աւելանում և ծովը թափւում: Միւսները մեծամեծ առուներով առատօրէն բաշխւում են իրանց հովիտների մէջ գտնուող անդաստաններին և այգեստաններին, իսկ նրանց վրայ շինուած հոյակապ կամուրջների բազմաթիւ աջքերը չոր ու ցամաք են մնում:

Պարսկաստանին անձանօթ այցելուն՝ տեսնելով այս տեղերի հիանալի մշակուած տափաստանները և նրանց արգասաբերութիւնը, անշուշտ երանի՛ պիտի տար բնակիչներին, բայց դժբախտարար, աշխատող-մշակող ձեռքը զուրկ է մնում իր արտադրած բարիքներից, որովհետև ստացուած արդիւնքը անիրաւ կալուածատէր խաներն են խլում: Նրանք կառուցանում են ամարանոցներ, այնքա՛ն յաղթ ու մեծածախս, որքան և անձաշակ ու տգեղ: Այսպիսի շինութիւններ առատութեամբ ցրիւ են տուած Ուրմիի և Բարանդուզի զանազան ծառագարդ անկիւններում: Չանազան Միր-Փանջներ, Ամիր-Իովլէներ, Մուսթաշարներ և չգիտեմ էլ ի՞նչեր, տարին հազիւ միքանի օր կամ միքանի ժամ անց են կացնում, իսկ մնացեալ ժամանակը այդ բոլոր «ամարաթները» ամայի և կողպուած են մնում: Ահա թէ զրտեղ է

գնում բարեբեր դաշտի և անխոնջ մշակի արտադրած հասոյթը: Որքա՞ն անպէտք ու աննպատակ են այդ տգրուկ «ամառաթնե-
րը»: Բարանդուզում, ճանապարհորդները յաճախ պատահում են
մոխրից կազմած բլուրների: Ասում են որ նախկին բնակիչնե-
րի կրակապաշտութեան հետքերն են դրանք:

Ուրմիհ գիւղերը ման գալիս՝ պատահեցի մի զարմանալի
տեսարանի: Մի կիսամերկ մարդ մտել է ջրի մէջ, գլուխը
կռացրել է. մի ուրիշ անձնաւորութիւն էլ, ձեռքին մի դիւք
բռնած, ջուր էր սրսկում միւսի գլխին: Իսկոյն մտքումս
պատկերացաւ Քրիստոսի մկրտութիւնը: Հետաքրքրուեցի այս
նորանշան գործողութիւնով և իմացայ, որ Ուրմիում արդէն
յայտնի վանեցի Ասպատուրն է, որ կրկնամկրտութեան խոր-
հուրդն է կատարում: Այս մարդու մասին, որքան յիշում եմ,
մի անգամ գրուած պիտի լինի մեր պարբերական թերթերից
մէկում: Իր ասելով՝ հոգու փրկութեան այս ճշմարիտ ճանա-
պարհը նա ուսել է Վանում, մի կոյր մուրացիկից. սակայն,
որքան մեզ յայտնի է, անարաբդիստներ չկան Վանում. ոչ
միայն Վանում, այլև ամբողջ հայ ազգի մէջ դժուար թէ գըտ-
նուի այս ազանդին հետևող: Անհրաժեշտ էր, որ Ուրմիում
լինէր անպատճառ մի անարաբդիստ քարոզիչ, որպէսզի կրօն-
ների և ազանդների խայտաճամուկ թիւը լրանար: Այս-
տեղ կան աւետարանականներ, եպիսկոպոսականներ (ապրս-
կոպ) լուտերականներ, անարաբդիստներ, կաթոլիկներ, լուսա-
ւորչականներ, նեստորականներ, մովսիսականներ (գուցէ և
թալմուտականներ) շիա մահմէդականներ (գուցէ և սիւնիներ):
Սրանք յայտնիներն են. հաւանօրէն կան բարբիներ, գեարբներ
(կրակապաշտ պարսիկներ) և ուրիշ ծածուկ ազանդաւորներ,
«չրազ սէօնդիւրաններ» և այլն:

Միայն ասորին ընդունակ է այսքան բազմազան ազանդների
կեղծ հետևողներ մատակարարել. խօսքս քրիստոնեայ ազանդ-
ների և դաւանութիւնների մասին է:

Ռուսադաւան ասորիները խիստ հիասթափուած են: Նրանք
կարծում էին թէ դրանով Ուրմիին տէր կը դառնան: Բայց
ոռու հիւպատոսը պարզապէս յայտարարեց նրանց սխալ ըմբո-
նումը և իր պաշտօնի սահմանները գծեց. այս բանից ապահո-
վուած՝ թուրք կալուածատէրերը ոռուսադաւան ասորուն աւելի
են ճնշում, քան բողոքականին և կաթոլիկին: Ռուսների գրաւած
ասորական եկեղեցու համար նեստորականները դատ են բաց
արել. կառավարութիւնը, միւս միսսիանները նեստորականների
կողմն են. դատավարութիւնը շարունակուում է:

Շարունակուում է և Սոյի ճանապարհին սպանուած միսիօ-

նար Լաբրի սահարի գործը: Թաւրիզի անգլիակա Քհիւպատոսը իր երկու հնգիկ զինուորներով՝ սրերը մերկացրած է մանգալիս Ուրմիում. ասում են, որ կառավարութիւնից օրական 50 թուման պիտի ստանայ մինչև գործի վախճանը: Ոճրագործ սէյիզը Թաւրիզ է տարուած:

Յիշում եմ, որ մի անգամ Թաւրիզի աւետարանական գլխաւոր քարոզիչ դոկտ. Վիլսըն դժգոհութիւն յայտնեց, թէ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը խիստ պահանջողական դիրք բռնեց. նրա կարծիքով գործը մեղմութեամբ պէտք էր վերջացնել: Այս բանից յայտնի է, որ ամերիկական կառավարութիւնը առիթի էր սպասում իր զօրութիւնը ցոյց տալու համար:

Ուրմիոյ լճի արևմտեան զաւառների կեդրոնավայր Ուրմիա քաղաքի շուկան խիստ ընդարձակ է և հարուստ՝ արտահանելի նիւթերով: Բնակիչները գլխաւորապէս թուրք են. կան ասորիներ և քիչ թուով հրէաներ ու հայեր: Առևտուրը մեծ մասամբ թուրքերի ձեռքին է. հրէաները իրանց յատուկ ճութեղէնի առուտուրով են զբաղուում: Իսկ հայերը և ասորիները արհեստներով են պարապում: Վանից նոր նոր եկած արհեստաւորները յաջողութիւն են գտնում և շատերը ապահով վիճակ ստեղծելով՝ ընտանիքներն էլ փոխադրում են վերջնականապէս: Այս ամառը նրանք քաղաքի պարսպից դուրս գնեցին մի ընդարձակ արտ՝ վանեցիական մի թաղ կազմելու համար:

Ուրմիի բազարը շատ աւելի զուտ պարսկական պատկեր է ներկայացնում, քան Ատրպատականի միւս քաղաքների բազարները: Այս բանը հէց սկզբից աչքի է ընկնում: Պատահում էք տանեակ զոյգ դէրվիշների, որոնք փոխն ի փոխ երգում են, խանութներից ողորմութիւն խնդրելով: Թաւրիզի հռչակաւոր բազարում, դուք հազիւ էք պատահում երգող դէրվիշի. նրանք՝ այնտեղ, մի նախադասութիւն շարունակ կրկնելով են փող խնդրում, իսկ Ուրմիում, դէրվիշը իր քաղցր ու զիւ ձայնով, ամբողջ պատմութիւններ է անում, թէ եղանակով և թէ նիւթի բովանդակութեամբ մեծ բաւականութիւն պատճառելով թուրք ժողովրդին. և ուրմեցին սիրով է ձգում իր սև փողը երգչի պարզած ամանի մէջ: Կայ դէրվիշների մի այլ տեսակ, որ առանց երգի, լոկ պատմութիւններ է անում: Դէրվիշի պատճառած բաւականութիւնից օգտուում է գլխաւորաբար աղքատ դասակարգը, որ շրջան կազմած լսում է նրան:

Մի անգամ առիթ ունեցայ դիտելու, թէ ինչպէս կօշիկ կարկատողների մի բազմութիւն հետաքրքրութեամբ լսում էր Ռուսդէմ և Զոհրարի պատմութիւնը: Շուրջանակի հաւաքուած բազմութեան կենտրոնում կանգնած էր դէրվիշ-պատմիչը. նա

հագած էր երկար անթարի, գլխին մի թեթև գլխարկ, թևերը մինչև արմուկները վեր քաշած և ձեռքին մի կանգունաշափ փայտ: Նրա աչքերի փայլը բոլորովին հանգած էր «աստուածային» աֆիսի գործածութիւնից. նիհար էր նա և դեղնած. սակայն պատմելիս մի այնպիսի աշխուժով էր շարժումներ կատարում ու պտոյտ գործում, որ դիակի տպաւորութիւն թողնող այդ արարածը պարզապէս զարմանք էր պատճառում: Պատմում էր եռանդով. ֆարսերէն լեզուն այնպիսի շեշտերով և առոգանութեամբ էր արտասանում, որ երաժշտութեան տպաւորութիւն էր թողնում: Լսողները իրանց գործով էին զբաղւում և երբ զգացուած պատմիչը իր ձայնի եղանակաւորումներով ու շարժումներով զիւցազներգութեան ամենայուզիչ տեսարաններն էր ներկայացնում, նրանք թողնում էին իրանց գործը և ամբողջապէս լսողութիւն դարձած՝ պատմողին էին նայում: Վերջում, սակաւապէտ դէրվիշը, իր սև փողերն առած՝ գոհունակութեամբ հեռացաւ, մի ուրիշ տեղ էլ անշուշտ նոյնը և կամ մի ուրիշը պատմելու համար:

Դէրվիշի դուրեկան ձայնը հնչում է Ուրմիի ամեն կողմերում: Կալատեղերում մի ղոյգը իր փայն ստացած հեռանում է, նրան յաջորդում է երկրորդը և այսպէս՝ սեխաստաններում, բանջարանոցներում: Ուրմեցի թուրքը դեռ այնքան չէ ճնշուել ապրուստի հոգսերով. բարեբեր հողը ապրուստը խիստ հեշտացնում է: Ուրմիում չկայ մուրացկանների այն անապին բազմութիւնը, որին պատահում էք ուրիշ տեղերում և դրա համար էլ ժողովուրդը մուրացկանին իր ողորմութիւնը չի զլանում: Դէրվիշներին ցոյց տրուած հիւրասիրութիւնն է անշուշտ պատճառը, որ նրանց թիւը այդքան շատ է այս կողմերում:

Օգոստոսին առաջին անգամը լինելով մի քանի հայ երիտասարդներ ցանկացան թուրքերէն ներկայացում տալ: Մի իրարանցում, շուկ էր ընկել ամբողջ բազմութիւն: Ներկայացման յայտարարութիւնը ձեռքէ ձեռք էր անցնում. չէին հասկանում, ի՞նչ բան է: Յայտարարութեան վրայ տպուած էր ինն մուսաների պատկերը, որից եզրակացնում էին, թէ «կին պէտք է խաղացնեն» կամ կապիկ պէտք է պար ածեն: Թուրքերը օտար տարազով պատահածներին բռնում, հարցնում էին, բայց ամենևին գլխի չէին ընկնում: Այս դէպքը նորութիւն էր, ուստի մոլեռանդ մահմեդական հոգեորականութիւնը ցանկացաւ իր ամենակարող «արգելում եմ»-ը դնել: Ներկայացման օրը, երբ ամեն ինչ պատրաստ էր, անս քաղաքագլուխը լուր է ուղարկում և յայտնում, որ մոլլաների ցուցմամբ, ստիպուած է արգելել. միաժամանակ և ետ էր կանչել վարձուած զինուորական երաժշտա-

կան խումբը: Օտարահպատակները պատասխանեցին, թէ իրանք կը ներկայացնեն. տեսնենք ի՞նչպէս կարող են արգելիլ: Ներկայացումը տեղի ունեցաւ, որի ժամանակ մի քանի սպիտակազուլիներ—երևի յատկապէս ուղարկուած—յանկարծ ներս մտան և դիտել սկսեցին: Նրանց հրաւիրեցին նստելու: Նրանք ընդունեցին հրաւէրը և մինչև վերջը ապուշ կրթած դիտեցին և տեսան, որ դուրանին հակառակ բան չկար «օյինբաղների» սարքած խաղում: Բոլոր հանդիսականները շատ գոհ էին իրանց համար այս նոր տեսարանով: Շատերը սոմսակ գնել էին, բայց երկիւղից չեկան, իսկ եկողները գարմացան իրանց մոլլաների անմիտ հրամանի վրայ:

Գալուստ

ՄԵՐ «ԽՈՉԻՆՆԵՐԸ» ԵՒ «ԱՆԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ»

«Ընթերցասիրութիւնը չի գարգանում հայ հասարակութեան մէջ և հայ գրքի ու պարբերական մամուլի նուաճումները, ընթերցող շրջաններում, չափազանց դանդաղ են առաջ գնում.—ասա մեր իրականութեան ամենացաւոտ հարցերից մէկը, որը միշտ կոշմարի պէս ցցուած է եղել մեր գրագէտներին և ամբողջ գրականութեան առաջ, նրա սկզբնաւորութիւնից մինչև այժմ: Մեր գրականութիւնը իր ծանրաշարժ առաջխաղացութեան միջոցին միշտ ուժգնապէս բաղխուել է այդ կոշմարին և երևի դեռ երկար նրա ճակատը քերձուածներ պիտի ստանայ այդ բաղխումներէ:

Ի՞նչպէս և ինչո՞վ կարելի է բացատրել հասարակական այս հիւանդոտ երևոյթը: Մեր մամուլը, բնականաբար, շատ է զրաղուում գրանով և առանձնապէս «Մուրճը» իր «ներքին տեսութիւններում» յաճախ է շօշափել այդ հարցը, մօտենալով նրան զանազան կողմերից և տարբարութեամբ իրերն ու երևոյթները, որքան այդ թոյլ են տուել հանգամանքները:

«Մուրճի» յարգելի յօդուածագիրը այս տարուայ 9-րդ համարում քննելով անընթերցասիրութեան պատճառները և ընթերցողներ սրտնելով հայերէն իմացող «ինտէլիգենտ» շերտը:

Չաններում—ի հարկէ բաց թողնելով հայերէն չիմացող լեզիօնները—և գիւղական մասսաներում, շատ տխուր եզրակացութեան է հասնում: Մորալ պահանջներից զուրկ հայ «խնտէլիզէնս» դասը ուղղակի չէ տալիս հայ ընթերցողներ: Ընթերցող դասակարգ չի կարողանում արտագրել և մեր գիւղական մասսան՝ իր խղճալի տարրական դպրոցով, հազորդակցական նախաջրհեղեղեան միջոցներով: Ուրեմն մնում է, ըստ յօդուածագրի, այն սակաւաթիւ կոնտինգենտը, որ կոչուում է հայ ընթերցող և որն անկարող է ապահովել հայ գրական գործիչին իր ասպարիզում:

«Հայ ընթերցողների կոնտինգինտը»:—Ո՞ր տեղից է գոյանում այդ կոնտինգենտը: Դրա աղբիւրն է հայ միջին կոչուած դասակարգը, որից զուրս են դալիս հայ ուսուցիչներ, երկու հատիկ միջնակարգ դպրոցների աշակերտներ, արհեստաւորներ, ծառայողներ և որոնք կազմում են, իսկապէս, հայ ընթերցող դասակարգը: Դրանց վրայ աւելացրէք և այն փոքրաթիւ անձանց, որոնք աչքի ընկնող մեծ գիւղերում ստանում են ընթերցանութեան ճաշակ, շնորհիւ հաստատուած գրադարան-ընթերցարանների, և գիտակից երիտասարդութեան փոքրիկ շքշանի, նաև այն պատանիներին, որոնք գիւղից բաղաք տեղափոխուելով և բարեպատէհ հանգամանքների մէջ ընկնելով՝ ճըգտում են ինքնակրթութեան և դրա աղբիւրը գտնում են հայ գրականութեան մէջ: Այսպիսով հայ ընթերցող դասի պատկերը կը լրանայ: Իսկ թէ մեր միջին դասակարգը ընթերցողների ինչ տոկոս է տալիս, այդ թողնենք, թողնենք, որովհետև այստեղ էլ մխիթարական քիչ բան կայ:

Հայ ընթերցողների կոնտինգենտի մի փոքրիկ տոկոսը կազմում են խանութների, գրասենեակները, ծառայողները և գանաղան գործակատարներ ու բանուորներ, որոնք իրանց ունեցած չնչին ազատ բոլէների զործադրութեան և մասնաւոր գրադումների մէջ իսկ, այս և այն կերպ միշտ կախուած են կամ իրանց կախուած են զգում «խողէիններից»: Իսկ թէ դրանք, իբրև ընթերցողներ, ի՞նչքան քաջալերութիւն են գտնում այդ խողէիններից և իրանց շքշապատող պայմաններից—պարզենք երկու խօսքով:

Յայտնի է արդէն, որ խանութներում, գրասենեակներում, արհեստանոցներում, գործարաններում և այլ տեղերում, մեր «խողէինները» բնաւ հոգ չեն տանում իրանց ծառայողների, աշխատաւորների մատուր պահանջների գոհացման համար: Սակաւ տեղերում այդ նպատակով շատ-շատ ստացում է մի օրաթերթ: Իսկ օրաթերթի տուած մատուր մոտենդը բոլորովին

բաւարար չի կարող համարուել: Դրա փոխարէն դեռ ևս շարունակում է տիրել այն տխուր իրողութիւնը, որ «խողէինը» չի ուզում տեսնել, չի կարողանում տանել, երբ գրասենեակում կամ խանութում ծառայողը ազատ ժամերին գիրք, լրագիր կամ մի այլ բան է կարդում: Քիչ չէ պատահել, երբ այդ բանի համար ծառայողները յանդիմանուել և նոյնիսկ արտաքսուել են: Չգիտես՝ ցաւալի, զայրացուցիչ, թէ՞ յուսահատական անուանես այս երևոյթը: Բայց դեռ այդ չէ բոլորը: Կարող են ասել, որ ծառայողը, կամ բանւոր-արհեստաւորը իրանց մտաւոր պահանջներին գոհացում կարող են տալ գործից դուրս— ազատ ժամերին, կիրակի և տօն օրերին: Բայց այդ գիւրու-թիւնից ևս զուրկ է խեղճ ծառայողը: Նախ՝ նա իր ծառայութեան համար շատ չնչին վարձատրութիւն է ստանում: Իրանց չնչինութեամբ գրանք, շատ յաճախ, ուղղակի ծաղրանքի տպաւորութիւն են թողնում: Պարզ է ուրեմն, որ այդպիսի վարձատրութեամբ ծառայողը, մանաւանդ, երբ մի ամբողջ ընտանիքի պահպանութեան հոգան է քաշում, անկարող է, թէկուզ մի փոքրիկ սոկոս—տարեկան 50 ռուբլի—գրքի և լրագրի յատկացնել: Գուցէ աւարկողներ կը լինեն, թէ կարող են գոյութիւն ունեցող գրադարաններից օգտուել: Այդ աւարկութիւնն էլ ինքն ըստ ինքեան կը ջրուի, եթէ գանք այն հարցին, թէ ծառայողը ինչքան ազատ ժամանակ ունի իր արամազրութեան տակ:

Մեր աւետրական և վաճառական դասակարգը, առ հասարակ, դեռ ևս կուլտուրական ստոր աստիճանի վրայ՝ չգիտէ իր ժամանակը այնպէս գործադրել, որ համ Աստծուն հաճելի լինի, համ էլ մարդկանց: Լոյսը բացո՞ւեց, արդէն խանութ, գեազ ու գեազգեան, և նրանց ծառայողները կազմ ու պատրաստ են և այսպէս մինչև այն ժամանակ, քանի դեռ փողոցներում շարժում կայ: Ծիծաղելի է մտածել, թէ գործն է այդքան ժամանակ պահանջում: Ամեն մարդ էլ տեսած կը լինի, թէ ինչպէս, շատ յաճախ, ծիծաղելի գրութեան մէջ, սաղի պէս մի ոտի վրայ կանգնած, անգործութիւնից յօրանջում են խանութի սպասաւորները: Նե կամ թէ, ո՞ւմ յայտնի չէ մեր հասարակութեան դատարկապորտութիւնը: Ամբողջ մի ստուար դասակարգ կայ, որի բան ու գործն է առաւօտից մինչև երեկոյ, ժամանակ անցկացնելու և զուարճանալու համար շրջել խանութից-խանութ՝ ուղղակի ոչինչ չգնելու նպատակով: Ի՞նչու են խանութպանների սիրաշահ ժպիտներն ու ճարպիկութիւնները՝ գրանց մի բան վաճառելու: Նրանք միայն ժամեր են կորցնում, ապարդիւն ժամեր:

Միթէ դա անկուլտուրականութեան մի յայտնի ապացոյց չէ: Միթէ չի կարելի մի քաղաքի մէջ ընդհանուր սովորութիւնն դարձնել խանութները օրուայ մի որոշ ժամանակ, որոշեալ ժամերին՝ բաց պահել, որով թէ ծառայողը և թէ խոզէինը, ազատուելով ժամավաճառութիւնից կարող լինեն իրանց ազատ ժամանակը ուրիշ աւելի հաճելի զբաղմունքների նուիրել: Չէ որ այնքան տհաճելի ու ձանձրալի է երկար ժամերով, չոր, անմտաշահ գործով պարապել: Երեակայեցէք ի՞նչի նման է մեր՝ հէնց իրանց—«խոզէինների» զբոսիւնը: Դրանց ամենախոշոր սովորը նոյնիսկ ճաշը խանութում է ուտում: Առաւօտուայ և իրիկուայ թէ՛ն էլ այնտեղ են խմում. խոմ երեկոները կըլուրում, կամ ուրիշ տեղերում էլ անպատճառ ուշանում են: Այնպէս որ հայ խոզէինը առաւօտեան տանից դուրս է գալիս քնած թողնելով իր կնկան և երեկոյեան վերադառնալիս՝ նոյնպէս քնած է տեսնում նրան: Սա ինչի՞ նման է, ի՞նչ կեանք է՝ ամբողջ օրով հեռու ընտանիքից: Հայի «ճանասիրութիւնն» էլ մեզ լաւ յայտնի է. նա երբեք սօսերը չի պահում: Ուրեմն ազատ օր փնտմ է միայն կիրակին. այն ևս ի՞նչի նուիրել, ի՞նչի յատկացնել:

Անցեալ տարիներէից մէկուսն էր, որ Թիֆլիսի գործակատարները ցոյց սարքեցին, խանութները երեկոյեան ժամը 8-ին կողպելու համար: Մի շարք խանութներ, միայն առժամանակ, ակամայ գործազրեցին այդ արգարացի պահանջը: Այդպիսի զէպքերում քաղաքային վարչութիւնը կարող է օգնութեան հասնել, հրատարակելով պարտաւիր կանոններ: Անցեալ տարի, երբ Բերլինի խանութները երեկոյեան 7-ին կողպելու կանոն հաստատուեց, բողոքողներ եղան, թէ քաղաքի կենդանութիւնը դադարում է փողոցներում: Նոյն բողոքը գուցէ և մեզանում լսուի այդպիսի մի որոշման դէմ: Բայց ի՞նչ հիման վրայ: Այժմ ակսիօմ է՝ «ամեն բանից վեր է մարդկային օգուտը»: Երբ դուք իբրև անցորդ կամ զբօսնող անցնում էք փողոցով, գուցէ ձեզ համար հաճելի է տեսնել լուսաւորուած լայն սպակիւններ, շայց միթէ ձեր միտքը չպէտք է զբաղուի ներսի տանջուածներով, որոնք սոցաւօտից մինչև երեկոյ օտքի վրայ են, ընկճուած—մեքենայական ձանձրալի աշխատութեամբ: Լաւ կը լինէր, այն, որ խանութները մինչև ուշ ժամանակ բաց լինէին, մանաւանդ դա մեր անկարգ ազգարնակութեան համար մի յայտնի չափի դիւրութիւն է: Լաւ կը լինէր, միայն եթէ ընդունուէր փոխձառայութեան սովորութիւնը. այնպէս որ, ձառայողների երկու լամբակ, օրուայ ընթացքում, կը ծառայէր փոխնիփոխ ժամանակի կէսը: Բայց մեր խոզէինները, որ զբանում են ձառայող-

ների համար տարեկան մի քանի բուրլի՝ գրքի, լրագրի յատկացնելու համար, միթե երբ և իցե կը յօժարին այդպիսի բանի: Մենք ակամայից մի քիչ աւելի կանգ առինք այս հարցի վրայ, որովհետև նա շատ է հիւանդ, շատ է թարախոտ:

Արդ, այս դրութեան մէջ ծառայողը, հէնց դիցուք երեկոյեան 9 ժամին գործից ազատ լինէր. յոգնած, ջարդուած, օրուայ ընթացքում մաքուր օդից զուրկ, ինչպէս նա կարող էր մտածել ընթերցանութեան մասին: Վերջապէս նա շատ-շատ կը կարողանայ երեկոյեան մի ժամ ընթերցանութեան նուիրել. բայց չէ՞ որ այդպիսով նա մի «Մշակ»-ից աւելի բան չի կարող կարգալ:

Սա երեոյթի ընդհանուր պատկերն է. անշուշտ սակաւթիւ տեղերում կը լինին աւելի պատեն հանգամանքներ, որոնք գիւրութիւն կը տան ծառայողին մի փոքր միջոյ գրադուել ընթերցանութեամբ: Բայց շատ աննշան են այդ բացառութիւնները: Այդ տխուր իրողութիւնն է պատճառներից մէկը, որ ծառայող գասակարգը ընթերցողների այնքան ողորմելի թիւ է տալիս:

Անշուշտ այս ասածներիցս չպէտք է ենթադրել, թէ ծառայողների անընթերցասիրութեան պատճառը միմիայն խոզէինների վարմունքը, ծառայութեան կարգերն են և թէ ծառայողները գլխապատառ կը նետուէին գրքերի, լրագրների վրայ, հէնց որ վերանային այդ կարգերը: Ո՛չ, ծառայողներն էլ, իրանց հերթին, մեծ մասամբ դատարկապորտ—կիսակիրթներ են ու անտարբեր՝ ինչպէս ղէպի հասարակական հարցերը, նոյնպէս և ղէպի գրականութիւնն ու ընթերցանութիւնը: Բայց մեր յօդուածի նպատակն է մասնանիշ լինել միայն ծառայողին շրջապատող աննպաստ պայմանների վրայ, որոնք խեղդում, ոչնչացնում են եղած սակաւթիւ ծառայող-ընթերցողների ցանկութիւններն ու փափագը և այդ միջավայրում ընկածներին թոյլ չեն տալիս ընթերցանութեան ճաշակ ստանալ և կրթութեան ու զարգացման պահանջ զգալ: Անշուշտ այս վերջին հանգամանքով պէտք է բացատրել ծառայող գասակարգի յետամնաց, անկիրթ վիճակը:

«Մուրճ»-ի պէս մի ամսագիր, որ ընդամենը հազիւ 900 բաժանորդ ունի, միայն Թիֆլիսի պէս բազմահայ մի քաղաքում անուղղը պիտի ունենար բաժանորդների նոյնքան թիւ: Բայց այդպէս չէ: Էլի փնտոեցէք այս երեոյթի արմատը...

Այսքանը այն արտաքին պայմանների մասին, որոնցով շրջապատուած է ծառայողը. իսկ այժմ քրքրենք այս ներքին-բարոյական պայմանները, ուր գտնուում է նա: Հարցի այս կող-

մըն աւելի հետաքրքիր է: Արդէն ասացինք, որ մեր խոզէինական շրջաններում դեռ ևս տիրում է այն համոզմունքը, թէ ծառայողը, գործակատարը չպէտք է զբաղուի կողմնակի գործերով, մանաւանդ ընթերցանութեամբ: Մեր պատուելի տէրերը անշուշտ զրա համար ունեն իրանց տեսակէտի պատճառաբանութիւնը և անշուշտ այն, որ ծառայողը զբաղուելով ընթերցանութեամբ, կը գրաւուի նրանով և սակաւուշագրութիւն կը գարձնէ գործի վրայ: Թէ երբեմն այդպիսի ծուռ հասկացողութիւնները որ աստիճան ծայրահեղութեան են հասնում, ցոյց է տալիս հետեւեալ չափազանց պիւճախօս օրինակը, որը կարելի է համարձակ կերպով մեր խոզէինական աշխարհի հասկացողութեան ընդհանուր բնորոշումը համարել:

Ես ծառայող եմ: Մի օր իմ «խոզէինը», որպէսզի հասկացնէ ինձ, թէ ինչո՞ւ չորս և աւելի տարիներ շարունակ գըրասենեակում ինձ «լաքէյի» պաշտօնի մէջ է պահում, մինչդեռ ընդունակութիւններով և զարգացումով ինձանից աւելի պակաս մարդկանց յանձնում է լուրջ և պատասխանատու գործեր, ասում է.—«Դու գործին լաւ ուշագրութիւն չես դարձնում. չես հետևում, չես ձգտում սովորել: Դրա փոխարէն դու գրաւած ես կամ ծառայութեամբ, կամ գրականութեամբ: Դու քեզ փշացրել ես պարզապէս: Թո՛ղ այդ յիմար բաները, նուիրուիր գոծիդ, այ, ինչպէս այս սղան, որ միշտ քսմուում է, ուղում է քիթը ամեն բանի մէջ կոխել, ամեն բան սովորել: Այն ժամանակ քեզ էլ լաւ գործ կը յանձնենք, լաւ ուճիկ կը տանք»:

Միամիտ ընթերցողը գուցէ կարծէ, թէ ես իրօք այն գիժ գրամոլներէից, «գրքի խենթերից» մէկն եմ, որ պաշտօնը թողած՝ անուշադիր, միշտ գրքի, գրելու յետևից է ընկած: Բարեբախտաբար (որովհետև եթէ այդպէս լինէր, իմ ծառայութիւնը ձրի էլ չէին ընդունի և ես կը մնայի քաղցած), թէ՛ դժբախտաբար այդպէս չէ: Ես միայն սահմանափակ չափով ընթերցատէր եմ, սիրում եմ գրականութիւնը և օրուայ մէջ ունեցած երկու ժամ ազատ ժամանակս դրան եմ նուիրում: Հիմա դուք փորձեցէք այդպէս խօսող «խոզէինին» հասկայնել, թէ լաւ առևտրական, լաւ վաճառական, ինչպէս և լաւ գործակատար լինելու համար հարկաւոր է բազմակողմանի զարգացում, իսկ դրան ձեռք բերելու հանրամատչելի միջոցը՝ ընթերցանութիւնն է — չէք կարող: Նրա գլխում խօսում է մեխը: Ես արդէն «փշացած» եմ առևտրականութեան համար, որովհետև սիրում եմ կարգալը և չեմ քսմուում: Մեր «խոզէիններին» միշտ գուր են գալիս այն տեսակի ծառայողները, որոնք զուրկ են բարոյական պրինցիպներէից, անտարբեր են դէպի հասարակական և

ընտյթները. առջևից սողում, քսմուում, իսկ յետևից հայհոյում են և իրանց նամակների տակ միշտ ստորագրում են «խոնարհ ծառայ» բառերով:

Ուշադրութեան արժանի է այն խօսքը, թէ մարդ «կամ ծառայութեամբ պէտք է զբաղուի, կամ գրականութեամբ»: Որքան դառը հեզնութիւն կայ այդ խօսքի մէջ, թէև այդ չի զգում պարոն «խողէինը»: Գրականութեամբ զբաղուել... Իսկ սիվ կը տայ ինձ իմ ամսական 16 ըուրլի ոտճիկը. հայոց զրահանութիւնը... Ձեզ նման անհետաքրքիր անհատներից բաղկացած հասարակութիւնը, պարոն «խողէին», մեր այնքան խղճուկ գրականութիւնը և մի քանի հատիկ գրական տաղանդները չի կարողանում ապահովել. իսկ ի՞նչ կը լինէր, եթէ ամեն մի գրականութիւնը սիրող ուզենար գրականութեամբ զբաղուել: Հեզնեցէք, ինչո՞ւ չէ. չէ՞ որ ձեր պատուհաններից ամեն ժամանակ, ամեն ժամ լսելի են կուշտ և այնքան անդա՛րդ ծիծաղի ձայներ... չէ՞ որ դուք աշխարհում ձեր փորից ու փողից աւել բան չէք ուզում ճանաչել... և ինչքան շատ էք դուք...

Ա. Գուլոսեան

ՇՈՂԵՐ ԽԱՆԱՐԻ ՄԷՋ

«Փաւրիգի Հայունեաց Բարեգործական Միացեալ ընկերութեան» 1903—1904 ուսում. տարեշրջանի «Տեղեկագրից» քաղում ենք հետևեալ մխիթարական տեղեկութիւնները:

Պարոն Տիգրան Աֆրիկեանը, որ իր հաշուով պահում էր 2 երկսեռ դպրոց Բարանդուզ գաւառի թրքախօս Բաբաու և Դիզաթէքի հայ գիւղերում 4—5 տարուց ի վեր, կամենալով մի իրական, շօշափելի ծառայութիւն մատուցանել լքուած, տնտեսապէս բայքայուած և իր ազգային առանձնայատկութիւնները կորցրած պարսկահայ գեղջուկի կրթական գործին, յղացել է մի վերին աստիճանի մարդասէր միտք, այն է՝ 39 հայաբնակ գիւղ ունեցող, և 1200 տնից բաղկացած Ուրմի գաւառը իր շրջակայքով պատել դպրոցական ցանցով, բարերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք երկսեռ պիտի լինին, առայժմ հաս-

ցընել 20-ի, նպաստ յատկացնելով իւրաքանչիւրին տարեկան 250 թուման: Դպրոցները պիտի բացուին պարբերաբար, տարեցտարի, հիների վրայ 2 նորը աւելանալով. նրանք պէտք է գտնուին թեմի վիճակաւոր Առաջնորդի հովանաւորութեան և ընկերութեանս անմիջական հսկողութեան և կառավարութեան ներքոյ: Անցեալ 1903 թուի աշնան եղած 2 նախկին դպրոցների թիւը աւելացաւ Ռահուայի և Նախիջևան-Քէփէի երկսեռ դպրոցներով. առաջինը, որ պահուած էր ընկերութիւնս իր ծախքով, դրուեցաւ բարերարի հաշուին, իսկ երկրորդը նոր հիմնուեցաւ: Հիմնուած ուսուցչական խմբի անդամների հաղորդած փաստացի ցուցմունքների և գրաւոր վաճակագրութեան վրայ՝ որոշուեցաւ նոր բացուելիք դպրոցը հիմնել Ղարաղլղ գիւղում, որ կենդրոն է Ղարաճալու և Շիրաբաղ գիւղերի 70 տուն բընակչով, և Իքի-Աղաջի դպրոցը դնել բարերարի հովանաւորութեան տակ, հետեապէս առաջիկալ 1904-5 ուս. տարեշրջանում Պարոն Տիգրան Ա. ֆրիկեանը կունենայ 6 երկսեռ դպրոց:

«Ընկերութեան» հաստատութիւններն են.

- 1) Աղաղանի դպրոցը, Ղարաղաղում:
 - 2) Բարառունի դպրոցը, Բարանդուղ գաւառում, որ պահուած է պ. Տ. Ա. ֆրիկեանի հաշուով:
 - 3) Բալունիշի դպրոցը, Բարանդուղի գաւառում:
 - 4) Գեարդաբարտի դպրոցը, Ուրմի գաւառում:
 - 5) Դէրէլէքի դպրոցը, Սովուշ Բուլղում, նպաստ է տրուում պ. Ստեփան Տէր Օհաննէսեանից:
 - 6) Դիգաթէքէյի դպրոցը, Բարանդուղում, պահպանուած է պ. Տ. Ա. ֆրիկեանի հաշուով:
 - 7) Թովլալարի կամ Թագաբաղի դպրոցը, Միանդուար գաւառաւանասում, հանգուցեալ Աղամ Ղազարեանի յիշատակին նրա կառուած 9000 ռուբլու տոկոսով:
 - 8) Իքի-Աղաջի դպրոցը, Ուրմի գաւառում:
 - 9) Նախիջևան-Քէփէի դպրոցը, Նազլու-Չայ գաւառում: պ. Տիգրան Ա. ֆրիկեանի հաշուով:
 - 10) Ուրմիի դպրոցը, որ ստանում է պ. Ալէքսանդր Մելիք-Ազարեանից 300 ռուբլի տարեկան նպաստ: Այդ ուսումնարանը դաւառական կենդրոնական դպրոց դարձնելու համար բարերարը խոստացել է առաջիկայ տարուանից իր նպաստի քանակն աւելացնել 150 ռուբլիով, վճարելով ընդամենը 450 ռուբլի:
 - 11) Ռահուայի դպրոցը, Ուրմի գաւառում, պահուած է պ. Տ. Ա. ֆրիկեանի հաշուով:
- Յիշեալ 11 դպրոցներում, որոնցից 4-ը պահուած է ընկե-

րութեանս, իսկ 7-ը բարերարների հաշուով, ուսանում էին միջին թուով 420 երկսեռ սաներ՝ 320 աշակերտ և 100 աշակերտուհի: Ձմեռային ամիսներում այդ թիւը հասնում էր 5-600-ի: Աւանդուել են հետեւեալ աւարկաները՝ կրօն, հայոց լեզու, թուարանութիւն, հայոց պատմութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, գծագրութիւն, զրութիւն, երգեցողութիւն, մարմնամարզութիւն և ձեռագործ: Լուրջ ուշադրութիւն է դարձուած ծրագրի և դասաւանդութեան միօրինակութեան վրայ: Ուսուցիչներից ոմանք աչքի առաջ ունենալով աշակերտների դարգացման չափը և տեղական հանգամանքները՝ աննշան փոփոխութիւններ են մտցրել ծրագրի մէջ, կամ ըստ իրանց, մի փոքր յաւելումներ և յապաւումներ են արել: Վարչութեանս յանձնարարութեամբ Ուրմիի ուսուցիչ պ. Միքայել Պապիկեանը, որ միւսնոյն ժամանակ տեսչի պաշտօն ունի, տարուայ ընթացքում, օգուտ բաղելով տօներից և դպրոցական արձակուրդներից, այցելել է շրջակայ դպրոցները և իր տպաւորութիւնները՝ հանդերձ նկատողութիւններով՝ հաղորդել վարչութեանս: Առաջիկայ տարեշրջանում շրջիկ տեսչի գործը՝ դպրոցները յաճախ այցելելու կարևոր խնդիրը, կը դրուի նպաստաւոր հիմունքների վրայ:

Խիստ միտթարական և հոգեպարար երևոյթ է, որ թափուած ջանքերն ու ծախուած գրամները տակաւ առ տակաւ իրանց նպատակին են ծառայում: Ուսման ու կրթութեան փրկաբար լոյսը հետզհետէ թափանցում է պարսկահայ շինականի խրճիթը: Հայ գեղջուկը ըմբռնելով կրթական գործի յարգն ու նշանակութիւնը՝ սերտ կապում է դպրոցի և եկեղեցու հետ, աշխատում է ձեռք բերել իր կորցրած ազգային առանձնայատկութիւնները՝ լեզուն, կրօնը,՝ սովորութիւնները և այլն, հետեւապէս ոտք կոխում ինքնաճանաչութեան շաւղի վրայ... Ընկերութեանս նիւթական միջոցների ընդարձակուելուց շատ բան է կախուած... Նրա գործունէութեան շրջանը ընդլայնելու և անշեղ ընթանալու համար մի անգամ ձգուած ուղիով, արտաքին օժանդակութիւն է պէտք...

Բացի այդ՝ «Ընկերութեան» հաշուով տարիներից ի վեր պահուած են Թաւրիզում 2 մանկապարտէզ՝ Ղալա և Լիլաւա թաղերում: Ղալայի մանկապարտէզը այս տարի յաճախում էին 45 երկսեռ սաներ, որոնցից 32-ը թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 13-ը ձրիավարժ: Լիլաւայի մանկապարտէզը յաճախում էին 46 երկսեռ սաներ, որոնցից 27-ը թոշակաւոր և կիսաթոշակ էին, իսկ 22-ը ձրիավարժ: Մանկապարտէզները գտնուում էին կանոնաւոր ընթացքում: Վարչութիւնս մասնաւորապէս իր հոգացողութեան առարկայ է դարձրել այդ հաստատութիւնները:

Այս տարի Մոսկուայից ըերել տրուեցան ձեռագործի նիւթեր և մանկական խաղալիքներ:

Ընկերութիւնս Ղալայի մանկավարտէզում ունի իր անձին գրագարան-ընթերցարանը, որի դռները բաց են քաղաքիս ընթերցասէր տիկիներէի և օրիորդներէի առաջ: Գրագարանն ունի 500-ից աւելի ընթերցանութեան գրքեր և ստանում է պարբերական թերթերը:

Ցանկանում ենք «Հայուհեաց Ընկերութեան» նպաստաւոր պայմաններ—աւելի ևս մեծ ծաւալ սալու իր օգտակար գործունէութեան:

S.

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ

Օսմանցի սուլթաններու գահակալութիւնը:—Համիլամութեան գաղափարը մահմեդական աշխարհում:—Թուրք կիները բաց թէ գոց երեսով ման գալու են:—Թուրք կնոջ ձայնը:—«Շարքի-Ռուսի» դատողութիւնները այդ առիթով:

Սուլթան Մուրատ V-ի մահուան առիթով «Շարքի-Ռուսի» մէջ «Ղազէթնէվիս» ծածկանունին տակ հետևեալ բնորոշ և հետաքրքիր տեղեկութիւնները կը գտնենք օսմանցի սուլթաններու գահակալութեան օրէնքին վերաբերմամբ:

«Օսմանեան սուլթանները պարզապէս Արքասի՝ արարական յայտնի խալիֆէութեան՝ գահաժառանգութեան օրէնքները որդեգրած են: Գահը, օրէնքով կը պատկանի անոր՝ որ կայսերական ընտանիքի մէջ տարիքով ամենէն մեծն է: Օրինակ, երբ թագաւորը մեռնի և ունենայ երկու եղբայր, հինգ եղբորորդի, երեք հօրեղբորորդի և երկու հատ իրմէն պզտիկ հօրեղբայր, ասոնց մէջ գահ կը բարձրանայ ան՝ որը տարիքով մեծն է: Թագն ալ ամեն մէկ մեռնողի թողած ժառանգութեան պէս ժառանգութիւն մըն է: Բայց թագը կամ գահը այնպիսի ապրանք մը չէ, որ ամեն ժառանգորդներուն մէջ մէկ մաս տան և ոչ ոք չի զրկեն: Հետևաբար թագը մէկ հոգու պէտք է տալ և այն ալ ամենէն հասակաւորին: Ասոր էականը՝ պատճառը այն է, որ փոքրերը, որքան որ ալ օրինաւոր ժառանգ ըլլան, չեն կրնար երկիրը կառավարել առանց ինսամակալի. և ինսամակալով կառավարուած երկիրն ալ իսկական կառավարութիւն չի կրնար ըլլալ: Իսկ, ընդհակառակը, գահը յանձնելով հասակաւորներուն, արաքները նկատի են ունեցեր այն հանգամանքը, որ տարիքն առած մարդը իրբև աւելի խելահաս և փորձուած, աւելի լաւ կը կառավարէ երկիրը, քան անչափահաս վեհապետը իր խընամակալով:

«Օսմանցիները թէև արբասեան այս օրէնքը որդեգրեցին, բայց գայն չգործադրեցին կէտ առ կէտ: Բռնապետ սուլթաններ օրէնքը ոտնատակ տուին յօգուտ իրենց պալատներուն: Եւ որով

հետև, շարիաթով՝ գահ պէտք է բազմէին հասակաւորները, հարստահարող սուլթանները իրենց սովորութիւն դարձուցին սպանել իրենց զաւակներէն աւելի տարիքոտ գահի թեկնածուները, ինչպէս եղբայր, հօրեղբայր, հօրեղբորորդի կային: Իրենց զաւակին ի նպաստ սպանութիւններ գործող սուլթանները քիչ չեն: Անոնք արիւնստ էջեր ունին օսմանեան պատմութեան մէջ:

«Երբ օսմանցիները Սերբիայի հետ պատերազմի բնուեցան և ջարդելով թշնամու բանակը սերբ թագաւորութիւնը ջնջեցին, օսմանցի վեհապետը *) սուլթան Մուրադ II որ անձամբ կը վարէր բանակը, յանկարծ պատերազմի դաշտին մէջ սպանուեցաւ: Սուլթանի երկու որդիները իբրև հրամանատար կը ծառայէին բանակին մէջ: Մեծ որդին՝ Բայազիտ՝ հօր մահուան լուրն առնելուն պէս յարձակուեցաւ իր փոքրիկ եղբոր վրայ և զայն անմիջապէս սպանեց, որպէս զի գահը մնայ իր զաւակներուն: Ամբողջ բանակը, ուր մեծ քաջագործութիւններ կատարած էր նենգութեամբ սպանուող արքայազնը, ինչպէս և ամբողջ օսմանցի ժողովուրդը՝ արիւն լացին:

«Սուլթան Սէլիմ II իր ընտանեկան ցեղէն բաճն և չորս հոգի բերել տուաւ Կ. Պոլսի Թոփ-Գարու պալատը և իր աչքին առջև գլխատել տուաւ զանոնք նամը գահիճներու ձեռքով: Այդ շահգաղէներու ամենամեծը 21 տարեկան և ամենափոքրը 6 ամսական ծծկեր երեխայ մըն էր:

«Սուլթան Մէջիդէն սկսած այլևս այս տեսակ դէպքեր տեսիլի չունեցան: Սուլթան Մէջիդի ժառանգորդն եղաւ, բնականաբար, իր փոքր եղբայրը՝ Աբդ-իւլ-Ազիզ, որ գահի թեկնածուներուն մէջ ամենէն հասակաւորն էր: Իսկ Ազիզէն յետոյ օրէնքով թագաժառանգը սուլթան Մուրադն էր: Բայց ընթերցողներուն յայտնի է արդէն, թէ ինչպէս Մուրադի տեղ չամիդը գրաւեց գահը: Ինչպէս որ առաջ Աբդ-իւլ-Ազիզը աշխատեցաւ գահ բարձրացնել իր որդին՝ Եուսուֆ Իզզեդդինը, այնպէս ալ այսօր Սուլթան չամիդը կաշխատի թագաւոր դարձնել իր մեծ զաւակը, թէպէտ օրէնքով թագաժառանգը՝ իր փոքր եղբայրը, Ռէշադ էֆէնդին է, որը այսօր 61—62 տարեկան պէտք է ըլլայ: Ռէշադը եւրոպական լեզուներ չգիտէ, բայց

*) Արդարև պատմութիւնը կը վկայէ, որ Սուլթան Մուրադ II, երբ սերբ բանակը ջարդելէ յետոյ, յիտորտանքով ման կուտար զիակներուն մէջ, Մուրջ անուն սերբ մը, որ ինքզինքը մեռած կը ձևացնէր, յանկարծ հպարտ վեհապետին վրայ յարձակուեցաւ և սպանեց զայն: Յօդուածագիրը այդ դէպքին կ'ակնարկէ:

լաւ ծանօթ է թուրք գրականութեան և նոյնիսկ բանաստեղծական աւիւն ունի: Օսմանցի շահագազէները գրեթէ բանտարկուածներ կը համարուին. անոնց արգիւրուած է ոչ միայն տեսակցիլ մինիստրներու հետ, այլև մինչև անգամ հարեաններու հետ յարաբերութեան մէջ չեն կրնար գտնուիլ: Անոնց տրամագրութեան տակ եզոզ բոլոր ծառայողները լրտեսներ և ոստիկանութեան գործակալներ են, որոնք անոնց ամեն մէկ քայլին վրայ կը հսկեն և սուտ ու ժուտ տեղեկագիրներ կը ներկայացընեն Սուլթանին:

«Սուլթան Համիդը երեք եզրայր ունի այժմ կենդանի, որոնց երեքն ալ ամուսնացած են: Մուրադն ալ ունի նոյնպէս մէկ-երկու ամուսնացած զաւակներ: Սուլթան Աբդ-իւլ-Ազիզէն մնացած է այսօր, երեք-չորս որդի: Անոնց մէջ ամենէն մեծը Եուսուֆ Իզզէդդին է՝ Ֆէհմալին է: Այնպէս որ, այս միջոցին Պոլսի մէջ կայ 25—30 շահագազ և որովհետև ամեն շահագազ դահի իրաւունք ունի, կայ ուրեմն 25—30 գահաժառանգ:

«Եթէ օսմանցիներն ալ ղեկավարուին Եգիպտոսի, Եւրոպայի և Պարսկաստանի մէջ գործադրուած օրէնքին համեմատ ուր թազը միմիայն մեծ որդուն կը պատկանի, այն ժամանակ այժմեան գահաժառանգը պէտք է ըլլայ հանդուցեալ Մուրադի մեծ որդին՝ Սալահէդդինը»:

Միևնոյն «ղագէթնէվիս»-ը «Շարքի-Ռուս»-ի մէկ ուրիշ համարին մէջ կը տպէ յետագայ յօդուածը համիւլամութեան մասին: Մեր ընթերցողներուն կը յանձնարարենք մասնաւոր ուշադրութեամբ կարգալ այս վերին աստիճանի շահագրգիռ յայտնութիւնները:

«4. Պոլսի մէջ, մահմեդական ազգերու միութեան և կամ համիւլամութեան գաղափարը հեռեւեալ կերպով ծնունդ առաւ: «Եւրոպական պետութիւնները կ'ուզեն օսմանեան կայսրութիւնը աշխարհի երեսէն ջնջել. անոնց նպատակն է այս եզմակով ոչնչացնել իսլամական կրօնը: Օսմանցիներու վեհապետը՝ մարգարէի յաջորդն է. խալիֆէն՝ կրօնքի մարմնացումն է, մարգարէի փոխանորդը՝ աշխարհի վրայ: Առանց անոր կրօնի գոյութիւնը անկարելի է: Անիկա Մէկկէի և Մէդինէի պաշտպանն է: Ուխտագնացութիւնը (հաջ) և տիեզերքի պարծանք կազմող մարգարէի սուրբ գերեզմանին այցելութիւնը, իսլամական շէնքի հիմնարարներն են: Առանց Մէկկէի, Մէդինէի, խալիֆէի, իսլամութիւն չկայ: Այդ պատճառով ամեն մէկ միւսլիման իր կարողութեան չափ պէտք է աշխատի օսմանեան պետութեան յարատեւութեան»:

«Թէ իր խի ժողովուրդին և թէ օտար երկրներում ապ-

րող մահմեդականներուն մէջ համիսլամութեան գաղափարը տարածելու համար, օսմանեան պետութիւնը ամեն ջանք գործ կը դնէ այժմ: Ներքին քաղաքականութեան մէջ այդ շարժումին արդիւնքն այն եղաւ, որ օսմանեան կառավարութիւնը կրողական բոլոր կուլտուրական հիմնարկութիւնները մերժեց այլևս մտցընել իր վարչութեան մէջ: Սուլթան Մէջլիի ծրագիրը՝ իսլամութիւնն և կրողական քաղաքակրթութիւնը իրար ձուլելն էր: Այդ ծրագրէն հրաժարուեցան և մինչև անգամ կրողական քաղաքակրթութիւնը ծաղրեցին: Օսմանեան պետութեան մէջ սպորող արար և քիւրդ ցեղերը երեսանց միայն հպատակ էին. անոնք սրտանց շատ պող էին և նոյնիսկ չարակամ վերաբերմունք ունէին: Հիմա օսմանեան կառավարութիւնը կ'աշխատի համիսլամութեան գաղափարը անոնց մէջ մտցնելով՝ զանոնք անկեղծ կերպով կապել և կոյր գործիքներ զարձնել իրեն: Կ. Պոլսի մէջ քիւրդ և արաբ ցեղապետներու գաւազններուն համար մասնաւոր ուսումնարան հիմնեց, որպէսզի անոնք ապագային Ասիայի և Ափրիկէի մէջ օսմանեան ազդեցութեան ծաւալումին և զօրացումին նպաստեն: Նախ Քիւրդիստանի և ապա Արաբիոյ մէջ կազմակերպուած «համիդիէ» հեծելազորքի նպատակը միևնոյնն է, այսինքն նեցուկ վարձնել այդ անընտել տարրերը օսմանեան դահին:

«Անգլիական և ֆրանսական զօրքերը եգիպտոս և Տունուզ ոտք չկոխած՝ Կ. Պոլսի զիւանապէտները շատ աշխատեցան, որ համիսլամութեան գաղափարը ներմուծելով եգիպտացիներուն և տունուզցիներուն մէջ, զանոնք կապեն օսմանեան կայսրութեան և նոր ուժեր աւելցնեն: Բայց օտար՝ տիրապետութիւնը այդ ջանքերը ապարդիւն հանեց: Թէև համիսլամութեան գործակալները Ափրիկէի ուրիշ ցեղերուն մէջ շատ ման եկան, բայց ազդեցութիւն չունեցան: Որովհետև զժուար եղաւ արաբներու ուղեղին մէջ մտցնել այն գաղափարը՝ թէ թուրք փաղիշահ մը կարող է արաբ մարգարէի յաջորդ ըլլալ:

«Համիսլամութիւնը՝ Հնդկաստանի իսլամ ժողովուրդին մէջ շատ աւելի մեծ համակրութեամբ ընդունուեցաւ, քան նոյնիսկ օսմանեան երկրի մէջ: Հնդիկ մահմեդականները նուիրական Մէկկէի և Մէգիսէի պաշտօնան եղող խալիֆէին նիւթական զոհողութիւններ ընելու մեծ պատրաստակամութիւն ցոյց տուին: Օսմանեան կառավարութիւնը այս տրամադրութեանէն փութաց օգտուիլ: Սկսեց Հիջազի երկաթուղին կառուցանել: Ծախքին մասնակցեցան բոլոր մահմեդանները թէ օսմանեան երկրի մէջ և թէ այլուր, բայց այդ շինութեան սմնասխոշոր օժանդակութիւնը բերին, իրենք՝ հնդիկ մահմեդականները:

«Համիսլամութեան գաղափարը՝ շիա աշխարհին՝ Պարսկաստանի վրայ ալ ունեցաւ իր ազդեցութիւնը:

«Շիաներու մէջ պահպանողականները՝ «միւթէշէրրին» — շարիաթի բծախնդիր հետևող — կը կոչուին: Ասոնք կը հաւատան թէ մաքրակրօն իմամներու մէջ գերմարդկային առաքինութիւններ կան: Շիաներու 80/0-ը միւթէշէրրի են: Վերջին ժամանակներս, Պարսկաստանի մէջ, մէկ կողմէն՝ շիաներու մի մասին իմամներու առաքինութեան նկատմամբ մղած վէճը, իսկ միւս կողմէ բարեականութեան նման նոր յարանուանութեան մը և գուցէ կրօնի մը երևան գալը, ընդհանրապէս զէպէ սիւննիները *) տեսակ մը բարեացակամութիւն, տեսակ մը մերձեցման փափագ յառաջ բերած են: Այժմ միւթէշէրրիները սիւննիներուն կ'ըսեն. «մեր՝ շիաներուս մէջ առաջ եկած նոր կրօններու հետևողները՝ մեզմէ՝ միւթէշէրրիներէս նոյնքան հեռու են, որքան զուր սիւննիներդ: Մենք ստիպուած ենք մեր հերձուածներուն հետ կարելի եղածին չափ լաւ ապրիլ, ինչու համար ձեզ հետ ալ լաւ յարաբերութիւններ չպահպանենք: Մանաւանդ որ շիաներու և սիւննիներու մէջ գտնուող հին թշնամութիւնը աւելի քաղաքական միտումներէ, պատճառներէ ծնունդ առած է, քան կրօնական պատճառներէ: Փառք Աստուծոյ հիմա քաղաքական պատճառները գոյութիւն չունին: Դուք ունիք չորս յարանուանութիւններ. ամեն մէկ սիւննի իր յարանուանութեան հետևելով հանդերձ՝ միւս սիւննիներու համոզմունքը կը յարզէ, անոնց չի հայհոյեր, գանոնք չի մեղադրեր: Ի՞նչ կը լինի, որ դուք՝ մեզ ալ նկատէք իբրև ձեր յարանուանութիւններէն մէկը. չորսի տեղ հինգ յարանուանութիւն կ'ունենաք: Մենք ալ մեր կողմէն կրօնական ներողամտութիւն կը տածենք զէպի ձեզ:»

«Ծիսական և կրօնական արարողութիւններու վերաբերեալ խնդիրներու մէջ, բնական է որ ժամանակի ընթացքում պառակտումներ և նոր յարանուանութիւններ առաջ գան: Կրօնի մը հաստատուելէն յետոյ, ժամանակ անցնելով նոյն կրօնի հիմնադրին քարոզած սկզբունքներուն մէջ փոփոխութիւններ և պառակտումներ առաջ կուգան: Եւ այլևս անկարելի է հին ժամանակին դառնալ: Այս ինչ յարանուանութեան հիմնադիր իմամներէն մէկը կը պնդէ, թէ մարգարէն օրը հինգ

*) Մեր ընթերցողներուն յայտնի է, թէ շիաներուն և սիւննիներուն մէջ մեծ հակադրութիւն գոյութիւն ունի. առաջինները իսլամ կրօնի կաթոլիկները կը հաշուին, իսկ երկրորդները բողոքականները: Այդ հակադրութիւնը կայ հին ժամանակներէ ի վեր, խալիֆէ Օմէյէն սկսած:

անգամ աղօթք կ'ընէր և մենք ալ պէտք է հինգ անգամ աղօթք ընենք: Իսկ իմամ Ջաֆէրի նուիրական կարծիքն ալ այն է, թէ Մոհամմէզ մարգարէն հինգի փոխարէն չորս և երբեմն երեք անգամ կ'աղօթէր: Ինչպէս կը տեսնէք, կարծիքներու մէջ տարբերութիւնը մեծ է: Եւ այդ տարբերութենէն է որ առաջ եկած են պառակաւորները: Այժմ ազգն ինչ ընէ, մարգարէն ողջ չէ, որպէսզի հարցնէինք թէ այս երկու մեծ իմամներու, մուշթէիդներու կարծիքէն որն է ճիշտ:»

«Շիաներու և սիւննիներու մէջ ուրիշ տարբերութիւն մըն ալ կայ, որն աւելի մակերևոյթային է: Շիաները իսլամական կրօնի անհրաժեշտ դաւանանք կը համարին իրենց ղեկավար իմամներու ժառանգաբար յաջորդութիւնը և անոնց՝ կրօնական գործերու մէջ բացարձակ իշխանութիւնը: Այս կէտն ևս զուտ բարոյական, խղճմտանքային նկարագիր ունի և հետևաբար չի կրնար սիւննիներու և շիաներու կրօնական էական հաւատալիքներուն մէջ մեծ վեհ մը ստեղծել: Այս պատճառներով՝ սիւննի եղբայրներ, բարեկամ մնանք, հարազատներու պէս սուրինք, դուք ձեր չորս յարանուանութեանց մէջ հաստատ մընացէք, մենք ալ մեր Ջաֆէրի յարանուանութեան մէջ անխախտ մնանք»:

Այս մտերմական, քաղաքակրթական և համակրալից դպացումները, իզձերը մեր Անգրեղոյկասի մահմեդականներուն մէջ մեծ ծաւալ ստացած են: Թիֆլիսի մէջ բանն այն աստիճանին հասած է, որ շիաի մը մահուան ժամանակ անխտիր կը հրաւիրեն ե սիւննի հոգևորականները: Եւ երկուքն ալ դրամական հաւասար վարձատրութիւն կը ստանան: Բայց, այնուամենայնիւ, համխալամականները շիաներու այս բարեացակամութեամբ չեն բուականանար: Անոնք կը ձգտին շիաները սիւննի դարձնել և ջնջել աշխարհէն շիաութիւնը: Իրենց կարծիքով՝ շիա կրօնը և պարսիկ տէրութիւնը արգելք և պատուար կը հանդիսանան, որպէսզի իսլամութեան խալիֆէն, օսմանցիներու թագաւորը՝ իր ազդեցութիւնը ստարած է ամբողջ ասիական մահմեդականութեան վրայ, իր երկրի սահմանները կպցնէ Ասիայի միւս մահմեդականներու երկրին: Այսպէս, մէկ կողմէ կ'աշխատին շիա կրօնի վարկը կոտրել շիաներու աչքին, իսկ միւս կողմէ կը ջանան հաւատացնել պարսիկ ժողովուրդին, որ եթէ այժմեան կաջար թագաւորական ցեղը զահազուրկ ընելով՝ Պարսկաստանը օսմանեան թագաւորութեան մէկ մասը դարձնեն, պարսիկներու երջանկութիւնն ու բարօրութիւնը բոլորովին ապահովուած կ'ըլլան: Եւ ասոր համեմատ, շիաութիւնը սկարացնելու համար, բացարձակ կամ քօղի տակ աշ-

խատող համիսլամութեան կուսակից շիա գրողները կը քարոզեն, թէ իսկական մահմեդականները Կ. Պոլսի մահմեդականներն են, իսկ Թէհրանի մահմեդականները կեղծ մահմեդականներ են: Մինչև անգամ գործը այնտեղ է հասած՝ որ կարգ մը անուշով շիա հոգևորականներ՝ դուրանի մեկնութիւններ գրելով կը ձգտին հաստատել, թէ դուրանի այն այաթները—ասացուածք—որ հիմք կը ծառայեն շիա վարդապետութեան, այդ այաթները ոչ մէկը կապ չունին շիաութեան հետ և շիա հոգևորականները զանոնք բնի ընդունած են իրենց համար իբրև յենակէտ:

Ճրանի թագաւորութիւնը համիսլամական դադաւարին զոհ բերելու աշխատող առաջին անձը եղած է աւղանիստանցի հոչակաւոր շէյխ Ջէմալէտտինը, որը՝ պարսիկ կառավարութեան պաշտօնական յայտարարութեան համեմատ, մեղսակից էր Նասրը Էղզին շահի նահատակութեան գործին: Եթէ զանց առնենք այս իրողութիւնը, կարելի է ըսել, որ մինչև հիմա համիսլամութեան գաղափարի յողթանակին համար ոչ մէկ գործնական քայլ չէ առնուած: Ամեն տեղ համիսլամիստները կը ձգտին, որ մահմեդականները կրօնական պարտականութիւն համարեն օսմանեան պետութեան և խալիֆէութեան գոյութեան պահպանութիւնը:

«Համիսլամականներուն պատճառած բարոյական ֆլասը՝ քրիստոնեայ պետութիւններու մէջ ապրող մահմեդականներուն այն է, որ կը ջանան քրիստոնեայ պետութիւնները թըշնամի ցոյց տալ իսլամ կրօնին: Եւ այդ եղանակով անոնք՝ միւսլիման հպատակները կը խրտչեցնեն իրենց քրիստոնեայ իշխողներէն: Մինչդեռ բոլոր եւրոպացիները իրենց նուիրական պարտք համարած են յարգել ուրիշներու կրօնը և չմիջամտել անոնց ծէսերուն և հաւատալիքներուն: Բացի այդ՝ համիսլամականները թշնամութեամբ նայելով երոպական քաղաքակրթութեան վրայ, պատճառ կը դառնան, որ երոպական պետութիւններու իսլամ հպատակները չօգտուին այդ քաղաքակրթութենէն և ետ մնան: Բայց համիսլամականներու մեծագոյն ֆլասը այն է, որ անոնք կրօնը քաղաքական շահերու գործիք կը դարձնեն: Օսմանցիները տկարացած են և անկարող են իրենց երկիրը պաշտպանելու: Ափսոս. բայց թող աշխատին, ջանք գործ դնեն: Եւրոպացիներուն պէս թող իրենք ալ աշխատին իրենց երկրի բարեկարգութեան: Շատ հաւանական է, որ այդ եղանակով իրենք ալ յաջողին իրենց սեփական կարողութեամբ պահպանել իրենց երկիրը: Ապա թէ ոչ ի՞նչ շահ կայ Հնդկաստանի միւսլիմանին օսմանեան կայսրու-

թեան յարատևումէն կամ անկումէն: Ամբողջ իսլամութեան ոչ մէկ ֆուսս չի համարիր, եթէ օսմանեան կայսրութիւնը բընաջինջ ըլլայ կամ ֆուսս: Իսլամութիւնը 14 դարէ որ գոյութիւն ունի: Անոր հետևողները հետզհետէ կ'աճին: Հիմա, Գերմանիայի կայսեր խօսքին համեմատ, անոնց թիւը կը հասնի 300 միլիոնի: Մինչդեռ ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ հազիւ 15—20 միլիոն մահմեդական կայ: Կրօնական վէճերը վեց դարէ ի վեր Եւրոպայէն վերցած են: Եւրոպացիները օսմանցիներուն հետ ոչ մէկ ժամանակ կրօնական վէճեր չեն ունենար, իսկ քաղաքական և տնտեսական խնդիրները կրօնապաշտութեան չի նմանիր: Աստուած մի արասցէ, եթէ օսմանեան կայսրութիւնը աշխարհէն վերցուի, Մէկկէի և Մէդրինէի պաշտպանութեան գործը կը յանձնուի Եգիպտոսի խղիվին: Դէպի Մէկկէ՝ մարգարէի սուրբ գերեզմանին ուխտագնացութիւնը և այցելութիւնը՝ առաջուրնէ աւելի հանգիստ և բազմամարդ կ'ըլլայ: Մահմեդականներու խալիֆէութիւնը կաթոլիկներու պապականութեան չի նմանիր: Խալիֆէութիւնը զուտ պատուի տիրոջ մըն է: Եթէ այդ տիրոջը օսմանցի փառելշահները կրէնէ զաղբին, Եգիպտոսի խղիվը կը կրէ զայն: Ճիշտ հիմա ալ, չնայած որ օսմանեան սուլթանը կայ, Ֆէսի (Մարոկ) սուլթանը ինքզինք խալիֆէ կը կոչէ: Մէկ խօսքով եթէ համալամութեան գաղափարը շնչուի, իսլամութիւնը աւելի կ'օգտուի քան կը վնասուի»:

*
* *

«Շարքի-Ռուս»-ը վերջերս, թուրք հասարակական կեանքի համար մեծ կարևորութիւն ունեցող խնդիր մը սկսաւ արծարծել: Թուրք կիները իրենց երեսը բաց թէ փակ պահելու են: Իսլամ կինը իրաւունք ունի, քրիստոնեայ կամ ուրիշ ազգերու կանանց նման առանց չարշաֆի փողոցներուն մէջ երևնալու: Այս հարցը ոչ-միւսիլմաններուն համար շատ պարզ է, երկու լուծում չի կրնար ունենալ: Ան նոյնիսկ այնքան անվիճելի է, որ գուցէ կարևորութիւնէ զուրկ թուի շատերուն: Բայց թուրք ժողովուրդին համար ահագին նշանակութիւն ունի: Նամէ-հրամանութեան, այսինքն թուրք կիները էրիկ մարդերուն առջև բաց արձակ ելլել չկրնալուն պատճառով է, որ անոնք հասարակական կեանքէ հեռու ֆուսսու գատապարտուած են: Այն բոլոր տեղերը, ուր թուրք կինը կարող է դեր մը կատարել, գործ մը տեսնել, փակուած են անոր առջև, որովհետև մահմեդական օրէնքը կամ սովորութիւնը թոյլ չի տար անոր ասպարէզ դուրս գալ: Երևակայեցէք որ թուրքերը ուզէին պահել կանոնաւոր թատրոն, տալ պարբերական ներկայացումներ: Ի՞նչ պի-

տի ընէր դերասանական խումբը առանց կանացի ուժերու: Կինը՝ որ երեսը բաց՝ շուկայ անգամ չի կրնար երթալ, ինչպէս պիտի ելլէր բեմի վրայ: Այդ բանը իսկական սրբապղծութիւն մը պիտի համարուէր: Եւ այդպէս ալ կ'ըլլայ արդէն հիմա: Թուրք ներկայացումներու ժամանակ, կնոջ դերը կամ տղամարդիկը կը կատարեն և կամ ամենաբախտաւոր պարագային մէջ, օտարազգի կիներ, հայ, վրացի կամ ռուս: Ասիկա պզտիկ օրինակ մըն էր միայն: Դուք կարող էք այդ օրինակը կրկնապատկել ու բազմապատկել: Մահմեդական կիներու փակ, հարեմական կեանքն է անշուշտ պատճառը, որ մարդկային այդ խեղճ արարածները ամենազարհուրելի ստրկութեան մէջ քաշ կուզան: Բայց հետաքրքիր է գիտենալ, թէ նամէհրամուլթիւնը կրօնական պատուէր մը, կրօնի ստիպողական պահանջ մըն է, թէ դարերու ընթացքին մէջ ամրապնդուած սովորութիւն մը պարզապէս: Օսմանեան պետութեան մէջ, օրինակ, թուրք կիները աւելի աղատ են քան Պարսկաստանի մէջ: Թրքուհիները՝ այնտեղ, իրենց տան մէջ կը հագուին առհասարակ երոպացի կիներու նման, միայն թէ պարտաւորուած են չարշաֆով դուրս գալ: Եւ որովհետև օրէնքը կամ սովորութիւնը կը պահանջէր, որ դէմքերնին ծածկուած ըլլայ, անոնց ստուար մեծամասնութիւնը երեսէն վար կը կախէր չափազանց նուրբ ու թափանցիկ շղարշ մը, որը ընկանաբար անոնց դէմքը չէր թագցներ հետաքրքիր նայուածքներէ: Կային նոյնիսկ կիներ, որոնք այդ շղարշն անգամ զանց կ'առնէին և իրենց չարշաֆին կուտային այնպիսի ձև մը, որ շրջագրեստէն քիչ կը զանազանուէր: Թուրք բարձր դասակարգի խանութները այն աստիճան կրօնականացած էին իրենց ներքին կեանքին մէջ, որ իրենց ճաշակի նրբութեամբ, նորաձևութեան անդադրում հետապնդումով՝ շատ ետ կը թողէին իրենց օտարազգի քոյրերը: Եւրոպականացման շարժումն այն աստիճան ուժով էր օսմանցի հանրմներու շրջանին մէջ, որ Սուլթանն Համիդը՝ վտանգաւոր հետեանքներէ սարսափած՝ ստիպուեցաւ մասնաւոր իրադէտով մը սանձել զանոնք: Նախ արգիլեց, որ թուրք ընտանիքները օտարազգի, մանաւանդ երօպացի—ֆրանսացի, գերմանացի, անգլիացի—դաստիարակչուհիներ ունենան: Յետոյ հրամայեց, որ իսլամ կիները փողոցներուն մէջ երևան թանձր քօղով և ֆէրաջէով—տեսակ մը չարշաֆ: Օսմանցի, մանաւանդ պոլսեցի կիները բաղդատելով պարսիկ կիներու հետ, այն հասգին տարբերութիւնը կը գտնենք, ինչ տարբերութիւն որ կայ օսմանեան և պարսիկ կառավարութիւններու վարչական ձևին և կանոնաւորութեան մէջ: Օսմանցի կիներու մտաւոր մակարդակը անհամեմատ աւելի բարձր է, քան

պարտիկ կանանց իմացական մակարդակը: Օսմանցի կիներու մէջ կան ոչ միայն կարողալ գրել իմացողներ, այլև գրականագէտներ և բանաստեղծներ, ինչպէս Նիկեար հանրմ և ուրիշներ:

Արդ, այս բոլոր դիտողութիւններէն կ'ուզենք եզրակացնել այն՝ որ թուրք կիներ եթէ ստանայ այն բաղդատական ազատութիւնը, որ կը վայելէ ոչ մահմեդական կիներ, անիկա կարող է ոչ միայն իր ստրուկ դիրքէն բարձրանալ, այլև հասարակական փրկարար, որոշ դեր կատարել միւսլիման կեանքի մէջ: Ահա այս նկատումներով ալ՝ «Շարքի-Ռուս»-ի արծարծած հարցը թուրք հասարակական կեանքի ամենախոշոր հարցերէն մէկը պէտք է նկատել:

Մենք այդ հարցի մանրամասն վիճարանութիւնը չենք ներկայացներ մեր ընթերցողներուն: Գուցէ ուրիշ անգամ մը կատարենք այդ աշխատանքը: Առայժմ կը բաւականանք առաջ բերելով թուրք «խանում»-ի մը հետաքրքիր նամակը, որ տըպուած է «Շարքի-Ռուս»-ի 145-րդ համարին մէջ: Բայց նախ պահելով թուրք «խանում»-ը մէջտեղ նետելով այդ հարցը, կ'աւելցնենք, որ «Շարքի-Ռուս»-ը մէջտեղ նետելով այդ հարցը, կ'աւելցնենք, որ նամէհրամուծիւնը կրօնական պատուէր մը չէ, այլ սովորութիւն մը, որը նկատի ունենալով ժամանակի պահանջը, պէտք է խափանել: Եւ հրաւէր կը կարգար թուրք ընթերցողներուն յայտնել իրենց կարծիքը այս մասին: Գտնուեցան այնպիսի ընթերցողներ, որ այդ կարգի հարցեր յուզուելը սրբապղծութիւն համարելով՝ զայրացած՝ հայհոյալից նամակներ ուղղեցին խմբագրութեան: «Շարքի-Ռուս»-ը կը մեղադրէին հակակրօնական շաւղի մը հետեւելու մէջ: Եւ այդ մտքի նապաստակները կը կը պահանջէին, որ փակուի այդ հարցի ընթացիւնը: Կրօնաւորները՝ մէկ բերան՝ նամէհրամուծեան պահպանումը ջատագովեցին: Այդ վիճարանութեան մէջ, յանկարծ, ձայն բարձրացուց թուրք կիներ մը, իր ճշուած քոյրերուն գատը պաշտպանելու համար: Թուրք թերթին ընթերցողներէն ոմանք խօսեցին ինպատ կանանց և զուրանի այաթներուն վրայ յենուելով՝ ցոյց էին տուեր, որ իսլամուհիները երեսնին բաց պտըտելով կրօնի դէմ մեղանշած չեն ըլլար բնաւ: Այդ միտքը պաշտպանելու կու գայ և յիշեալ թրքուհին «խանում» ստորագրուած իր գրութեամբ:

Ահա թէ ինչ կը գրէ «խանում»-ը:

«Այս վերջին ժամանակներս, յարգելի «Շարքի-Ռուս» իր էջերը բացած է ըննելու և լուծելու համար այն շատ մեծ և կարևոր հարցը, թէ մենք կիներս պէտք է երեսնին բաց թէ գոց դուրս ելլենք: Այդ հարցը

մանաւանդ մեզի, կիներուս համար ստիպողական է և մենք շատ կը փափաքէինք զայն լուծուած տեսնել: Մենք մինչև հիմա այդ մասին զրուածներէն շատ բան չի հասկացանք, որովհետև խրթին դարձուածքներով, մութ նախադասութիւններով խճողուած էին: Մեր հասկացածն այն է սակայն, որ սուրբ զուրանը կը հրամայէ հետեւալը. Բարձրեալն Աստուած իր իսկ մարդարէին միջոցով թէ հաւատացեալ տղամարդուն և թէ կնոջ կը հրամայէ վատ գործերէ, անիրաւութենէ ետ կենալ: Բացի այդ, կիներուն կը հրամայուի իրենք զիրենք արդ ու զարդերով ցոյց չտալ: Ուրիշ պարագաներու մէջ արգելք չկայ: Մենք այս բոլոր պատուէրներէն այն կ'ըմբռնենք, որ պէտք է անձը հետու և մաքուր պահել անիրաւութենէ, վատ նպատակներէ, տգեղ մտքերէ: Գլխաւորը՝ տղամարդը կնոջ և կինը տղամարդուն երեսը նայել և չնայելուն մէջ չէ. այլ սիրտը մարուր պահելուն մէջ: Ամենակարողն Աստուած աշխարհն ըստեղծելով զայն զարդարեր է գեղեցիկ ու հաճոյատեսիլ արարածներով: Գեղեցիկ դաշտեր ու մարգագետիններ, սիրտ բացող վարդեր ու ծաղիկներ, ակնապարար տեսարաններ, հսկայ կաղնիներ, բարձր լեռներ, հրապուրիչ ծովեր, տեսակ-տեսակ կենդանիներ և թռչուններ, երկնակամարի վրայ անհամար աստղեր ստեղծելով՝ անոնց և ոչ մէկուն վրայ քօղ չէ ձգած: Աշխարհն ստեղծելէ յետոյ Աստուած մարդն ստեղծեց և անոր տուաւ խելք ու բանականութիւն և բոլոր արարածներու տէր կարգեց. այս բոլոր բաները զրուած են զուրանի մէջ, բայց մենք չգիտենք, թէ Աստուած հրամայած է երբէք Աղամի որդիներուն իրենց աչքը փակել, չլէհտել իր ստեղծագործութիւնը և զուրկ մնալ աստուածապարզ և հաճոյքէ: Շատ կարելի է, որ ասոր հակառակը հրամայուած ըլլայ: Աղամորդիներն ալ թէ այր և թէ կին, Աստուծոյ ստեղծածներն են և հետևաբար պէտք է որ քօղի տակ չըլլան և լոյս աշխարհին մէջ իրենց աչքը չփակեն, այլ կատարեալ ազատութեամբ ապրելով՝ Աստուած փառաբանեն և իրարու մատուցանեն հարկ եղած պատիւն ու յարգանքը. երկրի վրայ գեղեցիկ գործեր կատարելով՝ իրար ուրախացնեն և Աստուծոյ բաւականութիւն պատճառեն, որովհետև զրուած է. «բարիք ըրէք, Աստուած բարութիւնը կը սիրէ»:

«Շիա կրօնի դատի՛ Մէհմէտ Հասան Մուլլա գաղէ, «Շարքի Ռուսի» 130-րդ համարին մէջ պատասխանելով այս հարցի մասին մեր բարձր գիտնականներէն մէկուն գրութեան՝ այսպէս կը վերջացնէր. «Կիներուն ծածկուած մնալը մեր բանականութիւնն անգամ կը հրամայէ: Երբ անձի մը այգիին մէջ պտղատու գեղեցիկ ծառեր գտնուին, բնական է որ ամեն մարդ՝ երբ

զանոնք տեսնէ, պիտի հիանայ անոնց վրայ և ամեն ջանք գործ պիտի դնէ, զանոնք ձեռք բերելու և վայելելու համար: Բայց եթէ այդ այգին հաստատ պարիսպներ ունենայ, ոչ ոք մըտքէն պիտի անցնէ այդ պտուղները ձեռք ձգել: Սակայն եթէ այդ այգին պարիսպներ չունենայ և կամ եթէ ծառը այգիին եզերքը գտնուի, կասկած չկայ, որ գեղեցիկ պտուղները օտարներէն չեն խնայուիր»: Ահա, այս նմանութիւնը մէջ բերելով, յօրուածագիրը դատին իր խօսքին աւելի կշիռ տալու համար կաւեցնէ: «Ինչ բանի մասին որ մարդկային խելքը վճիռ տայ, շարիաթն ալ նոյն վճիռը կը կայացնէ»:

Նախ մենք կը համարձակինք յարգելի Մուլա զատէին դիտել տալ, որ մարդկային խելքը այդ տեսակ վճիռ չի կայացըններ, որ կարելի չէ նմանեցնել մարդը պտղատու ծառի և զայն փակել պարիսպներու մէջ, քօղի ետև: Երկրորդ, այդ նըմանութիւնը վերցուած է Աթաուլլահ Բայազիդովի մէկ գրքոյկէն: Սակայն կասկած չկայ, որ յիշեալ անձն ալ սիսալ նմանութիւն ըրած է. մարդկային խելքի վճիռը այդտեղ երբէք չի տեսնուիր:

«Կին դասակարգն ալ մարդկային տեսակին մէջ է. կիներըն ալ մարդ են և Աստուած իր ստեղծած այլևայլ պտուղները անոնց համար ևս ստեղծած է, և ոչ թէ զանոնք պտուղի նմանեցնելով հրամայած է պարիսպներու մէջ փակել և մեծացընել, որպէսզի ուրիշները անուշ ընեն: Յարգելի Մուլա զատէն պէտք է գիտնայ, որ կին դասակարգը ստեղծուած չէ այն միակ նպատակով՝ որ տղամարդկանց հաճոյք և զուարճութիւն պատճառէ: Կիներու պարտականութիւնը, դերը, գուցէ տղամարդունէն աւելի մեծ է, ինչպէս տանտիկնութիւն, երեխաներու կրթութիւն կայն: Պէտք է մեր մահմեդական եղբայրներուն քարոզել և անոնց լաւ հասկացնել, որ կիներուն՝ ըլլան անոնք իսլամ, թէ ոչ-իսլամ, հարկաւոր է արդար, մաքուր աչքով նայել: Պէտք է որ անոնք աշխատին զսպել իրենց ցանկութիւնը, յաղթել իրենց վատ նպատակներուն և տգեղ գործերուն: Պէտք է որ անոնք կանանց ետևէ ման չի գան ու զանոնք շիտակ ճամբէն դուրս հանեն: Այս տեսակ քարոզներով, յորդորներով միայն կարելի է մեր հասարակութեան վարքըն ու բարքը ուղղել: Մեր կրօնաւորներուն մեծագոյն պարտականութիւններէն մէկն է ուսուցանել ճշմարտութիւնն ու արդարութիւնը և ոչ թէ կիները խնձորենիի նմանեցնելով յորդորել, որ զանոնք պարիսպներու մէջ ամրափակեն: Պէտք է գիտնալ, որ կեանքի պահանջները օրէ օր կ'աւելանան, ապրուստը կը դժուարանայ, ամեն մարդ՝ ըլլայ կին թէ տղամարդ, պէտք

է որ աշխատի իր անձը պարեցնելու համար: Այս պատճառով անհրաժեշտ է ուսում, կրթութիւն, կեանքի փորձառութիւն ձեռք բերել: Ի՞նչ օգուտ, եթէ մենք պարիսպներու մէջ բանտարկուած փտինք: Ներկայ ժամանակներում, քաղաքակիրթ ազգերու և ժողովուրդներու մէջ կին դասակարգը մեծ յարգանք և իրաւունքներ կը վայելէ: Կիները՝ քաղաքակիրթ երկիրներու մէջ, զանազան բարեգործական ընկերութիւններ կը հիմնեն: Նոյնիսկ այս րոպէիս, երբ մեր տէրութիւնը ճապոնցիներուն դէմ պատերազմ կը մղէ, մեր մահմեդական եզրայրները գիտե՞ն արդեօք, որ ռուս տիկիները ահագին ջանք ու աշխատանք գործ կը դնեն, Կարմիր Սաչին կ'օգնեն: Ճապոնցի կիները, նրմանապէս, ոչ մէկ ջանք չեն խնայեր իրենց բանակի զինուորներուն ամեն տեսակ կարիքները հոգալու համար:

«Մուլա զադէն կը գրէ, որ եթէ այգիի մը մէջ պտղատու գեղեցիկ ծառեր գտնուին, ամեն մարդ ցանկութիւն կըզգայ զանոնք դիտելու: Ի՞նչ վնաս կայ, թո՛ղէք դիտեն, ամեն մարդ գեղեցիկը կը դիտէ: Յետոյ ալ կը հաճի աւելացնել, որ մարդիկ ջանք կարող են գործ դնել զայն ձեռք ձգելու և վայելելու համար: Այդ միտքը անհեթեթ միտք է: Եթէ պտուղը ուրիշին այգիին մէջ և ուրիշին սեփականութիւնն է, շիտակ մարդը, արդար մարդը անոր տիրանալ չի ձգտիր, ըլլայ ան պարիսպներով շրջապատուած՝ կամ բնց արձակ: Յաւն աջնտեղ է, որ մենք ուրիշներուն և մեր սեփականութեան մէջ զանազանութիւն դնել չգիտենք և շատ անգամ հարամը հալալին, հալալը հարամին հետ կը շփոթենք: Գերմանացի մը, ճամբորդութեան ժամանակ, ուրիշներու այգիէն ճամբուն վրայ թափուած պտուղներ տեսնելով՝ հաւաքեր և ծառին տակ դրեր է, որպէս զի տէրը զայ և տանի: Իսկ մեր մահմեդականները, ուրիշներու որմնափակ այգիին մէջ գտնուող ծառին՝ ճամբուն վրայ երկարած ճիւղերուն վրայ քարի անձրևներ կը տեղան, որպէսզի պտուղները թափելով տանին, ուտեն: Հիմա մենք կը հարցնենք, պէտք է պտղատու ծառերը պարիսպներու մէջ առնե՞լ, թէ մեր հայրենակիցները կըթելով՝ անոնց սորվեցնել, հալալը հարամէն զանազանել:»

«Շարքի-Ռուսը» տպելով այս հետաքրքիր նամակը, իր յաջորդ համարին մէջ այնքան խանդավառութեամբ կը խօսի անոր վրայ, որ չի վարանիր զայն անուանել «Աստուծոյ կողմէ թուրք ժողովուրդին իջած հրովարտակ մը»՝ որ թուրք ժողովուրդին՝ «աշխարհի վրայ ապրելու, իր գոյութիւնը պահպանելու կարողութիւնը կը հաստատէ:» Ու կը շարունակէ:

«Կարող է ապրել այն ժողովուրդը միայն, որուն անհատ-

ները կը ճանչնան իրենց իրաւունքներն ու պարտականութիւնները. առաջինները կը պաշտպանեն, իսկ երկրորդները կը կատարեն: Ազգը երկու կէսերէ կը բաղկանայ—կիներէ և էրիկմարդերէ: Երկու ժասերն ալ պէտք է որ իրենց սեփական իրաւունքներուն և պարտականութիւններուն գիտակցութիւնն ունենան, որպէսզի մեր ազգը, մեզ շրջապատող քաղաքակիրթ ազգերուն հետ կարող ըլլայ մրցել, անոնց հետ կարող ըլլայ քալել բախտաւորութեան ճամբուն մէջէ: Մինչև հիմա մենք՝ տղամարդիկս՝ կը վիճէինք թէ կիներու երեսը ընց թէ փակ պէտք է ըլլայ. մէկ մասը կըսէր «բաց», միւս մասը՝ «փակ»: Իսկ երեսը, որ կիներունն է, կիները լուռ կը մնային, կարծես թէ հարցը երբէք իրենց չվերաբերէր: Այդ լուռութիւնը կ'ապացուցանէր, որ կիներն անկարող են իրենց իրաւունքներն ու պարտականութիւնները ըմբռնելու: Այդ լուռութիւնը կը մզէր մտածելու, որ մեր ազգին միւս կէսը անզամալուծուած է: Եւ ատիկա մեզի համար մեծ դժբախտութիւն էր: Բայց յանկարծ «խանում մը» մէջտեղ եկաւ և աշխարհին յայտարարեց. «մենք մարդ ենք և, թէ իրաւունքներ ունինք, թէ պարտականութիւններ. պատրաստ ենք առաջինները պաշտպանելու և երկրորդները գործադրելու:»

«Այդ միակ ձայնն ալ բաւական է, որ ցոյց տայ, թէ մեր ազգին կէսը կազմող կիները գիտակցութիւնն ունին իրենց իրաւունքներուն և պարտականութիւններուն: Այդ ձայնը կապացուցանէ, որ մեր ազգը ընդունակ է իր գոյութիւնը պահպանելու:»

«Տեսնաք, թէ Ինչ գեղեցիկ կերպով կը հաստատէր «խանում»-ը կիները բաց երեսով պտըտելու անհրաժեշտութիւնը: Կիներուն բացարձակ իրաւունքն է այդ: Հարցը գրքերով վճռելու շաղկէն հանելով՝ ընականութեան, դատողութեան հողին վրայ կը դնէր: Բնութիւնը—կը փաստաբանէր խանում—լիքն է գեղեցիկ ստեղծագործութիւններով, արարածներով: Անոնց բոլորը իրարու պէտք ունին, իրարու զուարճութեան համար ստեղծուած են և զիրար կամբողջացնեն: Եւ այդ բոլորը ստեղծուած են առանց բողի, առանց ծածկոյթի: Մարդկային արարածները որ տիեզերքի զարգը կը համարուին, ինչնու համար բացառութիւն պիտի կազմեն: Աշխարհի մէջ մէկ ու կէս միլիար մարդիկ կան, որոնց կէսը՝ 750 միլիօնը կիներ են: Ինչ խիղճ ունենալու է այդքան էակները դժբախտ Սուլթան Մուրատի պէս բանտարկուած պահել, զրկել զանոնք ցերեկուայ լոյսէն և թագստոցի մէջ փտեցնել: «Պանում»-ին գրէնքն Ելած խօսքերը մէկ հոգիի, մէկ ազգի խօսքերը չեն, այլ ամբողջ մարդկութեան խօսքերը: «Պանում»-ին ձայնը մէկ անհա-

տի մը ձայնը չէ, այլ ամբողջ ճնշուած դասակարգի մը հասարակական ձայնը...»

Թուրք տղամարդիկը՝ և այն ալ «ինտելիգէնտ» կոչուածները՝ մինչև հիմա մեծ ընդունակութիւն ցոյց տուած էին մահմեդական ամրոխի կրօնական, ցեղային նախապաշարունակները շոյելու, թուրք ժողովուրդը պահելու մտքի կատարեալ կուրութեան մէջ: Բայց, դատելով «խանըմի» նամակէն՝ լոյսը՝ այնուամենայնիւ, կըսկսի թափանցել թուրք մասսայի ամենամանշարժ տարրին՝ կիներու դասակարգին մէջ...

Տիգրան

ՔՆՆԵՎԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՏԵՆՆԵՍՈՒԹԻՒՆ

Տ Ի Կ Ի Ն Ս Ի Պ Ի Լ

(Նրա «Յուրերի» առթիւ)

Վերջին տարիները մեր և արևմտեան հայոց մէջ բացուած աբուստական անջրպետը ունեցաւ մի շարք արտասուելի հեռանքներ, որոնք հզօրապէս արտայայտուեցին մանաւանդ մեր մտաւոր կեանքի ամբողջութեան վրայ: Տեղը չէ այստեղ մատնացոյց անել այս տխուր երևոյթի մանրամասնութիւնները, երևոյթ՝ որ բարեբախտարար անցողական լինելու բոլոր նշաններն ունի: Նկատենք սակայն, որ հայութեան երկու խոշոր հատուածների մէջ մտաւոր շփումը համարեա ջնջուեց, առաջ եկաւ երկու գրականութիւն, որոնց փոխադարձ ազդեցութիւնն իրար վրայ, այնքան կրթիչ ու այնքան արգասաւոր ութսունական թուականներին՝ իսպառ դադարեց: Աւելորդ է ասել, թէ մեր լեզուի և առհասարակ հոգևոր կեանքի զարգացման տեսակէտից մինչև թր աստիճան ցաւալի հանգամանքներ է ներկայացնում այն թանձր մշուշը, որ ծածկում է իրարից արևելեան և արևմտեան հայ միտքը: Ո՞րքան ծանօթութիւն ունին թիւրքահայերը մեր արդի գրականութեան և գրագէտների մասին, այդ մենք չգիտենք, բայց անկասկած է, որ դա չափազանց մակերևոյթական, չափազանց սահմանափակ մի ծանօթութիւն է: Համարեա նոյնպիսի պայմանների մէջ ենք գտնուում և մենք՝ նրանց վերաբերմամբ: Մենք միայն զգում ենք իրար, փոխադարձապէս, իրար նման էակներին յատուկ խորհրդաւոր կարողութեամբ: Ահա թէ ի՞նչու բոլոր սրտով ուրախ ենք, որ առիթ ունենք մեր ընթերցողներին ներկայացնել պոլսահայ գրական դէմքերից մէկին՝ և այն՝ կին-գրող Միպիլին, այնպէս, ինչպէս նա երևան է գալիս իր բանաստեղծութիւնների ժողովածուի՝ «Յուրերի» մէջ:

Տիկին Միպիլ՝ Պոլսում հանրածանօթ գրական անուն է, մի քանի տասնեակ տարիներից ի վեր: Նրա փոքրիկ

պատմուածքները, կամ ինչպէս իրանք՝ թիւրքահայերն ասում են—նորավէպերը և բանաստեղծութիւնները կարելի է գտնել շատ պարբերական թերթերում: Նա ունի մի վէպ, կազմել է նաև հայերէն քերականութեան ձեռնարկ իր ամուսնու Հրանդ Ասատուրի աշխատակցութեամբ: Բայց նրա գրական գործերի մէջ աչքի ընկնող տեղ են բռնում իր բանաստեղծութիւնները, որոնցով նա անուն է հանել:

Տ. Սիպիլ արևմտահայոց գրականութեան մէջ առաջին սիմվոլիստ բանաստեղծն եղաւ, և այժմ արդէն հետևողներ ունի: Սիմվոլիզմը, որ ծայրայեղ զգայունութիւն, հիւանդապին նրբութեան հասած ճաշակ և որ գլխաւորն է, դէպի խորհրդաւորը, մշուշապատը հակամէտ խառնուածք է պահանջում, իր լաւ թարգմանը և հզոր արտայայտիչը գտաւ Սիպիլի կանացիութեան մէջ: Նրա «Ցոլքերը» բնութեան բազմապիսի և նուրբ խաղերի, երանգների, անհատնում հմայքի, խորին գաղտնիքների մի ծնրագիր պաշտածունք է:

Ինքնուրոյն գաղափարներով, հասարակական մտիւններով հարուստ չեն նրա երգերը և չէին էլ կարող լինել Պոլսում, ուր միտքը կաշկանդուած է այնպիսի կապանքներում, որոնց խիզախելը վեր է մարդկային կարողութիւնից: Կտրած մայր հողից, դժբախտութեան և արցունքի այն երկրից, որի անունն է հայ հայրենիք, բանաստեղծ տիկինը բնականօրէն անկարող է եղել ներշնչումներ վերցնել իր ցեղի հսկայ ցաւից: Նրա երեւակայութիւնը որչափ և լայն թևեր ունենար, ստիպուած էր սաւառնել միայն Բոսֆորի վրայ, և զգալու կարողութիւնը որքան նուրբ ու ուժգին լինէր, պէտք է բաւականանար իր նեղ շրջապատով: Այն էլ լաւ է, որ տաղանդաւոր բանաստեղծը իր սահմանափակ, խեղդող մթնոլորտում կարողացել է ընտրել ամենից աւելի գրաւիչը, գեղեցիկը և բոլոր ասածների մէջ գրել է կանացի հմայիչ զգայնութիւնը: Բանաստեղծական անպայման և ստեղծագործող կարողութիւնից բացի, իր երգերը ուժեղ, գեղանկար և անուշ դարձնելու համար, ունեցել է արևմտեան հայոց ճոխ և ոլորուն բարբառը, որից նա օգտուել է սքանչելի կերպով:

Մուրճի այս համարում, ընթերցողներին ճաշակ տալու համար, հրատարակել ենք Սիպիլի երկու ոտանաւորները՝ «Ամպը» և «Սունկը»: Բայց աւելի կատարեալ գաղափար կազմելու համար, մենք մէջ կը բերենք և այլ օրինակներ, որոնք կարծում ենք, կ'ապացուցանեն մեր վերի ասածները: Վերցնենք նրա «Բտէալը»: Իբրև մի զուտ տեսական հասկացողութիւն, իդէալը իր որոշ պրոզայիկ սահմանումն ունի, որ ընթացիկ կեանքում,

նոյնիսկ սովորական խօսակցութեան մէջ արտայայտուած է: Իդէալը բարձրագոյն և անպայման գեղեցկութեան, բարբի աշն վերնագոյն կէտն է, դէպի ուր յաւէտ ձգտուած են մարդկային բոլոր կարողութիւնները, անյագուրդ իդձերը, խորունկ յոյզերը, հօօր միտքն և կորովը: Բայց այդ ձգտումը իր բազմապիսի յեղեղումներն ունի, որոնց հետ սերտ կերպով շարկապուած են մեր հոգեկան բաւականութիւնն ու վիշտը, մեր խինդն ու լացը, մեր երջանկութիւնն ու ցաւը: Ահա հոգու այս անվերջ ու խենթ ձգտումը, նրա յարատե ցաւը, նրա երազները՝ իդէալին հասնելու համար, Սիւլիլ կարողացել է բանաստեղծօրէն արտայայտել մի սիրուն ոտանաւորի մէջ: Եւ ինչ որ ուշագրաւ է, այդ մի հատիկ գաղափարի համար բազմաթիւ գրաւիչ պատկերներ, դիւթիչ համեմատութիւններ է փոխառել իր պաշտած բնութիւնից: Նրա համար իդէալը՝

«Ղուսնին շողն է, զոր կը մտի շուտ արփին
 Հուր երազ մը, որ այլուն դէմ կը դեղնի,
 Փայլակն է այն շանթին վաղանց գարնայնի,
 Ծաղիկ մ'որուն թերթերն հովէն կը թափին:
 Ծիածանին լոյս ժապաւէնն է նրբին,
 Փշոտ վարդ մը, որմէ լանջքը կ'այրիւնի,
 Լուրթ կամարին հիւսիսայգն է ծիրանի
 Միշտ փշրուող ծիւն փըփուրն է քարափին:
 Փետուր մըն է թռած կուրծքէն կարապին,
 Սուրբ համբոյր մը եթերին մէջ հոլանի,
 Ինչ որ հովր, օլը, ջուրը կը տանի,
 Խոտէն է՝ օրօքն հողւոյն մրրափին:
 Կոյսն անմատոյց բոց տենչերու տարափին,
 Ըզմեզ կեանքին կապող ոսկի մատանի,
 Խըռովիչ հոյն անուրջներու պատանի,
 Սիրոյ երզը սըրտի խորունկ պարապին»:

Ահա իդէալը: Ո՛վ որ երբ և իցէ փայփայել է իր հոգու խորքում որևէ հեռաւոր, վարդագոյն երազ, որ ապրել, տքնել, լացել և ինդացել է նրա համար, որ արիւնոտել է իր ոտքերը յոյսի հեռաւոր ու մթապատ առապարներէ վրայ, և վերջ ի վերջոյ ճաշակել դառնութիւնը ծանր, շշմեցնող յուսախաբութեան, թի, կրկնում ենք, չի լացել Սիւլիլի պէս իր ցաւած սրտում մարդկային ողբալի ճակատագիրը: Ո՛վ չի զգացել, որ յերաւի իդէալը մերթ «փշոտ վարդ մ'է որմէ լանջքը կ'արիւնի», մերթ «ծաղիկ մ'որուն թերթերն հովէն կը թափին», «սիրոյ երզը սըրտի խորունկ պարապին» և մանաւանդ՝ «ըզմեզ կեանքին կապող ոսկի մատանի»:

Մարդկային մտայլ կեանքի, նրա անհանգիստ ու անհոգ հոգու տենչերի փիլիսոփայութիւնն է այս՝ դրուած մի քանի սողերի մէջ: Եւ այդ փիլիսոփայութիւնը թախծոտ է, ինչպէս գունատ աշունը: Նրա մէջ լսուած է ապրած կեանքի, անցած յոյսերի, միշտ խուսափող իրերի լացի դառն շեշտը: Ինչով և կամենանք գեղեցկացնել մեր գոյութիւնը, մեզ ճնշող սևը վանելու համար, այնուամենայնիւ, որպէս մեր ճակատագրին կապուած յաւիտենական ճշմարտութիւն կը մնայ այն ծանր գիտակցութիւնը, ասուած է Սիպիլ, թէ իդէալը՝ «միշտ փըշըրուող ձիւն փրփուլն է քարափին»: Եւ չնայելով դրան, նա է որ մեզ կապում է կեանքին, ինչպէս ոսկի օղակ, և առանց նրան չարժէ նոյնիսկ ապրել:

Բայց բանաստեղծը գոհ չէ այսքանով, նրա համար չափազանց քիչ է, որ երկինքը մարդու խեղճութիւնը նրա արտասուելի անգորութիւնը մի փոքր ամոքելու համար տուել է իդէալը, երազելու դալուկ, վտիտ երջանկութիւնը: Չէ որ այդ չնչին սփոփանքն էլ անցնում է, ինչպէս վարդի բոյր, վերջալոյսի շող, կամ «սուրբ համբոյր մը եթերին մէջ հոլանի»: Մեր կուրծքն աղմկող այսքան հուր տենչերը, մեր հոգին փոթորկող այս խօլ յոյզերը, որոնք բաղխում են իրար, բիւր տանջանքների գնով մեր փոքրիկ, վայրկենական բախտը դարբնելու համար, այս բոլորը՝ ըստ Սիպիլի, մի աւելի լաւ վախճանի և մարդն ինքնին աւելի գեղեցիկ ճակատագրի էր արժան՝ քան ինչ նրան վիճակուած է: Եւ անա նրա ճշմարտութեան ծարաւ, ըմբոստ հոգին ձգնում է իմանալ, թէ ինչո՞ւ է այսպէս, ինչո՞ւ այս զարհուրելի անհամաչափութիւնը մարդկային ձգտումների, փայլակների պէս սրտերի խորքում հրդեհուող իզձերի և այս անյոյս անկարողութեան մէջ: Ինչո՞ւ համար այսքան պատրանք, անուշաբոյր ըմպելիով լի բաժակներ, որոնց յատակում միշտ թոյն է նստած, ո՞վ է վայելքներին խառնել այսքան դառնութիւն և վայրկենական ժպտին ընկեր տուել այսքան արցունք: Չլինի թէ ինքը երկինքը, որին դիմել են և դիմում են միլիոնաւոր սերունդներ կեանքի մեծ առեղծուածը լուծելու. իրօք ոչինչ չգիտէ և մարդն ինքն է դնում կապուտակ կամարի անհասութեան մէջ մտացածին խորհուրդ, անմիտ ցնորքներ: Եւ անա բանաստեղծը դառնում է երկինքին.

Ո՞հ, ի՞նչ ես դուն, ծով անմատոյց ու խորին,
 Ո՞ւր է արդեօք, ըսկիզբդ ու ծայրդ քուկին,
 Է՞ական մըն ես արդեօք եւ կամ սին պատկեր,
 Պատրա՞նք վաղանց, ինչպէս բոլոր վայելքներ:
 Մի՞թէ սուտ չէ, ինչ որ խորհուրդ կը կոչեն.

Բոլոր բոյրերն ու սէրերը պատրանք չե՞ն,
 Եւ մեր սիրտը՝ յիմար մեղու, հէք մանկիկ,
 Ծաղիկներու շուրջ կը յածի թափառիկ,
 Կամ լուսատարփ օդասլացիկ խօլ թիթեռ՝
 Միշտ կը զոհուի բոցին՝ որ զինք կը դիւթէր:

Անհուն դարերից իվեր մարդկային ծարաւ հոգին նոյն հարցերով դիմել է երկինքին, սերունդներ սերունդների յետևից աչքերը դէպի անհունը յառած՝ տառապել են ու անցել, բայց պատասխանը եղել է միշտ քար լուռթիւնը, որ բրոնզէ կամառի պէս ծանրացել է յաւիտենական ճշմարտութեան վրայ: Եւ այդ անհասանելի լուռթիւնն է, որ մերթ պաշտուել է, որպէս աստուածային խորհուրդը ծածկող անխորտակելի դրահ, մերթ վշտացած և անզօր մարդու կրծքից խլել է զայրոյթի սրտապատառ աղաղակներ: Յայտնի է Դուրեանի «Տրտունջքը»: Անա մօտաւորապէս նոյն ձևով, բայց աւելի զգուշաւոր, աւելի երկշոտ մի բողոք, ուր չի լսւում այն անէծքի և կատաղութեան շեշտը, որ այնպէս ուժ և թափ է տալիս Դուրեանի օրհասական ճիշին: Սիպիլի համար երկինքը «տխրիմ աստուած» չէ, որին կ'ուզէր պլլուել ինչպէս կայծակ. նա չի թափում անէծքի տարափ, որպէս կին՝ նա աւելի մեղմ է իր դժգոհութեան մէջ և միայն կ'ուզէր, որ երկինքը գոնէ ազատէր մարդուն կրքերի փոթորկից, մեղմէր նրա ըզձերի բոցը, վերջ տար անհունը թևակոխելու իր խենթ ցանկութեանը:

Սակայն եթէ մեր աշխարհին չես դուն տէր,
 Ու շանթարծակ ամպերէն վար չես իջներ,
 Թէ չես տեսներ մեր կիրքերուն խօլ ալիք,
 Թէ մեր տենչեր քեզ կ'երեւան խաղալիք,
 Փռչրէ, ապա մեր ըզմանքին խօլ թևեր,
 Դէմքիդ վրայ ձգէ քօղեր ու ըստուեր,
 Եւ աշխարհի ցած իրերուն մէջ եւ եթ
 Թող ցնորքներս, տենչս ու հոգիս թաղուին գէթ,
 Իսկ դուն երկինք, տարրերու մ'ջ անզգայ
 Իշխէ, յաւէտ, ուր ոչ քնար, ոչ սիրտ կայ»:

Այսպէս է վերջանում «Երկինք» վերնագրի տակ նրա սիրուն ոտանաւորը, ուր փիլիսոփայութիւնն ու բանաստեղծութիւնը այնպէս գրաւիչ կերպով հիւսուել են իրար:

Սիպիլ ճանաչում է մարդկային հոգին, այդ լալկան ու քմահաճ երեխան, որ շարունակ արցունք է թափում այն բոլորի համար, ինչ անցնում է, ինչ խուսափում է նրանից անդառնալի կերպով, և գիտէ միևնոյն ժամանակ անողորմ ու անփոյթ լինել դէպի այն, ինչ բռնած ունի իր ձեռքում: Հոգու

այս հակասական յատկութիւնը բանաստեղծօրէն բնորոշելու համար գրեթէ նկարչական ճշտութեամբ գծագրուած պատկերներ է տուել, որոնք բոլորն էլ «անցնելու մօտ» են և որոնց առաջ հէնց այդ պատճառով լուռ դողում է մարդը: Դժուար է աւելի գեղեցիկ կերպով պատկերացնել մեր ծանր ախտասանքն ու կսկիծը անցնող գեղեցկութիւնների համար, որոնց հետ կապուած է մեր էութիւնը:

Մենք չենք սիրեր կեանքն յորդաշունչ կենդանի,
Անցնելու մօտ իրերն զմեզ կը կարթեն,
Մենք կը սիրենք, երբ արեւը ծիրանի՝
Հալած, հատած մոմի նման ոգեվար՝
Ալիքներուն զոգն ինչպով շիջանի,
Սողոսկելով խարակներէն դառիվար:
Ծաղիկները, զուր կը թողունք, որ ցամքին,
Թօնուտ օդին, ցուրտ արեւուն տակ աշնան,
Թռուկելու մօտ յանկարծ կարծես կ'անուշանան»:

Այդպէս էլ մեր սէրը՝ որ շատ անգամ ինքներս կ'արհամարհենք ու կը վիրաւորենք, հէնց որ թե առնի մեզսից խուսափելու համար:

Գողղըղալով մեր հոգոյն մէջ կը սեղմենք,
Մրմունջները, որոնք հեռուն կը մարին,
Կոչնակները, հաջիւնն անգամ շունեիրուն,
Գորշ ամպերն իսկ փակած կապոյտ կամարին,
Մեկնելու մօտ հմայք մ'ունին օրօրուն:

Սէրը դէպի այն ամենը, ինչ գրաւիչ է կեանքում, այսպիսով դառնում է մի անգիտակցական բողոք, համարեա մի յարատև պայքար մահուան իշխանութեան դէմ, որից մենք դողում ենք և որի հետ հաշտուել չենք ուզում: Ամենացնորական, դիւթիչ վայելքները վերջիվերջոյ մեզ համար դառնում են միանգամայն անարժէք, յաճախ ձանձրալի, քանի մենք չենք տեսնում մահուան գունատ ստուերը, որ մեղմիւ սողում է բոլոր կեանքերի յետևից: Բաւական է մի թեթև կասկած, թէ նրա յաղթանակը մօտ է, որ մենք երկու ձեռքով կախուենք խուսափող իրերից, և մեր քնած սէրը զարթնի հակայական չափով, որ մենք անիծենք մեր ճակատագիրը, և՛ կեանքը, և՛ մահը:

Յուզմունքներն ալ կը վրդովն մեր հոգին
Եթէ չըլլան երազի պէս թեւաւոր.
Եւ կեանքն արդեօք կ'ըլլա՞յ այնքան թանկազին,
Այնքան անուշ, երբ չը սպառնայ մահն անոր:

Սիւլիլ մի մռայլ, թախճոտ վատատես է: Եւ նրա վատա-

սեսութիւնը դառնում է էլ աւելի ցաւոտ ու անյոյս, որովհետեւ սե շնորհիւ հազուադէպ, նուրբ ճաշակի, գեղեցկութեան զանազան երանգներն ըմբռնելու իր խորունկ կարողութեան՝ նա փռում է ընթերցողի առաջ ընտելեան խորհրդաւոր հմայքը, նրա հազար ու մի գոյների խաղը, կեանքի վայելքները, հոգու սքանչելի յատկութիւնները և անմիջապէս յետոյ՝ այդ բոլորի մահը: Խայտարդէտ թաշուկների երամի պէս անցնում են առաջիցդ վառ պատկերներ, վարդ երազներ, երկնային ցնորքներ, և՛ յոյզ ու սէր, և՛ ժպիտ ու յոյս, և՛ բոյր ու խինդ, և՛ բոլորի վրայ մահուան կնիքը, բոլորին դիպել է նրա շունչը: Բոլոր գեղեցկութիւնները խայտարով՝ դէպի ոչնչութիւնը, դէպի անդարձ մահն են զիմուս: Ահա թէ ինչո՞ւ ամբողջ ընտելիւնը՝ Միպիլի գրչի տակ, դառնում է մի հսկայական դամբարան, ուր՝

Չոր տերեւներ՝ դոս, ցեցակեր, բրդըկտուած ու կարկամ

Գետնին վրայ դեփ դեղին

Թսւփերուն տակ կը մնան միշտ, իբրև յետին բարեկամ

Փարած՝ հողին ու ցեխին:

Ժըպիտները ճառագայթէ փրթթումներով՝ կը մարին

Շրթունքներու վրայ լուռ,

Հընչուն ծիծաղն արծաթի, մինչև հասնի կամարին,

Կ'ըլլայ փշուր ու փշուր:

Եւ այս բոլորի փոխարէն մարդուն բաժին է մնում միշտ հրաժեշտի կսկիծը, լքումները, սիրոյ պատրանքը և ունայնութեան կիզիչ, կսկծեցնող ցաւը:

Գեղեցիկ է «Մենաստանին կոյսը»: Դարձեալ մի ուժգին բողոք մահուան դէմ, բռնի ու դանդաղ մահուան, որ կենդանի թողնելով մարմինը, հիւժախտի է դատապարտում երիտասարդ կնոջ հոգին՝ մենաստանի տամուկ մթնոլորդի մէջ: Միպիլն այստեղ կին է և նրա բողոքը հէնց այդ պատճառով ստանում է մի տրագիքական վեհութիւն: Կնոջ սիրտն է խօսում ազդու շեշտով՝ պահանջելով այն, ինչ նրան մայր ընտելիւնն է տուել — կեանք և սէր, որոնց հետ կապուած է տիեզերքի արարչագործ գորութիւնը: Այստեղ էլ բանաստեղծը մի նկարիչ է, ինչպէս միւս բոլոր երգերի մէջ:

Կէս գիշեր է. սենեակիս մէջ միայնակ,

Կանթեղ չ'ունիս, ոչ էլ երկինքն ունի շ. լ:

Իր լոյսն յետին մարեց դարպասն ու տնակ,

Եւ մնացի իմ խոհերու հետ մաշող:

Եւ իր միայնութեան ու անձկութեան այս խորհրդաւոր ժամին, երբ համայնատարած լուսութիւնը զիշերային՝ կարծես մեղմիկ փսփսում է զիւթիչ գաղտնիքները կեանքի՝ ջահել կոյսի

հոգու մէջ զարթնում են աշխարհային իղձերը, ապրելու, վայելելու բուռն տենչը:

Ապրիլ կ'ուզեմ, անոնք երկինք ցոյց կուտան,
Սիրել կ'ըզմամ կը գոչեն «սէր է Աստուած»:
Բոցեղ շունչ մը կը խնդրեմ ես, սիրտ մը տաք,
Որ խառնրեի տենդոտ հոգւոյս յորձանքին:

Բայց ողջախոհ, բարեպաշտ ու պառաւ մայրապետը նրա բարձի տակ դնում է մի սաղմոս և կրծքից մի խաչ է կախում սրտի փորձանքները վանելու համար: Ոչինչ չի օգնում. երիտասարդ կրծքի տակ կեանքը յախուռն է և արդելուած փորձանքների կարօտը այրող.

Այդ փորձանքներն ես կ'երազեմ անդադար,
Կեանքի բոլոր մեծ պայքարներն, հուրն անհուն,
Աշխարհի մէջ չնչին բաժինս իմ արդար,
Եւ կը թողում երկինքն իրեն սուրբերուն

Գաղափաներով՝ ինչպէս տեսանք, շատ հարուստ չէ Սիպիլ. համարեա բոլոր նրա տաղերը նուիրուած են մայրութեան, կանացիութեան, զեղեցկութեան և առհասարակ աշխարհի իրերի ունայնութեան, նրանց անխուսափելի վախճանին: Եւ սակայն մահուան գաղափարին զուգընթաց և նրան դիմագրաւող՝ Սիպիլ երգում է զոհի անձնուիրութեան իղէան, որ զարդարում է և ոյժ է տալիս մեր խեղճութեանը, խորհուրդ՝ մեր գոյութեանը, և ապրելու ձանձրոյթը փարատում: Մայրութիւն, կանացիութիւն, զեղեցկութիւն և բոլորն՝ ինչ արարարչութիւնը հաճոյքով է պարզեւել աշխարհին, նախասահմանուած զոհեր են մի անյայտ նպատակի համար, որ խուսափում է մարդկային մտքից: Բոլորը սիրում են, լալիս ու զոհում:

Ամպը, որ լողում է լուսեղէն բարձունքում, երկնքի մէջ, «լուսնի աշխարհն արծաթի»՝ իր թևերի վրայ տանում է բանաստեղծի երազները: Նրանց ճակատագիրը նոյնն է, երկուսն էլ սիրում են, երկուսն էլ ուխտուած զոհեր են մի մի բարձր իղէալի: Ամպը փշրում է «հովերու բիրտ հարուածին տակ» երկիրը ցողելու համար և նրա «փշրանքէն տաք-տաք արցունք կը կաթի», իսկ բանաստեղծի հուր տենչանքները նոյնպէս շիրիմ են զտնում հողի մէջ: Եւ երկինքը դարձեալ ժպտում է՝

Մինչ մենք զոհեր սիրոյ անհուն պապակին՝
Անձրեւ կուլաս դուն, ես՝ արցունք ցուադին:

Մի ուրիշ տեղ ազօթող կնոջ սիրտը նման է խունկով լի բուրվառի, որ տաճաքի կամարների տակ՝

Խունկին պ'ս լրոին հրապրով կ'եռայ:

Բոլոր տաղերի մէջ, Սիպիլ մնում է, որպէս մի իսկական

գեղարուեստագէտ իր պատկերների ճոխութեամբ, բազմազանութեամբ և նկարչական ձիրքով: Նա համարեա գաղափար չի յայտնում, որ իսկոյն նրան համապատասխան մի գրաւիչ պատկերով չճոխացնի: Այսպէս աշունը նրա համար մի «վիրաւոր այրի հարս է», արցունքները կը մաղուին, ինչպէս «սև ժանեակներ գոհարներու շարքով բանուած»: Իրանդ աղջըկայ գունատ դէմքը յիշեցնում է «ծաղիկ մ' որ սրահին խուսափուկ ստուերին մէջ ծըլած՝ լոյսէն կը խորշի»: Ողջ բնութիւնը նրա համար մի կենդանի բարբառ է: Մի իսկական բանաստեղծ ուրիշ կերպ չի էլ կարող վարուել: Մարդկային լեզուն մեր հոգեկան յոյզերը արտայայտելու համար չափազանց անկատար միջոց է, և նրանք, որոնք կոչուած են թարգման հանդիսանալ մեր հոգիները մէջ քնած համր զգացմունքներին, բնութիւնը մեր փոխարէն խօսեցնելու սքանչելի կարողութիւնով են օժտուած են:

Միպիլ՝ որպէս սիմվոլիստ բանաստեղծ՝ չի բաւականանում պատկերների արտաքինով, այլև նրանց ներքին մշուշապատ խորհուրդն է փոխ առնում սրտերի մունջ լեզուն ճոխացնելու համար: Այսպէս տաճարի մէջ՝ «պաղատանքներու սարսուռներ երկայն կամարներուն տակ կը մարին տակաւ», նոճիները տրտում են, ինչպէս «մահն ու իր յուշեր» և աղանձները՝ «ձերմակ փրփուր թևերով» անցնում են երկնքի երեսից՝ «թերին մէջ թափթըփելով անրիժ անուրջը ձիւնին»: Ստուերներ կան, որոնք տխուր մտքի ուրուականներն են,

Կը թափառն շուրջս ըստուերներ թանձրահոծ

Եւ կը լսեմ իրենց վայիւնն ողբակոծ:

Չնայելով տեղ-տեղ այսպիսի պատկերների մթութեան, այնուամենայնիւ, Միպիլի լեզուն ազատ է սիմվոլիստներին յատուկ խաւարից, և թիւրքահայ գրողների անօգուտ, ձանձրալի, յաճախ արուեստական ճոռոմաբանութիւնից, երբ բառերի ճոխութեան տակ երբեմն ծածկուած է լինում այնքան դատարկութիւն: Նրա տաղերը միանգամայն պարզ են, անշուշտ նրանց համար, որոնք հայերէն ասելով հասկանում են մի գրական մշակուած լեզու, և ոչ կացինով տաշած՝ օտարաբանութիւններով լեցուն մի բիրտ բարբառ:

Ցանկալի էր, որ Միպիլի «Ցուքերը» կարդացուէին մեզանում, մանաւանդ հայ կանանց շրջանում, համոզուելու համար, որ հայերէնը կոշտ է միայն տգէտների շրթունքներում և որ՝ նա գեղեցիկ երաժշտական զարձուածքների անհուն զանձեք է պարունակում:

Ա. Ահարոնեան

Արաբի՝ «Գերբնական հիւանդութիւն»։ Թիֆլիս, 1903, գինն է 20 կոպ.
 Արաբի՝ «Մերազան ժամեր», Թիֆլիս, 1904, գինը 20 կոպ։

Բանաստեղծական երկու փորձեր են, որ պ. Արաբի առանձին հրատարակութեամբ դնում է գրական քննադատութեան առաջ։ Դրանցից առաջինը՝ «Գերբնական հիւանդութիւն» մեր կարծիքով նոր սկսող բանաստեղծի համար մի վերին աստիճանի խիզախ փորձ է։ Գեղարուստի իւրաքանչիւր ճիւղի մէջ «նոր խօսք» ասելու ցանկութիւնը միշտ մի առանձին հմայք ունի, բայց միևնոյն ժամանակ դաւադիր հմայք։ Պ. Արաբի, ըստ երևոյթին, կամեցել է «նոր խօսքով» սկսել, ասել «մի բան», որ դեռ չի ասուել, երգել «ցնորքներ»՝ որոնք անծանօթ են եղել իր նախորդներին։ Յանդուգն ու զեղեցիկ ցանկութիւն. մարդկային հոգու թռիչքին ով կարող է սանձ դնել։ Տարախտարար երիտասարդ բանաստեղծի այդ փորձը չի կարելի յաջողուած համարել։ Նրա «Գերբնական հիւանդութիւն»-ը բանաստեղծական սիրուն կտորներ, մի քանի յաջող պատկերներ ունի, բայց իբրև ամբողջութիւն՝ առանձին բան չի ներկայացնում։ Այդ փոքրիկ պօէմայի ֆարուլան էլ վերին աստիճանի միամիտ է։ Մասիսի կատարին կանգնած բանաստեղծը, որ փիլիսոփայութիւններ է անում սիրոյ մասին և կանչում իր մօտ Արաբսի ափի դիցուհուն, որպէսզի յետոյ նրա հետ աշխարհ գնան նոր խօսք ասելու, իբրև ալլեգորիա ոչ ինքնատիպ է և ոչ խորը։

Պ. Արաբիի «փիլիսոփայական» մտքերը նոր չեն և իզուր նա այնքան բառեր է կուտակել իրար վրայ և սակաւաթիւ յաջողուած պատկերների, զգացմունքների պարզութիւնն ու զեղեցկութիւնը եզծել։ Օրիգինալ լինելու ցանկութիւնը պ. Արաբիին դարձրել է շատախօս, մինչև այն աստիճան, որ երբեմն միայն բառեր են շարուած առանց դադափարական բովանդակութեան, երբեմն էլ ենթադրուած բովանդակութեան հետ կատարեալ հակասութիւն են ներկայացում։ Ահա օրինակ նրա պօէմայի սկիզբը, որ բաւական բնորոշ է.

«Այնքան չէր զգացուել իմ թախճոտ հոգին.

Կարծես իմ ամբողջ էութիւնն ինպառ

Անշօշափելի նիւթ էր օգային.

Թեթև՝ սիւքի պէս, թեթև՝ ծովերի

Ճերմակ, փաղփաղուն փրփուրի նման»։

Հինգ երկար տողեր և յոթան բառեր՝ ասելու համար, թէ նա ինքն իրան զգում է եթերացած՝ սիւքի և ծովի փրփու-

րի նման: Մենք վճռապէս անկարող ենք հասկանալ, թէ առաջին տողը ի՞նչ կապ ունի մնացածի հետ և ի՞նչ է ուզում ասել: Չորրորդ «թեթե»-ը, եթէ «փրփուրին» է վերաբերում (որ շատ հաւանական է) այն ժամանակ սա հայերէն չէ, այլ մի արտուրդ:

Երբեմն էլ նա այնպիսի սլարբերութիւններ ունի, որոնք ոչ թէ բանաստեղծութեան, այլ սովորական արձակի մէջ անգամ անտանելի են բայերի և դերանունների անվերջ կրկնութիւններով.

«Ու Աստուածային գեղեցկութիւնը
Մենք ճանաչում ենք սոսկ այն ժամանակ՝
Երբ թափանցում ենք մենք մէկի հոգին
Եւ ճանաչում ենք նորան լիովին.
Երբ մենք փշրում ենք սրտի կողպէքը...»

Այսպէս կարելի է անվերջ շարունակել, բայց դա բանաստեղծութիւն չի լինի, այլ բայերի ներկայի խոնարհում: Աստուածային գեղեցկութիւնը այդ «ենք»-երով անկարելի կը լինի ճանաչել: Եթէ բանաստեղծական լեզուն երաժշտութիւն է, ապա պ. Արաբին լաւ նուագող չէ:

«...Ահա վիթխարի լեռներ.

Չով վերջալուսի ճաճանչների տակ
Փալփլում են ուժգին, և սրբանուէր
Արեգակն, ինչպէս անբիծ լոյս-հրեշտակ՝
Ժպտում է նըրանց հուրհուրատելով, (?)
Փարում, յաղաքշում է իր վառ շողերով»:

Ահա մի պատկեր, որ կարող էր շատ գեղեցիկ լինել, եթէ պարոնը չկուտակէր մի շարք աւելորդ ածականներ, կամ եթէ նրանց տեղ աւելի պատշաճ բառեր դնէր: Բայց պ. Արաբին, ինչպէս ասացինք, բանաստեղծութիւնը հասկանում է անհամապատասխան բառերի առատութիւն և արգիւնքը լինում է ողբալի: Նրա պօէման՝ ծայրէ իծայր արուեստի կողմից չափազանց աղքատ է. բացակայում են արտաքինի և ներքինի նըրբութիւնները, երանգները, ամեն ինչ ասուած է անօգուտ չափազանցութիւններով և վերին աստիճանի բիրտ ձևով: Կարդալիս՝ մարդ կարծես քայլում է մի այնպիսի խորդ ու բորդ ճանապարհով, ուր ամեն բոպէ կարելի է քիթ ու գլուխ փշրել:

Տեղ տեղ նա միայն ունի յաջող բանաստեղծական նկարագիրներ, որոնք թէև դարձեալ անարուեստ են, բայց կարողացում են հաճոյքով ե վկայում են հեղինակի ճաշակը.

«... Այն մութ-կանաչ թաւիշն անպատճառ
Թաւ անտառներն են շքեղագալար,—

Թուխ ու շիկագոյն շղարշը գեղանի
 Հասկերն են մատաղ գարու, ցորենի...
 Եւ հիանում եմ թախծոտ հրճուանքով.
 Կարծես վիթխարի
 Այդ տեսարանը հզօր հանճարի
 Վրձինով քաշած մի վսեմափառ
 Գործ է գերազանց...»

Բայց այսպիսի համեմատաբար յաջող կտորները շատ քիչ են, իսկ ամբողջը մի խակ, անտաշ գրուածքի տպաւորութիւն է գործում:

Պ. Արարին մի առանձին թուլութիւն ունի մանաւանդ դէպի ածականները, որոնք, տարաբախտաբար, միշտ ի չարն է գործ չնուսմ: Լեզուի և զգացմունքի նրբութիւնը թէ ուժգնութիւնը նա վնդրում է ոչ թէ համապատասխան արտայայտութիւնների, այլ շատ մակբայների և ածականների մէջ: Եւ ահա ստացուել են այսպիսի դարձուածքներ, «սէգ տիեզերք», «խրրոխտագին լեռներ», «խրոխտ դարեր», «սէգ մտքեր», «դժխեմ թախիժ», և այլն:

Երբեմն էլ, ինչպէս ասացինք, նա գեղեցիկ բառերի շարքեր ունի, որոնք միայն բառեր են, օրինակ՝

«Մեզ ձոնուած բախտի ժպիտը սիրավառ», «Վեհ, խելօք եմ ես», «ցնորք-գիցուհին ևայլն»:

Կասկած չկայ, որ պ. Արարի լաւ հայերէն չգիտէ, իսկ առանց լեզուի հիմնաւոր գիտութեան, առանց գեղեցիկ ձևի, բանաստեղծութիւնը մի անկարելիութիւն է:

Տեղ տեղ պ. Արարին բացազանչութիւններ ունի, որոնք որքան և խրոխտ ես, (գուցէ և լաւ են հնչում իր ականջին), նոյնքան աւելի փոքրացնում են նրան և ընթերցողի մէջ յարուցանում մի վերին աստիճանի անախորժ զգացմունք: Մեծամտութիւնը ինքնըստինքեան միշտ խոտելի է, բայց երբ նա գոնէ միացած չէ զօրութեան, անպայման կարողութեան հետ, դառնում է նողկալի: «Վեհ, խելօք եմ ես», «Ես թագաւոր եմ վեհ, հսկայական գաղափարների, վառ ձգտումների»: Հաւատարմացած ենք, որ պ. Արարի կ'ազատուէր այդ անխորհուրդ և պըստիկացնող բացազանչութիւններից, եթէ լայն մտաւոր պատրաստութիւնը ձեռք բերէր, որ առ այժմ նրան սատարիկ պակասում է:

Մենք քիչ բան ասացինք հեղինակի պօէմայի բովանդակութեան, իդէական կողմի մասին, որովհետև որպէս առաջին փորձ, կ'ուզէինք պահանջող չլինել: Չենք կարող չնկատել սակայն, որ բնաւ չի հասկացուում, թէ նա իր յաւերժահարսի հետ

Մասիսի կատարից դէպի աշխարհ դիմելով ի՞նչ մի առանձին նոր գաղափարներ պիտի բարոզի, որ իրաւունք ունենայ ինքն իրան անուանել «վեհ խելօք»: Դիմելով յաւերժահարսին, նա ասում է.

«Գնանք աշխարհը, գնանք միասին,
Շշմեցնենք նրան մեր զգացմունքերով,
Անարատ հոգով, մեր սէզ մտքերով»:

Եւ վերջի վերջոյ չի պարզուում, թէ ի՞նչ են այդ «զգացմունքները, սէզ մտքերը», որոնցով աշխարհը պէտք է շշմի: Յամենայն դէպս, աւելի լաւ կը լինէր շշմած աշխարհը ուշքի բերել, թէ չէ, առանց պ. Արաբիի էլ նրան շշմեցնողներ շատ կան:

«Գերբնական հիւանդութիւնը» պ. Արաբիի առաջին բնաստեղծական փորձն է: Թերութիւնները բանականապէս բազմաթիւ են. այնուամենայնիւ, նա ընդունակութիւններ է ցոյց տալիս այս փորձիկ երկի մէջ, որ յուսանք ապագայում աւելի հարուստ, աւելի բազմակողմանի և բեղմնաւոր կը դառնան:

Անցնենք այժմ նրա երկրորդ փորձին՝ «Սրբազան ժամեր»-ին:

Մի տարի է բաժանում իրարից երիտասարդ հեղինակի այս երկու գրական փորձերը: Անշուշտ պ. Արաբիի գրական դիմագծութիւնը ձևակերպելու, նրա ուրոյն անհատականութիւնը բնորոշելու համար, այդ ժամանակը շատ ջնջին է: Եւ արգարև նա այստեղ էլ նոյնն է համարեա, ինչ որ իր առաջին փորձում: Շատ բառեր, քիչ միտք, երբեմն ոչ մի հետաքրքիր, գրաւիչ իդէա: Մի բան պարզ է, նա անհանգիստ երևակայութիւն ունի, որ խարխափելով աշխատում է իր ձանապարհը գտնել, բայց մոլորուած է: Զգացմունք կայ, որ տակաւին իր արտայայտութեան իսկական գեղեցիկ ձևերը չի գտել:

Ինչ որ «ցնորքներ» ունի, խղճուկ ցնորքներ, ինչ որ «փէրիներ» է տեսնում շարունակ, ձանձրալի փէրիներ, որոնք յայտնուում են ամեն տեղ, և՛ ալիքների վրայ, և՛ դետի ափին, և՛ «գիշեր ժամին, լուսնակ ժամին» և՛ ցերեկով: Բանաստեղծը շարունակ խօսում է նրանց հետ, նրանց մասին, մանաւանդ իր մասին և այդ բոլորը, այնուամենայնիւ, տարտամ, անորոշ, անհաստատ. վերջ ի վերջոյ նա համարեա ոչինչ չի ասում իր «փէրիներով» ու «ցնորքներով»:

«Մենք հպարտ ծովի ալիքն ենք կայտառ,
Երբեմն խաղաղ երազում ենք մենք...

Երբեմն ապստամբ մենք չ'ունենք զազար,

Ու խելացնոր ազմկում ենք մենք...

Ինչպէս չի զգացել պ. Արաբին, որ այդ «ենք»-երն ու «մենք»-երը կարգաւ կարելի չէ, իսկ իբրև պատկեր՝ այդ կտորը այնքան գեղեցիկ էլ չէ:

Շարունակ երգելով «փոթորիկների աղջիկ», «փրփուր հագած փէրի», ընական էր մտածել, որ պ. Արաբին իր երազները, իր իղէալներն է դրել մի երևակայական, գեղեցիկ արարածի մէջ, որին պաշտում է, որին փնդրում է ծովերի և փոթորիկների մէջ: Կա կը լինէր իրօք մի բանաստեղծական պատկեր: Բայց կարգաւոր նրա «Ծովի եղերքին» ոտանաւորը, մենք ցաւով համոզուեցինք, որ «ցնորքներ», «ոսկի երազներ» երգող «խիզախ տղան» մի ամենաբանալ զգացմունք է տածում զէպի իր իղէալը.

«Իմ կինը եղիր... Թռչնիկն անգին» աղերսում է պ. Արաբին իր «փրփուր հագած սքանչելի փերուն», «փոթորիկների ըմբոստ աղջկան»: Թող ների պ. Արաբին, բայց այդ «Իմ կինը եղիր»-ը չափազանց գուհիկ է: Եթէ փէրին, ինչպէս ասացինք, մի այլաբանութիւն է, ապա սեռական զգացմունքի մասին խօսք լինել չի կարող. եթէ նա մի սիրուած աղջկայ հեռաւոր պատկեր է, ապա զարմանալ կարելի է, որ առաջին քընքըյշ, մաքուր սէրը այդ աստիճան բերտ արտայայտութիւն է ստանում երիտասարդ բանաստեղծի շրթունքներում:

Դա սէր չէ, այլ ազեղ կիրք, որ առանց պ. Արաբիի էլ բաւական երգում է Արևելքի փողոցներում:

Այս տետրակի քսան և երկու ոտանաւորների մէջ շատ քչերն են յաջողուած: Համարեա բոլորի մէջ պակասում է որևէ հետաքրքիր, գրաւիչ իղէա. «ցնորք», «երազ», «հէքիաթ», «փէրի»—և ոչ մէկը կարող են իղէա ներկայացնել, երբ նրանք գործ են ածւում հէնց այնպէս: Այդ նոյն թերութիւնն է, որ նկատւում է պ. Արաբիի առաջին փորձի մէջ: Զգացմունքի գեղեցկութիւնն ու ուժգնութիւնը նրա գաղափարականութեան մէջ է և ոչ թէ անիմաստ բառերի:

Գիշեր ժամին, լուսնակ ժամին

Գետն է կամսց քչպչում.

Կախարդ ժամին, գաղտնի ժամին

Գետն է անուշ կարկաչում...

Գետի միջից դուրս է գալիս

Մի աննման նազ- փէրի

Հագին փրփուր շողշողալիս՝

Մի սիրունիկ լալ-փէրի...

Յետոյ այդ փէրին երգում է. գալիս է մի դեղանի պատանի, անխօս նստում է գետի եզերքին և լսում է երգը. բայց քունը տանում է և երազում տեսնում է դարձեալ մի կոյս, մի դիցուհի իր մօտ նստած: Պ. Արարին շարունակ փէրի, չքնաղ կոյս, դիցուհի է երևակայում, և ինչպէս տեսանք, նրանց, կլին առնելու համար: Այսքանը չափազանց քիչ է ընթերցողին ոգևորելու համար և, որ գլխաւորն է, ոչ միայն նոր խօսք չէ, այլ բաւականին անհամ է:

Պ. Արարին շատ սիրում է կրկնութիւններ, ոչ իբրև յանկերգ (refrain) այլ հէնց այնպէս, ուր պատահի:

«Ես թաղել եմ կրծքիս տակ

Իմ սէրն անուշ ու անբիծ...

Ես թաղել եմ կրծքիս տակ

Իմ սէրն անուշ ու անբիծ...

Սա նրա մի ոտանաւորի առաջին տունն է. նոյնպէս է կազմուած և երկրորդ տունը: Այսպէս կարելի է շարունակել անվերջ. բայց դա տգեղ է և ոչ մի շնորք չի ցոյց տալիս:

Այս բոլորից յետոյ կարծում ենք ներողամիտ ժպտով միայն կարելի է կարդալ երիտասարդ հեղինակի հետևեալ տողերը.

«Զգտիր դէպի ինձ, ձգտիր անդադար խղճալի աշխարհ,
Զգտիր անընդհատ, վազիր անընդհատ, հասիր իմ ետքից

Ես մարգարէ եմ. երջանիկ կեանքի թովող պատմաբան.»

«Օ, պաշտիր դու ինձ, ճ, սիրիր դու ինձ թոյլ, թը-
շուառ աշխարհ,

Զգտիր անընդհատ, վազիր՝ անընդհատ, հասիր իմ
ետքից»:

Անմիտ, անխորհուրդ և տգեղ տողեր...

Ինչո՞ւ համար աշխարհը վաղի Պ. Արարիի յետևից, այդ մենք հասկանալ չկարողացանք. ինքն ասում է, որովհետև «ես մարգարէ եմ». բայց այդ էլ շտեմանք. մարգարէական ոչինչ չկայ նրա երկու տասնեակ երգերի մէջ: Պ. Արարին ունի գուցէ գրելու փոքրիկ շնորք, որ կարօտ է մշակութեան, կարօտ է մանաւանդ բազմակողմանի, լայն մտաւոր զարգացման: Մարգարէները, տեսնողները տարաբախտաբար խիստ դանդաղ են ծնւում այս խեղճ աշխարհում, և երբ «նոր խօսք» են ասում, մարդիկ ուզեն չուզեն նրա յետևից գնում են: Իսկ դուք պ. Արարի, առ այժմ սովորեցէք, ձեր «մարգարէութիւնը» կը տեսնենք յետոյ: Յաջողուած կարելի է համարել հեղինակի երգերից «Ես իմ վիշտը ընդմիշտ սուր ահեղ քամու հոսանքին»

«Ի՞նչ կը լինէր»-ը և «Ժպիտը վառ»-ը. իսկ որպէս բնութեանը պատկեր՝ «Փոթորիկը ծովի վրայ»:

«Սրբազան ժամերում»-ի մէջ էլ հեղինակի լեզուն նոյն թե-
րութիւններն ունի, ինչ առաջին փորձի մէջ: «Ես թափա-
ռում եմ սիրուց զժամարը», «գոսան-գոչէն ալիք», «գեղ յուշ»,
«գեղ եղր», «կուսերգ» և այլն: Օրինակները բազմաթիւ են:
Կրկնում ենք պ. Արարին շնորհք ունի, բայց նա շատ է աշխա-
տում անպատճառ օրիդինալ լինել, բայց այդ նրան չի յաջողում
և նա երբեմն նոյնիսկ հասնում է արսուրդի, թէ մտքով և թէ
լեզուով: Հարկաւոր է սովորել ընդհանրապէս, աւելի լայն մը-
տաւոր պատրաստութիւն ձեռք բերել և մանաւանդ հայերէնը
մշակել, գեղեցիկ ձևերի ճաշակը վարգաջնել: Եւ յետոյ... մի
փոքր համեստութիւն:

Ա. Ահարոնեան

ՆՈՐ ՄՏԱՅՈՒԱԾ ԳՐՔԵՐ

- 1) Ե. Թովչեանի՝ 1965 թ. «Լոյս» պատկերազարդ օրացոյց
հանդէս, գինն 1 ր. 20 կոպ.:
- 2) 1905 «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան Հիւանդանոցի
Հայոց», Կ. Պոլիս, գին 10 դր.:
- 3) Գար. Սունդուկեանցի՝ «Պէպօ» կատակ. 3 արար. երրորդ
տպագ. ուղղած Թիֆլիս 1904. գ. 50 կ.:
- 4) Օ. Շրայնէրի՝ «Անուրջներ» թարգմ. հրատ. Ատրպետի,
Թաւրիզ 1904. գ. 15 կ.:
- 5) Յ. Դաղբաշեանի՝ «Լիակատար Բառարան Հայերէնից Ռու-
սերէն», Ա. պրակ. Թիֆլիս 1904. բաժանորդագինն է 2
ր. 50 կ.:
- 6) Մուշեղ վարդապետի՝ «Իրուագներ», հրատ. Նշան-Պապի-
կեանի Կ. Պոլիս. 1904. գ. 7¹/₂ դրուշ:
- 7) Զապել Հ. Ասատուրի՝ «Յուրեր» Գերթուածները, հրատ.
Նշան-Պապիկեանի, Կ. Պոլիս, 1904 գ. 5 դրուշ:
- 8) Մ. Ա. Պարսամեանի՝ «Անըջանք» Գերթուածներ, հրատ.
Նշան-Կարապետեանի, Կ. Պոլիս 1904. գ. 5 դրուշ:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ ԱՇԽԱՐԿԻՑ

I

Մի փոքրիկ ակնարկ մեր երաժշտութեան մասին

Մեր երաժշտութիւնն ևս զեղարուեստի իր միւս քոյրերի նման բաց է անուժ իր ճամբան: Բայց դեռ կամաց-կամաց:

Մենք մի փոքրիկ երաժշտական անցեալ էլ ունենք: Բայց այդ բոլորից մի նշանաւոր բան չմնաց իբրև հիմք մեր ապագայ երաժշտութեան համար:

Մեր հին երգերը կամ օտար ուսանողական երգեր էին հայերէն/բառերով, կամ Ազգային Սահմանադրութեան ուղերձներ ու քարոզներ էին փքուն ու ճոճոսան եղանակներով և կամ մեր ազգային բանաստեղծների խօսքերը՝ եղանակած բաւական անշնորհ ձեւքով:

Այդ մեծ մասամբ օտար երաժշտութեան արձագանգները շուտ մեռան մեր երաժշտութեան համար:

Դրանց հետ, մէկ-մէկ լւուժ էին ուրիշ երգեր ևս, որոնց նպատակը երգն էր միայն: Սրանք էլ մեծ մասամբ օտար հոգի վրայ էին, բայց առաջիններից այն առաւելութիւնը ունէին, որ բացի երաժշտութեան համար լինելը—տաղանդաւոր էլ էին: Եւ մինչև հիմա էլ շատ հարազատամոլներ, օտարի առաջ պարզ երես դուրս գալու համար, երգում են. «Ո՛հ, ի՛նչ անուշ», «Ծիծեռնակ», «Կիլիկիա», «Զէյթունցիներ» և մինչև անգամ «Բամբ որոտան», (Բեանկինի «Անփոյթ նաւաստիք»: Սակաւ էին այդ հեղինակները և աւելի սակաւ նրանց թողածը: Բայց Երանեանի մի «Կիլիկիա»-ն, Փափագեանին վերագրած «Մայր-Արաքսի»-ն, Զուհաճեանի «Զէյթունցիներ»-ը աւելի բան են ասում մեզ, քան այն բոլոր ճոճոսան եղանակները, որ քարոզի համար էին գրած: .

Ահա այս անձնաւորութիւններով պիտի որոշել մեր սալոնական երաժշտութեան մօտաւոր անցեալի պատկերը:

Եւ այսպէս երբեմն երգերով խօսելու համար, երբեմն էլ խօսելով երգելու համար մեր նախորդները իրանց գործը կա-

տարեցին և ո՛վ իր ժամանակի համար էր, այն ժամանակի հետոն էլ մեռաւ, իսկ ո՛վ գեղարուեստի հետ էր, նրա հետ էլ ապրեց:

*

Բայց մինչև այս սալոնական երաժշտութիւնը մենք ունէինք մի ստուար, միապաղաղ ժողովուրդ, գիւղացի թէ քաղաքացի, որի երաժշտութիւնը այլ էր: Նրա երաժշտութեան պատմութիւնը շատ է հին և երկար. բայց պարզ էր նրա պատկերը: Նա կարծես արդէն վերջնապէս իրան սեփականացնելով արարի, պարսկի, օսմանցու երաժշտութիւնը, ապրում էր նրանով:

Հին և միջին դարերի աշուղութիւնն էր այդ, որ երբեմն հայրենախօս, բայց և մեծ մասամբ օտարախօս՝ երգում էր ժողովրդի սրտի համեմատ: Եւ նոյնն էր նա Նահապետ Քուչակից մինչև Սայաթ-Նովա և դեռ շատ յետոյ էլ: Կ'ուզէք անուանեցէք այդ մեր իսկական երաժշտութեան մահը, որից մենք հիմա ենք միայն վերածնում, բայց այն մի ամբողջական բան էր, ընդհանուրի սեփականութիւն, դասական և կիրթ: Շնորհալի աշուղներ, պատուաւոր «ասողներ» էր ծնում այն ժողովուրդը: Ասում էին երգախառն հէքիաթներ, թէև օտարախօս:

Ահագին սազը հպարտօրէն կրճքին դրած՝ լայն, լայն քայլերով ետ ու առաջ էր անում աշուղը բազմութեան մէջ և ոտքը գետնին դռնելով ոգում էր ու որոտում «Քեօօզլու» յոխորտ սեչիդադիվը: Գեղեցիկ ու գողարիկ պարեր էին նուագում քաղաքի հարսանիքներում: Սակայն մեռաւ Սայաթ-Նովան, մեռաւ այդ դարերի կերտած աշուղականութիւնը: Նրան տապալեց նոր ժամանակը, որ ստեղծէ նորը, ինքնուրոյնը վերածընելու տենչով: Սակայն աւանդ, շատ ամուլ և անշնորք եղաւ այդ աշուղական նոր ժամանակը: Եւ ի՞նչ տուեց նա: Անտաղանդ աշուղներ այնուհետև սկսեցին քրտնել զրական ուղղութեան մէջ և հոգի տալ ծամած, «ինտելլիգենտավարի» միտք արտայայտելու համար: Դարձեալ քարոզ, տենդենցիա, և դուրս եկաւ այն ճապող ու թթուած բռտերի կուտակումը, դարձեալ ասիական, բայց անհամ եղանակներով, որով և այլանդակուեց իսկական աշուղի համակրելի պատկերը: Անշնորք մարդիկ աղաւաղեցին աշուղական գեղարուեստը, և այնուհետև կամաց-կամաց մեր մէջլիսներէց քաշուեց Սայաթ-Նովաների հոգեթով ստուերները իրանց ոսկերեղուն չոնգուերներով, և սըրճարաններում սկսեցին երգել լսովի լրագրական յօդուածներ...

Մի հատ գեղարուեստական ներկայացուցիչ չտուեց այդ շիւրան—ջնայած, որ այնպիսի մի ժողովրդական դէմք ստեղ-

ծեց, ինչպէս Ջիւանին է: Սակայն այդ երաժշտութիւնը ինքն էլ մանրուեց և դառաւ սեփականութիւն աւելի անշնորք աշուղների, որ թափառում են քաղաքի փողոցներում, ժամի դռներին և սիրում են սեփական բարբառանքը: Ահա այն յառաջադիմութիւնը, որ արեց մեր աշուղութիւնը իր երաժշտութեան վերածնութեան մէջ: Ժամանակի զօրեղ պահանջով և պատմական երկարատև պայմանների շնորհիւ՝ այդ տարրը զարգացաւ և մնում է մինչև հիմա, և այժմ նա նոյնիսկ ճգնում է մրցել զուտ ժողովրդական երգի հետ, ուզում է խառնել նրան, խանգարել: Դա իսկական ստեղծագործութիւն չէր:

Հարկաւոր էր մի բով, որով անցկենար իսկական ստեղծագործութիւնը:

Եւ հայ երաժիշտը վերջը հասկացաւ, թէ ուր պիտի դիմէր: Այդ կենդանի ժողովուրդն էր իր մշտական հարազատութեամբ և դարբերով ստեղծուած նրա եկեղեցին իր պահպանողական լինելու յատկութեամբ:

Մեզ յայտնի չէ թէ ինչ էին մտածում իրանց գործը ըսկսելիս Կարա-Մուրզա և Եկմալեան, բայց ինչ որ է նրանց սկզբունքը—եթէ ունէին—պէտք է հանել իրանց գործից, որ թողին:

Երաժշտութիւնը անպայման սիրող և գործնական միջոցով երաժշտական կրթութիւն ստացած Կարա-Մուրզան հանդէս եկաւ և իր անսահման եռանդով գիտեցաւ ոգևորել մարդկանց: Նրա բերածը նորութիւն էր, երգ էր, ինչ տեսակ ուզում է լինի, կենդանի, զբաւող իր ժամանակին: Նա գործ սկսեց, որի ճամբան դժուար էր սակայն: Եւ մարդիկ սիրեցին նրան:

Իմացան, որ ժողովրդի երգը ևս կարելի է բեմից երգել: Դա պատմականօրէն մեծ դեր էր: Փորձենք՝ երաժշտութիւնը մեր մէջ տաղանդաւոր ժողովրդականացնողի դէմքը որոշելու:

Իսկապէս թ'նչ էր Կարա-Մուրզան: Մի գործի սկսող ոահվիրա, իր գաղափարը եռանդուն տարածողը, նրա մշակը: «Քառաձայն»—ահա նրա նշանաբանը: Սակայն Կարա-Մուրզայի քառաձայնը չունի քնքշութիւն, զգացմունքի նրբութիւն: Այդ երկերը թերի էին և շտապ գրած բաներ:

Հարազատութեան կողմից էլ նրանք չեն կարող պարծենալ, որովհետև նրանց մշակութեան մէջ նկատելի է սաստիկ նախընտրութիւն ևրոպական երաժշտութեան:

Դրա վրայ աւելացնում է և այն հանգամանքը, որ Կ.Մուրզայի հրատարակիչը բարուօք է համարել տալ այդ երգերը պ. Կսինայի ներդաշնակութեամբ: Պատճառը համարում է

այն, որ հանգուցեալի ներդաշնակութիւնները մեծ մասը բերանացի են մնացել:

Մեր եկեղեցական եղանակները մշակողներին մէկն էլ դարձեալ Կ.-Մուրզան էր: Այստեղ ևս փայլուն արտադրութիւն չտուեց նա: Մի տեղ, ուր ամենից շատ երաժիշտը պիտի լինէր զգոյշ հարազատութիւնը պահպանելու համար, Կ.-Մուրզան դարձեալ նոյն անփութութիւնը պահպանեց: Գեղարուեստական կողմից էլ չի կարող պարծենալ նրա պատարագը, իր աղքատ ներդաշնակութեամբ:

Կ.-Մուրզան զազաւար տարածող էր և եռանդոտ ժողովըրդականացնող, նրա մէջ գեղարուեստագէտը և ստեղծագործողը թոյլ էր:

*

Չուհաճեանից յետոյ մեր երաժշտութիւնը մի շնորհալի դէմք ևս ունի—այդ Եկմալեանն է: Կանոնաւոր երաժշտական կրթութիւն ստացած մարդ, յամառ ու տոկուն աշխատող՝ նա կարողացաւ շատ բարձրանալ իր շրջապատից: Եւ ինչ թողեց նա—մի պատարագ, մի ամբողջացրած գործ, որի մէջ պարզ երևում է նրա դէմքը:

Մի շնորհալի, թեթևաշունչ երաժշտութիւն է այդ պատարագը, մի քիչ խիստ և անզարդարուն ոճով:

Նա վերցրեց մի պատարագ և յարմարեցրեց եւրոպական ներդաշնակութեան, տաշեց, հանեց նրանից շատ հարազատ բան և վերջ ի վերջոյ ստացուեց այն, ինչ որ եղել է մեր պատարագի հետ—դարերով նրան փաթաթուած օտար զգեստի հետ հազցրեց մի օտար զգեստ ևս և օտար ժամանակակիցները հասկացան և այդ սիրեցին: Բայց այդ այդպէս չպիտի լինի: Պէտք էր շատ աւելի աշխատել հաւաքել շատ վարիանդներ, ուսումնասիրել, գտել, գտնել ամենից աւելի ընդհանուրը, հարազատը:

Հայի երաժշտութիւնը եւրոպական չէ: Ի՞նչ անել, եւրոպացնել այդ երաժշտութիւնը, թէ զարգացնել հէնց արևելեանը, ինչպէս որ կայ: Եւ ձրն է արևելեան երաժշտութիւնը:

Աւանդ, այդ այն երաժշտութիւնն է, որից եւրոպացին կամ փախչում է որպէս անտանելի, լալկան ծվծվոցներից ու ճվոցներից, կամ աւելի քաղաքավարի գտնելով ասում է. «չեմ հասկանում»: Մինչդեռ այդ «Միգենի»-ից լցում է պարսիկի աչքերը և թրթռում հոգին քնքոյշ կարօտով... Դա այն «Չարգենի»-ն է, այն խոնկի ծխի նման մանուղ ու վերառաք հնչիւնները, որ քմահաճօրէն զոդում են թառի լարերի վրայ և մարում, որպէս հառաչանք:

Հայի հոգին եւրոպացու հոգու նման միակողմանի չէ: Եւրոպացին չի կարողանում ըմբռնել, թէ ինչքան որ մի Շոպէն կարողանում է յուզել մարդկային սիրտը, նոյնքան և մի «Միգեան» ճմլում, ալեկոծում է մի ուրիշ սիրտ:

Խնդիրը մարդկային հոգու յուզման, գեղեցկի ըմբռնումի և խոր ազդեցութեան մէջ է: Եւ արեւելքի և արեւմուտքի կողմը տատանուող հայի բախտն էլ այնպէս է եղել, որ նա հասկանում է թէ պարսկին և թէ գերմանացուն:

Բայց սակայն զորն է զուտ հայկականը: Մենք չենք կամենում փորձել գտնելու և որոշելու համար, թէ որո՞նք են բուն հայկական երաժշտութեան տարրերը. այդ կը թողնենք մասնագէտներին: Բայց կ'ուզէինք ենթադրել որ նա կայ, կամ աւելի լաւ է ասենք նա մնացել է դեռ ևս: Եւ կարծում ենք, որ ժամանակը պիտի պարզէ, որ այն բոլոր ոլորապտոյտ խաղերը, խճողած ֆորշազները—մի խօսքով այդ բիւր գալար պաճուճանքը, որ ունին երբեմն մեր զուտ ժողովրդական երգերը և եկեղեցական եղանակները—դրանք օտար ու խորթ են մեր հոգուն՝ թէև հասկանալի:

Այդպիսով մեր երաժշտի համար պարզ պիտի լինի այն, որ մեր երաժշտութիւնը պիտի զարգանայ եւրոպականի և ասիականի միջին ճանապարհով, մնալով նախ և առաջ հայկական:

*

Այդ ուղղութեամբ սկսեց աշխատել հ. Կոմիտասը: Հայրենի հողում մեծացած և այնտեղ իսկ սիրած հայրենի երգը, եկեղեցական՝ եղանակներին հմուտ՝ անա այդ մարդը այնպիսի ժամանակ գնաց Եւրոպա երաժշտական կրթութիւն ստանալու, երբ արդէն դժուար էր օտարանալը: Ստանալով կրթութիւն նա չմնաց Վազների հայրենիքում, այլ շտապեց—էջմիածին, որի չորս կողմը ամեն օր համարեա նոր երգ է բերում, ուր լսում է մեր եկեղեցական եղանակներից զուցէ հէնց հարազատադոյնը, և որի մատենադարանում կան թանկագին նիւթեր մեր հին երաժշտութեան վերաբերեալ: Ի հարկէ վերջ ի վերջոյ այս գեղեցիկ յարմարութիւնները չեն, որ ստեղծում են մի երաժիշտ. այլ մի շնորհալի երաժիշտ կարողանում է նկատել այդ հանգամանքները և օգտուել: Նա ուսումնասիրում է հին հայկական երաժշտութիւնը, որ պահուած է յիշատակարանների մէջ, նա հաւաքել է բազմաթիւ ժողովրդական երգեր: Նա կազմում է պատարագի արարողութիւնը, ստեղծում է ինքնուրոյն երգեր և զբաղւում է զասատուութեամբ: Նրա սկզբունքն է, հարազատ երաժշտու-

թիւն, գտնել աւելի և աւելի հայկականը, գիտենալ ժողովրդի երգը, իմանալ հնագոյնը և նրա պատմութիւնը:

Մեր ձեռքի տակը Կոմիտասի հրատարակութիւններից ոչինչ չունինք: Ինչ որ լսել ենք անձնապէս ու տեսել և ինչ որ երևում է նրա տպած «Գութանի հոռովել»-ից.—այդ բոլորը խօսում են մեր երաժշտի շնորհալիութեան մասին:

Այդ «Գութանի հոռովելը» շատ է հարազատ և կենդանի, զգում ես այնտեղ հողի ու ժի գիտակցութիւնը և բացի այդ՝ այնտեղ զգում ես մի խաղաղ ուրախութիւն, որ դաշտերին է յատուկ: Բայց այս բոլորը երգից է դուրս գալիս, իսկ այդ երգը ժողովրդից: Նրա գեղեցկութեան գաղանփքներից մէկն էլ հարազատութիւնն ու ճիշտ վերարտադրումն է:

Նրա ժողովրդական երգերը ևս լաւ են գտած. հիմնական եղանակը ամբողջական է և պարզ, իսկ ներդաշնակութիւնը հարուստ: Եւ ընդհանրապէս նրա գործի մէջ պարզ երևում է խիստ սկզբունքի գիտակցութիւն, որ կարմիր թելի պէս անցնում է նրա միջով:

Բայց նա մի ուրիշ գործ էլ ունի և կարծում ենք ամենազլխաւորը, մեր խօսքը այն հում նիւթի մասին է, որ նա պիտի տայ: Մի ժողովրդական երգերի վարիանտաւոր ժողովածուի գիտական հրատարակութիւն, մի համեմատական պատարապի արարողութիւն շատ մեծ դեր պիտի խաղան մեր պագայ երաժշտութեան համար:

Մեր ժամանակը հում նիւթերի ժամանակ է. նրանք պահանջում են մթերում:

Մեր երաժշտական կղզիներից մէկն էլ պ. Տիգրանեանն է: Նրա գործը արևելեան եղանակներն են, որոնց նա՝ ինչպէս երևում է, շատ է սիրում: Հարկաւ նա շատ է յղկում մայր եղանակը ևրոպական ներդաշնակութեան յարմարեցնելու համար, և թէպէտ նրա երաժշտութիւնը լսելուց յետոյ մարդու մէջ աւելի որոշ տպաւորութիւն է մնում, բայց չես կարող չխոստովանել, որ դա արդարութիւն է մի մարդու, որ իր գործը լաւ գիտէ: Նա ունի հարուստ տեխնիկա և վերիվերջոյ զուրկ չէ երբեմն զգացմունքի բնական գեղումից:

Մենք ունենք այժմ երկու երիտասարդ երաժիշտներ ևս, պ. պ. Միրզայեան և Բաղդասարեան:

Իրանցից առաջինը կարծեմ արդէն աւարտել է Պետերբուրգի կոնսերվատորիան: Նա հրատարակել է անցեալ տարի երկու պրակ, որոնցից մէկը պ. Ա. Իսահակեանի «Ախ, ալ վարդի» բանաստեղծութեան վրայ գրած մի արևելեան մոտիւ է, որ բացի այն, որ ինքնուրոյն չէ և յիշեցնում

է այս կամ այն եղանակը, նաև շատ է քաղցր-մեղցր: Յանցանքը մի քիչ էլ այն զօրեղ ձգտումն է դէպի արևելեան եղանակները, որով՝ ինչպէս երևում է, շատ է տոգորուած մեր նոր երաժիշտը: Նա սիրահար է նաև զարդարուն ոճի և առհասարակ նրա գրուածքը յստակ չէ: Գուցէ նա ժամանակին աւելի յաջող արեաներ գրի, քան երգեր: Ոճի զարդարունութիւնը փաստել է նաև նրա երկրորդ պրակի ժողովրդական երգերին:

Նրանց մէջ մեր կարծիքով յաջողուածներն են «Սարերի հովին մեռնիմ» և «Սարէն կուգայ ձիաւոր» երգերը, որոնց մէջ նա բացառապէս ազատ է մնացել աւելորդ մանրացումներից ու ֆորշլագներից: Եւ այդ է մեր գրաւականը, որ պարոնը շնորքի տէր է և ապացուցանելու է այդ:

Չկարողանալ մինչև վերջը անխափան տանել երաժշտական կրթութիւնը, մնալ թերի.— ահա մեր ըտլոր երաժիշտների և մանաւանդ երգիչների ցաւը: Պ. Բաղդասարեան, որի շնորհքը անտարակոյս է, դեռ չվերջացրած երաժիշտ է, որին պայմանները նետել են ասպարէզ: Նրա ստեղծած արևելեան օրկէստրը՝ ասիական գործիքներով՝ ապագայ ունի: Նա մի համակրելի երգ էլ ունի. «Մի լար բլբուլ» — կէս ասիական և կէս եւրոպական մի եղանակ, որի մէջ կայ տրամադրութիւն և վերապահման զգացում:

Ափսոս որ մեր միջավայրից հեռու է փթթում մի շնորհալի ծաղիկ ևս — պ. Սպենդիարեան, որ անտարակոյս մի իսկական ձիրք է: Մեզ ծանօթ է նրա «Սայթարմա» գրուածքից հանած մի կտորը, տպուած պ. Բաղդասարեանի «Գեղարուեստական ալբոմի» մէջ: Դա թաթարական մի եղանակ է, որ օրկեստրի մէջ հարօյի գործիքով մի իսկական կախարդական տպաւորութիւն կը թողնի:

Կրեսչենդօ

II

Գեղարուեստը իրախուսող ընկերութեան XIV-րդ ցուցահանդէսը:

Ահա մի ամբողջ ամիս ու կէս է, որ բաց է այդ ցուցահանդէսը, բայց թիֆլիսի հասարակութիւնը զարմանալի անտարբերութիւն է ցոյց տալիս, չի յաճախում նրան: Փառքի Տաճարի առաջ ծածանող դրօշակներն են միայն ցոյց տալիս, որ գեղարուեստի տօն է այդտեղ: Բայց մտէք ներս և դուր կը տեսնէք իրանց նկարիչներին և քանդակագործներին, որոնք մեղաձգութեամբ գնահատողներ են սպասում...

Սեղճերը որքան աշխատանք, որքան ոգևորութիւն են

թափել, էլ չենք ասում զոյների, կտաւի, մողէշների, շրջանակների, պիպի և այլ նիւթերի վրայ մտած արիւն քրտինքով աշխատած կոպէիների մասին: Այլ վերաբերմունք անկուլտուրական հասարակութեան կողմից դժուար էլ է սպասել: Կովկասը Եւրոպա չէ, ուր գեղարուեստի համար սառածարներ են կառուցում և նկարչի սանդղագործութիւնը սիրով և խնամքով ժողովում են այնտեղ և պահում ամբողջ ժողովուրդի ճաշակի ազնուացման, զեղեցիկի ըմբռնումը դարգացնելու նպատակով: Մեզանում նկարները լոկ իբր բուրժուական սալոնների և կարիքեհանների զարդ են ծառայում...

*

Ներկայ ցուցահանդէսը պարունակում է իր մէջ մօտ 300 մեծ ու փոքր պատկերներ ու արձաններ:

Այս անգամ պատկերների դասաւորութիւնը անցեալ տարիներին պէս չէ և իւրաքանչիւր նկարչի գործքեր առանձին են համախմբուած: Պատկերների մեծամասնութիւնը մեր երկրին հարապատ պէյզաժներ, ժանրեր և տիպեր են. նկատելի է, որ գնալով մեր նկարիչները աւելի կարևորութիւն են տալիս մեր երկրի այդ հարստութիւնները երևան հանելու. այդ երևոյթը ուրախալի է մանաւանդ այն կողմից, որ ժողովուրդը այդպիսով կը սկսի ըմբռնել գեղարուեստի նշանակութիւնը և սիրել նրան:

Աչքի է ընկնում մի հանգամանք ևս. այդ այն է, որ նկարիչները ի ցոյց են դնում և չվերջացրած, չկատարելագործած, չմշակած աշխատութիւններ: Բայց այդ հասկանալի կը դաննայ, եթէ ասենք, որ նկարիչները մեզանում դեռ անկարող են ապրել միմիայն իրանց վրձինի արտադրութիւններով և ստիպուած են զպրոցներում դասեր տալով հայթայթել իրանց ապրուստը... Թէ դրանով որքան աննպաստ պայմաններ են ստեղծւում ազատ, խաղաղ ստեղծագործութեան համար, դա պարզ է ինքն ըստ ինքեան: Այն էլ ուրախալի է, որ հասարակութիւնից չքաջաւիրուելով անգամ մեր նկարիչները շարունակում են աշխատել ընտրած ասպարէզներում տարէցտարի առաջադիմելու առհաւատչեաներ ներկայացնելով:

*

Ծանօթացնենք մեր նկարիչների և քանդակագործների հետ, դասակարգելով նրանց ազգանունների այբուբենական կարգով:

Արտագեանի Ծ նկարի մէջ աչքի են ընկնում № 3—«Նորմանդուհի պառաւի գլուխը» և № 7—«Մոնսօի պարկում», վատ չէ և № 6—«Այգում»:

Բաշինջաղեանը ի ցոյց է դրել 38 պատկերներ, որոնց մէջ կան անցեալ ցուցահանդիսից կրկնութիւններ, սակայն շտկած, գեղեցկացրած: Այդպիսի կրկնութիւնները հետաքրքրական են այն կողմից, որ կարելի է հետեւել թէ նկարիչը Բնչպէս է կատարելագործութիւն մտցնում իր ստեղծագործութիւնների մէջ: Օրինակ, № 42—«Լուսնեակ գիշեր Քուռի վրայ» (Օրթաշալա) այժմ աւելի լուսացել է, № 46—«Արարատը վարնան», № 65—«Կազրէկ արշալոյսին» այժմ այլ դիրքով և գոյներով են քան առաջ:

Նկարչի նոր աշխատութիւնների մէջ մենք գտնում ենք Ղարաբաղի բնութիւնից վերցրած մի շարք նկարներ: Այդպէս, № 40—«Գիշերը Շուշուայ շրջակայքում» նկ. ի մէջ մենք տեսնում ենք, որ նկարիչը հարուստ էստետիկական զգացմունքներով մի բանաստեղծ է: Լոյսի բեկեղեման, երանգների նրբութեան մի վերտուօղ է Բաշինջաղեանը. օրինակ, տեսէք նրա «Արևի մայր մտնելը Սևանայ լճի վրայ» № 58,—օրուայ չորս ժամանակները «Առաւօտը» (№ 52), «Կէսօրին» (№ 53), «Երեկոյեան» (№ 54) և «Գիշերը» (№ 55) համոզուելու համար մեր ասածի մէջ:

Օր. Կոլչինսկի առաջին անգամն է մասնակցում ցուցահանդիսին և նրա միակ պատկերը «Նոր բամբասնք» (№ 123) լաւ ծանր է, լաւ էլ նկարուած, մանաւանդ գոյների կողմից, թէև համաչափութեան (պրոպորցիա) և գծապրութեան մէջ կան քիչ-միչ թերութիւններ:

Զախարով իր քսան և եօթ պատկերների և էտիւզների մէջ ևս ցոյց է տալիս՝ որ բանաստեղծական ողի ունի, ուսումնասիրում է բնութիւնը: Անաշոյ կն նրա նատուր-մորտերը: Մի բան, որի մէջ Զախարովը առանձին աչքի է ընկնում այդ նրա գերագանցութիւնն է ծառեր նկարելու մէջ:

Զոմմերի նկարները հարուստ են իրանց փայլուն գոյներով. նա սիրում է գեղեցկացնել, էֆէկտաւոր դարձնել իր նկարները, թէկուզ մի քիչ էլ ի վնաս ճշմարտութեան: Նրա մի քանի պատկերների մէջ կան մասեր, որոնք հիանալի են, սակայն իբրև ամբողջութիւն պակասաւոր են. օրինակ, № 104 «Տեղափոխութիւն». այդտեղ երկինքը և սարերը դեղին գոյների տակ ճնշուած՝ անբնական են, մինչդեռ առաջին պէյզաժը իր ժանրով ցայտուն կենդանութեամբ է դուրս բերուած մեր առջև: Լաւ են նրա № 105 «Ազբիւրի մօտ», ինչպէս և Թուրքեստանի ժանրեր ներկայացնող 116, 117 և 120 №№-երը.

Թէոլէմէզնսկի արդէն երկրորդ անգամն է որ հանդէս է գալիս իր աչքի ընկնող աշխատութիւններով: Այժմ նա տուել է 14 գործքեր—ժանր, պէյզաժ և պորտրետ: Նրա «Տաճարը»

(№ 170), «Լոռեցի հայ տղայի տիպը» (№ 167), «Գիւղացի քահանան» (№ 168), «Մահարձանի մօտ» (№ 159) լաւ, աւարտած գործքեր են. մեծ աշխատասիրութիւն և ինքնուրոյնութիւն է երևում նաև նրա պէյզաժների և պորտրետների մէջ: Թէևլէմէզեանի նկարչութիւնը յիշեցնում է հին վարպետների գործքերը:

Թօփոզլէն գրել է մի քանի էտիւզներ. գրանց մէջ կան լաւերն էլ, թոյլերն էլ: Վատ չեն №№ 258, 252, 248, 250, իսկ տիպերի մէջ № 142:

Լուկինը այս անգամ գրել է ութ կտոր նկարներ: Համեմատելով անցեալ տարուայ էտիւզներին՝ գրանք աւելի թոյլ են:

Խողորովիչը նորից հանդէս է եկել մեղրամոմից շինած մի քանի ֆիգուրներով, որոնց մեծամասնութիւնը վերցրուած է Թիֆլիսի կեանքից:

Միքայէլեանի աշխատութիւնների մէջ աչքի են ընկնում գիպտից շինած նրա մի քանի քանդակագործ ֆիգուրները, «Պառաւր գուլպա գործելիս» (№ 220), «Լողանալուց յետոյ հոռմայեցոց բաղնիքում» (№ 214), «Ղարաբաղի հայ կնոջ տիպը» (№ 225): Երկտասարդ արձանագործը դեռ շատ ժամանակ ունի իր առաջ աւելի կատարելագործուելու համար:

Մրալիշվիլին գրել է մի հատիկ պատկեր, (№ 132) «Կալոս կրեպա» (կալաբաժին): Գեղարուեստական տեսակէտից և տեխնիկայի կողմից շատ թոյլ մի գործ, որ աչքի է ընկնում իր տենդենցիօզ բովանդակութեան շնորհիւ:

Յակոբեանը տուել է 29 ժանրեր, նատուր մորտեր և տիպեր: Շատ աջողուած են նրա նատուր-մորտերը: Մի ամբողջ տրագեդիա է պատկերացնում նրա փոքրիկ էտիւզը №11 «Աղքատ», ցնցոտիների մէջ կոչուուած, ճազատ, գլխիկոր ծերունի, յենուած գաւազանի վրայ: Որքան տխուր մտածմունքներ է զարթեցնում ձեր հոգու մէջ վրձինի մի քանի հարուածների գրոշմ կրող այդ կտորը...

Շմերլինգի մի հատիկ պատկերը (№ 213) «Ծանծաղուտով»՝ վատ չէ:

Շուլցի էտիւզներն աջող են, գոյները լաւ: Թոյլ են Պաւսկուլու ցոյց գրած նկարները: Սկսուած, ուրուագծած կտորներ են Սկլիֆասովսկու էտիւզները: Լաւ նկարուած է № 154 պատկերը, «Նկարիչների անկիւնը Թիֆլիսում»: Իրանց առաջին մասերով աչքի են ընկնում Վիյսէնկովի հինգ պատկերները, միայն մի բան նրանց մէջ թոյլ է. ժանրերը այնպէս է նկարել, որ կարծէք համարել է տերւները: Սկլիֆասովսկու

պէս և Փոզնը գլխաւորապէս էսքիզներ է նկարել. սակայն աւելի մեծ տաղանդով: Էտիւզը, առհասարակ, ուրուագիծ է ապագայ պատկերի համար, բայց կարծէք Փոզնին վիճակուած չէ իր էտիւզներից յետոյ պատկերներ ստեղծելը: Նրա (№ 171) «Սոնաւ երեկոյ» պատկերի մէջ ջուրը նկարուած է վարպետօրէն, ինչպէս և ամպոտ մութ երկինքը: Պատկերի պակասութիւնը կայանում է յետևի նաւերի մէջ: Նաւերի շրջագծերը շատ են սուր և յետևի կողմը լուսաւորուած է, փոխանակ մութ լինելու:

Փիրադովը շատ չնչին բան է ի ցոյց դրել, որ արժէք նրա մասին խօսել, իսկ Փրանկէ արձանագործը առել է ֆորմի և համաչափութեան կողմից այնչափ թոյլ գործեր, որ միմիայն գեղարուեստի տարօրինակ ըմբռնումով կարելի է բացատրել...

Գեղասէր

III

Թիֆլիսի Հայոց Դրամ. Ընկ. ներկայացումները

(«Պատուի համար» գրամա չորս գործողութեամբ Շիրվանզադէի).

Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը յոճուարի 3-ին վերսկսեց իր ներկայացումները: Պ. Շիրվանզադէի նոր պիեսան՝ «Պատուի համար» այդ երեկոյ մեծ հասարակութիւն էր գրաւել թատրոն. կարելի է ասել, որ այդ հետաքրքրութիւնը՝ զեպի հայ հեպինակի ինքնուրոյն և նոր գործը՝ բաւարարութիւն ստացաւ:

Պ. Շիրվանզադէն հայ բեմին տուեց մի բաւական լաւ պիեսա:

Նիւթը վերցրած է վաճառականական միջավայրից, որ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեզ մօտ տարարախտարար հարուստ է բարոյականութեան ամենասովորական պահանջների գէժ ծանր արարքներով: Նիւթապաշտութիւնը, որ մարզկային հոգու ամենաագնիւ հիւթերը բամբուլ գերազանց յատկութիւնն ունի, վերջ ի վերջոյ զգայմունքներով օժտուած բանական արարածներին զարձնում է մի օտզան, մի մոլոխ, որ միայն լափել, սչնչացնել պիտէ: Մանր զարշանքներով իր գոյութիւնը դարդարող անհասը, որ սկզբում չարիքը գործում էր իր անձնական բարօրութեան համար, վերջ ի վերջոյ մոռանում է նոյնիսկ այդ նպատակը և շարժւում է, ինչպէս աւտոմատ, աւերած ու արցունք տարածելով իր շուրջը բութ անզխտակցութեամբ:

Չափերը փոխուում են, բարոյական հասկացողութիւնները գլխիվայր դառնում, և մարդը լողում է իր ստեղծած ճահճի մէջ նողկալի կըջանկութեամբ:

Ահա ընդհանուր խօսքերով այն տիպը՝ որ հեղինակը ներկայացրեց մեզ Անդրէաս էլիզբարեանի մէջ: Այս մարդը՝ որ առաջ է եկել կեանքի նկուղներում, ուր սողում է խեղճութիւնը, կարողացել է կամաց-կամաց բարձրանալ թուք ու մուր ուտելով, անարգանք կրելով, և որ գլխաւորն է, անդադար խարեւով: Նիւթական յաջողութիւնները, հարստութեան փայլը ծածկել են յանցանքները երկար ժամանակ, բայց ոչ վերջնակա՛նապէս:

Մեծ ոճիրները սովորաբար բացում են փոքրիկ անզգուշութիւններից ու անհոգութիւնից: Իր առևտրական գործի ընկեր Օթարեանի մահից յետոյ էլիզբարեան զրկում, կողոպտում է նրա որբերին, մոռանալով մի քանի փաստաթղթեր, որ Օթարեանի այրին պահում է խնամքով և երբ իր որդին՝ Արտաշէսը մեծանում է, յանձնում է նրան: Արտաշէս Օթարեան՝ այսպիսով դառնում է, որպէս մարմնացած վրէժխնդրութիւն էլիզբարեանի համար, մի մշտական սպառնալիք, որ կարող է խորտակել հարուստ յանցաւորի գոռոզ բախտաւորութիւնը:

էլիզբարեան հնար է փնդրում ազատուելու այդ հարուստից, նա գիտէ, որ Օթարեանը ոչ միայն կը ստանայ հարբստութեան կէսը, այլև նրան կը խայտառակի, որպէս գողի: Այստեղ է մէջ ընկնում Մարգարիտը, էլիզբարեանի աղջիկը, որին սիրում Արտաշէսը: Այդ սէրը փոխադարձ է: Մարգարիտը այսպիսով դառնում է դրամայի կեարտնական անձնաւորութիւնը. նա մի կողմից չի հաւատում, որ իր հայրը անազնիւ մարդ է, միւս կողմից չի կարողանում հասկանալ, որ Արտաշէս Օթարեանը, իր սիրած իգէալական երիտասարդը՝ թոյլ կը տայ իրան ստոր, սուտ բամբասանքներ սիրած աղջկայ հօր դէմ:

Մարգարիտը երկու կրակի մէջ է. եւքը գտնում է Օթարեանը: Նա յանձնում է փաստաթղթերը Մարգարիտին, որ սաինքը անձամբ ստուգի և համոզուի, թէ որքան իրաւացի են իր պահանջն ու մեղադրանքները: Այդ թղթերը Չախճախիչ են. աղջիկը համոզուում է, որ իրանց ծով հարստութիւնը գողութեան արդիւնք է և իր հայրը մի անազնիւ մարդ: Նրա անարատ հոգին ցնցում է, նա ըմբոստանում է այս աստիճան ցածքութեան դէմ, որ գործել է հարազատ հայրը: Ու այսպիսով սկսում է նրա համար խորին յուզումների ծանր, տանջող կացութիւն:

Նա օգնող, խորհրդատու չունի. մայրը մի բարի թոյլ կին

է: Սա երկար տարիների ընթացքում տեսել, հասկացել է ամուսնու բոլոր աղտեղութիւնները, բայց ստիպուած է եղել լռել, տանել, համբերել, և վերջիվերջոյ դարձել է մի կամագուրկ, ոչնչացած էակ, որ միայն արտասուել գիտէ: Քոյրը՝ Ռոզալիան մի դատարկ պճնասէլ է: Մի եղբայրը անառակ բոն-վիվան է, միւսը՝ ինժեներ, որ նոյնքան նիւթապաշտ է, նոյնքան չարագործ, որքան իր հայրը, միայն աւելի կիրթ, աւելի ժամանակակից ձևերով: Կայ և մօրեղբայրը՝ Սաղաթէլ, նոյնպէս մի փարիսեցի, անսիրտ արարած, որ իբրև իր փեսայի առևտրական գործերին օժանդակող և խորհրդատու՝ կամաց-կամաց կողոպտում է նրան, ինչով և ինչպէս կարող է:

Այսպիսով դրամայի բոլոր ծանրութիւնը կետրոնանում է Մարգարիտի հոգու մէջ. նա է, որ տառապում է բոլորի փոխարէն և ի վերջոյ զոհ գնում, որպէս փրկութեան նոխագ:

Հայրը՝ Էլիզարեան, իր հին յանցանքը քաւելու համար գործում է մի նոր ոճիւր: Նա գիշերով գողանում է աղջկայ սենեակից Օթարեանի փաստաթղթերը և վառում: Մարգարիտը տանել չի կարող հօր գործած այս նոր և անասելի ստորութիւնը, ինքը պատուի խօսք էր տուել Օթարեանին յետ տալ նրան փաստաթղթերը: Լուծումը վրայ է հասնում, և Մարգարիտը եթէ ոչ իր հօր, գոնէ սեփական պատիւը փրկելու համար վերջ է տալիս իր կեանքին:

Ահա համառօտ կերպով դրամայի բովանդակութիւնը: Մենք չենք կանգ առնի բոլոր գործող անձանց վրայ առանձին առանձին, կ'առնք մի քանի խօսք գլխաւորների մասին:

Ամենայաջողուած տիպը անկասկած Անդրէաս Էլիզարեանն է: Հեղինակը կարողացել է այդ տիպի մէջ բաւական զօրեղ կերպով արտայայտել մութ գործերի, անագնիւ, ստոր արարքների, եսասէր, նիւթապաշտ վաճառականի ստոր հոգին:

Էլիզարեանը մի «փողի հերոս է»:

Աղջիկը՝ Մարգարիտը, որ հասարակական արդարադատութիւնն ու խիղճն է ներկայացնում, բաւականաչափ ցասում չունի ծանր արարքների հանդէպ: Առհասարակ իբրև հերոսուհի, նրա հոգին մի փոքր աւելի ուժեղ կարող էր լինել: Իր հօրը և շրջապատը լաւ ճանաչելուց յետոյ անհասկանալի է մընում, որ նա միամտաբար պահում է իր մօտ վտանգաւոր փաստաթղթերը, փոխանակ իսկոյն վերադարձնելու տիրոջը: Նոյնպիսի անհասկանալի միամտութեան օրինակ է տալիս և Օթարեան, որ լաւ ճանաչելով Էլիզարեան ընտանիքը, փոխանակ թղթերը իր ներկայութեամբ ցոյց տալու Մարգարտին, թողնում է նրա մօտ: Խորին սիրուց բղխած հաւատը դէպի

Մարգարիտը, այստեղ հագիւ թէ արդարացուցիչ հանգամանք հանդիսանայ, աւելի ճիշտ կը լինէր ասել, որ հեղինակը մի փոքր արուեստականութիւն է թոյլ տուել:

Արտաշէս Օթարեանն էլ լրիւ տիպ չէ. ըստ երևոյթին հեղինակը փորձել է նրա մէջ դնել ազնիւ ասպետութիւն, հերոսական մեծահոգութիւն: Նա ասում է խոշոր բառեր, պատրաստ՝ ինչ որ զոհեր յանձն առնել, բայց վերջ ի վերջոյ կարծես նրան հետաքրքրում է իր սեփական ժառանգութիւնը, որ նա պահանջում է էլիզարեանից, քան որևէ աւելի վեհ նպատակ:

Գրամայի ինտրիգայի մէջ նոյնպէս կայ մի թերութիւն: Երկրորդ, երրորդ գործողութիւնների մէջ համարեա ամեն ինչ ասում է. հանդիսատեսը զիտէ, որ փաստաթղթերը պէտք է գոչացուին, որ Մարգարիտը ինքնասպանութիւն կը գործի: Այս հանգամանքը բնականապէս թուլացնում է հետաքրքրութիւնը դէպի գրամայի վախճանը: Անօգուտ և ձանձրալի մեւտողրամա է դարձրել հեղինակը այն տեսարանը, ուր էլիզարեան գողանում է փաստաթղթերը աղջկայ սենեակից: Նրա տանջանքները կեղծ են, մի այնպիսի բիրտ, ստորհոգի արարած, այդքան խղճի խայթի ընդունակ չէր կարող լինել:

Անկասկած Շիրվանզադէն ազդուել է Օկտաւ Միրբօի յայտնի գրամայից, «Փողի հերոսից»: Երկու պիեսաների մէջ արտաքին աչքի ընկնող նմանութիւն կայ: Երկու դէպքում էլ փողի հերոսը հայրն է, բողոքողը՝ աղջիկը. մայրը՝ մի անգոյն՝ բայց բարի արարած է. կայ մի հաշուապահ, որ յիշեցնում է Միրբօի պիեսի մէջ պարտիզպանը: Չի մոռացուել և «Փողի հերոսին» թուղթ ստորագրել տալու տեսարանը, որ կատարում է Սաղաթէլը: Այս նմանութիւնը սակայն չի նսեմացնում պիեսայի արժէքը:

Պ. Շիրվանզադէի գրաման, չնայելով իր մի քանի թերութիւններին, կարելի է յաջողուած համարել թէ բեմական տեսակէտից, թէ տիպերի ընտրութեամբ և թէ գործողութեան յաջորդական զարգացմամբ: Այս յաջողութիւնը կարծում ենք, մասամբ բացատրուում է նրանով, որ հեղինակը այս անգամ թողել է՝ à la Իբսէն «նոր խօսք» ասելու իր յաւակնութիւնը և պարզ նպատակ է դրել—ներկայացնել մեր իրականութիւնը գեղարուեստական հնարաւոր ճշտութեամբ:

Եւ լաւ է, որ այդպէս է:

«Նոր խօսքերը» դժուարութեամբ են ասուում. նրանց երկունքը շատ ծանր է, որպէս զի հայկական միտքը այժմ՝ կարողանար տանել: Այն էլ լաւ է, եթէ հայ հեղինակին յաջող-

ւում է մեր այս կամ այն միջավայրը իր լաւ և վատ կողմերով բեմ հանել և բաց անել մեր կեանքը կրծող վէրքերից մէկն ու մէկը: «Պատուի համարը» մեր հասարակական մարմնի վրայ մի այդպիսի շարաւալից վէրքի պատկերն է:

Խաղը լաւ անցաւ իր ամբողջութեամբ: Հեղինակը բուռն ծափահարութիւններ յարծաւ:

Ա.

Մ Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք Բ Ա Մ Բ Ա Կ Ա Գ Ո Ր Ծ Ն Ե Ր Ի Հ Ա Մ Ա Ժ Ո Ղ Ո Վ - Ն Ե Ր Ի Ա Ռ Ի Թ Ո Վ

Ինչպէս յայտնի է բամբակագործութեամբ Ռուսաստանում զբաղուում են Անդրկովկասում, Թուրքաստանում և Անդրկասպեան երկրներում: Այդ երկրների մէջ առաջին տեղն է բռնում Թուրքաստանը, որ տալիս է տարեկան 5—5½ միլիօն պուգ բամբակ, յետոյ գալիս է Անդրկովկասը (մօտ 700 հազար պուգ), իսկ Անդրկասպեան երկիրը բռնում է վերջի տեղը, մօտ 300—400 հազար պուգ արդիւնաբերութեամբ:

Թէ ինչ արագութեամբ է զարգանում բամբակագործութիւնը Ռուսաստանում, երևում է այն փաստից, որ զեռ մի 14—15 տարի առաջ Ռուսաստանի ամբողջ արդիւնաբերութիւնը չէր հասնում 2 միլիօն պուգի, իսկ այժմ նա աւելի քան եռապատկուել է: Պէտք է առհասարակ նկատել, որ բամբակի կուլտուրան XIX դարու երկրորդ կիսում արել է հսկայական առաջադիմութիւն:

Մինչդեռ մի դար առաջ, 1801 թուին, ամբողջ երկրագնդի վրայ ստացուել է 14 միլիօն պուգ բամբակ, այժմ միայն Ամերիկան տալիս է 10—11 անգամ աւելի շատ, այսինքն մօտ 150 միլիօն պուգ:

Երկրորդ տեղն է բռնում Հնդկաստանը 35 միլ. պուգ. յետոյ գալիս է Չինաստանը 20 միլ. պուգ, Եգիպտոսը 15 միլ. պուգ և Ռուսաստանը 6—7 միլ. պուգ:

Այս վերջին քանակութիւնը չի կարողանում բաւականութիւն տալ ռուս գործարանատէրերին, այնպէս որ նրանք ստիպուած են տարեկան մօտ 10 միլ. պուգ էլ առնել ուրիշ երկրներից, վճարելով դրա համար մօտ 90—100 միլ. լուբլի:

Այսպիսի մեծ քանակութեամբ օտար բամբակի պահանջ

ուճենալով, և ցանկալով այս կարիքը հոգալ իր ոյժերով, ռուս կառավարութիւնը ամեն կերպով աշխատում է նպաստել գիւղատնտեսութեան այդ կարևոր ճիւղի զարգացման Ռուսաստանում: Այդ նպատակով նա մտցրել է հովանաւորական մաքս օտար բամբակի վրայ (պուլդին մօտ 3 բուրլի), հիմնում է դանազան ապարակներ, պահում է մասնագէտ—ինստրուկտորներ, հրաւիրում է համաժողովներ, որտեղ քննում են բամբակագործութեան կարիքները և նոյնի զարգացման նպաստող միջոցները կային:

Հէնց այդպէս համաժողովներ էր հրաւիրուել այս հոկտեմբեր ամսին Աղղաշում և Երևանում: Համաժողովները ընդամենը տեւեցին ամեն մէկը 2 օր. Աղղաշում հոկտեմբերի 5-ից—7-ը, իսկ Երևանում 14—16-ը: Ինչպէս յայտնի է Երևանի նահանգը իր բամբակագործութեամբ Անգրկովկասի նահանգների մէջ բռնում է առաջին տեղը, տալով մօտ 500 հազար պուլդ, այսինքն Անգրկովկասի բոլոր արդիւնաբերութեան $\frac{1}{3}$ -ական մասը. երկրորդ տեղը պէտք է դնել Գանձակի նահանգը, իր բամբակի գլխաւոր շուկայ Աղղաշով, 100 հազար պ., յետոյ արդէն գալիս են Բագուայ նահանգը 50—60 հազ. պ., Քութայիսի՝ 30 հազ. պ. և վերջապէս Թիֆլիսի՝ 10 հազ պուլդ: Այդ համաժողովներին բացի կառավարութեան կողմից նշանակուած մարդկանց, մասնակցում էին և տեղական կալուածատէրներից մի քանիսը: Իսկ գիւղացիք, որոնք իսկապէս բամբակի գլխաւոր, եթէ ոչ միակ արդիւնաբերողներն են, չունէին ոչ մէկ ներկայացուցիչ: Մանրամասն քննելով բամբակագործութեան կարիքները, համաժողովները եկան ի միջի այլոց *), հետեւեալ եզրակացութիւններին:

Բամբակագործութեան զարգացման խանգարող պայմանների մէջ, համաժողովների կարծիքով, առաջին տեղն է բռնում բանւորների պակասութիւնը, որը նամանաւանդ շատ զգալի է Գանձակի, Բագուի, Քութայիսի և Թիֆլիսի նահանգների համար:

Բամբակագործութիւնը, լինելով գիւղատնտեսութեան ինտենսիւ ճիւղերից մէկը, պահանջում է շատ մեծ չափերով բանւորական ձեռքեր, մանաւանդ բամբակի մշակութեան ձեւրում: Մեզ մօտ բամբակագործութեան մէջ անհրաժեշտ բոլոր աշխատանքները մարդիկ կատարում են իրանց ձեռքերով:

*) Սօսել յանձնաժողովների ընդունած բոլոր սրողումների մասին՝ մեզ հետու կը տանէր. դա այնքան էլ հետաքրքիր չէ. այնպէս որ մենք կանգ կ'առնենք միայն գլխաւորների վրայ:

Մինչդեռ Ամերիկայում, օրինակ, այն բոլոր աշխատանքները, որոնք կարելի է կատարել մեքենաների միջոցով այդպէս էլ անուժ են:

Այնտեղ այժմ արդէն ոչ ոք համարեա ձեռքով չի ցանում և քաղհանում, այլ այդ աշխատութիւնների համար գործ են ածուժ մեքենաներ, որոնք թէ աւելի շուտ և թէ աւելի լաւ են կատարում այդ գործողութիւնները, քան մարդը: Այդպիսով ամերիկացին կարողացել է թէ հեշտացնել իր գործը և թէ հարկաւոր բանւորների թիւը կրճատել մի քանի անգամ: Նոյն միջոցին պէտք է զիմեն և մեր բամբակագործները:

Դրա համար անհրաժեշտ է Անդրկովկասի զանազան մասերում հիմնել գիւղատնտեսական գործիքների պահեստներ, որտեղից գիւղացիք կարողանային թեթև պայմաններով ձեռք բերել անհրաժեշտ գործիքներ և երկրորդ՝ բամբակագործներին զանազան դուքանչիւնների և վաշխառուների ճանկերից ազատելու համար, բանալ փոխատու հիմնարկութիւններ: Իսկ բանւորների թիւը շատացնելու համար յանձնաժողովները ցանկութիւն յայտնեցին որ՝ ա) դիւրութիւն տրուի Պարսկաստանից բանւորներ գալուն՝ բ) ամեն կերպով նպաստել գաղթականութեան Ռուսաստանից Անդրկովկաս և գ). հնարաւոր չափերով թուլացնել թափառականութիւնը թուրք աղգաբնակչութեան մէջ:

Բամբակագործութեան զարգացման խանգարող երկրորդ գործօնն է, համաժողովների կարծիքով, ոռոգուող հողերի սակաւութիւնը: Այդ պատճառով, համաժողովների կարծիքով մի կողմից պէտք է ոռոգել նոր-նոր հողեր, միւս կողմից պակասեցնելով բրնձի ցանքսերի քանակութիւնը, որը 4—5 անգամ աւելի շատ ջուր է պահանջում, քան բամբակը:

Մի կողմ թողնելով այն, որ այսպիսի փոփոխութիւնները կատարելու համար բաւական չեն միայն ցանկութիւններ, այլ հարկաւոր են աւելի լուրջ հանգամանքներ, պէտք է նկատել, որ այն ցանքսերն էլ որ անուժ են, բանւորների պակասութեան շնորհիւ, կատարուում են ամենաանուշադիր կերպով, և դրա համար էլ չեն տալիս նոյնիսկ կէսը այն բերքի, որը կարելի կը լիներ ստանալ մի քիչ աւելի ուշադիր և լաւ մշակութեան ղէպքում: Երկրորդ՝ դեռ Անդրկովկասում շատ ոռոգած ու պարապ հողեր կան, որոնք կարող կը լինէին ծառայել այդ նպատակին: Եւ երրորդ, ջրի նոյն քանակութեամբ, միայն մի քիչ աւելի կանոնաւորելով ջրաբաշխութեան գործը և լաւացնելով մշակութեան ձևը, կարելի կը լինէր զգալի

կերպով աւելացնել բամբակի ցանքսերը առանց նոր ծախսեր անելու նոր հողեր ոռոգելու համար:

Բանը նրանումն է, որ մի քանի տարի առաջ լոյս են տեսել Անդրկովկասի համար ջրաբաշխութեան առանձին կանոններ: Բայց որովհետեւ այդ կանոնները, ինչպէս և շատ-շատերը, կազմուել են երկրի սլայմանների հետ անծանօթ անձանց ձեռքով, այդ կանոններից շատերը անհամապատասխան և անիրազործելի են: Համաժողովները ցանկութիւն յայտնեցին, որ այդ կանոնները՝ երկրին և գործին տեղեակ ժարդկանց ձեռքով քննութեան և փոփոխութեան ենթարկուեն:

Բացի այս բոլորից, համաժողովները շատ ուրիշ «լաւ ցանկութիւններ» էլ յայտնեցին: Օրինակ, որ Անդրկովկասում աւելացնուի մասնագէտների և ինտրուկտորների թիւը, հիմնուի ստորին դպրոցներ, հմուտ բանւորներ պատրաստելու համար, աւելացնուի մետէօրոլոգիական կայարանների թիւը, կազմակերպուի Անդրկովկասի համար գիւղատնտեսական վիճակագրական կոմիտետ, կանոնաւորուի բամբակի առևտուրի գործը, բամբակագործներին լաւ սերմ մատակարարուի և այլն: Բայց ո՞վ պէտք է իրագործի այս բոլորը:

Երկու համաժողովներն էլ միաձայն եկան այն եզրակացութեան, որ այս բոլորը իրագործելու համար Անդրկովկասում պէտք է մտցնուեն զեմստովօններ:

Եւ իսկապէս, մինչև որ Անդրկովկասին չտրուեն զեմստովօններ, մինչև որ ազգաբնակչութիւնը ինքը չկարողանայ մտածել և հողալ իր կարիքները ու ցաւերը, մինչև որ նրա բոլոր բարեխառութիւնները կախուած կը լինեն «բարի» և միևնոյն ժամանակ «կուշտ» մարդկանց խորհուրդներից և տէրութեան կողմից նշանակուած «չինովնիկներից», մինչև այդ ժամանակ այս և այս տեսակ շատ ուրիշ «բարի ցանկութիւններ» կը մնան լուկ «ցանկութիւններ»:

Այս բոլոր «բարի ցանկութիւններին» կարելի է աւելացնել ևս մէկը, որը մեր կարծիքով շատ կարևոր է, և որը, դժբախտաբար, ոչ մի ուշադրութեան չէ արժանացել այդ համաժողովներից և ոչ մէկում: Մեր խօսքը «Միւլքադարական իրաւունքի» մասին է, որը մեծ խոչընդոտ է ներկայանում ոչ միայն բամբակագործութեան այլ և մանր գիւղատնտեսութեան բոլոր ուրիշ ճիւղերի զարգացման համար:

Միւլքադարական են կոչուում այն հողերը, որոնք լինելով առանձին անհատների սեփականութիւն, գտնուում են գիւղացիների ձեռքում, և վերջիններս այդ հողերով օգտուելու հա-

մար պարտաւոր են հողատիրոջ տալ ստացած բերքի մի յայտնի մասը (առհասարակ 30 մասից 4-ը):

Գիւղացին իրաւունք չունի իր բերքը հաւաքել, մինչև որ հողատէրը կամ նրա ուղարկած մարդը «չբարեհաճեն» գալ և ստանալ իրանց մասը: Հասկանալի է, թէ ինչ մեծ անյարմարութիւն է ներկայացնում այս բանը գիւղացու համար:

Օրինակ նա ցորենը կամ գարին պէտք է պահի խուրձերում և իրաւունք չունի նրանց ժամանակին կալսել և հաւաքել, մինչև որ հողատէրը չստանայ իր «բահրան»: Յաճախ ցորենը և գարին հէնց խուրձերում էլ փտում կամ մկներն են ուտում մինչև աղայի գալը: Գալով բամբակագործութեան համար ներկայացրած անյարմարութիւններին՝ պէտք է նկատել հետևեալը: Ինչպէս յայտնի է, բամբակը միանգամից չի բացւում, այլ նա սկսում է բացուել մաս-մաս և անհրաժեշտ է նըրան այդպէս էլ հաւաքել:

Բամբակի մաս-մաս հաւաքելը թէ յարմար է գիւղացու համար, որովհետև նա իր ընտանիքի ոյժերով աննկատելի կերպով կարող է կատարել այդ և թէ բերքը չի ենթարկւում փչանալու վտանգին: Իսկ միւլքաղարական հողերում հողատէրը յաճախ շատ հեռու է ապրում, և իր յարմարութեան համար, պահանջում է որ բերքը միանգամից հաւաքուի: Հատկանալի է որ այդ դէպքում գիւղացին շատ գժուարանում է բաւականանալ իր ընտանիքի ոյժերով, և ստիպուած է լինում կամ բանւորներ վարձել, որ աւելի յաճախ է լինում, զգալի կերպով կրճատել իր ցանքերի տարածութիւնը: Միւլքաղարական իրաւունքը մնացել է ճորտութեան ժամանակից և այժմ ժամանակ է նրան կամ բոլորովին ոչնչացնել կամ փոխարինել մի որևիցէ ուրիշ բանով:

Թէ որքան շատ են այդպիսի հողերի թիւը Անդրկովկասում, մանաւանդ Երևանի նահանգում, ցոյց են տալիս հետևեալ թուերը: Միայն Երևանի նահանգում այս տեսակ հողերի թիւը հասնում է 76 հազար գեսետինի, որի վրայ գտնւում են 18 հազարից աւելի անտեսութիւններ: Եթէ այս «միւլքաղարական» հողերին աւելացնենք և այն «նազիճի» հողերը, որոնք նոյնպէս տալիս են բերքի մի մասը, մենք կը ստանանք այդ տեսակ անտեսութիւնների բաւական խոշոր թիւ:

Եր. Սարգսեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Բարձրագոյն Ուկագ:— Բարձրագոյն Ռիսկրիպս:— Այդ առիթներով:— Անկարգու-
քիւններ Մոսկուայում, Բագու եւ Պեսերբուրգում:— Ձերնիզովեան ճահ. գեմս.
ճախագանի դիմումին պատասխանը:— Խափանուած բնկերութիւնների մասին
կարգադրութիւն:— Դէպքեր եւ կարգադրութիւններ կովկասում:— Մամուլի վերա-
բերեալ կարգադրութիւններ:— Պարսից բարեգործական բնկերութիւնը:— Ռուսաց
գրական ժողովրդ:— «Нов. Время»-ի մի մերկացումը:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶ

Կատարաբնական Սենսատիւն Պետական կարգի կատարելա-
գործման նախագծումների մասին:

Մեր Նախնիքների սրբազան աւանդների համաձայն, ան-
զազար խորհելով Աստուծոյ Մեզ յանձնած պետութեան բարի-
քի մասին, Մենք, անփոփոխ պահպանելով կայսրութեան հիմ-
նական օրէնքները, կատարելու նպատակը՝ համարում ենք
երկրի կարիքների մասին անխոնջ հոգատարութեան մէջ,
տարբերելով այն ամենը ինչ որ ուրա ժողովրդի շահերին
խսկապէս համապատասխան է, ոչ սակաւ սխալ և անցողական
հանգամանքներով ներշնչուած ձգտումներից:

Իսկ երբ հասունացած է լինում այս կամ այն փոփոխու-
թեան կարիքը, Մենք անհրաժեշտ ենք համարում ձեռնարկել
նրա կատարման, նոյնիսկ եթէ նկատուած վերակազմութիւնը
պահանջէր օրէնսդրութեան մէջ էական նորմութիւններ
մտցնելու: Ձենք կասկածում, որ այդպիսի ձեռնարկութիւնների
իրականացումը կ'ընդունուի համակրանքով Մեր հպատակների
բարեմիտ մասի կողմից, որ հայրենիքի իսկական բարգուա-
ճումը տեսնում է պետական հանգստութեան պահպանման և
ժողովրդի կարիքներին անընդհատ բաւարարութիւն տալու
մէջ:

Մեր հոգսերից զլիաւորը համարելով մեզանում ամե-
նարարման զիւղացիական զասակարգի կացութեան ամենա-
լաւ վերաշինութիւնը, Մենք նկատում ենք, որ, մեր կանխա-

ցուցումների համաձայն, այդ գործն արդէն ինթարկուով է բազմակողմանի քննութեան. ներքին գործոց մինիստրութեան սկզբնական ենթադրութիւնների մանրամասն, տեղն ու տեղը կատարուած զննութեան հետ միասին, այժմ բարձր կառավարութեան ամենափորձառու անձերից կազմուած առանձին խորհրդածութեան մէջ ուսումնասիրուով են գիւղացիական կեանքի վերաշինութեան ամենակարևոր հարցերը այն տեղեկութիւնների և կարծիքների հիման վրայ, որ յայտնուել են տեղական կոմիտետներում՝ գիւղատնտեսական արդիւնարեքութեան ընդհանուր կարիքների քննութեան ժամանակ: Մենք հրամայում ենք որ այդ աշխատութիւնները միութեան բերէին՝ գիւղացիների մասին օրէնքները կայարութեան ընդհանուր օրէնսդրութեան հետ, դիւրացնելով այն հարցը թէ ինչպէս հաստատապէս ապահովել այդ դասակարգի անձերին—օգտուելու Ազատարար-թագաւորի կողմից նրանց նկատմամբ ընդունուած «լիաիրաւտէր ազատ գիւղական բնակիչներ» գրութիւնից:

Ապա տեսութեան առնելով ժողովրդային միւս կարիքների ընդարձակ աշխարհը, Մենք Մեր Հայրենիքում պետական և հասարակական կեանքի կանոնաւոր ընթացքը հաստատուն դարձնելու նպատակով, անյետաձգելի ենք համարում.

1) իսկական միջոցներ ձեռք առնել պաշտպանելու համար օրէնքի լիակատար ոյժը՝ Ինքնակալ Պետութեան մէջ Գահի ամենակարևոր այդ նեցուկը, — որպէսզի օրէնքի անխախտ և ամենքի համար միատեսակ գործադրութիւնը համարուի Մեզ ենթակայ բոլոր իշխանութիւնների և տեղերի ամենաառաջին պարտականութիւնը, իսկ նրա չգործադրելը անխուսափելիօրէն հետևեցնէ է իւրաքանչիւր կամայական գործողութեան համար օրինական պատասխանատուութիւն, և այդ նպատակով՝ այդպիսի գործողութիւններից տուժած անձերի համար դիւրացնել արդարադատութեան հասնելու եղանակները:

2) թոյլատրել զեմստվային և քաղաքային հիմնարկութիւններին ըստ կարելոյն լայն մասնակցութիւն տեղական բարեկարգութեան դանագան կողմերը վարելու գործում, շնորհելով նրանց դրա համար անհրաժեշտ, օրինական սահմաններում, ինքնուրոյնութիւն, և գործունէութեան հրաւիրել այդ հիմնարկութիւններում, միատեսակ հիմունքներով, տեղական գործերում շահագրգռուած ազգաբնակչութեան բոլոր մասերի ներկայացուցիչներին, և ազգաբնակչութեան կարիքներին աջողագոյն կերպով գոհացում տալու դիտաւորութեամբ, ներկայումս գոյութիւն ունեցող նահանգական և գաւառական զեմստվային հիմնարկութիւններից բացի, զրանց հետ սերտ կապակցու-

Թեամբ կազմել հասարակական հաստատութիւններ՝ փոքրածաւալ գաւառամասերում տեղական բարեկարգութեան գործերը վարելու համար.

3) դատարանի առաջ ընտրել դատերի անձանց հաւասարութիւնը պտտապանելու նպատակով, մտցնել հարկաւոր միութիւն Պետութեան դատարանական մասի կազմակերպութեան մէջ և ապահովել բոլոր աստիճանների դատական հաստատութիւններին անհրաժեշտ ինքնուրոյնութիւն.

4) մեծ ու փոքր գործարաններում և հանքատեղերում բանուորների վիճակը ապահովեցնելու նպատակով Մեր արդէն ձեռք առած միջոցները աւելի առաջ տանելով հոգալ բանուորների պետական ապահովագրութիւն մտցնելու մասին.

5) վերաքննել հասարակական կարգի թշնամիների յանցաւոր գործունէութեան անօրինակ արտայայտութեան ժամանակներում հրատարակուած բացառիկ օրէնսդրութիւնները, որոնց գործադրութիւնը կապուած է ազմինխտրատիւ իշխանութիւնների հայեցողութեան մեծապէս ընդարձակման հետ, և միաժամանակ հոգ տանել թէ ըստ կարելոյն սահմանափակելու շրջանները այն տեղերի, որոնց վրայ տարածուած են բացառիկ օրէնքները, և թէ թոյլատրելու այդ բացառիկ օրէնքների պատճառով մասնաւոր անձանց իրաւունքների սեղմումները միայն պետական անվտանգութեան իսկապէս սպառնող դէպքերում.

6) ամրապնդելու համար 1903 թ. փետրուարի 26-ին Մանիֆեստում արտայայտած Մեր անշեղ հոգեկան ցանկութիւնը՝ պահպանել Պետութեան հիմնական օրէնքներով սրբազործուած համբերատարութիւնը հաւատքի գործերում, — վերաքննութեան ենթարկել ոռւս հերձուածողների, ինչպէս և ոչ-ուղղափառ և այլակրօն դաւանութիւններին պատկանող անձանց իրաւունքների մասին օրէնքները, և անկախ դրանից ձեռք առնել այժմ և եթ ազմինխտրատիւ կարգով համապատասխան միջոցներ՝ հեռացնելու նրանց կրօնական կենցաղում ուղղակի օրէնքի մէջ չսահմանուած ամեն մի սեղմում.

7) կատարել վերաքննութիւն այլազգիների և կայսրութեան առանձին մասերի ընակիչների իրաւունքները սահմանափակող գործածական որոշումները այն պայմանով, որ այդ որոշումների թուից այսուհետև պահպանուած լինեն միայն նրանք, որոնք առաջանում են Պետութեան էական շահերից և Ռուս ժողովրդի ակներև օգտից, և

8) հեռացնել մամուլի նկատմամբ այժմ գործադրուող

որոշումների միջից աւելորդ սեղմումները և զնել տպագրական խօսքը օրէնքով ճիշտ որոշուած սահմաններում, այդպիսով հայրենի մամուլին,—լուսաւորութեան գործի և դրա առաջադիմութեան հետևութեամբ մամուլին պատկանող նշանակութեան համեմատ,—տալ հնարաւորութիւն արժանապէս կատարելու իր բարձր կոչումը—լինել ճշմարիտ արտայայտիչ խելացի ձգտումների յօգուտ Ռուսաստանի:

Այս հիմունքների վրայ նախացուցանելով մերձագոյն ապագայում լինելիք խոշոր ներքին վերանորոգութիւններ, որոնց մի մասը, աւելի առաջ տուած Մեր ցուցմունքների համաձայն, արգէն սկզբնական հետազօտութեան է ենթարկուում, Մենք դրա հետ միասին, ի նկատի ունենալով այդ վերանորոգումների զանազանակերպութիւնը և լրջութիւնը, բարուք ենք համարում սահմանել նոյնիակ կարգը՝ քննելու համար վերանորոգումների աւելի արագ ու լիակատար իրագործման եղանակները: Մեր պետական հաստատութիւնների շարքում կառավարման առանձին մասերի ամենասերտ միացման խնդիրը պատկանում է մինիստրների կոմիտեային. հետևաբար հրամայում ենք, մինիստրների կոմիտեային վերև բերած իւրաքանչիւր առարկայի առիթով քննութեան առնել Մեր ղիաւորութիւնները կեանքի մէջ մտցնելու լուսագոյն եղանակի հարցը և ներկայացրնել Մեզ ամենակարճ միջոցում իր եզրակացութիւնները՝ սահմանուած կարգով հարկաւոր ձեռնարկութիւններին ընթացք տալու մասին: Յիշած գործերի մշակութեան յետագայ ընթացքի մասին կոմիտեայը ունի ղեկուցանել մեզ:

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է.

ՆԻԿՈԼԱՅ

Ցարսկոյէ Սելօ, 1904 թ., գեկտեմբերի 12-ին:

—Բարձրագոյն Րեակրիպտ Կովկասի Կառավարչապետ եւ Կովկասեան զինուորական շրջանի գորբերի նրամանատար գեներալ-սպիտանտ իշխան Գ. Ս. Կոլիցինի անունով:

«Իշխան Գրիգորիյ Սէրգէեիչ, գնահատելով ձեր երկար տարիներում ձեռք բերած փորձառութիւնը ծառայութեան մէջ, եւ 1896 թուին նշանակեցի ձեզ Կովկասի Կառավարչապետ, Կովկասեան զինուորական շրջանի զօքքի հրամանատար և կովկասեան կազակ զօրքերի առաման: Չեզ յատուկ հաստատակամութեամբ և ուղղութեամբ, դուք այն օրից սկսած անխնայ աշխատում էիք Կովկասեան լայնարձակ երկրի բարձր վարչութեան ասպարէզում, ձգտելով ամբապնդել այնտեղ կարգ ու կանոնը, քաղաքացիութիւնը և նրա ամենասերտ միացումը

կայսրութեան հետ: Մի և նոյն ժամանակ դուք պակաս խնամք գործ չը դրիք կարգաւորելու և պահպանելու կովկասեան գորբերի պատերազմական պատրաստութիւնը: Ութամիայ լարուած զրադուսներից՝ յոգնածութիւնը դրդեց ձեզ այժմ խնդրել, որ ազատեմ ձեզ կովկասում ձեր ունեցած պաշտօններից: Ցաւելով զիջանելով այդ թախանձանքին, յոյս ունենալով ապագայում կազդուրուած տեսնել ձեր ուժերը, ես արդարացի եմ համարում յայտնել ձեզ հոգեկան երախտապարտութիւն ձեր հայրենասիրական, արիւնով դրոշմուած գործունէութեան համար կովկասեան երկրի օգտին: Ձեր ծառայութիւնները, որ վկայում են ձեր անձնուէր հաւատարմութիւնը Գահին, ձեզ իրաւունք են տալիս Ինձ առանձնապէս մօտ լինելու, որի ակներն նշանը թող լինի ձեր նշանակուելն Իմ Անձիւ ծառայութեան մէջ: Մնում եմ ձեզ անփոփոխ բարեացակամ և շնորհակալ:

«Միկրլայ»

Ինչպէս յայտնի է, նախկին մինիստր Ֆոն-Պլելկէի օրօք ըիւրօկրատիական հայեցողութեան և պոլիցիական կամայականութեան վրայ հիմնուած կառավարական սիստեմը հասաւ իր գագաթնակէտին, ամեն քայլափոխում ցոյց տալով թէ մի ստիճան անցոր է օրէնքը ապահովել Ռուսաստանում անհատի մարդկային և քաղաքացիական իրաւունքները: Հասարակութեան զարթած գիտակցութիւնը ելք էր որոնում այդ սոսկալի իրականութիւնից և ահա նրա պահանջներին ընդ առաջ դնաց ներքին գործոց նոր մինիստր Սվետտոպոլկ-Միրսկին, որի նըշանակումը, ինքն ըստ ինքեան ապացոյց էր, որ ամենաբարձր շրջաններում էլ այլևս համակրութիւն չէր վայելում երկիր կառավարելու Պլելկէեան սիստեմը: Դեկտեմբերի 12-ին յայտարարած Բարձրագոյն Ուկազը, որի ճիշտ թարգմանութիւնը մենք առաջ ենք բերում վերևում, բացորոշ կերպով դատապարտում է այն սիստեմը, որի մէջ իբրև հիմք չի ընդունւում «ինքնակալ պետութեան ամենապլլաւոր նեցուկը՝ օրէնքը»: Այդ Ուկազի մէջ նախագծուած են մի շարք կարևոր ներքին բեֆորմներ, որոնք իրագործուելով պէտք է մտցնեն Ռուսաստանում ևս անհատի այն տարրական իրաւունքները, առանց որոնց անկարող են կանոնաւոր զարգանալ քաղաքակիրթ հասարակութիւնները: Թէ որ աստիճան ապահովուած չէ Ռուսաստանում արդարագատութիւնը, այդ երևում է ոչ միայն նրանց որ ազմինխտարացիային տրուած էր լիազօրութեան իր հայեցողութեամբ դատավճիռներ կայացնելու, այդ երևում է ոչ միայն այն կիսա-իրաւագուրկ կացութիւնից, որի մէջ գտնւում է Ռուսաստանում,

տանի ազգաբնակչության 90%—գիւղացիները, այլ և իւրաքանչիւր օր այստեղ կամ այնտեղ կատարուած կամայականութիւններից նոյն իսկ դատարաններում: Ո՞վ չգիտէ, օրինակ, Քիշնևի և Գոմէլի հրէական քսամներէ ջարդերի առիթով դատաստանական գործիքներից ցոյց տուած կոպիտ աչառութիւնը.— առանց քաշուելու չինովնիկ դատաւորները զրկում էին հրէաների պաշտպաններին միջոցներից՝ երևան հանելու լիակատար ճշմարտութիւնը: Ով չի կարգացել առանց սարսուռի այն վայրագութեան մասին, որին ենթարկուել էր բժիշկ Ջարուսով Ասխաբազում գեներալ Կովալեօվի կողմից: Անդրկասպեան կողակների այդ գլխաւորը, նոյն երկրի կառավարչի տեղակալը ինչ որ անձնական միտումով իր մօտ է հրաւիրում հեռախօսով բժիշկ Ջարուսովին և հրամայում եօթ կազակի՝ մերկացնել և նախօրօք պատրաստած «բողգիներով» (ճիպոտներով) չարաչար ծեծել նրան: Գեներալին դատի են ենթարկում. դործի քննութիւնը կատարում են Թիֆլիսում և ոչ Ասխաբազում, ուր կատարուած էր յանցանքը և ապրում էր յանցաւորը: Քննութեան ժամանակ դատատանի նիստին չեն հրաւիրում ոչ տուժողը՝ բժիշկը, և ոչ վկաները, այլ միայն կարգացում է գեներալի մասին լաւ վկայութիւններ պարունակով նամակներ երկու այլ գեներալների կողմից: Յանցաւորը ամենաթեթեւ պատժի է դատապարտում—արձակուած է պաշտօնից, չզրկուելով և ոչ մի իրաւունքից: Բնականաբար այդ վճիռը վրդովեց հասարակական խիղճը ամբողջ Ռուսաստանում, բուն ցաւակցական խօսքեր լսուեցան բժշկի հասցէին և զարշանք բրան տանջողի անունին: Այդ դէպքը ցոյց է տալիս թէ ինչ խոր ներքին ցաւ է շոշափում Բարձրագոյն Ուկազը, շեշտելով որ «օրէնքի անխախտ և բոլորի համար միակերպ կատարումը պիտի համարուի Մեզ ենթակայ բոլոր իշխանութիւնների և տեղերի ամենաառաջնակարգ պարտականութիւն»:

Մնում է որ մինիստրների կոմիտեաւ մշակի անհատի իրաւունքները լիակատար կերպով ապահովող իսկական միջոցներ և երբ habeas corpus-ը կը գառնայ մեր իրականութեան անստան հիմք այն ժամանակ թէ գրուած օրէնքների հեղինակութիւնը կը բարձրանայ և թէ ներքին կեանքը մեծ թափով կը սկսի ընթանալ այն նոր շաւղով, որ բացուած է լայնածաւալ, բազմացել և բազմակրօն Ռուսաստանի առաջ: Այդ է պատճառը որ այժմ բոլորի ուշադրութիւնը դրաւում են մինիստրների կոմիտեաի նիստերը Պետերբուրգում: Լ. Ս.

— Պաշտօնական հաղորդագրութիւն՝ Մոսկուայում տեղի ունեցած անկարգութեան մասին: Նոյեմբերի 28-ին Պետերբուրգում, Նեվսկի Պրոսպեկտի վրայ տեղի ունեցած փողոցային անկարգութիւններից յետոյ, Մոսկուայում ուսանող երիտասարդութեան մէջ սկսուեց եռանդուն ագիտացիա՝ մայրաքաղաքումն էլ անկարգութիւններ կազմակերպելու նպատակով: Երիտասարդութեան այս տրամադրութիւնից օգտուեց այն կազմակերպութիւնը, որ ինքն իրան անուանում է «Սոցիալ-րէվոլյուցիոններների Մոսկուայի յանձնաժողով»: Շուտով երևացին կոչաթերթեր, որոնք տարածուած էին քաղաքի զանազան մասերում, և որոնց միջոցով հրաւիրուած էին ղեկտեմերի 5-ին և 6-ին կայանալիք ցոյցերին: Յերեկուայ 12 ժամին նկատուեց հասարակութեան անսովոր շարժում Սարաստնոյ հրապարակի մայթերի վրայ, մինչև Չերնիշեվսկի փողոցը. գրօնողներն բաղկացած էին ամբողջապէս ուսանողներից և ուսանողուհիներից: Յերեկուայ 2 ժամին Տվերսկի փողոցի վրայ գոյացաւ արդէն նշանաւոր բաղմութիւն, որի միջից լսուեց յեղափոխական բովանդակութեամբ երգեցողութիւն: Բացուեցին դրոշակներ՝ հակակառավարչական մակագրութիւններով: Այս ամբողջը կուռի բըւնուեց իր դէմ ուղղուած ոստիկանական խմբերի հետ, գործ գնելով գաւազաններ, երկաթի ձողեր և մահակներ: Ոստիկանութեան վրայ կրակ բացուեց ռէվոլվէրներից: Ոստիկանութիւնը ստիպուեց սրերը մերկացնել: Ոստիկանութեան խումբը ցրեց ամբողջը և խլեց դրոշակները: Անկարգութիւններ առաջացնելու նոյնպիսի փորձեր կրկնուեցին քաղաքի ուրիշ մասերում ևս, բայց այս տեղերում էլ ոստիկանութիւնը անմիջապէս ցրուեց ցոյց անողներին: Աղմուկի ժամանակ լուրջ խեղումներ չեն պատահել, և ինչպէս քննութիւնից երևաց, միայն 9 թէթև վիրաւորվածներ են եղել ցուցարարների մէջ և 12 դէպք ոստիկանութեան մէջ, որոնցից երկուսը՝ հրադէնքից առաջացած: Բռնուածներից 43 հոգի, աւելի յանցաւորներ՝ կալանաւորուած են և մասամբ կենթարկուեն դատաստանի, իսկ մասամբ պատասխանատուութեան այն բանի մէջ, որ խախտել են Մոսկուայի գեներալ-նահանգապետի պարտադիր կադգաղրութիւնը փողոցային անկարգութիւնների վերաբերմամբ: Միւս բռնուածներն՝ անկարգութիւնները վերջանալուց յետոյ անմիջապէս արձակուեցին: Դեկտեմբերի 6-ին փորձ եղաւ անկարգութիւնները վերանորոգել Սարաստնոյ հրապարակի վրայ, բայց ոստիկանութիւնը ցուցարարներին շրջապատելով խանգարեց: Վերջիններից 22 աւելի յանցաւորները կենթարկուեն կալանաւորման՝ գումարումների մասին կարգադրութիւնը խախտելու պատճառով:

—Բագուի գործադուլը. «Кавказъ» պաշտօնական լրագրից: «Երկուշաբթի օրը, դեկտեմբերի 13-ին, առաւօտեան ժամը 6-ին, Բագուի նաւթաշրջանում սկսուեց բանուորների գործադուլ: Բանուորները, փչացնելով Բագու-Բալախանի հեռախօսի զըծերը, դադարեցրին հեռախօսային հաղորդակցութիւնը, իսկ «Կասպիական-Սեծովեան» նաւթահանքում փչացրին այն մեքենաները, որոնք ծառայում են տները տաքացնելու համար: Բիրի-ձէյրաթի նաւթահանքերում նոյնպէս սկսուեց գործադուլ. այդտեղ բանուորները հեռացան, բաց թողնելով բոլոր կաթսաներից շոգիները: Չը նայելով անմիջապէս ձեռք առնուած միջոցներին, հետեւեալ օրերը գործադուլն սկսեց զարգանալ և ներկայումս տարածուած է ամեն տեղ, թէ նաւթահանքերում և թէ Բագու քաղաքում: Լրագիրները դադարեցին լոյս տեսնելուց: Շատերը չեն գործում, ձիաքարշի շարժումը դադարել է:

Բալախանի բանուորների խմբերը գնում են նաւթահանքերն ու գործարանները և պահանջում, որ աշխատանքները դադարեցնեն. կաթսաներից շոգին բաց են թողնում: Բայց երբ ոստիկանութիւնը կամ զինուորական պահակները մօտենում են, բանուորներն արագութեամբ ցրւում, անհետանում են:

Մինչև այժմ գործադուլ անողների և ոստիկանութեան կամ զօրքերի միջև առանձին ընդհարումներ չեն եղել. միայն մի ոստիկանի վերարկուն ծակել են ատրճանակի մի հարուածով:

Վերջին օրերի ընթացքում գործադուլը տարածուել է «Արևելեան Ընկերութեան» և «Նաղեժդայի» արհեստանոցներում: Դեկտեմբերի 17-ին, ուրբաթ օրը, դադարեցին գործելուց և Միրզաբէկեանի ծխախոտի գործարանի, «Կաւկազ-Մերկուրի» շոգենաւային ընկերութեան արհեստանոցների և Դադաշելի նաւամատոյցի բանուորները: Այդ վերջինում գործադուլ արած բանուորները փասել են մի քանի մեքենաներ, իսկ «Կաւկազ-Մերկուրի» հայաթի մեծ դռներն են կոտրատել: Ձեռք առնուած միջոցներով ցրուեցին խառնակութիւն առաջացնող բանուորներին, իսկ մի մասին էլ ձերբակալեցին, մինչև որ իմացուի նրանց մեղաւորութեան չափը:

Բիրի-ձէյրաթում և Բալախանիում գործադուլ անողները ժողովներ արին. վերջին ժողովին մաս աւելցում էին 30,000 հոգի, որոնք սկսեցին խմբերով Բալախանի վերադառնալ, երբ ոստիկանութիւնը մօտեցաւ, նրանք տեսնելով մօտից անցնող գնացքը, քարերով փշրեցին վագոնների լուսամուտները:

Դեկտեմբերի 17-ին Բագուի լրագիրները նորից լոյս տեսան:

Ժողովին մասնակցող ձերբակալուած բանուորներից, յանցանքերը պարզելուց յետոյ, բանտարկուեցին 14 հոգի զանազան ժամանակով:

Դեկտ. 23-ին, երբ Սև, Սպիտակ քաղաքներում աշխատանքներն արդէն վերսկսուած էին, Բալխանիում, կէսօրից յետոյ ժամը 3-ին կազակների պահակը շրջապատուեց մի մեծ խումբ բանուորներով, որոնք սկսեցին նեղել կազակներին, քարեր նետել նրանց վրայ և նոյն իսկ կրակ անել: Պահակին ազատելու հասաւ կէս հարիւրեակ կազակ, որը մի քանի անգամ նախազգուշացումից յետոյ, ստիպուած եղաւ կրակ բաց անել. ապստամբներից սպանուեցին 3 հոգի և վիրաւորուեցին 5 հոգի: Կազակներից 4 հոգի թեթև վէրքեր ստացան, բայց մնացին շարքերում: Միևնոյն օրը Բիբի Հէյբաթում անկարգութիւններ տեղի ունեցան, բանուորների ամբոխը յարձակուեց ոստիկանական պահապանների վրայ. բանուորներին խաղաղացնելու գործում մի հոգի սպանուեց և վիրաւորուեցին մի քանի հոգի: Բալխանում և Բիբի Հէյբաթում ընդամենը վիրաւորուած են 20 հոգի: Դեկտեմբերի 24 -ին Բալխանիում այրուեցին 22 վիշկաներ, իսկ դեկտեմբերի 26-ին նորից 20 վիշկա: Դեկտեմբերի 23-ին նաւթահորերի և քաղաքի միջև վերսկսուած հեռախօսային յարաբերութիւնը դեկտեմբերի 24-ին նորից դադարեց»:

—Սոչոր բանուորական գործադուլի պատճառով Պետերբուրգում մի քանի օր յունուարի 8-ից—10-ը լոյս չեն տեսնում թերթերը:

—Անկարգութիւններ Պետերբուրգում: (Պաշտօնական): 1904 թուի սկզբին, Պետերբուրգի Փաբրիկաների և գործարանների մի քանի բանուորների միջնորդութեան համաձայն, հաստատուեց օրինական կարգով Պետերբուրգի Փաբրիկային և գործարանային բանուորների ընկերութեան կանոնադրութիւնը, որի նպատակն էր բաւարարութիւն տալ նրանց հոգեկան և մտաւոր շահերին և հետու պահել բանուորներին յանցաւոր պրոպագանդայի ազգեցութիւնից: Այդ ընկերութիւնը, որ ընտրել էր նախագահ Պետերբուրգի փոխադրական բանտի քահանայ՝ Գէօրգի Գապոնին, գործարանական բոլոր շրջաններում, տարածուելուն համեմատ սկսեց զբաղուել առանձին Փաբրիկաներում և գործարաններում բանուորների և տէրերի միջև գոյութիւն ունեցող յարաբերութիւնների քննութեամբ և ապա անցեալ տարուայ դեկտեմբերի ամսին դրդեց Պուտիլովեան գործարանի բանուորներին միջամտել գործարանից չորս բանուորներ արձակելու հարցում, որոնցից մի քանիսն էր, ինչպէս

վերջը երևաց, մինչև անգամ արձակուած չէին, այլ թողել էին պարապմունքները կամաւոր: Այնուամենայնիւ, գրգռուելով քահանայ Գապոնի և վերոյիշեալ ընկերութեան անդամների կողմից, Պուտիլովեան գործարանի բանուորները յունուարի 3-ին զաղարեցրին աշխատանքները և բացի իրանց ընկերներին վերադարձնելու պահանջից, նոյն ագիտացիայի ազդեցութեան տակ, պահանջներ արեցին, որպէսզի փոխուի պաշտօն տալու, աշխատանքների գնահատութեան և արձակելու կարգը: Գործարանային տեսչութեան կողմից արած յորդորական միջոցները աջողութեամբ պատկուեցին և գործադուլին, նոյն անձանց ազդեցութեան տակ, գլխովին միացան Պետերբուրգի մի քանի այլ խոշոր գործարանների բանուորները, և ապա գործադուլը սկսեց արագ տարածուել, բռնելով մայրաքաղաքի բոլոր գործարանային ձեռնարկութիւնները, այնպէս որ գործադուլի տարածման համեմատ աճում էին և բանուորների պահանջները: Գրաւոր կերպով արտայայտուած այդ պահանջները, որ մեծ մասամբ կազմել էր Գապոն քահանան, տարածուած էին բանուորների մէջ: Առաջ նրանք վերաբերում էին առանձին ֆաբրիկների և գործարանների տեղական անձանց և հարցերին, իսկ յետոյ անցան ընդհանուր հարցերին. բանուորի օրական ութ ժամուայ աշխատանքի և բանուորական կազմակերպութիւնների մասնակցութեան մասին՝ բանուորների և տէրերի միջև եղող վէճերը լուծելու հարցում և այլն: Գործադուլի ենթարկուած արգիւնաբերական հաստատութիւնների տէրերը, խորհուրդ գումարուելով, ընդունեցին, որ բանուորների մի քանի պահանջներին գոհացում տալը կարող է բոլորովին քանդել ուսուց արգիւնաբերութիւնը, իսկ միւս պահանջները կարելի է քննել և մասամբ գոհացնել իւրաքանչիւր առանձին ձեռնարկութեան ուժի չափ. բայց մի և նոյն ժամանակ, պատրաստակամութիւն յայտնելով բանակցութիւններ սկսելու բանուորների հետ, տէրերը անկարելի համարեցին այդ, եթէ հարկ լինի բանակցել կազմակերպուած՝ գործադուլ անողների ամբողջութեան հետ և ընդունեցին, որ համաձայնութիւն կարելի է կայացնել միայն առանձին-առանձին գործարանների բանուորների հետ: Պահանջների քննութեան այս եղանակից բանուորները հրաժարուում էին: Ի նկատի ունենալով, որ գործադուլի ժամանակ կարգապահութիւնը չէր խանգարուում, իշխանութիւնները ոչ մի ստիպողական միջոցների չէին դիմում և գործադուլն սկսուելուց ոչ մէկը չէ ձերբակալուել և ոչ ոք չէ խուսաբարկուել բանուորական շրջանում: Սակայն գործարանական բանուորների ընկերութեան ագիտացիային շուտով աւելացան

նաև գազանի յեղափոխական շրջանների դրդումները: Հէնց ինքննայդ ընկերութիւնը, Գապոն քահանայի առաջնորդութեամբ, յունուարի 8-ի առաւօտից սկսեց բացարձակ կերպով յեղափոխական մտքեր քարոզել: Այդ օրը Գապոն քահանան կազմեց ու տարածեց աղերսագիր բանուորների կողմից՝ ուղղած Բարձրագոյն Անուան և այդ աղերսագրում աշխատանքի պայմանները փոփոխութեան ենթարկելու ցանկութիւնների հետ՝ առաջ էին բերուած քաղաքական բնաւորութիւն ունեցող յանդուգն պահանջներ: Բանուորական շրջաբաններում լուր էր տարածուած և ձեռքէ ձեռք էին անցնում գրաւոր յայտարարութիւններ, որոնք զըրդում էին անպատճառ հաւաքուել յունուարի 9-ին, կէսօրուայ ժամի 2-ին, Պալատական հրապարակի վրայ և քահանայ Գապոնի միջոցով ներկայացնել Կայսրին մի խնդրագիր՝ բանուոր պատակարարի կարիքների մասին: Այդ յայտարարութիւնների մէջ ոչ մի խօսք չէր ասուած քաղաքական բնաւորութիւն ունեցող պահանջների մասին: Բանուորների մեծամասնութիւնը մոլորեցրուած էր և չգիտէր թէ ի՞նչ նպատակով էր հրաւիրուած Պալատական հրապարակը: Փանատիկոս քարոզչութիւնը, որ՝ մոռանալով իր կոչման սրբութիւնը, անում էր Գապոն քահանան, և չարամիտ անձնաւորութիւնների յանցաւոր ազիտացիան՝ այն ստտիճան դրդեցին բանուորներին, որ նրանք, յունուարի 9-ին, ահագին խմբերով սկսեցին գիմել քաղաքի կենտրոնը: Մի քանի կէտերում տեղի ունեցան արիւնահեղ ընդհարումներ բանուորների և զօրքերի միջև, որովհետև ամբոխը յամառութեամբ զիմազրում էր ցրուելու հրամաններին, իսկ երբեմն նաև յարձակուում էր զօրքերի վրայ: Զօրքերը ստիպուած էին կրակ անել բանուորների վրայ Շլիսսէլրուրգեան ճանապարհին, Նարվեան դարպասի մօտ, Տրօյցկի կամուրջի վրայ, Վասիլէվսկու կղզու 3-դ գծի և Փոքր պրոսպեկտի վրայ, Ալէքսանդրեան պարտէզի մօտ, Նեսկի պրոսպեկտի անկիւնի մօտ, Գոգոլի փողոցում, Պուլիցէյսկի կամուրջի մօտ և Կազանեան հրապարակի վրայ: Վասիլէվսկի կղզու 4-դ գծի վրայ ամբոխը մաֆթուլից և տախտակներից շինել էր երեք բարրիկադ և բարձրացրել էր կարմիր դրօշակ: Հարեան տների պատուհաններից քարեր էին նետում և հրացաններ էին արձակում զօրքերի վրայ: Ոստիկանների ձեռքից ամբոխը խլում էր թրեր և զինուում. կողոպտեց Շաֆֆի զինագործարանը և յափշտակեց մօտ հարիւր պողպատէ սրի բերաններ, որոնց սակայն մեծ մասամբ աջողուեց յետ խլել: Վասիլէվսկի մասի առաջին բաժնում ամբոխը կտրտեց հեռախօս թելերը և վայր գցեց սիւները: Վասիլէվսկի մասի երկրորդ ոստիկանական

բաժնի շինութեան վրայ յարձակումն գործեցին: Բաժնի կա-
յարանը Չարդուփշուր է արուած: Երեկոյեան Պետերբուրգի
կողմի Մեծ և Փոքր պրոսպեկտները վրայ կողոպտուեցին հինգ
խանութներ: Հրաձգութիւնից ֆաստուածները ընդհանուր քանա-
կութիւնը, հիւանդանոցների հայթայթած տեղէկութիւնների
համաձայն, երեկոյեան ժամը 8-ի մօտ, կազմում են 76 հոգի
սպանուած, որոնց թւում ոստիկանական վերակացուն և վիրա-
ւորուած՝ 233 հոգի, որոնց թւում ծանր վիրաւորուած է պրիս-
տավի օգնականը և թեթե վիրաւորուած մի ժանգարմ և մի
ոստիկան: Յունուարի 10-ին քաղաքի պահպանութեան համար
նոյն միջոցները ձեռք առնուեցին, ինչպէս յունուարի 9-ին:

—Յունուարի 11-ից տպուած էր հետևեալ հեռագիրը.
«Պետերբուրգում յունուարի 10-ի ընթացքում անկարգութիւն
առաջացնող ամբոխի և զօրքի միջև ընդհարում տեղի չունեցաւ,
և զինուորական կոմանդանտներն ստիպուած չեղան զէնքի զիմե-
լու, որովհետև զօրքը երևալուն պէս ամբոխը ցրում էր: Ցե-
րեկով փորձ արուեց «Գոստինիյ դոլորի» վրայ յարձակուելու,
բայց իր ժամանակին նախատեսուեց: Երեկոյեան դէմ գործա-
դուլին միացան էլէքտրական կայարանի բանուորները
և մթութիւնից օգտուելով, առանձին խմբեր սկսեցին կոտ-
րատել զանազան փողոցներում վաճառատների լուսամուտ-
ները, բայց ամեն տեղ կարգը արագութեամբ վերահաստա-
տուեց: Յունուարի 10-ին սպանուածներ և վիրաւորներ չեղան:
Յունուարի 9-ին, ստոյգ հաշուից երևում է, որ եղել են 96
սպանուած և 333 վիրաւոր, որոնցից 58 հոգի ցուցակազրուած
են ամբուլատորային կայարաններում»:

—Շուշուց եկել էր Թիֆլիս մի պատուիրակութիւն, 9
հոգուց բաղկացած, ներկայանալու Կովկասի կառավարչապետի
պաշտօնակատարին և խնդրելու Շուշու տեղական մի քանի ան-
յետաձգելի կարիքների համար: Այդ կարիքներից ամենապլիսա-
ւորն է այն, որ Շուշում կատարուած վերջին սպանութիւնների
համար (ոստիկանապետ Սախարովի, Շչէրբակովի և ուրիշների)
վճուած էր էկզեկուցիա նշանակել քաղաքի վրայ. արդէն ու-
ղարկուած էր 350 հեռակ և 250 կազակ, որոնք 2 ամիս պէտք
է մնային Շուշում և ապրէին քաղաքի հաշուով: Ամսիս 8-ին
յիշուած պատգամաւորութիւնը ներկայացաւ գեներալ-լէյտէնանտ
Մալամային, յայտնեց քաղաքի խնդիրը և կառավարչապետի
պաշտօնակատարը խոստացաւ յունուարի 11-ին վերացնել Շու-
շում նշանակուած էկզեկուցիան:

—Դեկտեմբերի 3-ին Չէնիգովի նահանգի չէրնիգովեան

Նահանգական զէմստվօի ժողովի նախագահ ազնուականութեան պարագլուխը ներկայացրեց հեռագրով Նորին Կայսերական Մեծութեան վերոյիշեալ ժողովի միջնորդութիւնը ընդհանուր-պետական բնաւորութիւն ունեցող մի ամբողջ շարք հարցերի վերաբերմամբ: Այդ հեռագրի վրայ Նորին Մեծութիւն թագաւոր Կայսրը բարեհաճեց Սեփական Ձեռքով գծագրել. «Ձէրնի-գովեան Նահանգական զէմստվօի ժողովի նախագահի վարմունքը գտնում եմ յանդուզն եւ անտակտ: Ձէմստվօի ժողովները գործը չէ գրադուել պետական վարչութեան հարցերով, որոնց գործունէութեան եւ իրաւունքների շրջանը պարզ որոշուած է օրէնքներով»:

—«Новости» լրագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստրը Պետերբուրգի Տնտեսագիտական ընկերութեանը իրաւունք է տուել տնտեսական հարցերի մասին գիտական գեղուցումներ կարդալու: Երկու տարի առաջ այդ իրաւունքից զրկուել էր ընկերութիւնը:

—Երբ Պետերբուրգի քաղաքապետը յանկարծ հրաման ստացաւ անցեալ տարի փակել տեխնիկական և արհեստագիտական կրթութեան համաժողովը, սէնատոր Տուրաուին յանձնուեց իսկոյն քննութիւն կատարել այդ առիթով: Նա իսկոյն պահանջեց համաժողովի կոմիտէտից նիստերի բոլոր արձանագրութիւնները, վճիռները, բոլոր անդամների ցուցակները—մի խօսքով՝ կոմիտէտի տրամադրութեան տակ եղած բոլոր նիւթերը: Այժմ «Русь»-ի ասելով, քննութիւնը վերջացել է և պէտք է կարծել, որ մեզադրական ոչ մի պրական փաստ չէ տուել, որովհետև համաժողովի կոմիտէտին թոյլատրուած է յետ վերջնել իր բոլոր թղթերը: Կոմիտէտը մտադիր է շուտով սկսել նրանց սպազութիւնը: Սէնատոր Տուրաուին յանձնուած էր նոյնպէս քննելու բժշկիկների Պիրագովեան վերջին համաժողովի և Մոսկուայում անցեալ տարի ուսուցիչների ունեցած համագումարի գործերը: Ինչպէս յայտնի է, այդ երկու համաժողովների առիթով էլ խառնակութիւններ ծագեցին:

—Ներքին գործոց մինիստրը թոյլատրել է Բագուի մարզապետական Ընկերութեան՝ բանալ փակուած գրադարանը:

—Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատարը կարևոր համարեց անորոշ ժամանակով արգելել Կովկասի սահմաններում բնակուել՝ Սուրմալու գաւառի Մուլա-Քոմար և Գիւլիշա գիւղերի հետեւեալ 9 անձերին. Կարապետ Յովհաննիսեանին, Աստուածատուր Ամիրխանեանին, Ալէքսանդր Յովհաննիսեանին, Մնացական Մխիթարեանին, Սըմբատ Տէր Յովհաննիսեանին, Սարգիս Յովակիմեանին, Աւետիս

Մուրազեանին, Ենովք Յովհաննիսեանին և Բաբարէկ Բաղրամեանին:

Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատարը նոյեմբեր ամսի 6-ին հնարաւոր է դատել փոխելու Բազուի բնակիչ Լ կարգի վաճառական Համբարձում Մերգէկիչ Մելիքեանի դէմ առնուած վարչական միջոցը, որով նրան արգելուած էր Կովկասի սահմաններում բնակուելը: Նոյն թուին փոխուած է Ալէքսանդրոպոլի բնակիչ Ստեփան Գէորգեան Տէր-Սահակեանի դէմ եղած նոյնանման վճիռը:

— Դեկտեմբերի 3-ի երեկոյեան, Թիֆլիսի Մուխրանսկի փողոցում, անյայտ սպանչի ատրճանակի երեք հարուածից սպանուած ԼՎ քաղաքամասի պրիստաւի օգնական Տէր-Սահակովի գործը հետեւեալ կերպարանքն է ստացել: Քննութիւնը ցոյց է տուել, որ սպանութիւնը կատարուած չէ խանդոտութիւնից կամ սիրային պատմութիւնների պատճառով, այլ վրէժից: Ոստիկանութիւնը կարողացել է գտնել սպանողների հետքը: Չերբակայուած են մի քանի հոգի, որոնց թուում է և Թիֆլիսի մեղանին Յակոբեանը, որ վերջերս միայն ազատուել էր բանտից: Այդ Յակոբեանը, ատում է «ԿԱՅԿ» պաշտօնական լրագիրը, գտնուում էր Իգդիրի բանտում, որովհետև կասկածում էին, թէ նա խառն է Մուրմալուի գաւառապետ Բողուլաւսկու սպանութեան գործին: Նա այդ բանտից փախել եկել էր Թիֆլիս: Սրանից մօտ մէկ ամիս առաջ Տէր-Սահակովը, ԼՎ քաղաքամասի պրիստաւ Բաշուրինի հրամանով, «Սալդատսկի լրագար» կոչուած հրապարակում ձերբակալել էր Յակոբեանին: Բայց նրան վերջերս բանտից արձակել էին իբր անմեղ: Իրանից յետոյ նա յաճախ ման գալիս է եղել ԼՎ քաղաքամասի ոստիկանատունը զանազան պատրուակներով, իբր թէ հետեւելիս է եղել Տէր-Սահակովին և նոյն իսկ սպանացել է նրան:

— «ԿԱՅԿԱՅ» լրագրում տպուած է. «Ներկայ դեկտեմբերի 22-ին Կովկասեան կառավարչապետի պաշտօնակատարը վաւերացրեց Երևանում եղած ժամանակաւոր զինուորական դատարանի վճիռը՝ էջմիածնի գաւառի Իլանչալուն գիւղի բնակիչներ Գեղամ Պօղոսեանցի և Սարիբէկ Գասպարեանցի մասին, որոնք մեղադրուած են իրանց համագիւղացի Սափար, Հայրապետ և Սաթուր Ալէքսանդրներին սպանելու համար: Դատարանի արձակած մահուան պատիժը գեներալ լէյտենանտ Մալամա փոխել է այսպէս. որ փոխանակ մահուան պատժի՝ Պօղոսեանցը և Գասպարեանցը զրկուեն բոլոր իրաւունքներից և ուղարկուեն տաժանակիր աշխատանքների, առանց ժամանակի, միւս մասերում դատավճիռը հաստատուած է առանց փոփոխութեան»:

— Կովկասի կառավարչապետի ժամանակաւոր պաշտօնակատար Մալաման՝ ղեկտեմբերի 17-ին հաստատել է Գանձակի ժամանակաւոր ղինւորական դատարանի վճիռը՝ փոխ-նահանգապետ Անդրէկի սպանութեան գործի մէջ մեղադրուող 3 անձերի վերաբերութեամբ, անելով հետեւեալ փոփոխութիւնները. դատարանի վճռած մահուան պատիժը Գրիգոր Լուկասեանի համար, դարձել է անորոշ ժամանակով տաժանակիր աշխատանք. Միմէօն Ֆարաշեանի անորոշ ժամանակով տաժանակիր աշխատանքը դարձել է 20 տարով միայն, իսկ Յովհաննէս Ֆարաշեանի արդարացումը հաստատել է նոյնութեամբ:

— Սմեհայն հայոց Վեհափառ Կաթողիկոսը ղեկտեմբերի 8-ին Կարսի երկաթուղով երեկոյեան գնացքով ժամանեց Թիֆլիս: Վեհափառին զիմաւորեցին հոգևորականութիւնը, քաղաքագլուխը, Թիֆլիսի ոստիկանապետը և բազմաթիւ հասարակութիւն:

— Մոզգոկի հայոց Վերափոխման եկեղեցու աւագ քահանայ Սոսրովեանը օր-ցերեկով սպանուեց վաշոյնի մի հարուածով: «Յ. Ո.» լրագիրն ասում է, որ ենթադրում են, թէ սպանութեան պատճառն այն մասնութիւնն է, որ արել էր Սոսրովեան քահանան տեղական միւս երկու հայ քահանաների մասին, որոնք ստիպուած եղան հեռանալ Մոզգոկից:

— Ներքին գործոց մինիստրի կարգադրութեամբ, 1904 թ. դեկտ. 21-ին «Русская Правда» լրագրին յայտնուած է երկրորդ նախագգուշացում: Դեկտ. 22-ին 1) յայտնուած է առաջին նախագգուշացում «Наши Дни» լրագրին և արգելուած է այդ հրատարակութեան հատով վաճառումը. 2) արգելուած է «Русь» լրագրի հատով վաճառումը:

Վրաց «Իվէրիա» լրագրի խմբագիր պ. Մարաջևի խնդրի համաձայն, Կովկասի գլխաւոր վարչութիւնը վճռել է թոյլատրել Գ. Ֆ. Կիպչիձէին 6 ամիս էլ շարունակելու այդ լրագրի խմբագրի պաշտօնը:

«Баку» լրագրի խմբագիր Ա. Ն. Լավրովի խնդրի համաձայն, Կովկասի գլխաւոր վարչութիւնը թոյլատրել է, որ երգուեալ հաւատարմատար Կաբապետ Առաք. Եսդուբեանը 6 ամսով վարէ այդ այժմ չհրատարակուող լրագրի խմբագրի պաշտօնը:

Թոյլատրուած են ի միջի այլոց հետեւեալ նոր պարբերական հրատարակութիւնները, առանց նախնական գրաքննչութեան. «Разсветъ» (իշխ. է. է. Ուխտովսկուն) և «Русское Дѣло» (Շարապովին):

Ներքին գործերի մինիստրը որոշեց երեք ամսով դադարեցնել «Вессарабепъ» լրագրի հրատարակութիւնը:

—Դեկտ. 22-ին, կայացաւ ընդ. ժողով ոռւսաց զրական ֆոնդի, որի մասին մի քանի անգամ առիթ ենք ունեցել խօսել այս էջերում: Ֆոնդի հաշուից երևում է որ նա այժմ ունի 643,671 ռ. դրամագլուխ, տարեկան մուտքը 1904 թ. եղել է 70, 526 ռ., ծախքը 114,766: Յատուկ դրամագլուխ հաշուում է 539,788 ռ.:

—Կառավարութեան կողմից հաստատուած է «Պարսից Բարեգործական ընկերութեան» կանոնադրութիւնը: «Каспій» լրագիրը հաղորդում է հետևեալ մանրամասնութիւնները այդ ընկերութեան մասին. «Մուզաֆֆէր-էզզին Շահի վերջին ճանապարհորդութեան ժամանակ, Պետերբուրգի պարսկական զեսպան Մուշիր ուլ-Մուլքի նախաձեռնութեամբ կազմուեց պարսից Բարեգործական ընկերութեան կանոնադրութիւնը և ներկայացուեց Շահին, որ տուեց իր հաւանութիւնը թէ Ռուսաստանում ապրող պարսիկների մէջ բարեգործական ընկերութիւն հիմնելու մտքի և թէ կանոնադրութեան ծրագրի առիթով: Այդ ծրագիրը Մուշիր-ուլ-Մուլքը ներկայացրեց ներքին գործերի մինիստրին ի հաստատութիւն: Ընկերութեան գլխաւոր վարչութիւնը պիտի լինի Թիֆլիսում, իսկ բաժանմունքները այն քաղաքներում, ուր կան պարսից հիւպատոսներ: Ընկերութեան գլխաւոր նպատակն է—բաց անել դպրոցներ աղքատ պարսիկների երեխաների համար, բաց անել հիւանդանոցներ, նպաստներ տալ աղքատ պարսիկներին հայրենիք գնալու համար և այլն»:

—«Новое Время» լրագրի մէջ տպուած էր հետևեալը. «Մենք հաստատ տեղեկութիւններ ենք ստացել, որ ոչ բոլոր բեռները հասնում են Մուկղէն և այն՝ ինչ որ ուղարկուում է այնտեղ, Պետերբուրգից, ցոյց է տալիս, որ ուրիշների ձեռքն է դիպել նրանց. կողոփները դատարկ են գուրս գալիս կամ լցուած աղբով. փոխանակ հարիւր արկղի, ստացուել են երկար որոնումներից յետոյ 12-ը: Շարունակ կորչում են բռնակը ուղարկած նուէրների ամբողջ վագոններ և անհետանում են թանկագին ծրարներ: Այդ բոլորը կատարում է անդրբայկալեան և չինական երկաթուղիների վրայ: Բռնակը չեն հասնում նամակներ. հեռագիրները հասնում են շաբաթներից յետոյ»:

ԽՈՒՍԱՓՈՂ ՓԱՍՏԵՐ

Կեանքի խոշոր և աննշան փաստերը, նրա ամբողջութիւնը կազմող մանր ու մեծ պատահարների ժխորը շարժում է և շտապով ծածկում մեր աչքերից: Եւ նայելով, թէ մինչև որ աստիճան այդ փաստերը ցնցում են մեր ջղային համակարգութիւնը, տակնուվրալ անում մեր միտքը, մենք դրա համապատասխան չափով մտածկոտ, վշտացած, կամ յուզուած նայում ենք խուսափող երևոյթի յետեից և այնուհետև էլ ապրում նրա հետ յուշերով:

Եւ սրբան անգամ արտաքուստ թէև չնչին, բայց էութեամբ առաջնակարգ փաստեր, երևոյթներ, պատահարներ անցնում են աննկատելի կերպով արժէքների շփոթի մէջ: Մանր փաստերը... բայց կեանքը յաճախ հէնց նրանցից է կազմուած. նրանք են ղեկավար հանդիսանում մեր կենսական շահերին. նրանք են կրժում հասարակական կազմի շէնքը դանդաղ ու յամառ, մինչև որ փուլածքի զգորդը ցնցում և ուշքի է բերում մեզ՝ ուշացած ու անօգուտ ապաշաւանքի մէջ թաղելով մեր սիրտը:

Աւերածի մէջ աննկատելի պատճառներն ամենավտանգաւորներն են, և կեանքի մէջ աննշան համարուած երևոյթները յաճախ ամենակենսական, ամենակականներն են: Նրանք են բնորոշում և դոյն տալիս ժամանակին:

Մեր իրականութեան մէջ, մեր միջավայրում ցոյց տալ հասարակական ծածուկ, կամ աննկատելի մնացած ցաւերը, մատնանիշ անել այն մանր փաստերը, որոնք փութով խուսափելու գերագանց յատկութիւնն ունեն—անա այս յօդուածների նպատակը: Եթէ պատկերը կը լինի չափազանց մուայլ ու ճնշող, եթէ հասարակական օրգանիզմը հանդէս կը գայ շարաւալից ու գարշելի պալարներով, եթէ երևոյթների խաբուսիկ արտաքինի տակից գլուխ կը բարձրացնեն հրէշաւոր այլանդակութիւններ, յանցանքը մերը չի լինի, այլ մեր օղբալի իրականութեանը: Մենք կ'ասենք միայն ճշմարտութիւնը, ամբողջ ճշմարտութիւնը, ինչքան և դառն լինի նա:

Ամուլ դասակարգը.—Տարիներ առաջ և այն՝ տասնեակ տարիներ, Գ. Արծրունին ողջունում էր բարձրագոյն կրթութիւն ստացած առաջին հայ կնոջ մուտքը մեր միջավայրը: Եւ նա իրաւունք ունէր այդ փաստը ուշագրաւ և լուսաւոր համարելու, քանի որ առաջին անգամ ասիական խաւարի կաշկանդումից ազատուած հայ կինը ևրոպական գիտութեամբ զինուած՝ ոտք էր կոխում մեր երկիրը, ուր անելու այնքան բան կար:

Արդարացի կերպով կարծւում էր, որ մի նոր ժամանակաշրջան է սկսւում մեր կեանքում, ուր լնտելիվեցնու հայ կինը առաջնակարգ դեր է խաղալու, մեր գունատ իրականութեանը փայլ տալով իր ջերմ սրտով, իր նըրբազգաց ընտրութեամբ, իր կանացիութեան ամրոջը հմայքով: Գործունէութեան ասպարէզը չափազանց լայն էր. լեզու, գրականութիւն, գեղարուեստ, ընտանիք, կանանց ազատագրութիւն, դասակարգային խոշոր խնդիրներ—այս բոլորը սպասում էին մտածող գրուիւնների, բարի ցանկութիւնների, յամառ, տոկուն պատրաստակամութեան: Հայ կինը խոշոր դեր ունէր կատարելու, քանի որ այն՝ ինչ կարող է անել մի կրթուած կին, յաճախ անգօր է կատարել մի շատ աւելի լաւ պատրաստուած տղամարդ:

Ահա թէ ինչո՞ւ էր ոգևորուած Արծրունին:

Այն ժամանակից տարիներ անցան. մենք տասնեակ բարձրագոյն կրթութիւն ստացած կանայք ունենք. Եւրոպայում համալսարանական քաղաք չկայ, ուր հայ ուսանողի կողքին նստած չլինի և հայ ուսանողուհին: Հայ աղջիկն այժմ նոյնքան հեշտութեամբ է զիմում դէպի Եւրոպա, որքան և հայ երիտասարդը: Ազգային նահապետական կեանքը՝ և այս դէպքում, նոր հովերի առաջ լայն բացեց իր դռները. նա չվախեցաւ իր աղջիկ-զուակը հազարաւոր վերստերով մեն-մենակ, իրանից հետու ուղարկել:

Հայը ե՞րբ է խորշել օգտակար, լուսաւոր նորութիւնից: Սա նրա խոշոր առաքինութիւններից մէկն է:

Եւ գնացին հայ օրիորդները Եւրոպա խմբերով, գնացին, ապրեցին և վերադարձան:

Արդ՛ի՛նքը...

Այս վճռական հարցի առաջ ցնդւում է վարդագոյն պօէզիան և սկսւում է ամենաբանալ իրականութիւնը: Խմբերով Եւրոպա դիմող հայ կանանց հետ կապուած յոյսերը լոկ պատրանքներ էին, որոնք օր աւուր լուծւում են վաղորդեան շամանդաղի պէս, և իրականութիւնը երևան է հանում ամենադառն հասարակական յուսախարութիւն:

Հայ կրթուած կիներ մինչև այժմ ոչինչ չտուեց իր ծննդա-
վայրին, մեր անմխիթար և կարօտ իրականութեան: Նա
միանգամայն անպէտք հանդիսացաւ: Մեր կեանքի վրայ նրա
բարեբար արդեցութիւնը որևէ կերպով մինչև այժմ չարտա-
յայտուեց: Մեր հասարակական կեանքի հորիզոնի վրայ և ոչ
մի կանացի անուն չբարձրացաւ:

Այժմ ստեղծուել է կրթուած հայ կանանց մի ամբողջ
դասակարգ, որին մենք չենք քաշուում անուանել՝ մտաւորապէս
ամուլ և մեծ մասամբ հասարակական բնազդներէից զուրկ մի
բազմութիւն:

Բարձրագոյն կրթութիւնը հայ կնոջ համար դարձաւ այն
սովորական վարդերից մէկը, որոնց կարիք ունի կիներ իր
սին պշրանքի, իր կոկետութեան համար և նրանով նա նոյն-
քան հպարտ է, որքան իր ժամացոյցի ոսկէ շղթայով, կամ ա-
դամանդազարդ մատանիներով:

Ձարմանալի չէ, որ այս պայմաններում, նրա իդէալական
ողիտականը՝ մեծ մասամբ, վերջնականապէս կնքուում է աւե-
լի կամ պակաս յաջող ամուսնութեամբ, որը՝ վրայ է հասնում
ճիշտ ժամանակին, ձանձրալի և աննպատակ գոյութեան պա-
րպար լցնելու համար:

Գեղեցիկ պօշեմայի անհամ վախճանն է սա: Մրա համար
արժէք միթէ Եւրոպա գնալ, այնքան եռանդ և դրամ մտխել:

Այս հարցը ոչ որի չի զբաղեցնում այլևս, երևոյթի բոլոր
այլանդակ հակասութիւնը չի նկատուում, որովհետեւ վազուց
հետէ հասարակութիւնը սովորել է տեսնել հայ օրիորդների
չուն գէպի Եւրոպա, առանց նրանցից որևէ լուրջ բան ըս-
պասելու: Միջոցը՝ դարձել է նպատակ: Ամենքն էլ գոհ են,
և՛ դնացնողները և՛ ուղարկողները:

Սակայն ռւր է պատճառը այս ցաւալի երևոյթի: Ի՞նչչին
պէտք է վերագրել կրթուած հայ կնոջ այս մտաւոր անանկու-
թիւնը: Ինչո՞ւ համար միայն մեր մէջ կրթուած կիներ պիտի
անկարող հանդիսանար որևէ հասարակական դեր կատարելու
գեղարուեստի, գրականութեան, գիտութեան և այլ ասպարէզ-
ներում:

Ահա հարցեր, որոնց լուսաբանութիւնը կապուած է մի
ամբողջ շարք ծանրակշիւ հանգամանքների հետ, և որոնք շօ-
շափում են մեր ամենակենսական, ամենաբարձր հոգեկան շա-
հերը:

Ան այժմ մի կողմ թողնենք աւելի ծանր պահանջները,
ընդունենք, որ փիլիսոփայ, գիտնական, հանրածանօթ մասնա-
գէտ հայ կիներ դեռ մի անկաշխիութիւն է, շնորհիւ շատ հաս-

կանալի պայմանների, որոնց վրայ տեղը չէ այստեղ ծանրանալ: Տարօրինակ չէ սակայն, որ մինչև այժմ մի հատիկ տաղանդաւոր կին-գրող, կին-բանաստեղծ չունեցանք անքան կրթուած օրիորդների մէջ: Ինչո՞ւ համար այս ընդհանուր ամլութիւնը: Հնամբաւոր է միթէ ենթադրել, որ բարձրագոյն կրթութեան հետամտում են բացառապէս անտաղանդ, անշնորհք հայ աղջիկները: Այսպիսի անհեթեթութիւն, անշուշտ, անկարելի է ընդունել. ամենապարզ տրամաբանութիւնը կը բողբոխ դրա դէմ: Նշանակում է կան այլ պատճառներ, աւելի լուրջ, աւելի ծանրակշիռ, քան այդ կարծւում է սովորաբար:

Մեր խորին համոզմունքով այս տխուր երևոյթը պայմանաւորող հանգամանքները սխալ կը լինէր որոնել հայ օրիորդների անձնական յատկութիւնների, նրանց բնածին խառնուածքի, հոգեկան կարողութիւնների մէջ, այլ այդ բոլորից դուրս, արտաքին աշխարհում: Հայ աղջիկը իր օտար ընկերուհիներից յետ չի մնայ ոչ ձիրքերով, ոչ աշխատելու պատրաստականութեամբ ու տոկոճութեամբ և ոչ էլ եւանդով:

Այդ բոլորն ունի նա, շատ անգամ, յաւելուածով: Բայց այնուամենայնիւ, նա՛ մեծ մասամբ, ինչպէս ասացինք, մնում է մտաւորապէս համր և ամուլ: Եւ դա այն պարզ պատճառով, որ նա բարձրագոյն կրթութեան է դիմում միանգամայն առանց հարկ եղած բացիօնել, տրամաբանական և լուրջ պատրաստութեան: Իր ժառանգական յատկութիւնների և ստացականի մէջ այնպիսի անտաղանդիզմ է իշխում, որ վերջիվերջոյ նրա հոգում և գլխում ստեղծւում է մի արտուրդ: Սովորում է տարիներ շարունակ, բայց մնում է միշտ տգէտ. տգէտ իր մայրենի լեզուի մէջ, տըգէտ իր ցեղի, իր անցեալի վերաբերմամբ, և որ ամենից տըխուրն է, նա չի ճանաչում, չի հասկանում նոյնիսկ այն իրականութիւնը՝ որի մէջ ապրում է, այն ժողովուրդը, որից նա բղխել է: Ազնիւ ու գեղեցիկ ներշնչումների խակական և միակ աղբիւրը այսպիսով գոցւում է նրա համար: Իսկ առանց ներշնչումների գրականութիւն և գեղարուեստ լինել չի կարող: Մայր ցամաքից կտրուելով՝ նա կորցնում է աչքից նաև կղզին, դէպի ուր առագաստ էր բացել, և այնուհետև, տարւում է փոթորկոտ ծովերի վրայ անդեկ, աննպատակ. մինչև իր կեանքի վերջը: Օտար լեզուն և ոգին անկարող չլինում ըմբռնել անհրաժեշտ խորութեամբ և լայնութեամբ: Սեփական լեզուն հազիւ թոթովում է: Իր ժողովուրդը չի գգում, որովհետև նըրան չի ճանաչում, նրա յոյզերը և ցաւը ապրել չի կարողանում: Նա ոչ այս է և ոչ այն: Նա մի ոչնչութիւն է: Այս պայմաններում զարմանալի չէ նրա հոգու ամլութիւնը. զարմա-

նալի չէ, որ նա անցնում է առանց որևէ հետք թողնելու մեր կեանքում, ուր կոչում էր զործելու: Նա՛ հասարակական տեսակէտից՝ աննպատակ ծախսում, խելագարօրէն վաճառում հարստութիւնն է: Նա պղնձում խոպան անապատն է, մեր առանց այն էլ անապատներով հարուստ կեանքի մէջ: Բնութիւնը չի կարելի անպատիժ կերպով խեղաթիւրել...

*

Հայ «Բայրընը».— Գուր չէք լսել անշուշտ, ընթերցող, բայց նա ծնուել է հայկական այդ Բայրընը: Եւ, ինչպէս սովորաբար պատահում է հսկայ մեծութիւններին, որոնք բարեհաճում են աշխարհ գալ մեր խեղճութիւնը մխիթարելու համար՝ հայ Բայրընը մնացել է տակաւին չզնահատում և անմասնօթ: Նա հրատարակեց իր բանաստեղծութիւնների ժողովածուն: Բայց մնաց անմասնօթ: Այն ժամանակ նա դարմացած՝ զայրացած հասարակութեան առաջ շարակց իր զրաման: Շըպլըրանց և սպասեց: Բայց սրբապիղծ ամբոխը ծնկաչոք շտպաց նրա ոտների տակ... Անմիտ հասարակութիւնը մնաց խուլ և համբ...

Հասարակական այս սև, շտեմնում ապերախտութեան, ժամանակ է տակայն վերջ տալ: Եւ մենք շտապում ենք յայտարարել, որ այդ անպիտոտ հանճարը՝ ուսուցչի համեստ անուան տակ թաղնում պ. Սաչատուր Բարայեանն է:

Թող ների մեզ պարոնը մեր համարձակութիւնը, եթէ մենք պարտ զգացինք անել այս վիթխարի յայտնութիւնը: Ուրովհետև, դուրս է գալիս, որ հասարակական այս անարդար վերաբերմունքի մէջ «Մուրճ»-ը խոշոր բաժին ունի: Գոնէ այդպէս է երևում պ. Ս. Բարայեանի մի հայհոյական գրութիւնից, որ նա ուզել էր խմբագրութեանը: Եւ միւս կողմից սարսափում ենք, որ չլինի թէ հանճարեղ երիտասարդը իր արդար զայրոյթի մէջ իր գրիչը փշրի (նա այդ սպասում է !) և մենք մնանք յաւիտենական յանցաւորներ հայ ազգի առաջ: Անկարելի ապուշութիւնների և փողոցային հայհոյանքների այն կոյտը, որ «բանաստեղծ» Բարայեանը ուզել է «Մուրճ»-ին՝ ի պատասխան նրա բանաստեղծութիւնների և զրամայի քննադատութեան, անշուշտ անհնարին է հրատարակել, զոնէ հասարակական ճաշակն ու խիղճը չվիրաւորելու համար: Քաղկենք այնտեղից այն գոհարները, որոնք վիայում են, թէ մենք իրօք մի հայ Բայրընի հետ զործ ունենք: Գոնելով՝ որ «Մուրճ»-ի քննադատութիւնը արդենք է կրքի թելադրութեան, (հիմնալի է, այնպէս չէ, մենք նախանձել ենք Սաչատուրի գալինիներին !) «հանճարեղ բանաստեղծը» բացագանչում է. «Ապուշներ... Եւ ի՞նչ

զարմանալու ըան կայ, երբ մեզ պէս փոքր և անզարգացած ազգերի մօտ տեղի ունի նոյնը, ինչ որ աւելի սարսափելի և վատթար կերպով տեղի ունէր անգլիացիները պէս առաջագէմ ազգի մօտ, երբ առաջին տնգամ էր գրական ասպարէզ իջնում Բայբընի պէս հանճարը»: Այո, պ. Բարայեան դուք կանարելապէս իրաւունք ունիք, բայց մոռացել էլ էք մի փոքրիկ մանրամասնութիւն—անգլիացի Բայբընը կապ էր, իսկ դուք ասում են, շատ ուղիղ քայլում էք: Ափսոս...

Բայց պ. Բարայեան մեզ հետ համաձայն չէ: Նա հաւատացած է, որ ինքը առանց կազալու էլ Բայբըն է: Եւ միութարում է իր վշտացած սիրտը նրանով՝ «որ մարդկանց արժանապէս պնդատում են. յետագայ սերունդները նրանց մահից յետոյ, երբ անցնում է կրքի թագաւորութեան շրջանը, որ չի ուզում ուրիշի արժանիքը ճանաչել, կամ մեծութիւնը խոստովանել»:

Ընթերցողը տեսնում է պարզապէս, որ մենք գործ ունենք մեծութեան մանիայով բռնուած մի մարդուկի հետ, և զարմանում է, որ մենք հարկ ենք դասել զբաղուել նրանով: Բայց զժրախտութիւնն այն է, որ այս փաստը ընտրող է, ոչ զըշակների և երեխայամիտ զլուինների մի ստուար բազմութիւն՝ աւելի կամ պակաս չափով նոյն հիւանդութեամբ է բռնուած: Փորձերը, որքան և նրանք խակ, անյաջող լինին, ինքն ըստ ինքեան զատապարտելի չեն կարող լինել: Աւելին կ'ասենք, որքան շատ՝ այնքան լաւ. միշտ «բազումք են կոչեցեալք և սակաւք ընտրեալք»: Բայց երբ իւրաքանչիւր սկսնակ, նորեւուկ, իրան Բայբըն է կարծում, երբ երկու տուն «ոտանաւոր» թխող տգէտը՝ քննադատութեան ձայնին, խորհրդին ականջ վնելու, սովորելու փոխաբէն՝ անմիտ գոռոզութեամբ հանգչում է իր չվաստակած դափնիների վրայ, այստեղ արդէն ներողամտութեան խօսք անգամ լինել չի կարող:

Յանցանք է գործում միթէ քննադատութիւնը, երբ տազանդի մի յետին, կասկածելի նշոյլ չտեսնելով մի ամբողջ տեսրակի մէջ, խորհուրդ է տալիս հեղինակին ձեռք վերցնել ոտանաւոր թխելուց և աւելի օգտակար աշխատանքի նուիրել իր ոյժերը: Սա մի բարեմիտ, ուշադիր և բարեխիղճ վերաբերմունք է, որին այնպիսի տգէտ, անամէջ մեծամտութիւններ, ինչպէս Բաբայաններն են, պատասխանում են ամենագոնեհիկ, ամենափողոցային, ամենաստորացուցիչ լուտանքներով, հայհոյանքներով:

Սա մի փաստ չէ, այլ մի ամբողջ երևոյթ:

Մենք ճանաչում ենք էջմիածնի ձեմարանի մի քանի դպրո-

յականներ, որոնք թողել, հեռացել են ուսումնարանը, գտնելով, որ այնտեղ այլևս սովորելու ոչինչ չկայ, որ ժամանակը հասել է գրականութեամբ զբաղուելու: Եւ նրանք կը գործադրեն իրանց սպառնանքը: Վաղը կը տան մեզ à la Բարայեան «բանաստեղծութիւններ» այն էլ առանձին հրատարակութիւններով...

Բայրընները այդպէս հեշտ չեն ծնուում: Նրանք նախ և առաջ իրանց էպոխայի ամենակրթուած մարդն են լինում: Տաղանդը՝ մի ծաղիկ է, որ փթթել կարող է միայն բազմակողմանի, խորը կրթութեան, լայն զարգացման հողի վրայ: Տարարախտարար, ներկայ դէպքում, ոչ զարգացումը կայ և ոչ տաղանդը:

Իսկական բանաստեղծները նոյնիսկ իրանց առաջին փորձերի մէջ երևան են գալիս: Եւ նրանք երբէք այդքան ապուշ մեծամտութիւնով ուսած չեն լինում, ինչպէս են Բարայեանները:

*

Բարի խորհուրդներ.—«Մուրճի» և առ հասարակ հայ գրականութեան սրտացու, նախանձախնդիր բարեկամներն անթիւ են:... խօսքով: Խրատներ, խրատներ, բազմապիսի, խորախորհուրդ, իմաստուն, և որ գլխաւորն է՝ հեշտ իրագործելի: Պէտք է ենթադրել, որ խմբագրութեան տարօրինակ յամառութիւնն է պատճառը, որ նա չկարողացաւ օգտուել այդ խրատներից և 5—10 հազար բաժանորդ, տասնեակ հազարների նախահաշիւ ունենալ: Կամ գուցէ նա չգիտէ, թէ ի՞նչ են մտածում դրսում նրա բարեկամները «Մուրճի» առաջադիմութեան համար:

Իւրաքանչիւր ազնիւ հայ մարդ՝ իսկապէս պարտական է իր գիտցածներն ու լրածները շտապով հաղորդել խմբագրութեանը, որ նա այլ ևս անգէտ չձևանայ: Ես կատարում եմ պարտքս:

Սօսակցութիւնը տեղի ունէր մի սեղանի շուրջ:

Սեղանակիցներից մէկն առանց հանաքի, ինչպէս Ֆրանսիացին կ'ասի՝ sans rire, եռանդով ապացուցանում էր, որ եթէ «Մուրճը» իր շահերը հասկանայ, պէտք է անմիջապէս սկսի հրատարակել իր էջերում... Աստուածաշունչը:

—Սա այն առաւելութիւնն ունի, պարոններ, — շարունակեց նա ազնիւ ոգևորութեամբ — որ նախ թերթը դրա համար հոնորար, տողավարձ վճարելու պէտք չի ունենայ և երկրորդ՝ որ գլխաւորն է, հայ ժողովրդի ցաւած սրտում վերջին ժամանակ ծագած կրօնական թերահաւատութիւնը վերստին կ'ամրապնդի և բարոյականութեան, առաքինութեան նուիրական ուղին կը

հարթի իր բնթերցողների առաջ: Եւ սրբան բաժանորդներ կ'ունենայ, վերջացրեց նա ինքնաբաւական կերպով:

Մի ուրիշը՝ նոյնքան ազնիւ և սրտացաւ պարոն, իմանալով, որ «Մուրճ»-ը պոստին մեծ ծախս է վճարում, առաջարկեց մի վերին աստիճանի գործնական միջոց՝ ազատուելու այդ անպատեհութիւնից:

—Փոխանակ «Մուրճ»-ը պոստով ուղարկելու բաժանորդներին, լաւ չի՞ լինի վարձել մի քանի տանեակ շարվազարի ձիեր և այդպէս կատարել էքսպեդիցիան...

—Հնոտ է, շնոտ է հաստ այդ ամսագիրը, պարոններ—ասում էր մի այլ սրտացաւ լարեկամ—իհարկէ շատ ծախք կը լինի... Եւր հայերին ի՞նչ կը սաղի այդքան հաստ ամսագիր: Մենք պտտիկ ազգ ենք. համեստ լինինք: Անհամեստութիւնը, գոտուկութիւնը միշտ պատժում է: «Մուրճ»-ը զո՞ն է գնում—և այդպէս էլ պէտք է—իր գոտուկ մեծամտութեան, իր անհամեստութեան: Եւ սրբան աւելորդ բան կայ այդ հաստ գրքի մէջ: Վերցնենք օրինակ վէպերը... Ասացէք խնդրեմ, ես ի՞նչ պարտական եմ ուրիշի երեակայած, յերիւրած, սարքած ստերը կարգալ: Յետոյ, Վանայ նահանգի մասին... Ես սիր, Վանն սիր... Տառեխով փլաւն է միայն ինձ յիշեցնում թէ աշխարհում Վան կայ: Բանաստեղծութիւններ... սօ «մուրճը» պէտք է վերցնել և ուղղակի նրանց «քեալին» իջեցնել: Աշխարհում ի՞նչքան փոստութիւն կայ, այդ պարտաւ, դատարկապորտ ձրիակերների գլխից է դուրս գալիս: Բանաստեղծութիւններ... էլ սիր մէկն ասեմ: Իմ կարծիքով շատ լաւ կը լինի «Մուրճ»-ում տպել մի քանի մամուլայինական յօդուածներ միայն և ամիսը մի յիսուն երեսանոց տետրակ գուրս տալ: Այն ժամանակ, տեաններ, այդքան ծախք կը լինի:

Մինչև վերջը լսութեամբ այս «բարի խորհուրդները» լսող մի երիտասարդ, յանկարծ սուքի կանգնեց ու դիմեց վերջին խօսողին.

—Ո՛չ, գուր սխալում էք՝ պարոն, սխալում էք մանաւանդ բանաստեղծութեան մասին ձեր յայտնած սղէտ կարծիքի մէջ: Ես այդ թոյլ չեմ տայ ձեզ: «Մուրճ»-ը սուժում է, ոչ թէ բանաստեղծութիւնների շատութիւնից, այլ նրանց կատարեալ բացակայութիւնից, այն, կատարեալ բացակայութիւնից... Տուէք բանաստեղծութիւն, այն, իսկական բանաստեղծութիւն, և գուր կ'ունենաք բաժանորդներ: Բայց այդ խմբագրութիւնը անշնորք է տալանդաւոր գրուածքները ջոկելու: Ապացոյց.—անն. անցեալ օրը՝ ես տանում եմ նրանց մի ոտանաւոր, տանում եմ՝ ցաւելով թերթի վրայ. խոմ չի կարելի, ճըշ-

մարիտ, թոյլ տալ, որ հայոց միակ ամնագիրը տուժի բանաստեղծութեան պահասութիւնից: Այն, տանում եմ, և ի՛նչ էք կարծում... մերժում են: Բայց ես պահել եմ այդ բանաստեղծութիւնը իմ ծոցում և պիտի պահեմ, որպէս մշտական անարգանք, այդ ինքնահաւան խմբագրութեան: Ահն ես կը կարդամ ձեզ նրա առաջին տունը, միայն առաջինը. քննարկը ինքներդ կարող էք գուշակել առանց կարգալու:

Ողբերգութիւն

Երկինքն հետք չեալ-չեալ տարաւ ունքերը,
Բացաւ գարնան կարմրակամար կուպրերը,
Աղջի, հերիք, իմ աչքի լոյս, եկ տաններ արօտ
Տրոգիկ արխիւկ գտնիքը մեր ու այժմերն:

Դասեցէք... վերջացրեց նա մի հպարտ հայեացքով ընդ-գրկելով սասանոսած բազմականներին:

Դժբախտ արեւելքը շատ իմաստուն առածներ ունի, որոնցից ինքը երբէք չի օգտուել: Յիշում եմ զբանցից մէկը. «Որբին խրատ առող շատ կը լինի, բայց հաց տուող՝ բնա»:

*

Յերանից մինչև ականջ.—«Արարատի» վերջին համարում Ատրպատականի նախկին առաջնորդ, «Աշխարհի դատաստանի» հեղինակ՝ սէր Նզիշէ ծայրագոյն վարդապետ Մուրադեան սէր է բարտղում, աւետարանական սէր...:

Չգիտեմ ուրիշներն ի՛նչպէս, բայց ես կարդալով այդ սիրազեղուն, հոգեպարար յօդուածը՝ սկամայ յիշեցի այն մի քանի թաւրիպցիներին, որոնց ամիսներ առաջ պատահել էի դիպուածով: Նրանք վշտացած սրտի դառնութեամբ խօսում էին իրանց փակ դպրոցի, իրանց փողոցն ընկած գաւախների մասին:

—Ծայրագոյն դժբախտութիւն եղաւ, պարոն, ծայրագոյն խայտառակութիւն մեր խեղճ դպրոցի գլխին, ասում էր նրանցից մէկը:

—Այդ բոլոր գանգամները մենք շատ լսեցինք, ասացի, այժմ ժամանակ է մտածել դպրոցը վերաբացելու մասին:

—Հէշտ է ասել, բայց ցան էլ այն է, որ չենք կարողանում բաց անել, նա՛ արդարն ենք ասում, այնպէս է փակել, որ էլ չենք կարողանում բաց անել. էլ իրար չենք հասկանում... Ծայրագոյն խայտառակութիւն...:

Նա-ն տէր Նզիշէ ծայրագոյն վարդապետն էր:

Արդար լինինք. գուցէ Նզիշէ վարդապետի վրայ բարւոյւած մեղադրանքները մասամբ չափազանցութիւն են, գուցէ

մեր տեսած մարդիկ նրա հակառակորդներից էին: Բայց, այնուամենայնիւ, իբրև անհերքելի փաստ է մնում այն՝ որ Լիւլաւայի դպրոցի փակման առիթ տուող կռիւնների մէջ Նդիշէ վարդապետը կուուող կողմերից մէկն էր, և ասում են, ամենաեռանդունը: Այն աւերիչ եռանդը և այս սիրոյ քարոզը բղխում են միևնոյն սրտից: Անշուշտ «փոքրիկ» հակասութիւն կայ երկսի մէջ, որ Նդիշէ վարդապետները միշտ կարողանում են հաշտեցնել: Իսկ հասարակական կարծիքը միշտ bon enfant, հեշտութեամբ է մոռանում անցեալը: Ահա ինչո՞ւ կագ ու կուրի հեղինակը կարողանում է այժմ սէր քարոզել: Բայց ո՞վ ժամանակ ունի գնալ նրա բերանից մինչև ականջը չափել և միևնոյն շրթունքների վրայ սիրոյ և ատելութեան քարոզի հանելուկը լուծել...

*

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պոռ-Արտուրի անկումը—Թովասյե Բոմեսվենսկին Մադակասկարի մօտ.—Քաղաքական ընդհանուր դրուքներ.—Լուիզա Միտլի մահը.

Ութ ամսուայ պաշարումից յետոյ, ղեկամբերի 20-ին ընկաւ Պոռ-Արտուրը գեներալ Նոգիի յամառ և սխտեմատիկ հարուածների տակ: Յաղթող ճապոնացին ոչ առաջին անգամ սպիտակաւն վեհանձնութիւն ցոյց տուաւ իր քաջ ախոյեանին: Ռուս գեներալներին և օֆիցէրներին իրաւունք էր տրուած պատուով թողնել բերդը և վերադառնալ հայրենիք, եթէ խօսք տան մինչև այս պատերազմի վախճանը չմասնակցել կուսին: Այդ խօսքը տուին գեներալ Ստեսէլի հետ և բազմաթիւ օֆիցերներ, իսկ գեներալներից Սմիրնովը, Ֆոկը, Գորբատովսկին և Վիրէնը գերազասեցին բաժանել գերութեան դառնութիւնները իրանց զինուորների հետ միասին: Բերդի պաշտպանութեան ոգին—գեներալ Կոնդրատենկօն սպանուել էր մի քանի օր առաջ: Կապիտուլիացիայի (անձնատուութեան) մտնրամասնութիւնները ցոյց տուին որ թէև գեներալ Ստեսէլը ունէր դեռ ևս բաւական ըրինձ, ալիւր, աղ, 2 հազար ձի, 546 թընդանօթ և առատ սպիտակաւն պաշար, ստկայն, երբ ճապոնացիները տիրեցին զլիաւոր ամրութիւններին, նա այլ ևս աննպատակ համարեց շարունակել արիւնհեղութիւնը և գերազասեց անձնատուր լինել իր 25 հազար զօրքով, որի մեծ մասը հիւանդ էր կամ վիրաւոր: Եւ այսպէս ընկաւ այն ամրութիւնը, որ տասը տարի շարունակ կոուսինձոր էր դառել Հեռաւոր Արեւելքում: Չի կարելի չխոստովանել որ արջի ծառայութիւն մատուցին Ռուսաստանին նրա բարեկամ Ֆրանսիան և Գերմանիան, որոնք 1895 թուականին իրեցին յաղթող ճապոնացու ձեռքերից համաշխարհային ողբերգութեան այդ բեմը, յանձնելով Ռուսաստանին, որպէս զի շարունակուի նրա վրայ արիւնհեղ ներկայացումը ի մեծ սրբախութիւն արիւնուշա Ջոն-Բուլի...

Հետաքրքրական է սուս հասարակական կարծիքի վերա-

